



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.




Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



47a

L" / S"

~~2479~~

2473

1911/33
Aug 4

2479

1/2

L



47

L" / S" L^{app} St
L^{app} St^{app} St^{app}

281 (075)

0-84

Դ Ա Ս Ա Տ Ե Տ Ի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Համառօտեալ

ԻՄԱՏԵՆԱԳՐԱՅ ՆԱԽՆԵԱՅ ՄԵՐՈՅ

Աշխատասիրութեամբ

ՅՈՎԱԷՓԱՅ Ա. Բ. ՕՐԲԵԼԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԻՏՊԱՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐՈՑԻ

(Ընդ տեսութեամբ Հ. Էնֆիանեանց)

1871

2449



202

Դ Ա Ս Ա Տ Ե Տ Ր

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Համառոտագրեալ

Ի ՄԱՏԵՆԱԳՐԱՅ ՆԱԽՆԵԱՅ ՄԵՐՈՅ

Աշխատասիրութեամբ

ՅՈՎՍԷՓԱՅ Ա. Բ. ՕՐԲԵԼԻ

Տ Պ Ա Գ Ր Ե Ա Լ

Հրամանաւ Վեհափառ Հայրապետին մերոյ

Տեառն Գեորգայ Դ,

ամենայն Հայոց Կաթողիկոսի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԻՏՊԱՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ

(Ընդ տեսչութեամբ Հ. Էնֆիանեանց)

1 8 7 1

50001



2010

51

28520-4.2

Չճնուագիրս զայս յակնարկեալ ըստ հրամանի վեհա-
փառ Հայրապետին մերոյ Տեառն Գէորգայ Դ, ամենայն Հա-
յոց Կաթողիկոսի, և ոչինչ զտեալ իւմին հակառակ ուղղա-
փառ հաւատոյ և վարուց բարեաց, մանաւանդ թէ քաջայար-
մար ևս զատեցաք զսա յուսումն պատմութեան եկեղեցւոյն
Քրիստոսի:

Ի ՏՓԽԻՍ, 20 Յուլիսի
1870


Գաբրիէլ Եպիսկոպոս
Այվազեան:

Дозволено Цензурою. Тифлисъ. 20-го Июля 1870 года.

11510-54



20.1 2




Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Հոգւոյ Ազնուատոհմ
Սողոմոնի

Սարիգոնեան Կորդանեան


Ն Ո Ւ Է Ր

ՅԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԷ





ՋԵԿՈՒՑՈՒՄՆ



Ձեր կամ ինձ առայժմ 'ի տիպ մուծանել զդասագիր ինչ եկեղեցական պատմութեան *), սակայն ձանձրոյթ մեծ և դժուարակրօնութիւնք օրքան զօր առաւելեալք 'ի դիմաց Հայ ուսանողաց կլասիքական Գիմնազիոնի Տիփսիայ՝ հարկ յիմ վերայ եղին առձեռն համառօտել զընդարձակ ձեռագիր դասատետրակսն, զորս 'ի վաղուց անտի հաւաքեալ էր իմ յարժանահաւատ մատենադրաց մերոց, և առժամս 'ի լոյս ածել զեթ համառօտիւ միայն զպատմութիւնս մերոյս Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցւոյ, որպէս զի մի՛ այլևս զըժուարացին աշակերտք արտագրութեամբք դասատետրակաց. իսկ զընդարձակն թողի խնամոց այլում պատեհ միջոցաց և ժամանակի:

*) Է իմ այլևս տպագրութիւն եկեղեցական պատմութեան յամին 1856. բայց կարի համառօտ:



Յայսմիկ դոյզն երկասիրութեանս մանաւանդ ՚ի արեւ,
պագրութեան իսկ՝ խրախոյս և օժանդակ եղև մեծապատիւ
Անտոն Սողոմոնեան Ղորղանեան, որստի և ինձ ակորժեղի է
մտադիւր սիրով նուիրել ՚ի յիշատակ հոգւոյ ազնուա-
տոհմ հօր նորա Սողոմոնի Սպրիդոնեան Ղորղանեան
և յանսայթաք կարգացումն զաւակաց իմոցս հոգեւոր
երկանց :

Բովանդակութիւն գրոց եկեղեցա- կան պատմութեան :

Դար Ա

	Երես.
Մատաթիայ Առաքելոյ ընտրութիւնը.	1
Հոգւոյն սրբոյ գալուստը.	—
Քրիստոնէական հաւատոյ առաջին յառաջադիմութիւ- նը յԵրուսաղէմ.	2
Առաջին հաւատացելոց վարքը, և եօթն սարկաւազաց ընտրութիւնը.	—
Քրիստոսի եկեղեցւոյ առաջին հալածանքը.	3
Սուրբ Ստեփաննոսի նահատակութիւնը.	—
Սողոմի դարձը.	4
Քրիստոսի եկեղեցին Սամարիայում և Սիմոն մողը.	5
Քրիստոսի եկեղեցին Նդեախ կամ Հեթանոսաց առա- ջին դարձը զէպ ի քրիստոնէական հաւատը.	—
Թադէոս առաքելոյ քարոզութիւնը վերին Հայաստան, Աշուանքում և Կապադովկիա.	7
Աստուծոյ յայտնութիւնը և Քրիստոսի եկեղեցին ի Կե- սարիա.	—
Սուրբ Պօղոսի առաքելութիւնը և նորա ճանապար- հորդութիւնը.	8
Քրիստոսի եկեղեցին Անտիոքում.	9
Աղդէ հայրապետի, Թադէոս առաքելոյ և Սանդուխտ կու- սի նահատակութիւնը և Ոսկեանց քրիստոնէութիւն ընդունելը.	—
Առաքելոց ժողովը յԵրուսաղէմ.	11

Ազրիպայի հալածանքը, նորա պատիժը և մահը.	11
Պօղոս առաքելոյն պատահած անցքերը և նորա քաշած նեղութիւնքը.	12
Ներոնի հալածանքը, Պետրոսի և Պօղոսի նահատակութիւնը.	14
Միւս առաքելոց քարոզութիւնը և մահը.	15
Հրէից պատերազմը և Երուսաղեմի կործանումը.	18
Դոմնտիանոս կայսեր հալածանքը.	19
Հռովմայեցւոց թշնամութեան պատճառները քրիստոնէից դէմ և նոցա հալածանքը.	20
Նախնի քրիստոնէից բարեկարգութիւնք, և նոցա Աստուածապաշտութիւնը.	21
Հերձուածք և մոլորութիւնք.	22
Եկեղեցական մատենագիրք.	23
Առաջին դարու մեր եկեղեցւոյ Հովիւք և Եպիսկոպոսուք.	24
Թուղթ Արգարու առ Փրկիչն Յիսուս Քրիստոս:	
Պատասխանի թղթոյն Արգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալն հրամանաւ փրկչին:	

Դար Բ

Տրայիանոս կայսեր հալածանքը.	25
Սուրբ Ոսկեանց նահատակութիւնը, Սուքիասանց դարձը և նահատակութիւնը.	26
Հրէից ազգի նորանոր թշուառութիւնք Տրայիանոսի ժամանակ.	27
Մարկոս Աւրելիոսի հալածանքը.	28
Հերետիկոսք.	29
Զատիկի տօնի վերայ հակառակութիւնք.	30
Եկեղեցական մատենագիրք.	31
Եկեղեցական բարեկարգութիւնք և Աստուածապաշտութեան	

տեղեր, նոցա Աստուածապաշտութիւնը և Տօները.	32
Մկրտութեան խորհուրդը և այլ բարեկարգութիւն.	33
Երկրորդ դարու մեր եկեղեցւոյ Հովիւք և Եպիսկոպոսուք.	34

Դար Գ

Սեւերոս կայսեր հալածանքը.	35
Մաքսիմիանոս կայսեր հալածանքը.	36
Դեկոս կայսեր հալածանքը.	—
Առաքելութիւն Գաղղիայում.	—
Տարածախոսութիւն և վէճ հերետիկոսաց մկրտութեան վերայ.	37
Վաղերիանոս կայսեր հալածանքը.	—
Աւրելիանոս կայսեր հալածանքը.	38
Մեր եկեղեցւոյ հալածանքը և Աստուծոյ այցելութիւնը Հայոց ազգիս.	—
Հովիւսիմեանց նահատակութիւնք.	41
Եկեղեցական մատենագիրք.	42
Հերետիկոսք.	43
Միայնակեցութեան սկիզբը.	44
Եկեղեցւոյ ժառանգաւորաց սնունդը.	—
Սիւնհոդոսք կամ ժողովք.	—
Նոցա Աստուածապաշտութիւնը, Պաշք և Աղօթք.	45
Հաւատոյ վարդապետութիւնք, որով վարւում էին հաւատացեալք առաջին երեք դարերում.	—
Երրորդ դարու մեր եկեղեցւոյ Եպիսկոպոսուք և Հովիւք.	47

Դար Դ

Հայոց ազգի լուսաւորութիւնը.	49
Սուրբ Լուսաւորչի ձեռնադրութիւնը ի քահանայութիւն և ի Հովնապետութիւն Հայոց.	51
Տրդատ Թաղաւորի և նորա ընտանեաց մկրտութիւնը,	

Հայոց աշխարհի բարեկարգութիւնը.	52
Հայաստանեայց եկեղեցւոյ վիճակը.	54
Արիւսի մոլորութիւնը.	55
Նիկիոյ ժողովը.	57
Հեղինէ թագուհւոյ բարեպաշտութիւնը և սուրբ խաչի գիւտը.	59
Թէոդոսի թագաւորութիւնը և Կոստանդնուպօլսոյ ժողովը.	60
Հայոց մատենագիրք.	62
Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	63
Ազգային ժողովք.	67
Քրիստոնէից աստուածաշտութիւնը և սովորութիւնքը	
չորրորդ դարում.	70
Քրիստոնէական հաւատոյ յառաջադիմութիւնը, (*)	-

Դար Ե

Մեր եկեղեցւոյ վիճակը, Հայկական տառից գիւտը, և սուրբ զրոյց թարգմանութիւնը.	73
Նեստորի մոլորութիւնը, և Նիքիոսի տիեզերական ժողովը.	78
Հայաստանի խռովութիւնը պարսից ձեռքից, և սուրբ Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութիւնը.	82
Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	89
Ազգային ժողովք.	93
Եկեղեցական մատենագիրք	98

Դար Զ

Քրիստոսի դաստառակի (անձեռագործ պատկերի) յայտնութիւնը.	101
---	-----

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	102
Ազգային ժողովք.	104

Դար Է

Սուրբ խաչի գերութիւնը Պարսկաստան, և կրկին դարձը. Եօթն խոտաճարակաց նահատակութիւնը.	105
Վարազայ խաչի յայտնութիւնը.	107
Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	108
Պաւլիկեան աղանդաւորք.	111
Եկեղեցական մատենագիրք.	—
Ազգային ժողովք.	113

Դար Ը

Մեր եկեղեցւոյ Մարտիրոսք.	116
Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	118
Եկեղեցական մատենագիրք.	120
Ազգային ժողովք.	121

Դար Թ

Մեր եկեղեցւոյ Մարտիրոսք.	123
Թոնդրակեցոց աղանդը, և Պաւլիկեանց աղանդոյ նորոգութիւնը.	126
Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	128
Եկեղեցական մատենագիրք.	130
Ազգային ժողովք.	131

Դար Ժ

Փոխադրութիւն Քրիստոսի դաստառակին Եդեսիա քաղաքից Կոստանդնուպօլիս.	134
--	-----

Մեր եկեղեցւոյ վիճակը, վանորէից չինութիւնը և նշանաւոր անձինք.	135
Աքանչեւագործ անձինք.	137
Մեր Հայոց կաթողիկոսունք.	138
Մատենադիրք.	142
Ազգային ժողովք.	—

Դար ժԱ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	146
Եկեղեցական մատենադիրք.	148
Ազգային ժողովք.	149

Դար ժԲ

Կաթողիկոսունք.	153
Մեր եկեղեցւոյ վիճակը և Յունաց եկեղեցւոյ հետ միա- բանութեան խորհուրդը.	156
Հայոց մատենադիրք.	161
Ազգային ժողովք.	163

Դար ժԳ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	168
Եկեղեցական մատենադիրք.	172
Ազգային ժողովք.	173

Դար ժԴ

Կաթողիկոսունք. և մեր եկեղեցւոյ վիճակը.	176
Եկեղեցական մատենադիրք.	179
Ազգային ժողովք.	180

Դար ժԵ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	184
Այս դարուս նահատակները.	188

Դար ժԶ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	191
Այս դարուս նահատակները.	193

Դար ժԷ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	194
---	-----

Դար ժԸ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	202
Եկեղեցական մատենադիրք.	206


Դար ժԹ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.	207
Յանօթ. Հայոց գրականութիւնը.	211
Հերձուածք.	—
Մեր եկեղեցւոյ աճումն.	—
Նուազումն.	212
Վնաս և յառաջագիւմութիւն գրադիտութեան.	213
Նուազումն.	214
Մետրապօլիտք.	215
Աղուանից կաթողիկոսք.	—
Վիճակներ.	—
Մատենադիրք.	216

ՀԱՄԱՌՕՏ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԱՐԱՌԱԶԻՆ



Մատթիա Առաքելոյ ընտրութիւնը: X

Երբ Տէրն մեր Յիսուս Քրիստոս Համբարձաւ երկինքը, նորա առաքելալը և աշակերտք ժողովեցան՝ Նրուսաղէմ, ուր առաջին անգամ Հոգս արին ընտրել մինը՝ կորստեան որդւոյն՝ Յուդայի տեղ: Ուստի աշակերտաց միջից ընտրեցին երկու Հոգի, Մատթիա և Բարսաբա, և առաջ բերին ժողովոյ մէջ. յետոյ աղօթք արին և խնդրեցին յԱստուծոյ որ յայտնի թէ որն է նոցանից արժանաւոր առաքելական պաշտօնին, ապա վիճակ դձեցին, և ընկաւ վիճակը Մատթիային, որով և լրացաւ Քրիստոսի տասներկու առաքելոց թիւը:

Հոգւոյն սրբոյ գալուստը: X

Նորանից յետոյ բոլոր Հաւատացեալք միասին ժողոված վերնատանը՝ առանձին աղօթք էին անում և սպասում էին, որ Հոգւոյն սրբոյ շնորհքը ընդունեն: Երբ հասաւ Պենտեկոստէի (յիսներորդ) օրը, յանկարծ երկնքից մէկ ձայն եկաւ սաստիկ քամու պէս, որով լքցաւ տունը, ուր ժողոված էին աշակերտք Տիրամօր հետ, որոնք էին թուով իբր հարիւր քսան Հոգի: Նոցա վերայ երեւեցան հրեղէն լեզուք, իսկոյն ամենքը լքցան Հոգւով սրբով և սկսան զանազան լեզու խօսել:

Քրիստոնէական հաւատոյ առաջին յառա- ջադիմութիւնը յերուսաղէմ:

Պենտեկոստէի տօնին ամեն կողմից շատ շրեայք էին եկած Երուսաղէմ: Սուրբ Պետրոսը միւս առաքելոց հետ զօրացած սուրբ Հոգւով՝ սկսաւ քարոզել նորանց և խօսել Քրիստոսի մահուան և յարութեան վերայ, և այս առաջին քարոզութեամբ երեք հազար հոգի դարձրեց զէպի քրիստոնէական հաւատը: Նմանապէս երկրորդ անգամ, երբ Պետրոսը Յովհաննէսի հետ զնում էր տաճար՝ ցիւրեկայ ինն ժամին աղօթք անելու, բժշկելով տաճարի դռան մօտ նստած 'ի ծնէ կաղին՝ հինգ հազար հոգի դարձրեց 'ի քրիստոնէութիւն:

Առաջին հաւատացելոց վարքը, և եօթն սարկաւազաց ընտրութիւնը:

Առաքելոց քարոզութեամբ շուտով բըցաւ քաղաքը հաւատացելոց բազմութեամբ, որոց բարեպաշտ վարքը նախանձիկ էր ամենին, պատճառ որ ինչպէս նոր եկեղեցւոյ հարազատ որդիք՝ միացած էին մի հաւատով, և մի սիրտ և մի հոգի ունէին, ուստի նոցա ամեն բանը հասարակաց էր. ծախում էին իւրեանց ստացուածքը և զրամբ բերում էին առաքելոց էին տալիս, և նոքա բաժանում էին աղքատաց:

Արովհետեւ հաւատացելոց թիւը օր ըստ օրէ շատանում էր, այն պատճառաւ առաքելայր ընտրեցին եօթն բարեպաշտ մարդիկ, ձեռնադրեցին նորանց Սարկաւազ և կարգեցին սպասաւոր սուրբ սեղանին, որոյ վերայ կատարւում էր Քրիստոսի մարմնոյ և արեան սուրբ խորհուրդը և բաշխւում էր խորհրդական հացը, և ապա միանգամայն

յանձնեցին նոցա հասարակաց սեղանի սպասաւորութիւնը և եկեղեցւոյ բոլոր ստացուածքը, և այնուհետեւ ինքեանք մնացին ազատ արտաքին հոգսից և զբաղմունքից, որպէս զեկարող լինէին աւելի ուշադրութիւն դարձնել առաքելական պաշտօնին և աւետարանական քարոզութեան:

Քրիստոսի եկեղեցւոյ առաջին հալածանքը, Սուրբ Ստեփաննոսի նահատակութիւնը:

Աւետարանի քարոզութեան յաջողութիւնը շարժեց քահանայապետաց զէպի նախանձ և ատելութիւն քրիստոնէից զէմ: Ուստի հրաման տւին առաքելոց, որ այլ ևս չքարոզեն Աւետարանը, և ոչ Քրիստոսի անունը տան, և երկիւղ տալու համար՝ նորանց բանտը գձեցին, բայց նոքա հրաշքով ազատեցան բանտից և սկսան համարձակ քարոզել ինչ որ տեսան և լսեցին, վասն որոյ կրկին անգամ շրեայք կանչեցին նորանց ատեան, ուր դատաւորք մտածում էին 'ի մահ դատապարտել նորանց. բայց ատենակալաց մինը Վաւազիէլ անունով, յորդորում էր և արգելում նոցա ասելով, «Հեռացէք այդ մարդկանցից, և թող տուէք դոցա, պատճառոր՝ եթէ այդ գործը մարդկային է՝ շուտով կ'խափանուի, իսկ եթէ յԱստուծոյ է, 'ի վեր էք աշխատում: Վաւազիէլի այս խօսքերից համոզւելով հրեայք պատժեցին նորանց և սաստեցին այլ ևս չխօսել և ոչ Քրիստոսի անունը տալ. բայց նոքա շատ ուրախ էին որ Աստուծոյ անուան համար այն հալածանքը կրեցին, այս միայն պատասխան տալով նոցա թէ «Աստուծոյ առաւել պէտք է հնազանդել, քան մարդկան», և չէին զաղարում ուսուցանել և քարոզել յանուն Քրիստոսի:

Սուրբ Ստեփաննոս, որ եօթն սարկաւազաց առաջին և նախապատիւն էր, իւր հրաշագործութեամբ և Աստուծոյ փառաց նախանձով նշանաւոր հանդիսացաւ, այնպէս որ՝ համարձակ և աներկիւղ յանդիմանում էր շրեից անհա-



ւատու թիւնը: Ուստի կանչեցին նորան ատեն, ուր հրապարակաւ քարոզեց Յիսուսի Աստուածութիւնը. այս լսելով ատենի մէջ կատարի շրեայք քաշեցին քաղաքից դուրս և քարկոծեցին նորան: Եւ մինչդեռ նա այն անտանելի տանջանաց մէջ էր, աղօթք էր անում իւր սպանողաց համար ասելով՝ «Տէր, թող զոցա, զի ոչ զիտեն զինչ զործեն»: Եւ այս օրինակ նա հատակութեան համար՝ հաւատացեալք պատուեցին նորան իբրեւ աւետարանական օրինաց առաջին վկայ:

3 Հարց Սողոսի դարձը:

Այն օրերում, որ սաստիկ հալածանք էր Քրիստոսի եկեղեցւոյ վերայ՝ բոլոր հաւատացեալք ցրուեցան Երուսաղէմից դուրս զանազան քաղաքներ, բացի առաքելոց, որոնք քրիստոնէական հաւատոյ ուսումը տարածում էին և ամեն տեղ հաստատում հաւատացելոց եկեղեցի: Նոյն ժամանակ մի փարիսեցի երիտասարդ՝ Սողոս անունով, չարաչար և խիստ թշնամի էր քրիստոնէից, մտնում էր աները, ուր թագ կացած էին հաւատացեալք, թէ մարդկանց և թէ կանանց քաշում էր և ձգել էր տալիս բանտը: Յետոյ առաւել նախանձից և վրէժխնդրութիւնից զրգռած՝ թուղթ առաւ քահանայապետից, որ զնայ Գամասկոս և քրիստոնէից կապած բերի Երուսաղէմ: Երբնա մօտեցաւ քաղաքին, յանկարծ նորան երեւեցաւ մի հրաշալի լոյս, որ փայլատակեցաւ նորա չորս կողմը. որից կուրացաւ և ընկաւ գետնի վերայ: Յետոյ մի ահաւոր ձայն լսեց նա. «Սաւուղ, Սաւուղ. ինչեւ հալածում ինձ. ես եմ Յիսուս»: Սաւուղը այն ձայնից սարսափեցաւ և հարցրեց, «Տէր, ի՞նչ ես կամենում»: Այն ժամանակը Տէրը պատուիրեց նորան որ մօնի Գամասկոս քաղաք, զըտնի Անանիային և մկրտւի նորանից: Եւ երբ նա մկրտուեցաւ, բաց եղան նորա աչքերը: Սաւուղը Քրիստոս հա-

ւատալուց յետոյ՝ ընդունեց Աստուծոյ շնորհքը և վարժեցաւ Քրիստոսի տնօրէնութեան խորհրդոց մէջ, սկսաւ քարոզել աւետարանը և շուտով դարձաւ զխաւոր առաքելոյ մէկը:

Քրիստոսի եկեղեցին Սամարիայում և Սիմոն մոզը:

Այն ժամանակը սուրբ Փիլիպպոս, որ եօթը սարկաւագաց մէկն էր, քարոզելով Սամարիա՝ շատերին դարձրեց քրիստոնէայ և մկրտեց նորանց: Միւս առաքեալք երբ լսեցին Երուսաղէմում ուղարկեցին Սամարիա Պետրոսին և Յովհաննէսին, որ զրոշմի խորհուրդը տան նոցա և հաստատեն նորանց քրիստոնէական հաւատոյ մէջ: Նոքա որոնք ընդունեցին զրոշմի խորհուրդը, խիղջն ընկալան Հոգւոյն սրբոյ շնորհքը: Այն ժամանակը Սամարիա քաղաքում Սիմոն անունով մի մոզ կար հաւատացելոց մէջ. նա երբ տեսաւ որ առաքեալք ձեռք դնելով մկրտածների վերայ հաղորդում էին նոցա երկնաւոր պարգևներ, ինքն ևս փող բերաւ և տալիս էր առաքելոց և խնդրում էր ստանալ նոցանից նոյն իշխանութիւնը. բայց նորա խնդիրը չընդունեց սուրբն Պետրոս իբրեւ անարժան խնդիր: Այս պատճառաւ հոգեւոր և Աստուածային շնորհք վաճառելով՝ Սիմոնի անունից Սիմոնականութիւն կոչեցաւ, որ առաջին հերձուածողաց զուլս համարեցաւ:

Քրիստոսի եկեղեցին Եգեսիայում, կամ Հեթանոսաց առաջին դարձը դէպի քրիստոնէական հաւատը:

Եգեսիա քաղաքի Հայոց Արգար թագաւորը կան-

խաւ լսելով Յիսուսի հրաշքները, դեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ նամակաւ *) որոյ մէջ դաւանելով նորան Աստուծոյ որդի՝ խնդրեց նորանից իւր տկար անձին բժշկութիւն: Նմանապէս պատուիրեց իւր դեսպանաց, որ երուսաղէմի տաճարում զոհ մատուցանեն Աստուծոյ: Սորա եկան հասան երուսաղէմ նոյն օրը երբ Յիսուս հանդէսով երուսաղէմ էր մտնում, և երբ կամենում էին Աբգարի նամակը մատուցանել Յիսուսին՝ եկան Փիլիպպոսի մօտ, Փիլիպպոսն ասաց Անդրէասին, վերջապէս երկուսը 'ի միասին յայտնեցին Յիսուսին: Այն ժամանակը Յիսուս հրամայեց Թովմայ առաքելոյն, որել Աբգարի նամակի պատասխանը, որոյ մէջ խոստացաւ որ իւր համբաւնալուց յետոյ՝ կ'ուղարկի աշակերտներէց մէկին, որ բժշկի նորան հիւանդութիւնից և կեանք պարգևի նորան, և նոցա՝ որք նորա մօտ էին: Նոյնպէս թղթի հետ ուղարկեց Յիսուս իւր անձեռագործ պատկերը, որ վեր առաւ Աբգարը, և երկրպագութիւն տուաւ պատկերին, և սպասում էր Քրիստոսի ողորմութեան և շնորհաց կատարման:

Քրիստոսի համբաւնալուց յետոյ՝ Թովմա առաքելաւ, ինչպէս պատուիրել էր նորան Փրկիչը՝ Թադէոսին՝ որ եօթանասնից մէկն էր, ուղարկեց Նդեսիա քարոզելու: Սա եկաւ քարոզեց քրիստոնէական հաւատը, բժշկեց թաղաւորին հիւանդութիւնից, մկրտեց ոչ թէ միայն Աբգարին, այլ և Նդեսիայի ժողովոյոց շատերին: Շինեց եկեղեցի, և մի մետաքսագործ՝ որ թագաւորի թագ շինող էր՝ ձեռնադրեց եպիսկոպոս, անունը դրաւ Ադդէ, և կարգեց նոցա համար հովիւ և առաջնորդ:

*) Վարդան նամակը ի վախճան առաջին դարու:

Թադէոս առաքելոյ քարոզութիւնը վերին Հայաստանում, Աղուանքում և Կապադովկիա:

Սուրբն Թադէոս Նդեսիա քարոզելուց յետոյ՝ զնաց զէպի վերին Հայաստան, ուր թագաւորում էր Աբգարու քեռորդին Սանատրուկ: Սա Թադէոսի քարոզութեամբ հաւատաց 'ի Քրիստոս, նոյնպէս և իւր Սանդուխտ անունով դուստրը, և շատ ժողովուրդ նորա հետ: Թադէոսը նոցա համար մէկ բարեպաշտ մարդ Զաքարիա անունով՝ եպիսկոպոս ձեռնադրեց, և կարգեց նոցա վերայ հովիւ և առաջնորդ, և ինքն զնաց Աղուանից կողմերը, ուր նոյնպէս քարոզելով Քրիստոսի անունը՝ հիմնեց եկեղեցի և այնտեղեց զնաց Կապադովկիա քարոզելու:

Աստուծոյ յայտնութիւնը և Քրիստոսի եկեղեցին 'ի Կեսարիա:

Մինչդեռ Պետրոս Յոպպէ քաղաքում առանձնացած աղօթք էր անում՝ տեսաւ երկինքը բացւած, և չորս ծայրից կախւած մի մեծ անօթ կտաւի պէս, որ ցած էր եկած զեանի վերայ, և որոյ մէջ կային ամէն տեսակ չորքոտանիք, սողուններ և թռչուններ, և մի ձայն լսեց երկնից. «վեր կաց Պետրոս, մօրթիւր և կեր»։ Երեք անգամ կրկնեցաւ այս խօսքը, և յետոյ անօթը բարձրացաւ երկնքը: Մինչդեռ Պետրոս զարմացած էր այս տեսիլքի վերայ, բաց արաւ Աստուած նորա միտքը, որ իմանայ թէ բացւած է երկնքի դուռը հիթանոսաց համար ևս, և ամէնքը, թէ չընայք և թէ չեթանոսք 'ի մի մարմին Քրիստոսի պէտք է միանան: Այն ժամանակը հաւատոյ աստուածապարգև շնորհքը տարածւեցաւ և Պաղեստինու

կողմերը, նոյնպէս և Կեսարիա քաղաքում, ուր Կուռնէ-
լիոս անունով հարիւրապետ կռապաշտութեան խաւարի
մէջ ճանաչելով ծշմարիտ Աստուած, աղօթքով և ողոր-
մութեամբ արժանացաւ Աստուծոյ պարգևաց: Միանգամ
աղօթք անելու ժամանակ Աստուծոյ հրեշտակը երևեցաւ
նորան և պատուիրեց, որ որոնէ Պետրոսին, և լսի նորանից
ինչ որ պէտք է անել: Միւս առաւօտը Կուռնէլիոս իւր
ծառանները ուղարկեց Յուպէ Պետրոսին կանչելու: Եւ երբ
Պետրոսը Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ եկաւ Կուռնէլի-
ոսի տուն, սկսաւ քարոզել և ուսուցանել բազմութեանը,
բացատրելով մարգարէից խօսքերը և Յիսուսի Քրիստոսի
գործքերը: Նորա խօսելու ժամանակ Հոգին սուրբ իջաւ
ամենի վերայ, որոնք լսում էին նորա խօսքերը, սորանից
յետոյ մկրտեց նորանց Պետրոսը Յիսուսի Քրիստոսի անունով:

Սուրբ Պօղոսի առաքելութիւնը և նորա ճանապարհորդութիւնը:

Հեթանոսաց կոչումը դէպ 'ի քրիստոնէական հաւա-
սք' յայտնեցաւ աւելի Պօղոսի ձեռքով, ուստի նա կոչ-
ւեցաւ Առաքել Հեթանոսաց: Պօղոսը իւր դարձից ե-
րեք տարի յետոյ՝ երբ գնում էր Դամասկոս սովորացնելու
և հաստատելու հաւատացելոց, Հրեայք նորա վերայ չա-
րախօսութիւն արին քաղաքապետի մօտ, և նա պահա-
պաններ կարգեց Դամասկոսի դռանը, որ բռնեն նորան, բայց
քաղաքի հաւատացեալք զիշերով ցած թողին պարսպից
վանդակաւ և այնպէս ազատեցին չարախօրհուրդ հալա-
ծողաց ձեռքից: Երբ Պօղոսը հասաւ Երուսաղէմ, սկսաւ
այնտեղ ևս քարոզել, և յետոյ գնաց Տարսոս իւր հայ-
րենի քաղաք, ուր գտաւ նորան սուրբ Բառնաբասը, և Տար-
սոսից վեր առաւ տարաւ նորան իւր հետ Անտիօք:

Քրիստոսի եկեղեցին Անտիօքում:

Փրկչի 38 թուականին Անտիօք քաղաքում Քրիս-
տոսի հաւատացեալք այնքան շատացան, որ աւետարանի
հետեողք նախ և առաջ Անտիօքում կոչեցան քրիստո-
նեայ, Անտիօք քաղաքի հաւատացեալք ստիպեցին Պօղոսին,
որ նոցա տուրքը տանի Երուսաղէմի հաւատացելոց հա-
մար, այս պատճառաւ գնաց նա Բառնաբասի հետ Երու-
սաղէմ, և յետոյ դառնալով կրկին Անտիօք 43 թուին՝
ճանապարհ ընկան դէպ 'ի Կիպրոս, ուր Պափոս քաղաքում
բղնշխի փոխանակ Սերգիոս Պօղոսը նոցա քարոզութեամբ
ընդունեց քրիստոնէական հաւատը:

Հասարակաց աւանդութիւն է, իբր թէ առաքելալը
այս դիպուածով իւր Սաւուղ կամ Սօղոս անունը փո-
խեց Պօղոս՝ նոյն իշխանի անունով, որ Սաւուղի ձեռքով
հաւատաց 'ի Քրիստոս, նմանելով նախկին Հռովմայեցւոց
զօրագլխաց, որոնք իւրեանց ձեռքի տակ նուաճած ազգաց
անունը իւրեանց էին սեփականում: Նորանից յետոյ Պօ-
ղոսն և Բառնաբաս գնացին Անտիօք Պիսիդիոյ, Իկոնիոն և
Լիւստրա: Այս վերջին քաղաքում Պօղոսը բժշկեց 'ի ծնէ
կաղին, ուր մի քանի Հրեայք, որոնք եկած էին Անտիօքից
և Իկոնիայից՝ ժողովրդեան միտքը շփոթեցին, այնպէս որ
մինչև անգամ քարկոծել տին Պօղոսին և հանեցին քա-
ղաքից դուրս իբրեւ մեռեալ:

Ադդէ Հայրապետի, Թադէոս առաքելոյ և Սանդուխտ կուսի նախատակութիւնը և Ոս- կեանց քրիստոնէութիւն ընդունելը:

Արդար թագաւորի մահուան յետոյ՝ յաջորդեց նո-
րա որդի Անանէն, որ ուրացաւ քրիստոնէութիւնը, և այս

385

ուրացութեան պատճառաւ երբ Աղդէ հայրապետը նախա-
տեց նորան, և ըստ առաջարկութեան նորա չընեց նորա հա-
մար թագ «արժան չէ ինձ ասաց, որ իմ ձեռքը այդ անար-
ժան գլխոյ համար թագ չենէ»։ ուստի սաստիկ բարկացաւ
նորա վերայ և սպանել տւաւ, բայց ինքն ևս յԱստուծոյ
պատժելով՝ վիզը ժամանակից յետոյ մեռաւ։ Նորանից
յետոյ Հայոց թագաւորական իշխանութեանը տիրեց Սա-
նատրուկ՝ Աբգարու քեռորդին։ Նոյնպէս և նա ուրանալով
քրիստոնէական հաւատը՝ մտքումը դրաւ որ տիրի
բոլոր Հայաստանին, վասնորոյ զօրքով զնաց Նդեօիա, և
բնաջինջ արաւ Աբգարու ազգատոհմը, և հրամայեց հա-
մարձակ պաշտօն մատուցանել կռոց։ Այս լսելով Թադէոս
առաքեալը կապադովկիա, կամեցաւ ետ դառնալ Հայաս-
տան՝ Սանատրուկ թագաւորի մօտ։ Եւ երբ նա մտաւ Մի-
ջագետաց սահմանը, նորան պատահեցան Հռովմայեցի հինգ
երեւելի դեսպանք, որոնք զնումէին Սանատրուկ թագա-
ւորի մօտ. երբ Թադէոս առաքեալը տեսաւ նորանց՝ սկսաւ
քարոզել Քրիստոսի Աստուածութիւնը, և դարձնելով նո-
րանց դէպի ճշմարիտ հաւատը՝ բոլորին մկրտեց և նոցա-
նից գլխաւորին՝ Խրիւսի անունով՝ որ նշանակումէ Ոսկի,
քահանայ ձեռնադրեց, որոյ անունով նորա ընկերք կոչ-
ւեցան Ոսկեանք։ Երբ Սանատրուկը լսեց՝ թէ Ոսկեանք
Թադէոսի քարոզութեամբ ընդունել են քրիստոնէական հա-
ւատը՝ կանչեց նորան Շաւարշան քաղաք, և այնտեղ սպա-
նել տւաւ։ Նոյնպէս նորա հետ նահատակեցաւ Սանատ-
րուկի դուստր Սրբուհի Սանդուխտը՝ քրիստոնէական հա-
ւատոյ մէջ հաստատ մնալուն համար. Սանդուխտ կուսի
նահատակութեան վերայ հրաշքներ տեսնելով՝ ժողովը-
դոց շատերը հաւատացին ի Քրիստոս և նահատակեցան։

Առաքելոց ժողովը Ներուսաղէմ։

Պօղոսը ողջացած այն հարուածներից և վերքերից,
որ կրեց Վիւստրա քաղաքում, սկսաւ դարձեալ կատարել
իւր առաքելական պաշտօնը և դարձաւ դէպի Անտիոք Ա-
սորւոց, ուր շատ հաւատացեալք կային, որոց մէջ մեծ վէճ
կար այն պատճառաւ որ նորադարձ Հրեաներից մի քանի-
սը սովորացնում էին, որպէս թէ պէտք է ամենքն էլ քրիս-
տոնէական հաւատոյ հետ՝ պահպանեն նաև Մովսի-
սական օրինաց աւանդութիւնքը։

Այս վէճը խափանելու համար՝ Պօղոսին և Բառնա-
բասին ուղարկեցին Ներուսաղէմ, ուր 49 կամ 54 թուին
առաքեալք և երիցունք ընդհանրական ժողով արին և
այնպէս վճռեցին, որ նորադարձ Հրէից և Հեթանոսաց վերայ
այլ ևս չդնեն Մովսիսական օրինաց լուծը, այլ պատուէր
տւին զգուշանալ այնուհետեւ պոռնկութիւնից, կռոց զոհ
մատուցանելուց, խեղդուած անասնոց արիւնից։ Այս ժողո-
վոյ սահմանները Պօղոսն և Բառնաբաս տարան Անտիոք
և խաղաղացրին բոլոր հաւատացելոց սիրտը։

Ագրիպպայի Հալածանքը, նորա պատիժը և մահը։

Մի քանի տարի առաջ Հերովդէս Ագրիպպաս Նրու-
սաղէմի քրիստոնէից հալածանք էր տալիս։ Այս հալածա-
նաց ժամանակը նահատակեցաւ Յովհաննէս Աւետարանչի
մեծ եղբայր Յակոբոս։ Նոյնպէս սուրբ Պետրոսին ևս բան-
տը դձեցին, և բաղարջակերաց տօնից յետոյ 44 թուին,
երբ անօրէն իշխանը պատրաստել էր Հրէից խնդիրքով
սպանել տայ նորան, այն զիշերը Աստուծոյ հրեշտակը բա-

նալով բանտի դռները՝ ազատեց նորան շերովդէս Ազրիպայայի ձեռքից, որով և անկատար մնաց չրէից ակնկալութիւնը: Աւստի բարկացաւ Ազրիպայա բանտի պահապանաց վերայ և հրամայեց սպանել ամենին. բայց ինքն էլ ստացաւ իւր չարագործութեան փոխարէն պատիժը, երբ նա գնաց Կեսարիա մեծահանգէս տօն կատարելու՝ ի պատիւ Կղովիտոս կայսեր, նոյն ատենախօսութեան ժամանակ հասաւ նորան իւր ամբարտաւանութեան պատուհասը, այնպէս որ հանդէսի մէջ Աստուծոյ հրեշտակից հարուած ստանալով՝ անտանելիցաւ բռնեց նորան, որդնալից եղաւ, և հինգ օրից յետոյ չարաչար տանջանքով մեռաւ: Նորա մահից յետոյ չրէաստանը կրկին անգամ Հռովմայեցւոց տէրութեան լուծի տակ ընկաւ: X

Պօղոս առաքելոյն պատահած անցքերը

և նորա քաջած նեղութիւնները:

Սուրբն Պօղոս երբ մեկնեցաւ Բառնաբասից՝ վեր առաւ իւր հետ Շիղայն և գնաց Աստուծոյ երկիրը, Կիլիկիա, Փռիւզիա, Գաղատիա և Մակեդոնիա, ուր հրաշագործութիւնք էր անում և բժշկում էր դիւահարներին:

Աթէնքում խօսեցաւ Արիստարքոսի ատենի մէջ, և ատենակալաց մինը Գիտնեսիոս անունով՝ դարձրեց դէպի քրիստոնէական հաւատը, ուր մի սեղան կար շինած անծանօթին Աստուծոյ անունով, որից առաքելը պատճառուեցաւ քարոզել քրիստոս Աստուծոյ, որին անդիտութեամբ պաշտում էին նոքա: Պօղոսի խօսքերից համոզելով՝ Թամարիս, որ կարծում էր թէ Գիտնեսիոսի կինը լինէր, ընդունեց քրիստոնէութիւնը:

Մանապէս քարոզեց Պօղոս Կորնթոսում և Փիլիպ-

պէուս, ուր մի ոսկերիչ՝ կռոց պատկեր շինող բարկանալով Պօղոսի վերայ, շփոթ գծեց ժողովրդոց մէջ, այս պատճառաւ Պօղոս արտաքուեցաւ այն քաղաքից և ճանապարհ ընկաւ դէպի փոքր Ասիա: Յետոյ եկաւ Երուսաղէմ և գնաց Երուսաղէմայ եպիսկոպոս սուրբ Յակոբայ այցելութիւն: Սա իմանալով չրէից չարախօսութիւնը Պօղոսի վերայ՝ խորհուրդ տուաւ նորան, որ գնայ և սրբի, ինչպէս չրէից օրէնքն է և Նազովրեցւոց հետ մանի տաճարը պատարագ մատուցանելու: Պօղոս հաւանեց, և կատարեց նորա խորհուրդը, բայց ժողովուրդը սորանով աւելի ևս զայրանալով՝ յարձակեցան նորա վերայ, բռնութեամբ տաճարից դուրս հանեցին, և համարեա թէ փոքր էր մնում որ սպանէին: Բայց Ղիւսիաս հազարապետը վրայ հասաւ, բռնեց Պօղոսին և գծեց բանտը, յետոյ երբ լսեց թէ նա Հռովմայեցի է՝ ուղարկեց նորան Հռովմայեցւոց բանակը: Միւս օրը կրկին ատենաբերաւ Պօղոսին՝ թշնամեաց առաջ, բայց Պօղոս չկարողացաւ իւր ատենաբանութեամբ խաղաղացնել բազմութեան սիրտը, և երբ իմացաւ թէ ժողովրդեան մէջ կային Փարիսեցիք, որ հաւատում էին մեռելոց յարութիւնը, նոյնպէս կային և Սադուկեցիք, որ ուրանում էին, բարձր ձայնով յայտնեց ատենի մէջ իւր մեռելոց յարութիւն դաւանելը: Նորա խօսքերից ժողովրդեան մեծ մասը, որ Փարիսեցիք էին, իսկոյն պաշտպանեցին Պօղոսին, և միւսները հեռացան: Մինչդեռ Սադուկեցիք իւրեանց մէջ խորհուրդ էին անում Պօղոսին ծածուկ սպանել, նորա քեռորդին յայտնեց հազարապետին, և նա կամենալով ազատել՝ զիշերով ուղարկեց նորան Կեսարիա չրէաստանի դատաւոր Փելլեքսի մօտ, ուր Պօղոս մնաց երկու տարի բանտի մէջ: Փելլեքսից յետոյ նոյն իշխանութիւնը առաւ Փես-

տոս, սորա ժամանակը Հրեայք կրկին նորոգեցին ամբաս-
տանութիւնը Պօղոսի դէմ: Փետտոս տեսնելով թէ նոցա
խռովութիւնը հաւատոյ մասին է, երես էր պահում Հը-
րէից, և երբ Պօղոս բողոքեց կայսեր՝ Փետտոս հրամայեց ու-
ղարկել նորան Հռովմ, ուր առաքելաւ շատ ներութեամբ
62 թուին հասաւ Հռովմ: Պօղոս Հռովմում ամենեւին
չէր դադարում աւետարանը քարոզել, և ոչ ևս իւր ան-
մեզութեան իրաւունքը պաշտպանել: Շատերը հաւանե-
լով Պօղոսի խօսքերին՝ ընդունում էին քրիստոնէական հա-
ւատը, ուստի նա ոչ միայն սովորացնում էր նոցա՝ որ իւր
մօտ էին գալիս, այլև շատ անգամ գրում էր նոցա, որոնք
զանազան քաղաքներում իւր քարոզութեամբ հաւատա-
ցել և ընդունել էին քրիստոնէութիւնը: Խոր բանտարկու-
թեան ժամանակ Հռովմում, որ երկու տարւոյ չափ տե-
ւեց, գրեց հետեւեալ թուղթերը, որոնք էին առ եկեղեցիս
Հռովմայեցւոց, Կորնթացւոց, Գաղատացւոց, Նիկեացւոց,
Փիլիպպեցւոց, Կոլոսացւոց, Թեսաղոնիկեցւոց, և երկու
թուղթ առ իւր սիրելի աշակերտ Տիմոթէոս, առ Տիտոս,
առ Փիլիմոն և առ Երբայեցիս:

Ներոնի Հալածանքը, Պետրոսի և Պօղոսի նաՀատակութիւնը:

Հռովմայեցւոց կայսերաց առաջինն էր Ներոն որ հա-
լածեց քրիստոնէից: Նորա հալածանքը սկսաւ 65 թուին,
երբ մի մեծ հրդեհ պատահեցաւ Հռովմում, և համարեա
քաղաքի երրորդ մասը մոխիր դարձաւ: Այս պատճառաւ
Ներոնը բամբասեցաւ ժողովրդից, որպէս թէ նա լինէր այն
հրդեհի պատճառը. բայց Ներոն կամեցաւ յանցանքը քը-
րիստոնէից վերայ դնել, որոնք ատել էին Հռովմայեցւոց՝

նորակրօն վարդապետութիւն քարոզելու պատճառաւ: Այն
հալածանաց ժամանակը շատ քրիստոնէայք բռնեցան և
Ներոնի հրամանաւ անտանելի տանջանքներ կրելով նա-
հատակեցան:

Պետրոս առաքելաւ Պոնտացւոց, Կապադովկացւոց և
Բիւթանացւոց կողմերը քարոզելուց, և Անտիոքայ աթոռը
հաստատելուց յետոյ՝ 46 թուին եկել էր Հռովմ, ուր Նե-
րոնի հալածանաց ժամանակ բռնեցաւ, ինչպէս որ նոյն
քաղաքում բռնած էր նաև սուրբն Պօղոս, և երկուքն
միասին խորը բանտի մէջ ինն ամիս մնացին: Պահապանաց
երկուք, երբ տեսան առաքելոց հրաշագործութիւնքը՝ ըն-
դունեցին Քրիստոսի ճշմարիտ հաւատը և մկրտեցան, ու-
րոց հետ նաև քառասուն եօթը հոգի, որոնք նոյն բան-
տում բռնած էին:

Հաւատացեալք խնամք տարան առաքելոց ազատու-
թեանը, որով Պետրոս դուրս եկաւ բանտից, բայց կրկին ետ
դարձաւ բանտը, մահու նուիրելու իւր անձը:

Այն ժամանակը երբ Ներոն Աքայիա էր՝ Հռովմայ
դատաւորը երկու առաքելոց ևս մահուան վճիռը տուին,
և երկոքեան ևս մի և նոյն օրը ստացան նահատակութեան
պատիւ 66 թուին, Յունիսի 29-ին: Պօղոսին զխնատեցին
Հռովմից երեք մղոն հեռի այն տեղ, որ կոչւում էր Սաղ-
ուեան ջուրը, իսկ Պետրոսին խաչեցին Տիրերիս գետի
մօտ Յանիկողեան բլրի վերայ:

Միւս առաքելոց քարոզութիւնը և մահը:

Սուրբ Յովհաննէս աւետարանիչը մնաց փոքր Ասիա և
հիմնեց Եփեսոսի եկեղեցին, ուր հարիւր տարեկան հա-
սակաւ մեռաւ փառաւոր մահուամբ:

Սուրբ Անդրէաս, որ ըստ ժողմնոց էր սուրբ Պետ-

րոտի եղբայր, շրջեցաւ աւետարանը քարոզելով Ակիւթացւոց, Եթովպացւոց և Թրակացւոց երկիրները և խաչակից եղև Քրիստոսի:

Սուրբն Փիլիպպոս Ակիւթացւոց քարոզելուց յետոյ՝ զնաց Տրապոլիս Փռիւզիոյ, ուր Տրայիանոսի ժամանակը նահատակեցաւ ութսուն և եօթն ամաց հասակի մէջ:

Սուրբն Թովմաս զնաց Մարաց և Պարսից քարոզելու, ուստի ճանապարհ ընկաւ դէպի Հնդկաստան, ուր առաքելական աշխատութեամբ՝ մեռաւ փառաւոր մահուամբ և նոյն տեղը թաղեցաւ. ըստ աւանդելոյ Յայսմաւորաց՝ նա Հնդկաստան մեռնելուց յետոյ՝ նորա մասունքը բերին առաջ Ասորեստան և անտի Հայոց Աղձնեաց աշխարհ:

Սուրբն Բարթոլղիմէոս քարոզեց մեծ Հայաստանում, Արկոնիա, և այլ Ասիոյ գաւառներում, և վերջապէս չարաչար և դառն տանջանք մորթեցերձ արին Աղուանքում: Ազգային աւանդութիւնից այս յիշատակն ունինք, իբր թէ սուրբն Բարթոլղիմէոս Աստուածածնայ վերափոխման յետոյ՝ զնաց Երուսաղէմ տեսնել սուրբ կուսի մարմինը, և երբ առաքելաբար արին տապանը՝ տեսան նորա մարմինը վերափոխւած, և Բարթոլղիմէոսի տխրած սիրտը մխիթարելու համար՝ տւին նորան սուրբ կուսի պատկերը, որ նոյն ինքն Աստուածածինը հրաշքով տպաւորել էր տախտակի վերայ: Այն պատկերը Բարթոլղիմէոս բերաւ Հայաստան, և նորանով հրաշք էր գործում: Սա վասպուրական երկրում քարոզելով քրիստոնէական հաւատը՝ շատերին դարձրեց քրիստոնեայ, շինեց եկեղեցի և դրաւ նորա մէջ Տիրամօր պատկերը, նոյնպէս և կանանց մենաստան: Յետոյ շրջելով զնաց ստորին Հայաստան, ուր շատ ժողովուրդ դարձրեց դէպի քրիստոնէութիւնը, որոց հետ և Սանատրուկ թա-

գաւորի քոյրը և նորա տան հաղարապար: Երբ Սանատրուկը լսեց այս, հրամայեց նորա մորթը հանել և խաչել Աղբակայ կողմերում:

Սուրբն Մատթէոս աւետարանիչ, որ երբեմն մաքսաւոր և Ղևի ալփեայ էր կոչուում, իւր քարոզութիւնից առաջ՝ Երուսաղեմի հաւատացելոց խնդրանք գրեց աւետարանը, և յետոյ շրջելով շատ ազգաց մէջ՝ հասաւ բարբարոսաց երկիրը, ուր փառաւոր մահուամբ նահատակեցաւ: Իսկ սուրբն Սիմոն Կանանացի՝ որև Շմաւոն նախանձայոյզ և Յուդայ Յակոբեան քարոզեցին Ասիոյ Միջագետաց ժողովրդոց: Առաջինը որ Սիմոն Կանանացի կամ Շմաւոն նախանձայոյզ էր կոչուում, ինչպէս մեր Յայսմաւուրքը պատմում է, կատարեցաւ Ռշտունեաց գաւառում՝ Որմի քաղաքի մօտ: Թէպէտ ոմանք ասում են՝ իբր թէ Բրիտանիայում նահատակեցաւ. իսկ երկրորդը՝ որ կոչուում է Ղեբէոս, որպէս և Թագէոս, նահատակեցաւ Որմի քաղաքում:

Սուրբն Յակոբ կրտսեր, որ կոչուում էր Յակոբ Ալփեան, և համարուում է Մատթէոս աւետարանիչ եղբայր՝ Հրէից և հեթանոսաց քարոզելուց յետոյ՝ Ասորւոց երկրում կատարեցաւ:

Սուրբն Մատթիա՝ որ Աստուածային վիճակաւ բնորեցաւ երկոտասաներորդ առաքելալ, զանազան երկիրներում աւետարանը քարոզելուց յետոյ՝ զնաց Հրէաստան, ուր վճարեց իւր կեանքը մարտիրոսական մահուամբ:

Չերեզիայի որդի և Յովհաննէս աւետարանիչ եղբայր սուրբ Յակոբ երէցը, որ Պաղեստինում աներկիւզ քարոզում էր Քրիստոսի Աստուածութիւնը, Հրէից յորդորանք բռնեցաւ Հերովդէս չորրորդապետից, և Կեսարիայում սրով նահատակեցաւ:



Հրէից պատերազմը և Երուսաղեմի կործանումը:

Հեթանոսաց ժողովուրդը առաքելական քարոզութեամբ Աստուծոյ արքայութեանը ժառանգորդ եղաւ, իսկ անհաւան չընայք իւրեանց կամքով հրաժարեցան Աստուծոյ արքայութիւնից: Այս պատճառաւ մարգարէից գուշակած պատիժները կատարեցան նոցա վերայ, նոյնպէս և Քրիստոսի սպառնալիքը՝ թէ «ոչ միայն այդքա՛ն քար ՚ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի»:

Հրէաստանը, Հռովմայեցւոց տէրութեան գաւառն էր: Ազգի վերայ կարգած դատաւորները սաստիկ նեղացնելով խտտապարանոց ժողովրդեան, շարժեցին նորանց դէպի յանդընդիմութիւնը և անհնազանդութիւնը, որ ինքնին իսկ ժողովուրդը յօժարամիտ էր ապստամբութեան: Հրէաստանում առհասարակ սկսաւ տիրել սանձարձակ ազատութիւնը և անպատուհաս չարագործութիւնը: Մնչդեռ այսպիսի անկարգութեան մէջ էր Հրէաստանը՝ Հրեայք 66 թուին յայտնի ապստամբեցան Հռովմայեցւոց դէմ, ուստի Հռովմայեցիք ուղարկեցին Վեստիոս զօրապետը որ պաշարի Երուսաղէմը, բայց նա չկարողացաւ նուաճել ժողովրդեան և տիրել քաղաքին: Կայսր Ներոն՝ որ այն ժամանակը Աքայիոյ կողմն էր, լսելով Հրէից ապստամբութեան զոյժը և Վեստոսի տկարութիւնը՝ ուղարկեց Վեսպասիանոսին, որ իւր զօրքով մտաւ Պաղեստին և սուր քաշեց և կրակ տաւ բոլորին, չխնայելով ոչ արանց, ոչ կանանց և ոչ մանկանց: Այն ինչ նա կամենում էր բոլորովին նուաճել Երուսաղէմը, նոյն ժամանակը Ներոնի մահուան և Հռովմայ քաղաքի խռովութեան համբաւը հասաւ իւրեան. որովհետեւ նորա երեք յաջորդք ևս տասն և ութ

ամսուայ մէջ մինը զկնի միւսոյն մեռան և կայսերական գահը մնում էր անյաջորդ: Վասնորոյ Վեսպասիանոս նոյն իսկ զօրաց բանակի մէջ ընտրեցաւ կայսր: Նա որ դարձաւ Հռովմ, շտապով ուղարկեց իւր որդի Տիտոսին, որ աւարտի պատերազմի գործը և տիրի Երուսաղէմին: Տիտոսը 70 թուին եկաւ պաշարեց Երուսաղէմը և տիրեց քաղաքի երեք պարսպաց և կողպտեց վերին և ներքին քաղաքները և առհասարակ բոլորին սուր քաշեց: Տիտոս պատերազմը վերջացնելուց յետոյ՝ զօրաց մի գունդ թողաւ քաղաքի աւերակները պահպանելու. իսկ ինքը շտապեց դառնալ գէպի Հռովմ, ուր ժողովուրդը Տիտոսի և նորա հօր համար փառաւ որ հանդէս կատարեցին:

Դոմետիանոս կայսեր հալածանքը:

Քրիստոսի եկեղեցին մինչև 92 թիւը խաղաղացաւ հալածանքից, բայց Ներոնի անգթութեանց հետևող Դոմետիանոսը կրկին անգամ վրդովեց նորա խաղաղութիւնը: Սորա հալածանաց պատճառն այն էր՝ որ Հրեայք չէին կամում իւրեանց վերայ նշանակած հարկը տալ տէրութեան: Բացի սորանից այլ պատճառներ ևս կային, որ շարժեցին Դոմետիանոսին դէպի գազանական անգթութիւնը, նա կասկածում էր թէ Դաւթի թագաւորութիւնը կրկին ուտի կ'կանգնի, մանստանդ երբ լսել էր Քրիստոսի երկնաւոր և հօգեւոր թագաւորութեան համբաւը, որին իւր միտքը չէր հասնում, առաւել սաստկացաւ նորա սրտի մէջ երկիւղը և նորեց Վեսպասիանոսի վճիռը Դաւթի ազգատոհմի դէմ, որոնք այն ժամանակ թագ էին կայած հալածանաց երկիւղից: Այս անգութ Դոմետիանոսը սուրբ Յովհաննէս աւետարանչին գձեց ձիթով և առցած կաթ-

սայի մէջ, որից սուրբ աւետարանիչը ողջ և անձնաս դուրս եկաւ և յետոյ քարոզեցաւ Պատմոս կղզին, ուր նա գրեց Յայտնութեան գիրքը: Այս հալածանքը դադարեցաւ միայն Պոմեոփանոսի մահով, որին սպանեցին առաջակայ տարին: Նորա յաջորդ Ներուսար ետ կանչեց բոլոր քարոզածներին, սուրբ Յովհաննէս ևս դուրս եկաւ Պատմոս կղզից, զնաց Եփեսոս և բնակեցաւ հաւատացելոց հետ: 3

Հռովմայեցւոց թշնամութեան պատճառք քրիստոնէից դէմ և նոցա հալածանքը:

Հռովմայեցւոց թշնամութեան պատճառները քրիստոնէից դէմ էին, առաջին՝ նոցա խառն բնակելը Հրէից հետ, որոնք իւրեանց ապստամբութեան պատճառաւ ատելի և անարգւած էին բոլոր տէրութեան մէջ, ուստի այն կասկածանքը որ Հռովմայեցիք նոցա վերայ ունէին, չէր ներու՞մ նոցա, որ հրէից և քրիստոնէից միմեանցից զանազանէին, և ոչ գոնեա՞ ուշադիր քննութեամբ մտաբերու՞մ էին քրիստոնէից վարքը և Հրէից ստահակութիւնը: Երկրորդ՝ որ իսկզբանէ քրիստոնէական հաւատը տարածւելու ժամանակը չարաչար զրպարտութիւններ էին համբաւու՞մ քրիստոնէից դէմ: Երրորդ՝ քրմաց և կռոց պաշտօնէից, նոյնպէս և արհեստաւորաց թշնամութիւնը, որոնք օգուտ էին քաղու՞մ կռոց պաշտամունքից: Եւ ուրիշ այս տեսակ թշնամութեամբ քրիստոնէայք ատելի երևեցան Հռովմայեցւոց աչքին: համարելով նորանց խաբեբայ, խռովիչ ժողովրդեան, և այլ սոցա նմանք: Վերջապէս դատաւորները սաստկանալով քրիստոնէից վերայ՝ ամէն տեսակ դառն տանջանքներ գործ գրին և չարաչար մահուամբ կեանքից զրկեցին նորանց:

Նախնի քրիստոնէից բարեկարգութիւնը և նոցա Աստուածպաշտութիւնը:

Քրիստոնէից մէջ նախապատիւք, որ կոչոււմ էին եւրէցք, եպիսկոպոսունք, քահանայք և սարկաւազք խնամատար էին հասարակաց ընչից, և հոգս էին տանում հաւատացելոց պիտոյից, աղքատաց կերակրում էին և հիւանդաց խնամք էին տանում: Յորդորում էին մեծատանց որ որդեգիր վեր առնեն չքաւորաց որդիքը, որոց և այրեաց և քարածնների համար դրամներ էին ժողովում: Եւ այսպէս ամենայն խնամքը և օգնութիւնը որ նոքա անում էին միմեանց, համարեա թէ մէկ անլուծանելի սիրոյ շղթայով կապոււմ էին նորանց միմեանց հետ:

Եւ եթէ նոցա մէջ մի տարաձայնութիւն էր ծագում, ինչպէս որ Պօղոս առաքեալը խրատում է՝ դատաստանը իւրեանց մէջ պէտք է լինէր, և որովհետեւ կարելի չէր որ ամենքն ևս դատաւոր լինէին և կամ կարողանային որոշել դատաւորական միայն երէցները սովոր էին դատաւոր լինել և խաղաղացնել շփոթը: Առաջ քան եկեղեցւոյ պաշտօնեայ ձեռնադրելը՝ պահք պահել և աղօթք անել էին տալիս նորանց:

Առաքեալը ուշադրութեամբ միայն նոցա էին ընտրում, որք յԱստուծոյ կոչւած էին ի քահանայական աստիճան: Ոչ մէկին չէին ձեռնադրում առանց զգուշաւոր քննութեան: Մինչև անգամ Պօղոս առաքեալը խրատում էր՝ ընտրել վարուք և բարութեան համբաւ տանուտեարք, ոչ թէ միայն հաւատացելոց, այլ մինչև անգամ հեթանոսաց մէջ ևս: Նաև քահանայից դէմ չարախօսութիւն չէին ընդունում՝ առանց երկու կամ երեք վկայից:

Կիրակի օրերը հաւատացեալք հաւաքոււմ էին մի հասարակ ժողովոյ տունը, ուր պէտք է ամենքն ևս զանա-

ին, առաջ կարգում էին Սուրբ զիրքը, և ապա առաքեալը կամ երեցը, և երբեմն ևս ՚ի սուրբ Հոգւոյ ազգւած մարգարէք խրատում էին և սովորացնում ժողովրդեան: Նորանից յետոյ բաժանում էին հաւատացելոյ սրբագործեալ հացը, այսինքն Քրիստոսի մարմինը և արիւնը և յետոյ ամենքը միասին գնում էին հասարակաց սեղան, և ճաշ էին ուտում, որոյ անունը կոչւում էր Ագապ՝ այսինքն սէր:

Բացի այն եօթը սարկաւազաց, որոց վերակացու կարգեցին առաքեալը հաւատացելոյ հոգեւոր և մարմնաւոր պիտոյքը կատարելու համար՝ կոյին նմանապէս կանայք, որք Սարկաւագուհիք էին կոչւում, և որոց ընտրութիւնը նոյնպէս ձեռք գնելով և ազօթքով էր լինում: Սոքա կարգւած էին միմիայն կանանց կրօնական պաշտամանց համար, պատճառ որ՝ պարկեշտութիւնը պահպանելու համար՝ հրաման էր, որ սարկաւագը կանանց պաշտօնակատար լինէին:

Հերձուածք և մոլորութիւնք:

Կերինթոս և Եփեսոս ուրացան Քրիստոսի Աստուածութիւնը և մեռելոց յարութիւնը: Եփեսոսիտք բաժանում էին տինգերաց իշխանութիւնը Քրիստոսի և Բեշեարի վերայ: Այս աշխարհքինը տալով սատանային, և հանդերձեալ կենացը Քրիստոսին:

Նիկողայոսեանք, որոց աղանդապետը համարւում էր առաջւայ եօթը սարկաւագաց մինը, բազմակնութիւնը օրինաւոր էին համարում և անառակութեամբ էին կեանք վարում:

Այս մոլորութիւնը Պետրոս առաքելոյ ժամանակը յայտնի էր, ինչպէս ինքը յիշատակում է իւր գրած կաթուղեկեայց երկրորդ թղթի մէջ:

Աղէքսանդրոս Սամարացի, որ Սիմոն մոգի և Նիկո-

ղայոսեան մոլորութեանց հետեւեցաւ: Այլ և Սատուռնիոս և Բասիլիոս Սիմոն մոգի աշակերտք:

Այս դարու մոլորելոց մէջ երեւի էր Ապոլոնիոս Տիանացին՝ Կապադովիկիայում: Սա Պիւթագորեան փիլիսոփայ էր, որ երկար ժամանակ ուղեկից և կենակից էր Եգիպտոսի Գնոստիկեան աղանդաւորաց, նոյնպէս Հնդկաց և Քաղդէացւոց քրմաց հետ: Սա սովորեց ակտարաց գաղտնիքը, որով սկսաւ խաբել պարզամիտներին, մանգալով Նիքիտոս, Զմիւռնիա, Աթէնք, Կորնթոս և Յունաստանի այլ քաղաքներ քարոզում էր իւր մոլորութիւնը:

Եկեղեցական մատենագիրք:

Բացի առաքելոց գրեանց կային նաև նախկին քրիստոնէութեան ժամանակը արժանայիշատակ գրաւոր աշխատութիւնք, գործրինակ Կղեմայ քահանայապետի գրուածքը որ Աստուածային նախանձու և սիրոյ եռանդով լիքն են:

Հերմասայ գիրքը հովիւ կոչեցեալ, որ գրուած է Կղեմայ քահանայապետութեան ժամանակ և բովանդակում է իւր մէջ բարոյական խրատք:

Նախնի հաւատացելոց մինը Յեռեթէոս Աթենացին, որ Դիոնեսիոս Արիսպագացւոյ վարդապետն էր, սա գրեց խորին Աստուածաբանական ճառեր:

Սուրբ Դիոնեսիոս Արիսպագացին, որ սուրբ Պողոսի քարոզութեամբ ընդունեց քրիստոնէութիւնը, և Աթենացւոց եպիսկոպոս կարգեցաւ, գրեց զանազան թղթեր, ճառեր և Աստուածաբանական գրեանք:

Կային նաև երկու նշանաւոր Հրեայք, որոնք յիշուում են նոյնպէս եկեղեցական մատենագրաց կարգում:

Առաջին փիլոն Աղեքսանդրացին, որ երևելի էր Պրատոնական դպրոցի բարոյական և այլաբանական գիտութեանց մէջ: Երկրորդն Յովսեպոս Փլաւիոս երբայեցին, որ գրեց Եօթն գիրք, որոց մէջ պարունակուած է Հրէից պատերազմը Հռովմայեցւոց դէմ, նոյնպէս և երբայեցւոց հնախօսութեանց քսան գիրք:

Մեր մատենագիրքն էին Թագէոս առաքեալը, որ իբր թուով երեսուն կանոններ գրեց Ասորւոց գրով կամ Հայոց հին նշանագրովք:

Լաբուրնայ, որ և Լերուպնա կամ Ղերուբնա եղեւ սացի դիւանագիր, որ գրեց Աբգարու և Սանատրուկ թաղաւորաց վարքը և դրաւ արքունի դիւանատանը: Այս պատմութեան մէջ յիշատակուած է մանրամասնաբար Աբգարու հաւատալն ի քրիստոս, Թագէոս և Բարթուղիմէոս առաքելոց քարոզութիւնը, և այլոց սրբոց նահատակութիւնը Անանիի և Սանատրուկ թաղաւորաց ձեռքով:

Առաջին դարու մեր եկեղեցւոյ Հովիւք և Եպիսկոպոսունք:

Սուրբ Եղեշէ, սա էր Թագէոս առաքելոյ աշակերտ, որ եկաւ Հայաստան նորա հետ միասին: Սա Թագէոս առաքելոյ նահատակութիւնից յետոյ սկսաւ մենակ քարոզել զանազան տեղեր: Մէկ անգամ իւր երեք աշակերտօք մտաւ Ուտեաց գաւառը քարոզելու, յարձակեցան նոցա վերայ թշնամիք, նոցանից մէկին սպանեցին և միւս երկուսին տարան իւրեանց հետ. իսկ սուրբ Եղեշէն զնաց Աղուանք, շինեց եկեղեցի, ուր այն ժամանակից սկսաւ Աղուանից լուսաւորութիւնը: Մի անգամ երբ նա անց էր կենում մի զոհարանի մօտից՝ յարձակեցան նորա վերայ թշնամիք

սպանեցին նորան և դձեցին Հոմենք կոչւած գուրը: Երկար ժամանակ նորա մարմինը մնաց այն գբի մէջ, վերջը հանեցին և տարան Միրհայ սուրբ ուխտը, որ այժմ կոչւում է Զրվշտիկ: Իսկ երրորդ դարում Աղուանից Վաչագան թագաւորը կանգնեցրեց նորա նահատակութեան գբի վերայ մի բարձր սիւն:

Եւստաթէոս կամ Ստաթէ: Սա եկաւ սուրբ Թագէոսի հետ Հայաստան, ձեռնադրեցաւ նորանից եպիսկոպոս և սկսաւ քարոզել Միւսեաց երկրում և այնտեղ մեռաւ: Յայսմաւուրքի մէջ գրած է, որ սա բերել է Զաքարիայ՝ Յովհաննու Կարապետի հօր արիւնը: Սորա նահատակութեան տեղը շինեցաւ վանք և նորա անունով կոչւում է Ստաթէ կամ Տաթեու վանք:

Զաքարիա, որ Թագէոս առաքելոյ աշակերտ էր՝ եկաւ Հայաստան իւր վարդապետի հետ, և երբ Թագէոս առաքեալը Արտաշ գաւառը զնաց Սանատրուկի մօտ. և քարոզեց քրիստոնէութիւնը՝ սորան եպիսկոպոս ձեռնադրեց Արտաշ գաւառի համար. սա իւր վարդապետի մահուան յետոյ հովուեց Քրիստոսի եկեղեցին 12 տարի, և ապա նահատակեցաւ Երուանդ Բ, Հայոց թագաւորից իբր 76 թուին:

Թէոփիլոս՝ Անտիոքացի, սուրբ Թագէոսի հետ միասին Հայաստանում քարոզելուց յետոյ՝ զնացին Կեսարիա, ուր սուրբ Թագէոս ձեռնադրեց նորան եպիսկոպոս: Ոմանք այնպէս կարծեն թէ Ղուկաս աւետարանիչը, որ յիշուած է «Գործոց առաքելոց» մէջ քաջ Թէոփիլէ անունով, սա ինքն է, որ հռչակել էր իւր քարոզութեամբ հեթանոսաց մէջ, և առաջինն էր Պաղեստինու ժողովում, ինչպէս պատմուած է Եւսեբիոս իւր եկեղեցական պատմութեան մէջ: Սա խաղաղութեամբ վճարեց իւր կեանքը 60 թուին:

Զեմենտոս, շատ բարեպաշտ և հաւատարիմ պաշտօնեայ էր Սանատրուկ թագաւորի պալատում: Այն ժամանակը երբ Թադէոս առաքելոյն կամենում էին նահատակել, Զեմենտոսի եղբայրը, որ դահճապետ էր, սխալմամբ կտրեց իւր եղբօր գլուխը: Նոյն ժամանակը սուրբն Թադէոս աղօթքով յարուծիւն տուաւ նորան, և նահատակաց 'ի Քրիստոս: Սա ինչպէս պատմում է Զուղայեցի Յովսէփ քահանայն, Զաքարիա եպիսկոպոսից յետոյ կարգւեցաւ երկրորդ եպիսկոպոս Արտաղ գաւառի, 8 տարի հովուեց եկեղեցին և յետոյ նահատակեցաւ Երուանդ թագաւորի քուրմ եղբօրից՝ իբր 69 թուին:

Կումնի. սա էր Խորասան նահանգից Պարսիկ և մոզ, որ Բարթուղիմէոս առաքելոյ քարոզութեամբ ընդունեց քրիստոնէութիւնը և ձեռնադրուեցաւ նորանից եպիսկոպոս շիր և Զարեանդ գաւառաց վերայ: Սա հետեանոսաց շատերին դարձրեց քրիստոնեայ, և մեռաւ խաղաղութեամբ 88 թուին Ագուլիս ականում, ուր մինչև ցայսօր կայ նորա գերեզմանը, որոյ վերայ շինած է փոքրիկ մատուռ, և է ուխտատեղի:

Տուբիա, սա էր ինչպէս կարծւում է, Տովբիթայ և նորա Տուբիայ որդւոյ ազգից, որ Նինուէն թողաւ, եկաւ բնակեցաւ Նդեսիա քաղաքում: Երբ Թադէոս առաքեալը Նդեսիա եկաւ, սա ընդունեց իւր տունը, նորա քարոզութեամբ քրիստոնեայ դարձաւ և կարգւեցաւ երրորդ եպիսկոպոս Նդեսիոյ: Սա Դոմեսիանոս կայսեր հալածանաց ժամանակը շատ տանջանք կրեց, և մեռաւ 94 թուին:

Թուղթ Արքարու առ փրկիչն Յիսուս

Քրիստոս:

Արքար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչն և բարերար, որ երևեցար աշխարհի Երուսաղեմացոց, ողջոյն:

Լուեալ է իմ վասն քոյ և վասն բժշկութեանդ, որ լինին 'ի ձեռն քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ և զընդոսս սրբել, և զայսս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբ՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի 'ի մօտ իմում յերկուց աստի. կամ թէ դու Աստուած իցես՝ իջեալ յերկնից գործես զայդ. կամ թէ Որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես:

Արդ վասն այնորիկ զրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առիս և բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նաև լուայ զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և զեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս: Որոց տարեալ զթուղթն, պատահեցին նմա յերուսաղէմ: Զայս վկայէ աւետարանական բանն, եթէ էին ումանք 'ի հետեանոսաց ելելոց առ նա. վասն որոյ ոչ հաճմարձակին, որք լուանն, ասել ցՅիսուս, այլ ասեն ցՓիլիպպոս և ցԱնդրէաս, և նոքա ասեն ցՅիսուս: Իսկ ինքն Փրկիչն յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա, ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունի այսպէս:

Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց
Թովմաս առաքեալն Հրամանաւ փրկչին:

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրեւ ոչ իցէ
նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ՝ այսպէս. Զի որք
տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսա-
նեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն: Իսկ վասն այնր զի
գրեցեր դու առ իս գալ ինձ առքեղ. արժան է ինձ կա-
տարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ
իբրեւ կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ
առաքեացն զիս, և յորժամ համբարձայց, առաքեցից զմի
յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և
կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ:

Զայս թուղթ երբեր Անան սուրհանդակ Աբգարու,
ընդ որում և զկենդանադրութիւն փրկչական պատկե-
րին, որ կայ յեդեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժա-
մանակի: Խորեն. էջ 105. Գլ. 1Ա, 1Բ:

ԴԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Տրայիանոս կայսեր հալածանքը:

Քանի որ Քրիստոսի եկեղեցին Հռովմայեցւոց տէրու-
թեան սահմաններում խաղաղութեան մէջ ծաղկում էր, ա-
ւելի Քիւթանիա՝ Պլինիոս կրտսերը, որ երկրորդ դարու սկզ-
բին գաւառական բզեշխի տեղապահ էր, նամակ գրեց Տը-
րայիանոս կայսեր, որ տեղեկանայ նորանից, թէ ինչպէս
պէտք է վարել քրիստոնէից հետ: Տրայիանոսը պատաս-
խան գրեց Պլինիոսին, որ չհալածի և ոչ էլ անպաւիժ թող-
նի նորանց, որովհետեւ ասում էր. «Օրէնք չէ հալածել քը-
րիստոնէից, այլ միայն պետք է պատժել նորանց, որոնք ա-
պստամբութեան մէջ բռնւին»: Տրայիանոսի այս խօսքերը
համարձակութիւն տալով անզգամոց՝ սկսան աներկիւղ
մատնել հաւատացելոց և սաստիկ հալածանք յարուցա-
նել եկեղեցւոյ վերայ, մեծ յանցանք համարելով հաւա-
տացելոց Քրիստոսի Աստուածութիւնը դաւանելը: Այս
հալածանաց ժամանակ Անտիոքայ եպիսկոպոս սուրբն Իզ-
նատիոս Աստուածազգեաց հաւատոյ համար պատկեց իւր
կեանքը նահատակելով Հռովմում բազմութեան առաջ,
որոնք կանգնած նայում էին նորա չարաչար նահատա-
կութեանը, պատառոտելով զազաններից: Նմանապէս Քը-
րիստոսի ազգական սուրբ Շմաւոն, որ սրբոյն Յակոբայ եղ-
բայրն էր, և յաջորդ նորա եպիսկոպոսութեան Նրուսաղե-
մում: Սա 120 տարեկան էր, երբ հերետիկոսները չարա-
խօսութիւն արին Ասորւոց դատաւոր Ատտիկոսի մօտ՝ նո-
րա քրիստոնեայ և Դաւթի զաւակից լինելուն պատճա-

ռաւ: Եւ որովհետեւ Հռովմայեցւոց կայսրները Հրէից ապստամբութեան պատճառները վերացնելու համար մտադիր էին ջնջել Դաւթի ազգատոհմը, ուստի սուրբն Շմաւոն մատնեցաւ տանջանաց: Այն բազմամեայ ծերունին իւր նահատակութեան ժամանակը այնպիսի մարտիրոսական արիութիւն ցոյց տուաւ, որ բոլոր տեսողները և նոյն իսկ դատաւորը զարմացած մնացին, մինչև որ բարձրացրին նորան խաչի վերայ, և այնպէս աւանդեց իւր հոգին 107 թուին՝ քառասուն տարի երուսաղէմում եպիսկոպոսութիւն անելուց յետոյ: Այս տեսակ դառն և անտանելի հալածանքները արգելք չեղան քրիստոնէական հաւատոյ յառաջադիմութեան, այլ ընդհակառակն քրիստոնէութիւնը աւելի սկսաւ տարածուել աշխարհիս ամէն կողմը, Ասիա, Ափրիկէ, Եւրոպա, մանաւանդ միւս բազմամարդ-քաղաքներում, զոր. Հռովմ, Աթինք և Աղէքսանդրիա:

Սուրբ Ոսկեանց նահատակութիւնը, Սուրբիսասանց դարձը և նահատակութիւնը:

Թադէոս առաքելոյ աշակերտը էին սուրբ Ոսկեանք, որոնք Թադէոսի մահուան յետոյ՝ զնացին Ծաղկոտն գաւառ, ուր Եփրատ գետի ափը շինեցին իւրեանց համար խուղեր և ճգնուեցան 43 տարի: Յետոյ 92 թուին իջան Արտաշատ քաղաք՝ քարոզել քրիստոսի Աստուածութիւնը թագաւորական պալատում, ուր Սաթրիկի թագուհւոյ ազգականաց մի քանիսը, որոնք եկած էին Ալանաց երկրից՝ ընդունեցին քրիստոնէութիւնը, մկրտեցան Եփրատ գետում՝ և զնացին սուրբ Ոսկեանց հետ նոցա անապատը, ընդ ամէն էին տասն և եօթն հոգի, որոց զխաւորը կոչուում էր Սուրբիս. սոքա Ոսկեանց հետ տասն և հինգ տարի

միակեցական կեանք վարեցին: Յետոյ 107 թուին Հայոց Արտաւազդ թագաւորը պատահելով նոցա այնտեղ, ուր ճգնուում էին նոքա, շատ աշխատեց դարձնել դէպի կուսպաշտութիւնը, բայց ՚ի զուր, յետոյ երբ իմացաւ թէ Սուրբիսանց քրիստոնէայ դառնալու պատճառը Ոսկեանք են եղել, զօրք ուղարկեց և սպանել տուաւ նորանց և Սուրբիսանց թողաւ առ ժամանակ կենդանի, որոնք ամփոփեցին Ոսկեանց մարմինները, և ինքեանք ճգնուեցան նոյն տեղը: Բայց յետոյ այնտեղից փոխեցին իւրեանց բնակութիւնը Բագրևանդ գաւառը Սուկաւ լեռան վերայ, ուր 20 տարի աւել իւրեանց կեանքը սրբութեամբ անցկացրին: Սորանից յետոյ Ալանաց արքայորդի Դիդիանոսի հրամանաւ 130 թուին, դառն տանջանք կրելով՝ սրով նահատակեցան Քրիստոնէական հաւատոյ մէջ հաստատուն մնալու համար:

**Հրէից ազգի նորանոր թշուառութիւնը
Տրայիանոսի ժամանակ:**

Աիւրենէ գաւառում և Կիպրոս կղզում բնակող Հրեայք գերութեան դառն լուծից ապստիկ նեղացած՝ ապստամբեցան Տրայիանոս կայսեր ժամանակը 115 թուին և համարձակ սկսան կոտորել Յունաց և Հռովմայեցւոց ժողովրդոց երկու հարիւր հազար հոգի աւել: Ուստի Հռովմայեցիք ստիպուեցան պատերազմ տալ Հրէից հետ և նուաճել նորանց իւրեանց լծոյ տակ: Նմանապէս և Պարկլտիսում Տրայիանոսի յաջորդ Ադրիանոս կայսեր ժամանակը միւլենոյն անցքեր պատահեցան: Քանի որ Հրեայք ծածկաբար ապստամբութեան պատրաստութիւն էին տեսնում՝ յանկարծ յայտնուեցան նոցա չարութիւնքը, այս պատճառաւ Ադրիանոս կայսրը, որ այն ժամանակ Հռովմումն էր՝

աւղարկեց նոցա վերայ Յուլիանոս Սեւերոսը: Սա եկաւ պաշարեց նորանց և բոլորին սրով, հրով և սովով ոչնչացրեց, մինչև անգամ անապատ դարձրեց Հրէաստանի երկիրը, և առհասարակ գերի վարեցան ամէնքը Յունաստան, Գերմանիա և Իտալիա, Հրէից մեծ մասն ևս Ագրիանոս կայսեր հրամանաւ փոխադրեցան Իսպանիա:

Մարկոս Աւրելիոսի հալածանքը:

Անտոնինոսի Պիոսի մահուան յետոյ՝ 160 թուին, նորա յաջորդ Մարկոս Աւրելիոսը, ոչ թէ միայն սխալմամբ շփոթում էր քրիստոնէից Գնոստիկեան աղանդաւորաց հետ, այլև համարում էր նոցա ցնորուած՝ այնպիսի յօժարակամութեամբ և սիրով դէպի մահ դիմելուն պատճառաւ: Եւ այսպիսի սխալ դատողութեամբ ճշմարտութեանը չտեղեկացած՝ թոյլ տաւ հալածել նորանց: Այս հալածանաց ժամանակը Յովհաննէս աւետարանչի աշակերտ Պողիկարպոս Զմիւռնոյ եպիսկոպոսը բռնեցաւ. նորան զրփեցին վառած կրակի մէջ, և երբ տեսան որ չէ այրուում՝ սրով խոցեցին, և այնպէս աւանդեց հոգին 166 թուին:

Նոյնպէս և սուրբն Յուստինոս, որ Անտոնինոս Պիոսի ժամանակը բանիւ և գրով պաշտպան և շատագով էր քրիստոնէութեան, ուստի բռնեցաւ նա, և նորա հետ այլ ևս շատ վկայք նահատակեցան միասին 167 թուին: Այն ժամանակը համարեա թէ երեք տարի դադարեցաւ հալածանքը կայսեր հրովարտակաւ: Սա ինքն Անտոնինոս Պիոս Գերմանիոյ ժողովրդոց դէմ պատերազմելու ժամանակը ականատես եղաւ նորանշան հրաշեց, երբ բարբարոսաց անթիւ զօրաց բազմութիւնը պաշարել էր Հռովմայեցւոց բանակը լեռներին մէջ՝ զօրքը նեղանում էին օդի սաստիկ ջերմութիւնից և ջրի պակասութիւնից: Այն վերջին վտանգի մէջ տասներկու լէգէոն

(գունդ) որոց մեծ մասը քրիստոնեայ զօրականք էին՝ ջեռմեռանդ աղօթքով խնդրեցին յԱստուծոյ. լսեց Աստուած նոցա աղաչանքը, և առատ անձրեւ տաւ նոցա. իսկ թշնամեաց բանակի վերայ մի և նոյն ժամանակը սկսաւ երկնից կարկուտ և կայծակներ տեղալ: Կայսրը այս հրաշքից շարժեցաւ, և արգելեց չարախօսութիւնը քրիստոնէից դէմ. բայց երեք տարուց յետոյ՝ դատաւորաց և ժողովրդեան յորդորանօք՝ կրկին վառեցաւ հալածանաց կրակը: Այս հալածանաց ժամանակ շատերը նահատակեցան ճշմարիտ հաւատոյ համար, որոց հետ և Լուգդոնի Փոտինոս եպիսկոպոսը: Սորանից յետոյ երանոսը, որ առաքելոց հետեւող էր, ազգաւ Յոյն և սուրբ Պողիկարպոսի աշակերտ, Լուգդոնի եպիսկոպոս կարգեցաւ, և առաքելական նախանձով վառած՝ քարոզեց ճշմարտութիւնը թէ գրով և թէ բանիւ. և ապա շատ նեղութիւններ կրելով Քրիստոսի անուան համար՝ բռնեցաւ Սեւերոս կայսեր հալածանաց ժամանակը և սրով նահատակեցաւ 203 թուին. սորա հետ նահատակեցան նաև ժողովրդոց շատերը:

Հերետիկոսը:

Քրիստոսի եկեղեցին երբոր իւր հալածողաց դէմ յաղթող էր հանդիսանում՝ բանսարկուն չարութեամբ սկսաւ բաժանել իւր որդւոց ձեռք: Սրբա առաջնական նախնիքաց դարու հերետիկոսներից, և սկսան տարածել իւրեանց մոլորութիւնքը: Նոցանից զխաւորքն էին Կարպիկրատէս Աղեքսանդրացին, որ գնոստիկեանց այսինքն դիտունոց կամ քաղզէից աղանդոյ առաջնորդն էր: Սա սկսաւ քարոզել թէ Քրիստոսի մարմինը երեւոյթ էր առ աչօք, նմանապէս և նորա խաչելութիւնը: Ուրանում էր մեռելոց յարութիւնը, և սովորացնում էր հոգեփոխութիւն մէջ

կից միւսը և այլն: Ագամեանց դուռն Պրոտրիկոս հետեւելով
Կարպոկրատեսին՝ նորոգեց նորա մոլորութիւնքը: Սորա
հետեւողքը կոչւեցան Ագամեանք, պատճառ որ՝ իւրեանց
ժողովոյ մէջ բոլորովին մերկ էին մնում, որով կարծում
էին թէ նախահօր Ագամայ անմեղութեան վիճակին են
նմանում:

Այսպիսի էին նաև Վաղնատինոսի և Մարկիոնի մո-
լորութիւնքը:

Տաոխանոս և նորա աշակիրաք արհամարում էին
ամուսնութիւնը, հրաժարւում էին մից և զինուց: Այս
պատճառաւ կոչւեցան ժուժկաք: Եւ որովհետեւ նոցա մէջ
արգելած էր զինուոյ գործածութիւնը, պատարագի խորհուր-
դը կատարում էին ջրով, վասնորոյ կոչւեցան ջրամատոյցք:

Մոնտանոս փռիւզացին աւելի չարաչար մոլորութեան
մէջ ընկաւ, քան թէ առաջինք, սա միշտ աշխատում էր
հաստատել՝ թէ ինքն Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ կամ
իբրեւ Հոգի Աստուծոյ կարգւած է սովորացնել մարդկանց
աւելի սուրբ և աւելի կատարեալ վարուց կանոններ, քան
թէ աւանդեալ կանոնները, և այլն:

Չատկի տօնի վերայ հակառակութիւն:

Վիկտոր պապի ժամանակը վէճ և խնդիր եղաւ հա-
ւատացելոց մէջ Չատկի տօնի մասին, որ Ասիացւոց եկե-
ղեցիք կատարում էին Մարտ ամսոյ լուսնի տասն և չորսին,
բայց միւս եկեղեցիք տօնում էին կիրակի օրը՝ Գարնա-
նային հասարակածի այսինքն Մարտի լուսնի տասն և չորսից
յետոյ կիրակէ օրը: Ոմանք հաւատացելոց սուգ էին ա-
նում քրիստոսի չարչարանաց վերայ, և ոմանք ուրախա-
նում էին մենեոյն օրը հրաշափառ յարութիւնը տօնելով:
196 թուին վիկտոր պապը Ասիացւոց այս սովորութիւնը

ժողովով հերքեց: Բայց Ասիացւոց եկեղեցեաց մի քանիսը
հակառակեցան, և Պողիկրատես, Եփեսացւոց եպիսկոպոսը
համաձայնելով միւս արեւմտեան եպիսկոպոսաց և Լուգդոնի
Երանոս եպիսկոպոսի հետ՝ առանձին ժողով գումարեց
և սահմանեց Զատիկի տօնը անփոփոխ կատարել Մարտ ամ-
սոյ լուսնի 14-ն, որ օրը որ պատահէ: Այս սովորութիւնը
տեւեց մինչև Նիկիոյ ժողովը, ուր միաբան հաւանու-
թեամբ կանոնադրեցին կատարել Մարտ ամսոյ լուսնի տա-
սըն և չորսից յետոյ կիրակէ օրը:

Եկեղեցական մատենագիրք:

Երկրորդ դարու բազմաթիւ վարդապետներից կան
Անտիոքայ հայրապետ Աստուածազգեաց Իգնատիոսի նա-
մակները, որ գրեց զանազան եկեղեցեաց, որոց տասն և չորսն
միայն թարգմանած են Հայոց լեզու:

Այս դարումն շատ երեւելի էր Յուստինոս վկայի եր-
կու ճառը, որ պարունակում է իւր մէջ քրիստոնէական
կրօնի ջատագովութիւնը, նոյնպէս և Լուգդոնի եպիսկո-
պոս սուրբ Երանոսի ճառերը:

Աթենագորաս, որ Յուստինոսի պէսներկայացրուց կայ-
սերաց քրիստոնէից ջատագովութեան գրքերը: Սա ունի ազ-
գու խօսքերով զրած ճառ յարութեան վերայ:

Տաոխանոս Կուաղրատոս Աթենայ եպիսկոպոս և Ա-
րիստիդէս Աթենացի փիլիսոփայն, որոնք գրեցին ճառեր
ի ջատագովութիւն քրիստոնէական հաւատոյ:

Նոյնպէս Մելիտոն Սարգիկեցին և Անտիոքայ եպիսկո-
պոս Թէոփիլոս գրեցին քրիստոնէութեան օգտաւէտ ճառեր:

Հեգեսիպոս գրեց քրիստոնէական կրօնի սկզբնաւո-
րութեան և յառաջագիմութեան պատմութիւնը, որից մի-
այն մի քանի հատուածներ առաջ է բերում Եւսեբիոսը:

Մեր մատենագիրքն էին Արիստոն Բելլացի քարտուղար Բ, Արտաշէս Հայոց Թագաւորի, որ զրեց նորա պատմութիւնը և նորա Թաղման հանդէսը:

Աւլինգ քուրմ, Անույ պատմագիր իւր ժամանակեայ անցից:

Յուլիոս Ափրիկանոս ժամանակագիր և պատմիչ, որ զրեց Հայոց Պատմութիւն Նդեսիայում հաւաքած, որ Խորենացին ունէր իւր մօտ պատմութիւն զրելու ժամանակը:

Եկեղեցական բարեկարգութիւնը, աստուածապաշտութեան տեղերը, նոցա աստուածապաշտութիւնը և տօները:

Այն ժամանակը, երբ Քրիստոսի եկեղեցին սաստիկ հալածանաց մէջ էր՝ հասարակաց աղօթից կարգաւորութիւնը հանդիսաւոր չէր կատարուում, որպէս մեր ժամանակը: Թէպէտ քրիստոնեայք այն ժամանակը հոյակապ եկեղեցիք և տաճարներ չունէին, այնու ամենայնիւ նոքա հաւաքուում էին տեղ անդ, ուր կարողանում էին կատարել իւրեանց աստուածապաշտութիւնը, որ կոչուում էր եկեղեցի կամ ժողովարան, աղօթարան և տուն Աստուծոյ: Հալածանաց ժամանակը Թագ էին կենում և առանձնանում էին գետնափոր տեղերում և կամ սուրբ վկայից դամբարաններում:

Աստուածապաշտութիւնը սովորաբար սկսում էին սաղմոսերգութեամբ, յետոյ կարդում էին մի քանի զլուխ հին և նոր կտակարանից, որ յետոյ եպիսկոպոսը բացատրում էր ժողովրդեան պարզ և ընտել խօսքերով: Սորանից յետոյ աղօթք և մաղթանքներ անելով կիւրակէ օրերը ոտնակացութեամբ, իսկ միւս օրերը երկրպագութեամբ և

Ճնրադրութեամբ կատարում էին Քրիստոսի մարմնոյ և արեան կենարար խորհուրդը, որին մասնակից էին լինում բոլոր հաւատացեալք:

Ամենայն կիւրակէ օր տօնական հանդէս էր համարուում նոցա համար, ամբողջ օրը անց էին կացնում աստուածապաշտութեամբ: Նոյնպէս յարգում էին Զորեքշաբաթի և Ուրբաթ օրերը, առաջինը՝ որպէս Քրիստոսի մատնութեան օր, և երկրորդը՝ Փրկչի մահուան և խաչելութեան օր: Զատիկը և Պենտեկոստէն նոցա երևելի և զբլխաւոր տօներն էին: Շատ եկեղեցիք ևս կատարում էին սուրբ վկայից նահատակութեան տօնը, որոց չարչարանքը և մահը աւելի ծանօթ էր իւրեանց, և կամ որոնք նահատակուած էին նոյն քաղաքում: X

Մկրտութեան խորհուրդը և այլ բարեկարգութիւնք:

Մկրտութիւնը քրիստոնէութեան դուռն էր համարւած, և մկրտում էին մանկանց և չափահասից ևս, որոնք միանգամ շրեաներից և հեթանոսներից յօժարում էին դառնալ զէպի ճշմարիտ հաւատը: մկրտելուց առաջ նորանց սովորացնում էին քրիստոնէական հաւատոյ ուսմունքը, և բաւականին վարժելուց յետոյ՝ մկրտում էին նորանց աղօթքով և պաս պահել տալով:

Եթէ մի մարդ ծանր յանցանք էր գործում, զորօրինակ կռապաշտութիւն կամ մարգասպանութիւն կամ շնութիւն կամ ուրացութիւն, սաստիկ և երկարատե ապաշխարութեան տակ էր ընկնում, պատճառ որ՝ առաջ պէտք էր հրապարակաւ խոստովանէր իւր մեղքը ամեն հաւատացելոց առաջ, յետոյ քանի մի տարի պէտք էր ապաշ-

խարէր, զրկուած լինելով սուրբ հաղորդութիւնից: Ապաշխարութեան կարգը կատարելուց յետոյ՝ թոյլ էին տալիս մանկէ հաւատացելոց ժողովոյ մէջ և կանգնել նոցա հետ աղօթքի ժամանակը:

Երկրորդ դարու Հայոց եկեղեցւոյ հովիւք և եպիսկոպոսունք:

Բաբելաս եպիսկոպոս, Կուսմիի յաջորդ որին նշանակեց Բարթուղիմէոս առաքեալը այցելու քրիստոնէից: Որպէս հաւատացեալք, նոյնպէս և Բաբելասայ յաջորդք երբէք չպակասեցան Գողթան գաւառից մինչև ցԳրիգոր լուսաւորիչը, թէ և շատ չարչարանք կրեցին, բայց ոչ հովիւք և ոչ քրիստոնէական հաւատը ընդմիջեցաւ:

Բարսուժա կամ Պարսամ հայկազն եպիսկոպոս Եդեսիա քաղաքի, որ Տրայիանոս կայսեր ժամանակը, իբրև քաջ հովիւ առաջնորդում էր Եդեսիոյ հաւատացելոց: Սա քրիստոնեայ դարձրուց ծեր Սարբիւղոս քուրմին և նորա Բաւէա քրոջ, շատերը հեթանոսաց սորանց տեսնելով դարձան քրիստոնեայ: Սարբիւղոսի և նորա քրոջ նահատակութեան ժամանակը Վիսիտս դատաւորից բռնեցաւ և երանելի Բարսուժա եպիսկոպոսը, և սկսան քերել նորա մարմինը քերիչով կախաղանի վերայ: Միևնոյն ժամանակը թաղաւորական հրաման եկաւ քրիստոնէից ազատութեան մասին, որոյ պատճառաւ ազատեցաւ նա այն տանջանքից, և նորանից յետոյ աւելի համարձակ սկսաւ քարոզել և դարձնել շատերին անհաւատներից: Ի վերջոյ հասաւ բարեօր ծերութեանը և փոխեցաւ այս կեանքից 115 թուին:

Բարսուժայ եպիսկոպոսին Եդեսիայում յաջորդեցին եպիսկոպոսունք, և բնաւ չպակասեցան քրիստոնեայք, ոչ

եկեղեցւոյ հովիւք և ոչ ևս թաղէոս առաքելոյ աթոռակալ և Ագդէ հայրապետի յաջորդ: Այս հովիւներից մին է և Կոն կամ Կոնոս կամ Կոգնատիոս եպիսկոպոս Եդեսիոյ՝ Գիողղեսիանոսի ժամանակը: Պատմութիւնից յայտնի երեւում է, որ սա 291—295 թուին հովուել է Քրիստոսի եկեղեցին, սորա ժամանակը Գիողղեսիանոսը հալածել է քրիստոնէից, որոնք այն ժամանակը նորա իշխանութեան տակ են եղել:

Միթար վանահայր (Թերևս եպիսկոպոս): Սա բնակւում էր Միւնեաց երկրում 150-170 թուին նոյն տեղ, որ յետոյ Թանահատայ վանք կոչեցաւ: Միւնեաց եպիսկոպոս Ստեփաննոսի Օրբելեան պատմութիւնից հրելում է որ 150 թուին շինւել է Միւնեաց իշխանաց եկեղեցին սուրբ Ստեփաննոս նախավկայի անուամբ: Եղել է մի վանահայր Միթար անուամբ, որ իւր ճգնողական կեանքը անցուցել է առաքինութեամբ, որոյ մարմինը թաղւել է մի բլրի վերայ եկեղեցւոյ մօտ, որ կար մինչև Ստեփաննոս Օրբելեանի օրերը:

Չոթիկոս, սա էր եպիսկոպոս փոքր Հայոց Կոմանայ քաղաքում, որ հռչակւած էր Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակը, և ըստ Եւսեբիոսի պատմաբանին ընդդիմանում էր խօսքով Մոնտանոսի հերձուածողին: Յետոյ Սևերոս կայսեր հալածանաց ժամանակը նահատակեցաւ 160—190 թուին:

Գ Ա Ր Ե Ր Ր Ո Ր Գ

ՍԵԼԵՐՈՍ ԿԱՅՍԵՐ ՀԱՂԱԾԱՆՔՐ:

Քաղաքական սուտ կասկածանքը ՍԵԼԵՐՈՍ կայսեր միտքը շփոթեցին, պատճառ որ՝ հաւատացելոյ թիւը օրըստօրէն շատանում էր. և քրիստոնէութեան այսպիսի յաջողութեամբ՝ հեթանոսական պաշտամունքը վտանգի մէջ էին ընկնում, և համարեա թէ կործանելու վերայ էր: ՍԵԼԵՐՈՍը երկիւղ կրելով այսպիսի հանգամանաց՝ նորոգեց իւր անդթութիւնը, որով և կայսերաց ունիւք ևս հակառակ վարեցան քրիստոնէից դէմ: 202 թուին իւր տէրութեան բոլոր հպատակաց վերայ հրովարտակ հանեց, որ հեռի մնան հըրէական և քրիստոնէական հաւատոյ, որ պատճառ էր սաստիկ և երկարատեւ հալածանաց: Այն ժամանակ վկայից մէջ երեւելէն էին Հռովմայ պապը Վիկտոր, Որոգինեսի հայր Վեոնիդէս, որ զխատեցաւ Աղեքսանդրիա, և այլք բազումք:

Մանապէս սաստիկ հալածանք էր Գաղղիոյ կողմերը, մանաւանդ Լուզդոն քաղաքում, ուր հասարակաց էր հալածանքը: Սուրբ Երանոսին բռնեցին և տարան կայսեր մօտ, և նա հրաման տուաւ սպանել նորան, և այսպիսի վըկայական դառն մահուամբ փոխեցաւ այս կեանքից:

ՄԱՔՐՍԻՄԻՆՈՍ ԿԱՅՍԵՐ ՀԱՂԱԾԱՆՔՐ:

Քրիստոսի եկեղեցին տասն և երեք տարի խաղաղութեան մէջ էր՝ մինչև Մաքրիմինոս կայսեր տիրապետելը: Սա ինքն ատելի թշնամի էր Աղեքսանդր ՍԵԼԵՐՈՍին, որ

քաղցրութեամբ և խաղաղ էր վարւում քրիստոնէից հետ, ուստի վրդովեց հաւատացելոյ խաղաղութիւնը, հալածանք յարուցանելով 235 թուին: Սորա ժամանակը նահատակեցան Հռովմայ Պոնտիանոս հայրապետը, Սրբուհին վառվառէ 'ի նիկոմիդիա, և այլք շատերը:

ԴԵԼԿՈՍ ԿԱՅՍԵՐ ՀԱՂԱԾԱՆՔՐ:

Գորդիանոսի և Փիլիպպոսի մահուան յետոյ Հռովմայ կայսերութեան գահը նստաւ Դեկոս, որ ատելութեամբ քրիստոնէից դէմ պակաս չէր ներոնից: Սա 249 թուին սկսաւ դառն տանջանօք նեղել և հալածել քրիստոնէից՝ իւր յաջորդ Փիլիպպոսի հակառակ, որ քաղցրութեամբ էր վարւում քրիստոնէից հետ: Դեկոսի հալածանաց ժամանակը նահատակեցան Հռովմայ հայրապետ Փաբիանոս, սուրբն Բաբելաս եպիսկոպոս հանդերձ իւր երեք աշակերտներով Անտիոք քաղաքում, որոյ եպիսկոպոս էր. սուրբն Պողիկտոս փոքր Հայոց իշխանը՝ Սելուսինէ քաղաքում. և Կեսարիայ Տիւրոսում մեծահամբաւ Որոգինէս ծերունին, նոյնպէս և շատերը զանազան տեղերում:

Մանապէս Գաղղոսի և Դեկոսի յաջորդ Վոլուսիանոսի կայսերութեան ժամանակը Հռովմում նահատակեցան Կուռնելիոս և Ղուկիոս հայրապետք. և այլք:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԱՅՈՒՄ:

Սուրբ Երանոսի նահատակութիւնը, որ յիշեցինք ՍԵԼԵՐՈՍ կայսեր հալածանաց պատմութեան մէջ՝ զօրացրուց աստուածապաշտութեան նախանձը Գաղղիայում՝ որ կարօտ էր աւետարանական մշակաց. վասն որոյ Հռովմից շրջնորհալի մարդիկ ուղարկեցան Գաղղիա. ուր իւրեանց քարոզութեամբ տարածեցին քրիստոնէութիւնը և ար-

ժանացան մարտիրոսական պսակին: Սոցա մէջ աւելի նշա-
նաւոր էր արդեամբք սուրբն Գիորնեսիոս, որ աւետարանի
լոյսը տարածեց հեռաւոր գաւառներում, և վճարեց իւր
կեանքը սուրբ մահուամբ:

Տարածայնութիւն և վեճ հերետիկոսաց մկրտութեան վերայ:

Հակառակութիւնը, որ շարժեցաւ Նովատիանոսի
հերձուածի ժամանակը, շատ օգնութիւն տուաւ Ափրիկէի
մէջ համամիտ կուսակցաց, որ կարծում էին թէ հերետի-
կոսաց մոլորութիւնից դառնալիս և եկեղեցւոյ հետ միա-
նալիս, պէտք է նորանց կրկին մկրտել, ինչպէս և Կիպրիա-
նոսը համամիտ լինելով՝ պնդում էր թէ հարկաւոր է նո-
րանց կրկին մկրտութիւնը: Սա կամենալով միանգամայն
իւր կարծիքը հաստատել՝ Ստեփաննոս հայրապետի կամաց
հակառակ՝ 252 և 253 թուին երկու ժողով գումարեց, ու-
րոնք նորա կարծեաց համաձայն գտեցան: Այն ժողովոյ
սահմանները ուղարկեցան Հռովմ Ստեփաննոս Պապի մօտ,
բայց նա չընդունեց, և նամակ գրեց Կիպրիանոսին, որով
արգելում էր չհետեւել այն կարծեաց, որ հակառակ է ա-
ռաքելական աւանդութեանց: Կիպրիանոսը համոզեց ա-
րևելեան եպիսկոպոսաց, որոց ծանր և խիստ էր թուում
Ստեփաննոսի նամակը, որ ժողովով միութեց հերետիկոսաց
մկրտութիւնը իբրև անօգուտ փրկութեան:

Վաղերիանոս կայսեր հալածանքը:

Վաղերիանոս կայսրը իւր թագաւորութեան սկզբին
254 թուին քրիստոնէից վերայ զթասիրտ էր, բայց յե-
տոյ մինը մոգութեան հետեւող Մակրիանոս անունով եզրիպ-
տացի համոզեց նորան, որ հաւաստեցնոց ընդդէմ վարուի

և անողորմաբար հալածի նորանց: Բազմաթիւ նահատա-
կաց մէջ, երևելի էին Կարթագինէի Կիպրիանոս եպիսկո-
պոսը, Յուստինէ կոյսը և Հռովմայ հայրապետ՝ սուրբ Ստե-
փաննոսի յաջորդ՝ Գեստոսը:

Այն ժամանակը տարածւեցաւ քրիստոնէական հա-
ւատը Գոթացւոց և Սկիւթացւոց մէջ այն քարոզչաց
ձեռքով, որոց գերի էին տարել Լիւրիկիոյ, Թրակիոյ և
Ասիոյ գաւառներէից:

Աւրելիանոս կայսեր հալածանքը:

Վաղերիանոսից յետոյ թագաւորեց նորա որդի Գա-
ղիենոս 260 թուին, որ դադարացնելով հալածանքը՝ հը-
րովարտակ գրեց քրիստոնէից ազօթատեղիքը կրկին դարձ-
նել իւրեանց, որ հեթանոսները խլել էին նոցանից: Բայց
եկեղեցւոյ այս խաղաղութիւնը շատ սակաւ միջոց տևեց,
պատճառ որ տասն տարուց յետոյ 275 թուին՝ իշխանու-
թիւնը կալաւ Աւրելիանոս, որ սկիզբը քրիստոնէութեան
յառաջադիմութեան աննախանձ էր, բայց յետոյ իւր բա-
րեսրտութիւնից թուլացաւ, պատճառ որ իւր թագաւո-
րութեան վերջին օրերը, երբ կամենում էր քրիստոնէից
դէմ հրամանագրել՝ յանկարծահաս ցաւով մեռաւ: Սորա
կայսերութեան ժամանակը նահատակեցան փելիքս հայ-
րապետը Հռովմում՝ Կեսարիա՝ սուրբն Մամաս:

Մեր եկեղեցւոյ հալածանքը և Աստուծոյ այցելութիւնը ազգիս:

Աւետարանի լոյսը, որ տարածւեցաւ մեր ազգի մէջ
Աբգար թագաւորի ժամանակը Թադէոս և Բարթոլոմէոս
առաքելոց քարոզութեամբ, աղօտացաւ, երբ կրկին զօրա-
ցաւ հեթանոսական իշխանութիւնը Սանատրուկ արքայի

յաջորդաց ձեռքով, այս պատճառաւ հաւատացեալք արգելաւ լինելով հրապարակական աստուածապաշտութիւնից՝ թագ էին կենում առանձին տեղեր՝ Հայոց կապաշտ թագաւորաց երկիրէն, որոնք Հռովմայեցւոյ և Պարսից պէս թշնամի էին քրիստոնէութեան, ինչպէս որ Տրդատի հայր Խոսրով թագաւորը 214 թուին՝ բռնում էր հաւատացելոց և անխնայ ծառայեցնում արքունական գործոց մէջ, և նոցանից շատերին սպանում էր քրիստոնէական հաւատոյ համար:

Արջայէս Աստուած մեզ համար պատրաստեց Լուսաւորիչ սուրբն Գրիգոր, որոյ յղութիւնը Արտաշ գաւառում եղաւ, ուր էր Թագէի տապանը, իսկ ծնունդը 257 թուին Վաղարշապատ քաղաքում:

Գրիգորի հայրը Անակ՝ հեթանոս Պարթեւազն իշխան էր Պահլաւունեան ցեղից: Սա Պարսից Արտաշէր թագաւորի հրամանաւ եկած էր Հայաստան Հայոց Խոսրով թագաւորին սպանելու:

Եւ երբ կատարեց սպանութեան գործը, և չկարողացաւ փախուստով ազատել իւրեան, պաշարեցաւ Հայոց զօրքից և խեղդեցաւ Երասխ գետի մէջ, իսկ նորա ընտանիքը կոտորեցան սրով, բացի մի որդւոյն, որին իւր ստնտուն (ծծմբը) Սոփիա անունով ինքն հաւատով քրիստոնեայ՝ ազատեց և տարաւ Կեսարիա, ուր մկրտեցին և անունը դրին Գրիգոր: Նա Կեսարիայում իւր դայեկի մօտ բարի վարքով անաւ մինչև 18 տարեկան հասակը, և յետոյ ամուսնացաւ և ծնաւ երկու որդի, Վրթանէս և Արիստակէս:

Երբ Անակը սպանեց Խոսրովին, զօրացաւ Պարսից Արտաշէր թագաւորը և տիրեց Հայոց աշխարհին, կոտորել տաւ Խոսրովի ցեղը, բայց Հայոց նախարարներից մինը

Փախցրեց Խոսրովի որդւոց մինը Տրդատ անունով, և ազատեց նորան Կեսարիա քաղաքում, և այնտեղից յետոյ տարաւ Հռովմ, ուր մնաց Տրդատը Կայսեր մօտ Լիկիանոս իշխանի ձեռքի տակ մինչև 286 թիւը, նոյնպէս մի նախարար Ստայ անունով ազատեց Խոսրովի որդւոց, տարաւ Անի բերդը, և այնտեղ պահեց թագուն:

Այն ժամանակ, երբ Տրդատը Հռովմումն էր՝ Գրիգորը լսելով իւր հօր Անակայ անցքը և Խոսրով թագաւորի աշիրաւ սպանութիւնը, կամեցաւ իմանալ թէ ո՞ւր է նորա որդի Տրդատը, մտքումը դնելով գնալ նորա մօտ և ծառայել՝ իւր հօր տաւած ֆլասու փոխարէն, որ սպանեց Խոսրովին: Եւ երբ իմացաւ թէ Տրդատ արքայորդին Հռովմումն է, գնաց և իբրեւ անձանօթ մտաւ նորա մօտ սպասաւոր:

Գրիգորեանոս կայսեր ժամանակ, երբ Տրդատը ցոյց տաւ իւր քաջութիւնը Գոթացւոց Հռէ թագաւորի դէմ, փառաւորելով կայսերից՝ ընկալաւ իւր հօր թագաւորական թագը և Հռովմայեցւոց զօրքով եկաւ Հայաստան 286 թուին: Տրդատը երբ հասաւ Եկեղեցի գաւառը՝ շնորհակալութեան զօհ բերաւ Անահիտ չաստուածուհւոյն, նմանապէս և Գրիգորին հրաւիրեց ընծայատար լինել կոռն: Բայց նա յանձն չառաւ և յայտնի ցոյց տաւ իւր քրիստոնէութիւնը, որ մինչև այն ժամանակը ծածուկ էր պաշտում. ուստի Տրդատը բարկացաւ և շատ յորդորանաց և սպառնալեաց յետոյ՝ նորան զանազան դառն տանջանքներ տաւ, և երբ իմացաւ որ Գրիգոր իւր հօր սպանող Անակայ որդին է՝ հրամայեց տանել նորան Արտաշատ քաղաք և զձեւ խոր վերապը, ուր մնաց նա իբր 15 տարի, որին Աստուծոյ խնամքով կերակրում էր մի բարեպաշտ կին: Այս վերապի մէջ իբրեւ Հոգւոյն սրբոյ դպրոցում վարժեցաւ նա աւետարանական քարոզութեան մէջ և պատրաստեցաւ Հայոց ազգի Լուսաւորիչ:

Հովիսիմեանց նաՀատակութիւնը:

Այն ժամանակը Գիողեթիանոս կայսրը կամեցաւ ունենալ մի օրիորդ կին ածելու, սա ուղարկեց խնդրակներ իւր տէրութեան ամեն տեղեր որոնել մի աղնիւ և գեղեցկատեսիլ օրիորդ: Այն ժամանակը Հռովմում կար մի կուսանոց Գայիանայ կուսի տեսչութեան տակ, ուր էր և նորա սան (որդեղիր) Հովիսիմէ կոյսը Հռովմայեցի Թագաւորացն, որոյ գեղեցկութեան վերայ խնդրակները զարմացած շուտով իմաց տւին կայսեր:

Այս որ իմացաւ երանելի Գայիանէն՝ վեր առաւ Հռովիսիմէն և նորա ընկերները 75 հոգի կուսանաց իւր հետ և փախաւ Եգիպտոս. այն տեղից գնացին Երուսաղէմ երկրպագութիւն տալու Քրիստոսի տնօրինական տեղեաց: Եւ յետոյ գնացին Նիքեսիա, ուր երկրպագութիւն տւին Փրկչական պատկերին: Վերջապէս տաժաննի չարչարանքով հասան Բզնունեաց դաւառը և գնացին բնակեցան Վաղարշապատ քաղաքի մօտ մի հնձանայարկի մէջ: Երբ իմացաւ Տրդատը Գիողեթիանոսից նոցա գալը, նմանապէս և Հովիսիմէ կուսի գեղեցկութիւնը, հրամայեց զօրաց պաշարել նոցա իջևանը և բռնի տանել կուսին իւր մօտ, որովհետեւ կամենում էր կին ածել իրան: Բայց սրբուհի կոյս Հովիսիմէն չհամաձայնեցաւ Տրդատի կամաց: Տրդատը կանչեց Գայանէին, որ յորդորի Հովիսիմէին նորա կամացը հնազանդելու: Իսկ նա սկսաւ աւելի քաջալերել Հովիսիմէին հաստատ մնալ իւր հաւատոյ մէջ և անարատ պահել իւր կուսութիւնը, արհամարհելով աշխարհիս անցաւոր կեանքը: Այս տեսնելով Տրդատը յուսահատեցաւ, և հրամայեց դռն չարչարանքով սպանել Հովիսիմէին: Միւս օրը նահատակեցին և նորա 33 ընկերաց: Նոյնպէս Գայիանէին ևս իւր

երկու ընկերաց հետ միասին շատ տանջանք տալով նահատակեցին:

Սրբոց կուսանաց նահատակութիւնն էր 301 թուին մի քանի օր սուրբ Գրիգոր լուսաւորչի խոր վերապից դուրս գալուց առաջ, որ վերցրեց նոցա սուրբ մարմինները և ամփոփեց առանձին վկայարաններում:

Եկեղեցական մատենագիրք:

Այս դարու մատենագրաց մէջ երեւելիք էին Ամմոնիոս, որ Որոգինեան վարդապետաց մին էր: Սա գրեց քրիստոնէական կրօնի ջատագովութիւն և չորս աւետարանի պատմութեանց համաբարբառը:

Կղեմէս Աղեքսանդրացի, որ նոյն քաղաքում սուրբ գրոց ուսուցիչ էր: Սա գրեց ժողովածոյ սրբազան և արտաքին գիտութեանց:

Որոգինէս Աղեքսանդրացի՝ Կղեմայ աշակերտ, որ հին կտակարանի բնագիրը յունական նախնի Թարգմանութեան հետ ժողովեց իմի, որոյ մատենը կոչւեցաւ վեցիջևան Աստուածաշունչ:

Տերտուղիանոս Ափրիկեցի՝ երէց Կարթագինոյ, որ հռչակաւոր էր՝ հեթանոսաց՝ Մարկիոնեանց, Վաղենտինեանց և այլ հերետիկոսաց դէմ: Բայց իւր խստակրօնութիւնը նորան մոլորութեան մէջ գծեց:

Կիպրիանոս և Մենուտիոս, Փեղքս և Առնորիոս, քրիստոնէական կրօնի պաշտպանք, Գրիգոր Նէոկեսարացի և այլք շատերը՝ որոնք զարդարեցին եկեղեցին իւրեանց գործով և պայծառացրին սքանչելի առաքինական վարուք:

Մեր մատենագիրքն էին Փիրմիլիանոս Կեսարիոյ Կապադովկացոց եպիսկոպոսը: Սա 240 թուին գրեց Հայոց ազգի հալածանքը խոսրով Թագաւորի ձեռքով և եկեղեցոյ պատմութիւն. բայց ձեռք չէ հասած:

Բարդեղան Նդեսացի, զրեց պատմութիւն Արտաւազդ Բ-ից սկսած մինչև Խոսրով Ա. Արտիղէս եպիսկոպոս, զրեց Անակայ անցքը:

Հերետիկոսք:

Այս դարու զլխաւոր հերետիկոսք էին Նովատեանք Սաբելեանք, Պաւլիկեանք, Մանիքիցիք և Որոզինեանք:

Սաբելեանց առաջնորդը համարուած է Սաբել Լիբէացին, որ Պրաքսեայ և Նովատեայ պէս հակառակ լինելով երրորդութեան Աստուածային անձանց՝ սովորացնում էր թէ Աստուածային երեք անձինք միմեանցից իրապէս չեն զանազանում, այլ մի և նոյն նոցա էութիւնը այլ և այլ անուններ է ընդունում:

Այս մոլորութիւնը սկիզբն և արմատ դարձաւ Պողոս Սամստացւոյ հերետիկոսութեանը, որ իւր ուրացութեան վերայ աւելացրից ունայնացնել Քրիստոսի Աստուածութիւնը, նորան լոկ մարդ համարելով: Այս Սամստացին Ասորւոց Անտիոքայ եպիսկոպոսն էր, որ իւր մոլորութեան և անառակ վարուց մասին՝ նզովեցաւ երկու ժողովոց մէջ 250—266 թուին:

Պաւլիկեանց մոլորութիւնը թէպէտ և երկարատև չէր, ինչպէս որ Սաբելեանցը. բայց Արիոսեանց մոլորութեան շաւիղ պատրաստեց:

Մանիքիցիք էին Մանի Պարսկի աշակերտք: Սա առաջ մոգ էր, և վարժած ակտարաց ուսմանց մէջ, և յետոյ քրիստոնեայ դարձաւ և քահանայ: Սոքանորոգեցին Գնոստիկեանց և այլ նախկին երկու դարու հերետիկոսաց մոլորութիւնքը: Մանին ընդունում էր երկու սկիզբն և արարիչ, մինը բարի և աղբիւր լուսոյ և բարեաց, իսկ միւսը չար՝ պատճառ և արմատ չարեաց: Մանիքիցւոց մոլորու-

թիւնը հերքեցին Ողոսոյնոս և այլ սուրբ հարք, որոց հետ և մեր իմաստուն վարդապետ Եղիշիկ Կողբացին:

Որոզինեանք էին հերետիկոսք, որոնք ասում էին թէ բոլոր հոգիք առաջ են գոյացել քան թէ իւրեանց մարմինները և յետոյ նորանց հետ կապել են: Քրիստոսի բանական հոգին միաւորում էին յաւիտենական Աստուծոյ բանին հետ մարդանալուց առաջ, ուրանում էին դժոխային պատիժներ և այլ այսպիսիք:

Միայնակեցութեան սկիզբը:

Միակեցական վարուց սկիզբն և առաջնորդն էր սուրբ Պողոս Եգիպտացին: Սա վախճանայով հեթանոսաց հալածանաց և իւր քեռաւն դաւաճանութիւնից, որ կամենում էր նորա կայքը ժառանգել՝ 250 թուին թողնելով աշխարհը՝ հեռացաւ գնաց Թեբայիդայ անապատը, ուր մինչև 92 տարի առանձնութեան մէջ մնաց և աղօթքով և աստուածպաշտութեամբ էր անցկացնում իւր կեանքը: Վերջին ժամանակը տեսութիւն գնաց նորա մօտ սուրբ Անտօն, որով և յայտնեցաւ ամենին նորա նախանձելի առաքինութիւնը և մահը: Սուրբ Պողոսի օրինակին հետևեցան և այլ բազումք:

Եկեղեցւոյ ժառանգաւորաց սնունդը:

Առաջին դարերում եկեղեցւոյ ժառանգաւորաց համար թոշակ չկար սահմանած, այլ հաւատացեալք իւրեանց կարողութեան չափ յօժարակամ բերում էին ողորմութիւն և փուրք, և յանձնում էին եպիսկոպոսին, իսկ նա ինքն, կամ այլոց ձեռքով բաժանում էր ոչ միայն եկեղեցական պաշտօնէից, այլ և աղքատաց:

Սիւնհոդոսք կամ ժողովք:

Եկեղեցւոյ բարեկարգութեան համար շատ անգամ լինում էին դաւառական սիւնհոդոսք կամ ժողովք, որոց

մէջ սահմանում էին հաւատոյ և բարի վարուց վարդապետութիւնը, սակայն մեծ և ծանր դործոց մէջ սովորութիւն ունէին զիմեւ երեւել քաղաքաց եպիսկոպոսաց, որոց երեւելքն էին նրուսաղեմի, Անտիոքայ և այլ քաղաքաց եպիսկոպոսունք,

Նոցա Աստուածապաշտութիւնը, պաշտք և աղօթք:

Հոգևոր երգերը և միաբանական աղօթքը օրւայ ամեն ժամին, զիշերւան և ցերեկւան անպակաս մնացին միշտ եկեղեցեաց մէջ. որովհետև տեսնում ենք զանազան ժողովոց մէջ կանոններով սահմանած երգեր և աղօթք, որ կոչւում են կանոնական ժամերգութիւն:

Պահք պահելը և ժուժկալութիւնը թէ առանձնականը և թէ հանրականը, կարճօրեայք և երկարատեք՝ անընդհատ դործ դրին աւելի խտագոյն, քան թէ մեր ժամանակը. որովհետև պաս օրերին հաւատացեալք հրաժարւում էին ոչ միայն մսից, այլ և զինուց, որպէս երևում է մինչև ցայսօր արևելեան ազգաց եկեղեցւոյ մէջ:

Նախնի հաւատացելոց սովորութիւնք էին աղօթել զէպի արևելքը, և տաճարը և սեղանը կանգնել արևելեան կողմը, զատկին և կիւրթակէ օրերը ոտնակաց աղօթել, կիւրակամտի երեկոյեան խնկարկութիւնը իրրև յիշատակ իւրաբեր կանանց, որ պատրաստւել էին Քրիստոսի մարմինը խնկելու, զգուշանալը արիւնից և խեղդւած անասնոց մսից:

Հաւատոյ վարդապետութիւնք, որով վարւում էին հաւատացեալք առաջին երեք դարում:

Եկեղեցւոյ պռաջին պաշտամունքը թէպէտ փոփոխւեցան՝ ժամանակի պահանջման համեմատ, սակայն հաւատոյ վարդապետութիւնը միշտ մնաց մի օրինակ անփոփոխ, որպէս քարոզեց Տէրն մեր ամեն տեղ իւր առաքելոց ձեռ-

քով, նոյնպէս սովորացրին նոքա հաւատացելոց թէ սուրբ զիրքը և աւանդութիւնք հաւատոյ աղբիւր են, և թէ Աստուածային խորհուրդները թէպէտ մարդոյ մտաց անհասանելի են, սակայն պէտք է աներկբայ դաւանել, որովհետև նոքա ևս հաւատացին Աստուծոյ անբաժանելի միութեանը՝ յաւիտենական և անփոփոխ: Հաւատսի ստուգութեամբ յայտնեցին թէ բոլոր էակք Աստուծոյ ստեղծուածք են: Աստուածային երեք անձանց մէջ դաւանեցին մի Աստուածութիւն, և մի Աստուածութեան մէջ երեք անձն, Հայր և Որդի և Հոգի սուրբ, և սոցա յաւիտենականութիւնը:

Եւ թէ Քրիստոս էր մարդացեալ, նոյն ինքն Աստուած և մարդ կատարեալ, որ իւր կամաւոր մահովմբ աղատեց մարդկային ազգը դատապարտութիւնից, յետոյ յարեալ՝ ի մեռելոց: Նաև հաւատացին արդարոց և մեղաւորաց յաւիտենական հատուցումն: Չծնաւ նոցա մէջ երկմտութիւն ինչ Քրիստոսի մարմնոյ և արեան հաղորդութեան վերայ: Սրբոց և նահատակաց պատուելին, և մեծ պատուով խօսեցան սուրբ կոյս Մարիամ Աստուածածնայ վերայ, աներկբայ հաւատացին՝ թէ սուրբ զիրքը Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ է զրած, և թէ նորա մէջ բովանդակւում են մեր հաւատոյ բոլոր մասունքները, և այս պատճառաւ պէտք է աներկմիտ հաւատալ ինչ որ մեզ ուսուցանում է սուրբ զիրքը: Հին կտակարանից ընդունեցան այն զրքերն ևս, որոնք յերայեցւոց կանոնաց մէջ էին. իսկ նոր կտակարանից ընդունեցին չորս աւետարանը, Գործք առաքելոց, Պօղոսի 14 թուղթը, սուրբ Յովհաննէսի և սուրբ Պետրոսի առաջին թղթերը. իսկ մնացած Յակոբայ, Յուդայի և Պետրոսի երկրորդ թուղթը, նմանապէս Յովհաննէսի երկու կաթուղիկեայց թղթերը և նորա Յայտնութիւնը, ոմանք ընդունեցին և ոմանք ոչ: Փոքր ժամանակից յետոյ նոքա ևս ընդունեցան ընդհանուր եկեղեցւոյ միաձայն հաւանութեամբ:

Աւետարանի բարոյական խրատները հաւատոյ վարդապետութեան հետ մի տեսակ միշտ անփոփոխ մնացին: Քրիստոնեայք մեծ հոգս ունէին պահել բնական օրէնքը և տասնաբանեայ պատգամքը: Նոցա քարոզութիւնը այս էր թէ իւրեանց անձը պէտք է նուիրեն Աստուծոյն և ծառայեն նորան որդիական սիրով և ոչ երկիւղիւ ծառայապէս, ընկերին սիրել որպէս իւր անձը և չարեաց փոխարէն բարի հատուցանել և այլն:

Երրորդ դարու մեր եկեղեցւոյ եպիսկոպոսունք և հովիւք:

Աղեքսանդր եպիսկոպոս Գամրացիորը Հայաստանում, ուր փոքր ժամանակ հովուելուց յետոյ ժողովրդեան, գնաց Երուսաղէմ՝ Նարեկոս եպիսկոպոսի ժամանակ, և նորա հետ կատարեց եպիսկոպոսութեան պաշտօն Նարեկոսի խոր ծնութեան պատճառաւ որպէս վկայումէ Եւսեբիոս:

Մեհրուժան եպիսկոպոս Կապադովկացւոց Կեսարիա քաղաքում մեծին Տրդատայ հօր Խոսրով թագաւորի ժամանակը: Սորան նամակ գրեց Աղեքսանդրիոյ հայրապետ Դիոնեսիոսը, որպէս յիշում է Եւսեբիոս եկեղեցական պատմութեան մէջ: Յետոյ Դեկոսի և Ալադերիանոսի հալածանաց ժամանակը շատ վկայից հետ կատարեցաւ Հայոց Խոսրով արքայէն 257 թուին:

Ակակիոս Տիգրանակերտ քաղաքի եպիսկոպոս, որ Դեկոս կայսեր ժամանակը համարձակ քարոզում էր Քրիստոսի Աստուածութիւնը, բայց անհաւատները բռնեցին և տարան Մարկիանոս շիւղատոսի առաջ, և երբ հարցրին նորա վարդապետութեան մասին, նա ատենի մէջ պատմեց կարգով Քրիստոսի կամաւոր մարդիկութիւնը մինչև համբարձումը և երկրորդ զալուստը: Ասկայն շիւղատոսը բոլորովին չլսեց նորա խօսքերը, և զձեւ տաւ բանալ. իսկ յետոյ գրեց Դե-

կոսին, և պատասխանը ընդունելուց յետոյ՝ արձակեց Ակակիոսին իւր տեղ: Նա չէր դադարում քարոզելուց և լուսաւորում էր շատերին, մեռաւ խաղաղութեամբ 250—280 թուին:

Արքեղայոս եպիսկոպոս Հայոց Միջագետում, 260—280 թուին:

Փիրմիլիանոս Արոգինեսի աշակերտ, որ շատ շնորհալի և եկեղեցւոյ հաւատարիմ էր, սորա համար նշանակեցաւ Կեսարիա քաղաքում եպիսկոպոս 251 թուին, որպէս երեւում է Յովհաննու Կարապետի և Աթանաղինեայ եպիսկոպոսի վարուց պատմութեան մէջ: Սա էր Կարքեդոնացւոց Կիպրիանոս եպիսկոպոսի ժամանակը, և մեռաւ խաղաղութեամբ 272 թ.

Աղենէոս Նոյն Կապադովկիայում եպիսկոպոս Արեղիանոս կայսեր ժամանակը: Սա շատ չարչարանք կրեց, հաղորդեց Պորփիրոս Գուսանին Քրիստոսի մարմնոյ և արեանը, և նորա նահատակելուց յետոյ՝ նորա մարմինը դրաւ տապանի մէջ, իսկ ինքն Դիոկղետիանոսի հալածանաց ժամանակը Լիւսիաս զբօսից շատ տանջանք կրեց և մեռաւ 287 թուին:

Ալատիոս Սերաստիոյ եպիսկոպոս, որ ծնած է Սերաստիոյ սահմաններում, նոյն տեղւոյ հաւատացելոց խնդրանք ձեռնադրեցաւ եպիսկոպոս և քաջութեամբ հովուեց քրիստոնէից, միշտ հաստատելով նորանց իւրեանց հաւատոյ մէջ: Այս պատճառաւ Ագրիկոլայոս դատաւորը զխառել տաւ Սերաստիոյ քաղաքից դուրս երկու հաւատացեալ երեսայիւք մի քարի վերայ իւր 315 թուին:

Պետրոս, որ Սերաստիոյ եպիսկոպոսաց մին էր և ընտանի բարեկամ Աթանաղինէ եպիսկոպոսին, որ քրիստոնէական հաւատոյ համար նահատակեցաւ Սերաստիա քաղաքի մէջ:

Աթանաղինէ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, և Գրիգոր լուսաւորչի մարիամ ամուսնոյ եղբայր՝ Սերաստիոյ սահմաններից. սա վարժեցաւ մանկութիւնից գովելի վարուց և ուսման մէջ: Լսելով և տեսնելով Սերաստիոյ եպիսկոպոսը Աթանաղինէի բարի վարքը՝ տարաւ իւր մօտ, ձեռնադրեց քահանայ և կարգեց իւրեան գործակից և տեսուչ իւր վի-

— — —
 Ճակի վերայ: Եւ այսպէս Աթանաղինէսը իւր կոչման արժա-
 նի սկսաւ խնամարկել ժողովուրդը, որոց և բարբարոսաց գե-
 րու թիւնից ազատելու համար՝ զնաց նոցա հետ և ճանա-
 պորհին գանազան հրաշքներ գործեց, և երբ իմացաւ այն
 զաւառի եպիսկոպոսը՝ ձեռնադրեց նորան եպիսկոպոս, և զե-
 րեաց ազատելուց յետոյ՝ ետ դարձաւ իւր տեղը և ամենեկին
 շնորհեց իւր եպիսկոպոս ձեռնադրելը, և այնպէս սկսաւ
 հովուել և մխիթարել քրիստոսի հօտը: Աթանաղինէի այս-
 պիսի արի հսկողութիւնը հաւատացելոց վերայ՝ հասաւ
 թագաւորիականջը որ Բիւթանիոյ Նիկոմիդիա քաղաքումն
 էր, ուստի Ագրիկոլայոս դատաւորը բռնեց նորան թագաւո-
 րի հրամանաւ և շատ հարցուփորձ արաւ, և երբ տեսաւ
 նորան հաստատ իւր հաւատոյ մէջ՝ վճռեց այրել նորան:
 Այսպէս նահատակեցաւ սուրբն Աթանաղինէս 285 կամ
 290 թուին:

Մի քանի տարուց յետոյ սուրբն Գրիգոր լուսաւորիչ
 բերաւ Հայաստան նորանշխարքը, որ Կեսարիոյ Կապադով-
 կացոց Ղևոնդ պատրիարքը ընծայել էր նորան:

Ղևոնդէս կամ Ղևոնդիոս, սա Կապադովկացոց Կե-
 սարիոյ եպիսկոպոս էր, որ շատ նեղութիւններ կրեց
 հալածանաց ժամանակը, ձեռնադրեց սուրբ Գրիգոր լուսա-
 ւորիչը 302 թուին, գտնեցաւ Նիկիոյ սուրբ ժողովում,
 և յետոյ խաղաղութեամբ մեռաւ:

Բացի սոցանից՝ որոնք յիշեցան վերը, կային և այլ ա-
 շակերտք և եպիսկոպոսունք Հայաստանում սուրբ Գրիգորից
 առաջ, որպէս և Միխայէլ Ասորւոց պատրիարքը Հայաստա-
 նի հովուաց շարակարգութեանց մէջ յիշատակում է Թա-
 դէոս և Բարթուղիմէոս առաքելոց երկու աշակերտաց, Խաթ-
 և Դաթէի անուն, որոց անուամբ շինուած են ՚ի վաղուց հե-
 տէ մենաստանք Սիւնեաց երկրում և Աղուանքում, և մինչև
 հիմայ կոչուում են նոցա անունով Խաթրայ և Դաթէի վանք:

ԴԱՐ ԶՈՐՐՈՐԴ

Հայոց ազգի լուսաւորութիւնը:

Յայտն 21 հայտն

Այս դարը որ Քրիստոսի փառաց պայծառութեան
 դարն էր աշխարհքիս երեօին, Աստուծոյ առանձնաշնորհ
 խնամքովը սկիզբն առաւ մեր ազգի լուսաւորութիւնից,
 որովհետեւ 301 թուականին սուրբ Գրիգոր լուսաւորչի
 ճիւղութեան վերջին տարին խոր վերապումը պատահե-
 ցաւ սրբոց Հռիփսիմեանց նահատակութիւնը, որոց մար-
 մինքը մինչդեռ անթաղ գետնի երեսին ածած էին, այ-
 սահարեցաւ Տրդատ թագաւորը՝ կերպարանքը փոխեցաւ
 և իբրեւ վարպն ցնորած և կատաղած՝ զիմեց դէպի
 անմարդաբնակ տեղերը: Նմանապէս այսահարեցան իշ-
 խաններից և նոցա ընտանիքից շատերը: Մինչդեռ Տրդա-
 տայ քոյրը Խոսրովիդուխտը այն Աստուածառաք պատժի
 վերայ վշտացած տրամութեան մէջն էր, երազումը Աս-
 տուծոյ հրեշտակ երևեցաւ նորան և ասաց. «Շտապեցէք
 խոր վերապից հանել Գրիգորին, որ դայ և բժշկի ամե-
 նին»: Այս տեսիլքը, որ անհաւատալի էր հեթանոսաց՝
 հինգ անգամ կրկնեցաւ, ուստի Խոսրովիդուխտի սիր-
 տը շահելու համար, ուղարկեցին Օտայ անունով նախա-
 բարը հանդերձ ծառաներով Աշտիշատ քաղաք, ուր
 խոր վերապն էր, և երբ տեսան որ Գրիգորը կենդանի է,

շուտով հանեցին և տարան Վաղարշապատ, ուր ժողոված էին նախարարները քաղաքի դրան մօտ և սպասում էին: Նոքա տեսնելուն պէս նորան՝ ընկան երկպազուծիւն աւրին, իսկ Տրդատ թագաւորը, նմանապէս և բոլոր այսահարները գնացին առաջ, և սուրբ Գրիգորը ծնգան վերայ չորսո՞թք արաւ նոցա հոգւոյ և մարմնոյ բըժշկութեան համար, որով նոյն ժամայն սթափեցան (ուշքի եկան) ամենքը և զոհացան յԱստուծոյ: Սուրբ Գրիգորը սկսաւ մխիթարել ամենին, ներեց նոցա յանցանքը, ինչոր իրան դէմ գործել էին, յորդորեց ճանաչել ճշմարիտ Աստուած՝ իրանց Աբարիչը, և նորան միայն պաշտել:

Սորանից յետոյ հարց ու փորձ առաւ Հռիփսիմեանց նահատակութեան տեղը, որոնք սրանից ինն օր առաջ նահատակւած էին, և որոց մարմինները դեռ մաքուր և անարատ էին մնացել, ժողովեց տարաւ այն հնձանը, ուր նորանց բնակութեան տեղն էր և թաղեց այնտեղ: Սուրբն Գրիգոր սուրբ կուսանաց հանգստարանի վերայ վաթսուն ու վեց օր մնաց, և քարոզում էր առհասարակ ամենին, ուր առաջին անգամը հրամայեց նոցա հինգ օր ծոմ պահել: Եւ երբ աւարտեց նա քարոզութիւնը, Տրդատ թագաւորը ընկաւ նորա առաջը և խնդրում էր բժշկել նորան հիւանդութիւնից. բայց սուրբն Գրիգոր յորդորեց առաջ սուրբ կուսանաց վկայարաններ շինել, և յետոյ նոցա բարեխօսութեամբ ընդունել բժշկութիւն: Վասն որոյ թագաւորը և իշխանները բոլոր ժողովողոց հետ միասին շինեցին երեք վկայարան, և որոց մէջ ամփո-

փեցին նոցա գերեզմանները: Սրանից յետոյ սուրբ Գրիգորը Աստուածային յայտնութեամբ մի տեղ պատեց որմով, ուր նա ինքն տեսաւ Միածին Որդին յերկնից իջած. նոյն տեղ խաչ կանգնեցրեց, և ամենքը ջերմեռանդ հաւատով երկրպագութիւն էին տալիս և բժշկւում էին ամէն այսահարները:

Այն օրից Տրդատ թագաւորը սուրբ լուսաւորչի յորդորանօր՝ սկսաւ մանգալ ամէն դաւառները և քաղաքները, ոչնչացնել բոլոր կուռքերը և ջնջել կռապաշտութիւնը Հայաստան երկրից:

Սուրբ լուսաւորչի ձեռնադրութիւնը 'ի քահանայութիւն:

Որովհետեւ Քրիստոսի նոր ժողովուրդը պէտք ունէր հովուի՝ նորանց մկրտելու և մատակարարելու եկեղեցւոյ խորհուրդները, Տրդատ թագաւորը հաւանութեամբ իշխանաց և նախարարաց ընտրեց սուրբ Գրիգոր լուսաւորչին իրանց հովիւ և առաջնորդ. ուստի 302 թւին ուղարկեց նորան փոքր Հայոց Կեսարիա քաղաքը, ուր Ղեւոնդիոս հայրապետից ձեռնադրեցաւ Քահանայապետ ամենայն Հայոց և մեծ պատուով դարձաւ Հայաստան, իւր հետ բերելով սրբոյն Յովհանու Կարապետի և Աթանաղինեայ եպիսկոպոսի մասունքը, որ ընծայած էր Ղեւոնդիոս հայրապետը. նմանապէս բերաւ Կեսարիայից Անտօն և Կրօնիդէս անունով երկու կրօնաւորներ, կրօնաւորական կարգը Հայաստանու մէջ տարածելու: Եւ

երբ Սերաստիա քաղաքը վերադարձաւ՝ վեր առաւ իւր հետ արժանաւոր մարդիկ իրան օգնական Քրիստոսի աւետարանը քարոզելու, նմանապէս ուրիշ քաղաքներից հրաւիրեց իւր մօտ եկեղեցական սպասաւորներ և եպիսկոպոսունք, և երբ եկաւ հասաւ Տարօն, ուր տակաւին հեթանոսութիւնը շարունակուում էր, շատ հակառակելով քուրմերի հետ՝ քանդեց կռատները և խաչ կանգնեցրեց, յետոյ եկաւ Աշտիշատ և շինեց վկայարան, ուր սուրբ Կարապետի և Աթանաղինեայ եպիսկոպոսի մասունքը հանգստացրեց: Առաջինն այն տեղ հիմնեցաւ տաճար Աստուծոյ, և այն տեղ մկրտեց իւր հետ ուղեկիցներին, նախարարներին և զօրքին, նմանապէս և այն երկրի բնակիչներին, ուր թողաւ Անտօն և Կրօնիդէս կրօնաւորները, կարգելով նոցա համար առաջնորդ Զնոբ եպիսկոպոսը. յետոյ եկաւ Արարատեան երկիրը ճանապարհին քարոզելով և մկրտելով հաւատացելոց:

**Տրդատ թագաւորի և նորա ընտանեաց
մկրտութիւնը, Հայոց աշխարհի բա-
րեկարգութիւնը:**

Երբ Տրդատը լսեց Գրիգոր լուսաւորչի վերադառնալը, վեր առաւ իւր հետ իւր ամուսնոյն՝ Աշխէն տիկնոջը, իւր քրոջ Խոսրովիդուխտը, զօրքով եկաւ Բագրևանդ գաւառի Բագուան քաղաքը, և սպասում էր նորա գալտեանը. և երբ եկաւ հասաւ այն տեղ՝ առաջ գնաց և մեծ ուրախութեամբ ընկալաւ նորան, ուր սուրբ

Գրիգոր լուսաւորիչը մի ամսաչափ կրկին քարոզելով՝ սկսաւ պատրաստել թագաւորին և ամենին արժանապէս ընդունելու մկրտութեան խորհուրդը, և որպէս նախնի հաւատացելոց սովորութիւն էր, մկրտութիւնից քանի օր առաջ պահք պահել տւաւ նորանց, յետոյ թագաւորին և նորա ընտանեացը տարաւ Եփրատ գետը, մկրտեց թագաւորին և անունը դրաւ Յովհաննէս, նմանապէս մկրտեց նորա ընտանեաց, իշխանաց և ժողովուրդոց՝ թուով իբր չորս հարիւր հազար հոգի: Եւ յետոյ թագաւորի հետ միասին եկաւ Վաղարշապատ քաղաքը, և 303 թուին սկսաւ Եջմիածնայ հոյակապ եկեղեցւոյ շինութիւնը, որոյ անդը առաջուց պարիսպ էր քաշած:

Այն ժամանակը Սուրբ Գրիգոր լուսաւորիչը սահմանեց Տէրունական աստիճանները, սուրբ Աստուածածնայ, նրմանապէս նահատակաց և առանձին սրբոց Հովիսիմեանց և Գայիանեանց նահատակութեան յիշատակի տօնը: Սրբանից յետոյ սկսաւ թագաւորի հետ մանգալ ամենայն Հայոց գաւառները, քաղաքները, քարոզում էր, մկրտում և հաստատում էր ամենին քրիստոնէական հաւատոյ մէջ. ամէն տեղ եկեղեցիք էր շինում, եպիսկոպոսներ, քահանայք. և եկեղեցւոյ պաշտօնեայք էր ձեռնադրում: Եպիսկոպոսաց թիւը, որոնք այն ժամանակը Գրիգոր լուսաւորչից կարգեցան՝ կհասնէր մինչև չորս հարիւրը, բաց 'ի քահանայից, սրանցից շատերը քուրմերի որդիք էին, որոց վարժում էր Աստուածապաշտութեան և հարկաւոր զիտութեանց մէջ և ձեռնադրում էր եպիսկոպոս կամ քահանայ: Ամենին ռոճիկ կարգեց ժողո-

վրդոց տուրքից. նմանապէս սահմանեց եպիսկոպոսաց հասոյթ, շատ վանքեր, կուսանոցներ շինեց, և լուսաւորեց բոլոր Հայաստանը Աստուածգիտութեան լուսով, գործակից ունելով իրան Տրդատ թագաւորին, որ մեծ հոգս տանելով քրիստոնէական հաւատը տարածելու համար՝ հրովարտակ գրեց իւր տէրութեան սահմաններումը բոլոր ժողովրդոց, և յորդորում էր ամենին հասաւոր մնալ Աստուածպաշտութեան և ճշմարիտ հաւատոյ մէջ: ✕

Հայաստանեայց եկեղեցւոյ վիճակը:

Սուրբն Գրիգոր լուսաւորիչ, երբ Հայաստանը զարդարեց Աստուածպաշտութեան կարգերով, և առաքելաշնորհ հովիւներ կարգեց՝ Քրիստոսի հօտը հովուելու Հայաստանի ամէն վիճակներումը, այնուհետեւ ինքը երբեմն մենակ, երբեմն մի քանի ընկերներով առանձնանում էր անապատ տեղերը, ուր աղօթքով և պահօք էր անցկացնում իւր կեանքը, բայց չէր դադարում ստէպ ստէպ այցառնել Քրիստոսի ժողովրդեան, նորանց հաստատելու համար ճշմարիտ հաւատոյ մէջ:

Մէկ անգամ, երբ դարանաղեաց Սեպուհ լեառը գնաց, տեսաւ Մանէ սուրբ կուսին, որ Հռիփսիմեանց ընկերներից մին էր, և ճգնուում էր մի քարայրի մէջ, որոյ խնդրանօք սուրբ լուսաւորիչը մնաց այն տեղ երեք օր, և այն միջոցին վախճանեցաւ Մանէ կոյսը: Նորա մարմինը թաղեց լուսաւորիչը, և ինքն բնակեցաւ այն

տեղ, ուր Տրդատ թագաւորը շատ անգամ գնում էր նորա մօտ այցելութիւն:

Նորադարձ հօտը ճանաչելով սուրբ Հօր երախտիւքը՝ ցանկանում էր յաւերժացնել նորա յիշատակը: Իշխաններից ոմանք իմացան թէ նա երկու որդի ունի Կեսարիայումը, յայանեցին Տրդատ թագաւորին, և նա զեսպաններ ուղարկեց, որոնք գնացին մեծ որդին Վրթանէսը տեսան ամուսնացած, իսկ Արիստակէսը կրօնաւորական կեանքի մէջ՝ բերին նորանց Տրդատի մօտ, նա ուրախութեամբ երկուսին էլ տարաւ Սեպուհ լեառը լուսաւորչի մօտ, և խնդրեց, որ նա իւրեան փոխանորդ ձեռնադրի Արիստակէսին, և նա ընդունելով նորա խնդիրքը՝ եկաւ Վաղարշապատ քաղաքը և ձեռնադրեց Արիստակէսին եպիսկոպոս 318 թուին, կարգելով նորան իւր փոխանորդ և օգնական:

Քրիստոնէական հաւատոյ յառաջադիմութիւնը, Արիոսի մոլորութիւնը: *

Կոստանդիանոսի խնամքը՝ կռապաշտութիւնը ջնջելու համար՝ առ ժամանակ ինչ նուազեցաւ մի ծուռը վարդապետութիւնից առաջ եկած աղմուկի պատճառաւ, որ պակաս մնաստեալ չէր քան զՅեթանոսութիւնը: Այս խռովութեան և մոլորութեան նախապատճառն էր Արիոս Աղէքսանդրացի երէցը, որ 324 թուին սկսաւ սովորեցնել թէ՛ Որդին հաւասար չէ Հօր, ոչ նորա բնութեան կից և ոչ Աստուած, այլ արարած. թէպէտ և ինչ ինչ

կատարելութիւններով հաղորդակից Աստուածութեան: Այս չարամիտ հերետիկոսապետը աշխատում էր իւր մոլորութիւնը իմաստասիրական նրբախօսութիւններով հաստատել և այնպէս մոլորացնել մարդոյ միտքը աստուածային անհաս խորհրդոց խնդիրներումը:

Սա իւր կարծիքները պարզամիտներից շատերին հաւանեցրուց, մանաւանդ Աղէքսանդրիա քաղաքի կանանց և աղջկանց, մինչև որ սորա աշակերտները համարձակ սկսան քարոզ տալ հրապարակներումը և եկեղեցեաց մէջ, և Նզիպտոսի, Ասորոց և Պաղեստինու քաղաքներումը և գեղերում էլ ոչինչ չէին յիշուում, բայց միայն նոցա մոլոր ուսմանց վերայ վէճեր և հակառակութիւններ: Այս մոլորութեան փրամները խափանելու համար՝ երկու ժողովք եղաւ Աղէքսանդրիա, մինը միւսից յետոյ, ուր նըզովեցին Արիոսին, բայց նա իւր կուսակցաց պաշտպանութեամբ աշխատում էր դէմ կենալ ամէն հնարքներին, որով ուղղափառ առաջնորդները շտապում էին շուտով հանգցնել այս մոլորութեան հուրը: Սորա կամակիցների մէջ համբաւաւորներն էին երկու Եւսեբիոսները, մինը Նիկոմիդեայ եպիսկոպոսը, միւս Աղէքսանդրիոյ՝ երկուսն ևս մի օրինակ մարդաստեղծներ և կեղծաւորներ էին, որ լաւ իմանում էին յարմարացնել իրանց ժամանակին հանգամանացը: Եւ երբ Արիոսը աքսորւեցաւ Աղէքսանդրիա, ընդունեց նորան Եւսեբիոս Նիկոմիդացին իւր մօտ, որ Աղէքսանդրիոյ երկու ժողովոց ընդդէմ ժողովք արաւ Բիւթանիումը և պաշտպան էր Արիոսի մոլորութեանը:

290 263 57 —

Նիկիոյ ժողովը:

Կոստանդիանոս կայսրը առաջուց հասկանալով այսպիսի հակառակութեանց հետեանքը, որ այս նոր մոլորութիւնից պիտի յառաջանար, նամակ գրեց Արիոսին և Աղէքսանդր հայրապետին հրամայելով նոցա զսպել լեզուն և այնպիսի մոլորութիւններ ժողովողոց մէջ չտարածել: Բայց ի վերջոյ Կոստանդիանոսը երբ տեսաւ որ իւր նամակադրութիւնը ոչինչ ներգործութիւն չունի՝ հարկ համարեց ընդհանրական ժողով գումարել. վասն որոյ շրջաբերականամակ գրեց քրիստոնէից ամէն զաւառները՝ հրաւիրելով եպիսկոպոսներին և եկեղեցեոյ զահեղեցներին զալ հաւաքել Նիկիա քաղաքը, նոցա հետ հրաւիրւեցաւ և սուրբ Գրիգոր լուսաւորիչը, այլ նա ինչ ինչ պատճառաւ չկամեցաւ գնալ և իւր փոխանակ ուղարկեց սուրբ Արիստակէսին: Նմանապէս և Սեդեքստրոս Հովմայ Հայրապետը իւր ծերութիւնը պատճառելով՝ իւր տեղ պատգամաւորներ ուղարկեց: Ժողովեցան երեք հարիւր տասն և ութ հայրապետներ, որոց հետ և քահանայք և սարկաւագունք. և 325 թուին, 19-ն Յունիսի ժողովը սկսաւ թագաւորական պալատումը ներկայութեամբ Կոստանդիանոս կայսրի, ուր կանչեցին ատեան և Արիոսին: Սա յոյս դնելով մի քանի եպիսկոպոսաց պաշտպանութեանը՝ սկսաւ համարձակ ջատագովել իւր մոլորութիւնը, բայց սուրբ Աթանաս, որ այն ժամանակը սարկաւագ էր՝ ազդու խօսքերով պապանձեցրուց նորան. և երբ ժողովը յայտնի ստուգեց Արիոսի ծուրը և սխալ ուսմունքը՝ սահմանեց եկեղեցւոյ

ուղղափառ վարդապետութիւնը, այն է թէ Քրիստոս ճշմարիտ Աստուած է՝ հաւասար Հօր Աստուծոյ, զօրութիւն և պատկեր և էակից Հօր, որով և ճշմարիտ Աստուած և համագոյակից Հօր: Ժողովը ուրիշ յարմարագոյն բառչդառ Աստուածային բնութեան անբաժանելի միութիւնը բացատրելու համար, քան զհամագոյակից բառը, որ առաջ բերաւ սուրբն Աթանաս, զխաւոր ակոյեանը ընդդէմ Արիոսեան մոլորութեան: Երբ բոլոր ժողովականները միաբանեցան այն ամէն բառերի վերայ, ուղղափառ հաւատոյ բացատրութեանը, կարգացեցաւ զաւանուութիւնը, որ կոչուած է Նիկիական Հանգանակ հաւատոյ, «Հաւատամբ 'ի մի Աստուած» և այլն: Արանից յետոյ ժողովոյ առաջարկութեամբ՝ Արիոսը իւր զխաւոր կուսակիցներով շուտով ուղարկեցաւ աքսոր: — Բանին Աստուծոյ համագոյութեան վարդապետութիւնը հաստատելուց յետոյ՝ ժողովը հոգ տարաւ եկեղեցւոյ բարեկարգութեանը, սահմանեց պատէքը էլ չտօնել լուսնի 14-ն, այլ կիրակի օրը, լուսնի 14-ից յետոյ գարնանային հասարակածին. գրեց եկեղեցւոյ բարեկարգութեան կանոնադրութիւններ, որոց մէջ արգելուած էր նորագարձների և ուրացողների ձեռնադրութիւնը: Որոշեցան եպիսկոպոսաց վիճակի տարածութեան սահմանները, մայրաքաղաքների եպիսկոպոսաց տաւ մետրապոլտական պատիւ: Արգելեցաւ եպիսկոպոսաց, քահանայից և սարկաւազաց վիճակափոխութիւնը, որ սովոր էին թողնել իրանց եկեղեցին և գնալ միւսը. սահմանեցաւ որ երեւելի բաղաբաց, Հռովմայ, Աղէքսանդրիոյ և Անտիոքայ

եպիսկոպոսները իշխանութիւն ունենան մերձաւոր դաւառների վերայ: Այս առաջին ակեղերական ժողովը աւարտեցաւ 25-ն Օգոստոսի 325 թուին: X

Հեղինէ թագուհւոյ բարեպաշտութիւնը և սուրբ խաչի գիւտը:

Քրիստոսի եկեղեցւոյ փառքը և պարծանքը աւելցան այս սքանչելի դէպքով, այսինքն սուրբ խաչի լոյս ընկնելովը 337 թուին: Սրբուհին Հեղինէ Կոստանդիանոսի մայրը, որ զարդարած էր ամէն բարեպաշտութիւններով, եօթանասուն իննը տարեկան հասակին, կամեցաւ գնալ Երուսաղէմ և հոյակապ տաճար շինել Յիսուսի յարութեանը անուամբ: Սա առատաձեռն պարգևներ էր բաշխում կարօտներին, ոմանց շորով, ոմանց նիւթեղէններով, և իւր որդւոյ տւած իշխանութեամբ ազատում էր բանտարկեալներին, և յանցաւորներին ներում, և նորա բոլոր ճանապարհորդութիւնը պարգեւաբաշխութիւն և բարերարութիւն էր:

Երբ հասաւ Երուսաղէմ, և տեսաւ այն սուրբ տեղերը ողորմելի վիճակի մէջ, գութը շարժեցաւ. տեսաւ որ հեթանոսները խափանել են քրիստոնէից Գողգոթայ զընայը, և կռատուն են շինել այն տեղ Ափրդիտէ չաստուծոյ, և համարեա թէ կորցրել, անհետացրել են Քրիստոսի գերեզմանի տեղը: Հեղինէ թագուհին աեղեկացաւ մէկ երբայեցի ծերունի մարդուց, որ աւանդութեամբ գիտէր Քրիստոսի գերեզմանի տեղը, քանդել

տւաւ կռատունը, և զտաւ Փրկչի տապանը: Յետոյ աւերակները փորելուց Քրիստոսի տապանի մօտ լոյս ընկան երեք խաչափայտ, և հրաշքով յայտնեցաւ Քրիստոսի խաչը, որ անգին գանձ համարեց և երկրպագութիւն տւաւ նորա վերայ խաչելածին, յետոյ նորանից մի մասը ուղարկեց Կոստանդիանոսին, և մնացածը թողաւ Երուսաղեմումը, տեղակելով արծաթեայ տապանակի մէջ: Շուտով հոյակապ տաճարի հիմքը զօնեց Քրիստոսի Յարութեան անուանով, նմանապէս մի և նոյն ժամանակը երկու եկեղեցւոյ հիմքը ածել տւաւ, մինը Բեթղէհէմ Քրիստոսի ծննդեան տեղը, և միւսը Զիթենեաց լեռան վերայ, յիշատակ Քրիստոսի Համբարձման: Այս սուրբ տեղերը վայելչազարդ պայծառացնելուց յետոյ՝ կրկին դարձաւ իւր որդւոյ մօտ և այն տեղ փոխեցաւ այս կեանքից յաւիտենական կեանքը 327 թուին:

Թէոդոսի Թագաւորութիւնը և Կոստանդնուպօլսոյ ժողովը:

Թէոդոս Թագաւորը, որ պաշտպան և կուսակից էր ուղղափառաց, իւր զահակալութեան սկզբից հրաման հանեց, որ Նիկիական ժողովոյ դաւանութեանը հետևեն, որն որ հաստատուն ունէին ամենայն եկեղեցիք քրիստոնէից: Սա ոչ ընչացրուց բոլորովին իւր նախորդաց բոլոր հրովարտականքը, որոնք օգուտ հերետիկոսաց էին, յետ դարձրուց ուղղափառներին նոցանցից խլած բոլոր եկեղեցիքը, յետ կանչեց Վաղեսից աբսորւած եպիսկոպոսները,

որոց հետ էր և մեր մեծն Ներսէս, և որոնք միանգամ չէին կամենում հնազանդել այն հրամանին՝ ապստամբ էին համարւում տէրութիւնից: Եկեղեցւոյ օգտի և խաղաղութեան համար հոգս տանելով 387 թուին ժողովք անել տուաւ Կոստանդնուպօլսումը, որ երկրորդ տիեզերական ժողովն էր, ուր հաւաքւեցան արեւելեան դաւառներից հարիւր յիսուն հայրապետներ, որոց մէկն էր և մեր ազգի կաթողիկոս Ներսէս մեծը: Այն ժողովոյ զլիաւոր նպատակն էր հաւատոյ միաբանութիւնը, և հերքումը Մակեդոնեան, Եւնոմեան և Ապողինարեան հերետիկոսաց մոլորութիւնները, ուր սահմանեցաւ հանգանակը բոլորովին համեմատ Նիկիական դաւանութեանը, որոյ մէջ ընդդէմ հոգեմարտից աւելցրին թէ « Հոգին սուրբ է Տէր և կենդանարար, որ 'ի Հօրէ ելանէ », և ընդդէմ Ապողինարեանց թէ « Յղացաւ Հոգւով սրբով 'ի Մարիամայ կուսէն »: Այն ժամանակուայ հերետիկոսութիւնները դատապարտելուց յետոյ՝ հաստատեցին մէկ քանի կանոններ. բայց վեցերորդ կանոնը, որ առանձին պատիւ էր տալիս Կոստանդնուպօլսոյ աթոռին Հռովմայ աթոռից յետոյ՝ պատճառ եղաւ երկու աթոռոց մէջ տեսակ տեսակ հակառակութեանց:

Այս ընդհանրական ժողովոյն անհաւան դանւեցան հերետիկոսները. և երբ չկամեցան միաբանել սուրբ եկեղեցւոյ հետ, Թէոդոս կայսրը ուրիշ մասնաւոր ժողովք արաւ՝ Կոստանդնուպօլսումը. մէկը 382 թուին, միւսը 383 թուին ներկայութեամբ Արիոսեանց, Եւնոմեանց

և Մակեդոնեանց. այնուամենայնիւ հնար չեղաւ կակղացնել նոցա խստասրտութիւնը և գալ նոցա միաբան լինել ուղղափառաց հետ, ուստի թէոզոս կայսրը զայրացած՝ սաստիկ օրէնքներ դրաւ նոցա ընդդէմ, որ աւելի վնասուց պատճառ եղաւ քան թէ օգտի:

22/2 **Հայոց մատենագիրք:**

Այս դարումս մեր եկեղեցական մատենագրաց մշտնջենքն էին Սուրբ Գրիգոր լուսաւորիչը, որ զրեց հոգեշահ ճառեր, որոց բովանդակութիւնը կոչւում է Յաճախապատում:

Ազաթանգեղոս՝ Տրդատ Թագաւորի ատենագիրը, որոյ հրամանաւ զրեց Հռիփսիմեանց նահատակութեան պատմութիւնը, և Հայոց ազգի դարձը ՚ի քրիստոնէութիւն:

Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետ, հօրաքեռ որդի սուրբ լուսաւորչի, սա զրեց ճառեր քրիստոնէական հաւատոյ և բարի վարուց վերայ:

Ձենոբ ազգաւ Ասորի Գլակ անուանեալ, աշակերտ սուրբ Գրիգոր լուսաւորչի և նախկին առաջնորդ Իննակնեան Գլակայ վանից որ ՚ի սուրբ Կարապետ Տարօնոյ, սա զրեց համառօտ պատմութիւն լուսաւորչայ ժամանակին, նորա Կեսարիա գնալը և ձեռնադրութիւնը ՚ի Ղեւոնդիոս պատրիարքէն:

Բիւզանդ Փոստոս Բիւզանդացի, որ առաջ քան Սահակայ մեծի կաթողիկոսութիւնը վերին Հայոց եպիսկո-

պոս էր կարգած, սա զրեց պատմութիւն Հայոց յերրորդ դարութենէն ցվեցերորդն:

Արտիդէս քուրմ, որ մկրտուեցաւ ՚ի լուսաւորչին և ձեռնադրուեցաւ եպիսկոպոս, սա զրեց լուսաւորչի վարքը և նորա որդւոյ Վրթանէսի և Ասիստակեայ, նոյնպէս և Անակայ անցքը:

Ներսէս մեծն Պարթև, զրեց եկեղեցական կանոններ եկեղեցւոյ խորհուրդները մատակարարելու համար:

22/2 **Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ փոճակը:**

Սուրբ Գրիգոր լուսաւորիչը Հայաստանը պայծառացնելուց յետոյ զանազան կարգերով և Աստուածապաշտութեան օրէնքով 331 թուին՝ կարգեց իւր տեղ իւր որդին Արիստակէսը եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Հայոց ազգի, և ինքը առանձնացաւ: Առաջ գնաց քանի ամիս Տարօն՝ Գլակայ վանքը, և յետոյ կրկին գնաց Դաւանաղեաց դաւառը Սեպուհ լեառը, ուր Մանեայ քարայրումը ձգնւում էր, և երեսուն տարի Հայրապետական աթոռ վարելով՝ փոխւեցաւ այս կեանքից անանց կեանքը: Հովիւները գտան նորա մարմինը և թաղեցին վախճանաւ տեղը, և յիսուն տարուց յետոյ Աստուածային յայտնութեամբ Դաւնիկ անունով մէկ ձգնաւոր գտաւ նորա մարմինը և տաքաւ հանգստացրուց Թորդանումը, այնտեղից յետոյ փոխադրուեցաւ Վաղարշապատ հայրապետական եկեղեցւումը, և ժամանակից յետոյ տարածւեցան նորա մասունքը ամէն տեղ:

Սուրբ Արիստակէս յաջորդեց 332 թուին և մեծ

հոգս տարաւ ազգի պայծառութեան և բարեկարգութեան, վանքեր և եկեղեցիք շինեց: Վերջը իշխաններէց մէկը նախանձ պահելով նորահետ սպանեց նորան ճանապարհին, և նորա մարմինը իւր աշակերտները թաղեցին թել գեղումը, որ եօթը տարի վարել էր հայրապետական իշխանութիւնը:

Արիստակէսի եղբայր սուրբն Վրթանէս յաջորդեց նորան 339 թուին, մեծ հոգատարութիւն ունեցաւ ազգի պայծառութեան և եկեղեցւոյ բարեկարգութեան համար: Երուսաղեմի Մակարիոս պատրիարքից ստացաւ սուրբ խորհրդոց և եկեղեցւոյ պաշտամանց կարգադրութեան համար կանոնական թուղթ, որին և ինքը աւելացնելով ազգին պատշաճները, ուղարկեց իւր վիճակի բոլոր եպիսկոպոսաց: Սա Տրդատ թագաւորի հաւանութեամբ և Աղուանից ժողովրդոց խնդրանքով իւր մեծ որդին Գրիգորիսը Արք եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց Աղուանք, որից և սկիզբն առաւ Աղուանից կաթողիկոսութիւնը: Յետոյ Աղուանից իշխանքը կապեցին նորան ձիու պոչից և այնպէս նահատակեցին 342 թուին Վատնեան դաշտումը: Սուրբն Վրթանէս ազգի ազատութեան համար Պարսից բռնութեանից՝ շատ աշխատանք քաշեց, Կոստանդին կայսեր թուղթ գրելով և նորանից օգնութիւն ընդունելով: Հայրապետական իշխանութիւնը տասն և հինգ տարի վարելուց յետոյ՝ փոխւեցաւ աշխարհքիցս և թաղեցաւ Թորդան գեղումը:

Սուրբն Յուսիկ՝ Վրթանէսի փոքր որդին, ամուսնանալուց և երկու որդի՝ Պապ և Աթանաղիսէս ծնելուց յետոյ՝ հրաժարեցաւ աշխարհքից, և պարապում էր ա-

ղօթքով և Աստուածահաճոյ գործով: Սա իւր հօր մահուան յետոյ ընտրւեցաւ կաթողիկոս նորա տեղ 355 թուականին: Սորա ժամանակը ուրացող Յուլիանոսը ուղարկել էր Հայաստան իւր պատկերը: Երբ Հայոց թագաւոր Տիրանը կամենում էր այն պատկերը եկեղեցումը դնել, Յուսիկ սուրբ Հայրապետը՝ խլեց նորա ձեռքից, ոտի տակ դձեց և փշրտեց. այս պատճառաւ Տիրանը սաստիկ բարկացած՝ հրամայեց զանակոծ առնել զսուրբը, մինչև որ հոգին աւանդեց, և թաղւեցաւ Թորդան գեղումը, իւր հօր գերեզմանի մօտ. վեց տարի վարելով հայրապետական աթոռը:

Սուրբն Դանիէլ ծերունի՝ ազգաւ ասորի, աշակերտ էր Լուսաւորչի, որ քահանայ էր ձեռնադրել նորան և կարգել էր քորեպիսկոպոս: Սա Յուսիկի տեղ ընտրւեցաւ կաթողիկոս, և Տիրան թագաւորին ներկայանալուց, երբ սկսաւ յանդիմանել նորան իւր անօրէնութեան և անզրթարար Յուսիկի սպանման համար, թաղաւորը սաստիկ զայրացած՝ հրամայեց իսկոյն խեղդամահ առնել նորան: Սորան շատերը կաթողիկոսի կարգը չեն դնում, որովհետեւ երկար չտեւեց իշխանութիւնը: Սորա տեղ ընտրւեցաւ Փառներսէհը, որ Աշտիշատ քաղաքից էր, և Յովհաննու վանքից Տարոնոյ: Սա երեք տարի վարելով հայրապետական իշխանութիւնը՝ վախճանեցաւ:

Սուրբն Ներսէս մեծը՝ Աթանաղիսեայ որդին, Յուսիկի թոռը, ամուսնացած էր Պօլիսում: Սա Հայոց Արշակ թագաւորի, նախարարաց և բոլոր ազգի հաւանութեամբ ընտրւեցաւ հայրապետ՝ իբր արժանաժառանգ

սուրբ Լուսաւորչի: Վասնորոյ 364 թուին հրաւիրեցաւ Կեսարիա քաղաք, և օծեցաւ Քահանայապետ և Կաթողիկոս Հայոց: Բարեկարգեց Հայաստանը, ժողով արաւ Աշտիշատ քաղաքում, զանազան կանոններ սահմանեց այն ամեն անկարգութեանց համար, որ մտել էին մեր Հայաստանում: Հազարաւոր վանքեր շինեց, որբանոցներ, այրիանոցներ և անկեղանոցներ, զիւղերից և քաղաքներից նոցա համար ռոճիկներ սահմանեց: Սորա սբանչելի զորքերը տեսնելով թագաւորը և բոլոր իշխանները, միարան հաւանութեամբ եպիսկոպոսաց՝ ստիպեցին նորան պատրիարքութեան իշխանութիւն վարել, և այնուհետև Հայոց հայրապետները իւրեանց ձեռնադրութիւնը էլ Կեսարիայից չէին առնում, այլ իւրեանց եպիսկոպոսներից: Եւ յետոյ 366 թուին զնաց Վաղենտիանոս կայսեր մօտ և միջնորդ լինելով հաշտեցրեց Հայոց թագաւորի հետ: Նմանապէս 378 թուին, երբ կրկին զնում էր Վաղէս կայսեր մօտ՝ արքսուրեցաւ նորանից: Բայց երկրորդ տարին, երբ Թէոդոս մեծը թագաւորեց, յետ դարձրուց նորան արքորից և պահեց իւր մօտ երկու տարի՝ մինչև Կոստանդնուպօլսոյ ժողովը՝ և յետոյ 381 թուին պատուով ուղարկեց Հայաստան: Նա եկաւ տեսաւ Հայաստանը աւերած Պարսից և ուրացող իշխանաց ձեռքից, ամենին խրատեց, ուղղեց, և խաղաղութեան ուխտ հաստատեց թագաւորի և իշխանաց մէջ, որ արդարութեամբ և Աստուծապատուութեամբ վարեն իւրեանց կեանքը: Բայց Պապ թագաւորը հաստատ մնալով իւր չարութեան մէջ՝ բարկացաւ նորա յանդիմանութեան և խրատների վերայ, և մահադեղով սպա-

նեց, որով հանդաւ Հայաստանի լուսաւայլ ջահը, երեսուն երեք տարի վարելով հայրապետական աթոռը:

Սորա մահուան յետոյ 384 թուին, Հայրապետութեան աթոռը ունէր Շահակը Մանազկերտից՝ երկու տարի: Սորանից յետոյ Զաւէնը՝ մէկ տարի, յետոյ Ասպուրակէսը՝ երեք տարի: Ասպուրակէսի մահուան յետոյ ընտրեցաւ Սահակ պարթևը՝ մեծին Ներսէսի որդին, որոյ հոգեշահ գործոց յիշատակը կը տեսնես հինգերորդ դարու անցից մէջ:

Ազգային ժողովներ:

Երբ Հայաստանումը ծաղկեցաւ քրիստոնէական հաւատը, մեր ազգի սուրբ հայրապետները, ժողովուրդը աւելի խաղաղ պահելու համար՝ սովոր էին երբեմն երբեմն եպիսկոպոսաց և վարդապետաց միաբան հաւանութեամբ ժողով անել, բարեկարգութեան կանոններ հաստատելու, և կամ հերձուածները մերժելու համար, որ համառօտիւ դար դար յիշատակելը կարեւոր համարեցինք:

Վաղարշապատու Ա, ժողովը 325 թուին:

Երբ Արիոսի մոլորութիւնը տարածուեցաւ մեծին Կոստանդիանոսի ժամանակը, երեք հարիւր տասն և ութ հայրապետներ ժողովեցան Նիկիա քաղաքումը այն հերձուածը հերքելու համար: Կոստանդիանոս կայսեր առանձին նամակաւ հրաւիրեցաւ և մեր լուսաւորիչն Գրի-

գոր, այլ նա հրաժարելով պատուից՝ իւրեան տեղ ու-
ղարկեց իւր փոքր որդին Արիստակէսը: Ժողովը վեր-
ջանալուց յետոյ՝ վեր առաւ ժողովոյ սահմանած բարե-
կարգութեան քսան կանոնները և Նիկիական հանգա-
նակը և վերադարձաւ Վաղարշապատ քաղաք: Լուսա-
ւորիչը ուրախութեամբ ընկալաւ այն կանոնները և հան-
գանակը, և եպիսկոպոսաց ժողով գումարեց, այն կանոն-
ներին ևս կանոններ աւելացնելով՝ և հանգանակը տեղ
տեղ աւելի հաստատելով կնքեց այս խօսքով. «Իսկ մեք
փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր-
պագանելով սրբոյ Երրորդութեան և միոյ Աստուածու-
թեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ»:

Աշտիշատու Ա, ժողովը 365 թուին:

Մինչդեռ քրիստոնէական կրօնի բարեկարգութիւն-
ներն օրէ ցօր նուազում էին Հայաստանում Արշակայ,
Պապայ և քանի մի նախարարաց անկարգ և թոյլ զնաց-
քից, Մեծն Ներսէս հոգ ասնելով ազգի շինութեան և
խաղաղութեան համար՝ ժողովեց եպիսկոպոսունք, քա-
հանայք և աշխարհականք Աշտիշատ քաղաքում, որովհե-
տեւ այն ժամանակը այն աստիճանն էին հասել որ մինչև
անգամ քոստոններին կամ խոցոտներին արհամարհում
էին, չէին օգնում նոցա, և դուրս էին անում քաղա-
քից. վասնորոյ այս ժողովում սահմանեց նոցա համար
տներ շինել և հիւանդանոցներ, և կարգեց ամէն գիւղի
և գաւառների կալուածներից հասոյթ, յանձնելով Վար-

նեցի խաղ սարկաւազի հոգաբարձութեանը: Նմանապէս
հիւրանոցներ շինեց պանդուխտների և կրօնաւորաց հա-
մար վանքեր, միայնանոցներ և խրճիթներ: Նշովքով
արգելեց նախարարաց մերձաւոր խնամութիւնը, որ իւ-
րեանց ցեղի սեփական ազատութիւնը կամենալով՝ մեր-
ձաւորաց վերայ էին պսակում: Նմանապէս արգելեց
հեթանոսաւանդ սովորութիւնը, որ բարձր ձայնով լաց
ու սուգ էին անում մեռելի վերայ:

Վաղարշապատու Բ, ժողովը 366 թուին:

Հայոց նախարարները տեսնելով մեծին Ներսէսի
հոգեւանդն փոյթը և մեծ վաստակները, միաբան հա-
ւանութեամբ եպիսկոպոսաց և քահանայից ժողովեցան
Վաղարշապատ արքայանիստ քաղաքում 366 թուին, և
սահմանեցին որ Հայոց կաթողիկոսունք իւրեանց ձեռնա-
դրութիւնը այլ ևս չառնուն կեսարիոյ եպիսկոպոսից, այլ
մեր ազգի եպիսկոպոսներից: Վասնորոյ մեծ հանդէսով կար-
գեցին Ներսէսին Հայոց եպիսկոպոսապետ, որ այնուհետև
աւելի փառաւորազոյն վարի Հայաստանեայց եկեղեցւոյ
առաքելական աթոռը:

Վաղարշապատու Գ, ժողովը 383 թուին:

Ներսէս մեծը բաւական չհամարելով այն ուղղու-
թեան կանոնները՝ որով աշխատեց հաստատել Աստուած-
պաշտութիւնը և խաղաղութիւնը Հայաստանում, 383
թուին կրկին ժողով արաւ Վաղարշապատում իշխան-

ներով և եպիսկոպոսներով և յորդորեց թագաւորին և նախարարներին առհասարակ, որ Աստուածապաշտութեան սէր և փոյթ ունենան, նոքա էլ ուրախութեամբ խոստացան միմեանց հպատակ լինել, ոչ որ չը գրկել, և երգուեցան ամէնքը հաստատ մնալ իւրեանց խոստմանց մէջ:

Քրիստոնէից աստուածապաշտութիւնը և սովորութիւնները չորրորդ դարում:

Երբ քրիստոնէութիւնը ծագեցաւ առաջադիմութեամբ՝ հետ զհետէ աւելցան նորա արտաքին պաշտամանց պայծառութիւնները. հոյակապ եկեղեցիք շինեցան և գեղեցկակար պատկերներով և քանդակազոր ծովիւներով զարդարեցան, ինչպէս երեւում է մինչև հիմայ էլ հնաշէն աաճարներումը, և հանդիսաւոր տօնախմբութեան թիւը աւելացաւ, որն որ կատարում էին ամէն տարի:

Մկրտութեան խորհուրդը կատարում էին միայն քատիկի նաւակատիկին և Պենտեկոստէի տօնին, բայց դաւառներումը տեղ տեղ կատարում էին Յինանց օրերին: Սովորաբար այս խորհուրդը կատարւում էր տաճարի դաւիթներում, ուր մկրտութեան աւազաններ էին դնում: Շատերը բարեպաշտներից մկրտութիւնը ընդունում էին Յորդանան գետի մէջ, պատճառ որ հին ժամանակը սովորութիւն էր մկրտութիւնը յետ գձել մինչև ծերութիւնը, ոմանք էլ մինչև մահուան օրը:

Աստուածապաշտութիւնը և եկեղեցւոյ խորհուրդը

ները համարեա թէ ամէն ազգ միօրինակ էին կատարում, թէպէտ և քանի մի ծեսերով զանազանւում էին միմեանցից, և այն թեթեւ և անտարբեր ծեսերի մէջ, ամէն ազգ ինչպէս որ սովորութիւն կամ աւանդութիւն ունէր:

*) Երբ հեթանոսական խաւարը փարատեցաւ և աւետարանական լոյսը տարածեցաւ աշխարհիս կրեաին, նոյնպէս և Վիրք Պարսիկք, Հնդկիք և Արաբացիք ընդունեցին քրիստոնէական հաւատը:

Վրաց ազգի քրիստոնէութիւն ընդունելու համար ստոյգ աւանդութիւն ունինք Մովսէս Խորենացւոյ պատմութենէ, թէ Նունէ կոյսը, որ Հռիփսիմեանց ընկերներից մին էր, գնացել էր Վրաստուն Մծխէթ քաղաք և հրաշագործութեամբ բժշկել Վրաց թագուհւոյն ծանր և վտանգաւոր հիւանդութենէն: Թագուհին լսելով նորա քարոզութիւնը, և թագաւորն ևս համոզւելով ընդունել էին Քրիստոսի աւետարանը: Այն ժամանակը Նունէն իսկոյն տեղեկութիւն է տալիս Գրիգոր լուսաւորչին և կարգադրութիւն է խնդրում այս մասին. բայց նա որովհետև դեռ ևս չէր ձեռնադրուած, կարող չէր հոգևոր հովիւներ ուղարկել նոցա, ուստի Վրաց թագաւորը շտապով խնդրեց Կոստանդիանոս Այսյսերէն և նա ուղարկեց եպիսկոպոսունք և եկեղեցական պաշտօնեայք աւետարանը քարոզելու և մատակարարելու նոցա եկեղեցւոյ խորհուրդները: Սրբունի Նունէն Վրաց լուսաւորելուց յետոյ, որպէս պատմում է Խորենացին՝ առաքելուն՝ եղաւ և այլ դաւառաց մինչև Մազքէթաց սահմանը:

Նոյն ժամանակը տարածեցաւ Քրիստոնէութիւնը և Պարսկաստան, ուր այնքան շատացան քրիստոնէայք մինչև որ եկեղեցիք յինեցին, սորա համար մոգերը զայրանալով զրդեցին Շապուհ թագաւորը ջնջել քրիստոնէից: Այն հալածանաց ժամա-

նակը նահատակեցան Տիգրանի եպիսկոպոս Շմաւոնը, Ակիփսիմէ եպիսկոպոսը, Յովսէփ քահանայն և Այիթալ սարկաւազը, նմանապէս Արտաւիլ քաղաքի Արրահամ եպիսկոպոսը, որ ձեռնադրուած էր սուրբ լուսաւորչից, Մելի եպիսկոպոսը, և Բուրա քահանայն և Շին սարկաւազը, բաց ի անթիւ ժողովրդոց: Ի վերջոյ տեսնելով որ քրիստոնէից կոտորելով ոչինչ օգուտ չէ բերում, դադարեցաւ հալածելուց և թոյլ տուաւ ամենին համարձակ պաշտել իւրեանց հաւատը, մանաւանդ նամակ էր ստացել Կոստանդիանոս Կայսերէն որ անդթութեամբ չվարւի քրիստոնէից հետ: Սոյն այս դարումս տարածեցաւ քրիստոնէութիւնը և Հնդկաստան և երջանիկն Արաբիոյ կողմերը:



Դ Ա Ր Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

23

Մեր եկեղեցւոյ վիճակը. Հայկական տառից գիւտը, և սուրբ գրոց թարգմանութիւնը:

Հինգերորդ դարու սկիզբին, երբ բոլոր Եւրոպայն շփոթեալ էր շատ ապստամբների և հերձուածների ձեռքից, Աստուծոյ նախախնամութիւնը նորանշան պարգևներ էր պատրաստում Հայաստանի ժողովրդոց համար՝ երանաշնորհ Սահակ և Մեսրոպ վարդապետաց ձեռքով, որոնք իբրեւ լուսապայծառ ջահ՝ լուսաւորեցին մեր Հայաստանը Աստուածգիտութեան լուսով, և պատճառեցին մեր ազգի մէջ տարածելու անզուգական դանձր, այն է Աստուածաշունչ պատգամները:

Սուրբն Մեսրոպ, Հայեկաց գեղից, և մանկութենից վարժեալ և քաջ տեղեակ Յունաց, Ասորոց և Պարսից լեզուաց, աշակերտ էր մեծն Ներսէսի, և յետոյ զբրազքի պաշտօն էր կատարում նորա մօտ, և երբ սուրբ հայրապետն Ներսէս վախճանեցաւ, Հայոց թագաւորի առնադպիր կարգեցաւ թագաւորական պալատներում: Այս պաշտօնը եօթը տարի կատարելուց յետոյ, աշխարհքիս ունայնութիւնը մտածելով՝ հրաժարեցաւ այն պատւից, և զնաց առանձնացաւ զողթան դաւառը, ուր

մոտ վանք և կրօնաւորական կեանք էր վարում, և աշակերտներ ժողովելով՝ վարժում էր նորանց բարոյականութեան և Աստուածային գրոց ուսման մէջ: Այն ժամանակ ծաղկում էր և սուրբն Սահակ Պարթև՝ մեծին Ներսէսի որդին, որ ուռումն էր առել և վարժել էր Կոստանդնուպօլիս Հելլենաց լեզուով, և այնտեղ ամուսնացած ունէր մէկ դուստր՝ Անոյշ անունով. բայց երբ մեռաւ ամուսինը՝ հրաժարւեցաւ աշխարհքիցս և սկսաւ կրօնաւորական կեանք վարել և ժողովել իւր մօտ աշակերտներ մինչև վաթսուն հոգի:

Երբ Ասպուրակէս կաթողիկոսը մեռաւ, Հայոց Թագաւորը ազգի հաւանութեամբ ձեռնադրել տաւ երանելի Սահակը կաթողիկոս ամենայն հայոց 390 թուին: Բայց ոմանք նախարարներից թշնամի գոլով Թագաւորին՝ չարախօսութիւն արին նորա վերայ Պարսից Շապուհ թագաւորի մօտ, իբր թէ առանց նորա հաւանութեան կարգած լինի Սահակին կաթողիկոս: Սորա վերայ բարկացաւ Շապուհ, և հանեց սուրբ Սահակին աթոռից: Յետոյ նորա որդի Արտաշէրը պատուով կրկին կարգեց նորան իւր իշխանութեան մէջ: Այն ժամանակը սուրբն Սահակ նորոգեց սուրբ Հռիփսիմեանց տաճարը, որ քանդել էր Շապուհ Պարսից Թագաւորը, և հոգաց բարեկարգել եկեղեցին: Այս ամէնը երբ լսեց սուրբն Մեսրոպ՝ ուրախութեամբ թողաւ իւր ճգնութեան անապատը և եկաւ Սահակ կաթողիկոսի մօտ, և նորա բարեհաճութեամբ սկսաւ քարոզել և օգնական և գործակից լինել նորան: Այն ժամանակը լսեց սուրբն Մեսրոպ՝ թէ Գողթան գա-

ւառումը և Սիւնեաց երկրումը մէկ աղանդ է ծագել, շտապով գնաց և այն տեղի իշխանաց օգնականութեամբ արմատախիլ արաւ այն մոլորութիւնը նոյն տեղերից: Սուրբն Մեսրոպ շատ հոգս էր անում, որ ժողովրդոց սովորնչէ Աստուածաշունչ զիրքը, և որովհետև այն ժամանակը չունէին հայերէն գրեր, մտածում էր հնարել, և յետոյ Թարգմանել սուրբ գիրքը Հայ լեզու, և այնպէս կարգալ տալ. պատճառ որ այն ժամանակը վանքերում և եկեղեցիներում իւրեանց Աստուածպաշտութիւնը կատարելու ժամանակը Ասորւոց և Յունաց լեզուով էին կարդում սուրբ գիրքը, որ միանգամայն անօգուտ էր ժողովրդեան, շատերը նոցանից ոչինչ չէին հասկանում այն լեզուներից: Նա յայտնելով Սահակ հայրապետին իւր սրտի խորհուրդը և ցանկութիւնը, նորան ևս համաձայն և յօժարակամ գտաւ այն խնդրոյն. վասնորոյ միաբան աշխատութեամբ հետեւեցան հայերէն գրեր հնարել: Համարեա թէ երկու տարի աշխատեց սուրբն Մեսրոպ Ասորւոց Գանիէլ եպիսկոպոսի մօտ Միջագետքում, յետոյ մէկ հեթանոս Պղատոն ճարտասանի մօտ Նդեսիայում, նմանապէս և Հռուփինոս զրազէտի մօտ Սամուսատ քաղաքում: Եւ երբոր ամէն կողմից կտրւեցաւ նորա յոյսը՝ դիմեց Աստուծոյն, որ ընդունի նորանից իւր փափագածը: Արջապէս մէկ անգամ երբ յափշտակւած մտքով աղօթք էր անում, կենդանադրւեցան նորա սրտի մէջ պէսպէս ձեւակերպութիւններով մեր բաղմահ հնչուն բոլոր տառերը: Իսկոյն Սամուսատ քաղաքումը սկսաւ առաջ Թարգմա-

նել յունարէնից 'ի հայ Սողոմոնի Առակաց գիրքը, և յետոյ նոր կտակարանը, իւր երկու աշակերտաց՝ Յովհաննէսի և Յովսէփի Պաղնացոյ օգնութեամբ, և վերկալաւ զնաց Հայաստան: Վաւարացոյ թագաւորը և սուրբ Սահակը երբ որ լսեցին՝ դուս գնացին նորա առաջ և մեծ ուրախութեամբ փառք տւին Աստուծոյն, որ այնպիսի պարգևներ շնորհեց ազգին սուրբ Մեսրոպայ ձեռքով: Ապա հրաման առաւ թագաւորից և կաթողիկոսից՝ ամէն տեղ վարժարաններ բանալ, և երեսայք ժողովելով վարժեց զբարձրութեան մէջ և հայ գրով գաղտնաբերել տուաւ յոյն և ասորի գրերով զբաժնէ բոլոր մատենները: Այս որ լսեցին Վրացիք և Աղուանք, խնդրեցին սուրբ Մեսրոպից, որ զնայ և նոցա գիրն էլ հնարի, ինչպէս պատմում է նորա աշակերտ Կորիւն սքանչելին: Այն ժամանակը, 411 թուին, մինչդեռ սուրբ Մեսրոպ վրաստան էր՝ Սահակ կաթողիկոսն սկսաւ թարգմանել հին կտակարանը ասորի լեզուից, պատճառ որ յունագիր զրքերը՝ Պարսիկները ոչնչացրել էին Հայաստանումը, որ աւելի հեշտութեամբ դարձնեն մեր ազգը գէպ 'ի կրակապաշտութիւնը: Եւ երբ վաւարացոյ թագաւորը մեռաւ, Պարսից թագաւորը Յազկերտ՝ Հայոց վերայ թագաւոր կարգեց իւր որդի Նապուհը, և Պարսկաստան եղած քրիստոնէից շատ հալածեց, ուր նահատակեցան Աբղաւ եպիսկոպոսը, Որմզդան, Սային և Բենիամին սարկաւազն 418 թուին: Այս հալածանքը մեղմացրուց Սահակ կաթողիկոսը: Սա ինքն զնաց Յազկերտ թագաւորի մօտ, և ցոյց տաւ նորան տերութեան վը-

նասը, և թէ մէկ բանով խռովութեան պատճառ կտայ իւր հպատակներուն: Բայց Յազկերտի մեռնելուց յետոյ՝ բարձաւ խաղաղութիւնը Հայոց երկրից, որ Պարսից բաժնումն էր. այս պատճառաւ սուրբ Սահակ և Մեսրոպ այն տեղից հեռացան զնացին Յունաց բաժինը, ուր Հայ և Յոյն իշխանք խաղաղութեամբ էին միմեանց հետ: Երբ նոքա կամենում էին Հայոց վարժարան բանալ այն տեղ, Յոյնք արգելեցին նորանց. վասնորոյ զսուրբ Մեսրոպ Հայոց նախարարաց խորհրդով ուղարկեցին Կոստանդնուպօլիս՝ Քէոզոս կայսեր և Ատտիկոս Յունաց պատրիարքի մօտ, որոնցից հրաման առաւ և վերադարձաւ սուրբ Սահակի մօտ 421 թուին. և ինչպէս որ ինքեանք ցանկանում էին՝ հիմնեցին դպրոց հայկազն մանկանց համար: Բայց սուրբ Մեսրոպ երբ Կոստանդնուպօլից յետ էր գալիս՝ թողաւ այն տեղ իւր աշակերտներին, որ լաւ վարժեն Յունաց լեզուումը, այն տեղ մնացին նոքա իբր տասը տարի, մինչև Նիքիոսի ժողովոյ աւարտելը, 431 թուին, միաբանական թուղթ առան մէկ քանի եպիսկոպոսներից որ Հայերը զգուշանան Նեստորի մոլորութիւնից. նմանապէս և մէկ ընտիր օրինակ Աստուածաշունչ դրոց, որն որ ուրբ Մեսրոպը առաջուց խնդրել էր պատրիարքից, և էլ ուրիշ գրեանք, և դարձան Հայաստան: Այն ստուգադիր Աստուածաշունչն որ տեսան, իսկոյն սուրբ Սահակ և Մեսրոպ ձեռք տուին թարգմանութեան՝ իւրեանց աշակերտաց օգնականութեամբ, և թէպէտ զլուս տարան ըզգուշաւոր քննութեամբ և բաղդատութեամբ, բայց էլի կային երկրայութիւններ բաւերի և մօքերի վերայ. վա-

սրնորոյ խորհուրդ արին ուղարկել իւրեանց աշակերտ-
ներէց մէկ քանիսը Աղէքսանդրիա, Աթէնք, որ աւելի
լաւ տեղեկանան հարկաւոր գիտութեանց, և լրացնեն
թերի թարգմանութիւնը: Նոքա ուրախութեամբ զը-
նացին, և եօթը ասորի պարապելով կարեւոր ուսմունք-
ներով Աղէքսանդրիայում և Աթէնքում՝ յետ դարձան
իւրեանց հայրենիքը. ուր թէպէտ տեսան որ վախճան-
ւած էին սուրբն Սահակ և Մեսրոպ, բայց անսխալ և
անթերի կատարեցին նոցա սրտի փափաքը, լրացնելով
Աստուածաշունչ զրոց թարգմանութեան թերութիւնը:

Նեստորի մոլորութիւնը, և Նսիստոսի տիեզերական ժողովը:

Խնդիր եղաւ Կոստանդնուպոլսում, 430 թուին՝
թէ սուրբ կոյսը՝ մայր Աստուծոյ պէտք է կոչել թէ լոկ
մայր Քրիստոսի: Նեստորը, որ այն քաղաքի պատրիարքն
էր, ասում էր Քրիստոսի մէջ երկու անձն, և մինչև ան-
գամ քարոզեց եկեղեցւոյ մէջ ժողովրդեան առաջ Մա-
րիամ սուրբ կուսի համար, թէ նա մայր Քրիստոսի էր,
իր լոկ մարդոյ, և այլն:

Նեստորի վարդապետութիւնը շատերին մոլորեցուց
նորա ճարտար խօսքերով և կեղծուպատիր նախանձով
ուղղափառ դաւանութեան, որով զինուորւած էր երևում
ընդդէմ հերետիկոսաց, և սուտ առաքինութիւննե-
րով իւրեան նախապատիւ էր ցոյց տալիս արևելեան ե-
կեղեցւոյ աթոռումը, միամիտները ընդունում էին նո-

րա կարծիքները, և պաշտպան էին լինում նորա խօսքե-
րին: Նորա մոլորութեան ընդդէմ էին եպիսկոպոսներից
շատերը, որոց մէջ երևելին էր Աղէքսանդրիոյ պատրի-
արք սուրբն Կիւրեղ, որ թուղթ գրեց Կեղեստիանոս Պա-
պին և Կոստանդնուպոլսոյ կայսեր՝ փոքր Թէոդոսին՝ ցոյց
տալով մոլորութեան փնասը, և թէ պէտք է շուտով հո-
ղալ այս փնասի համար. և հրաւիրում էր ընդհանրա-
կան ժողով կազմել և արմատախիլ առնել այս չար սեր-
մը Քրիստոսի եկեղեցւոյ բանաւոր անդամսանից:

Փոքր Թէոդոսը, որ այն ժամանակը թաղաւորում
էր Արևելքումը՝ հրամայեց ժողով գումարել Նսիստոս քա-
ղաքում յունիս ամսին մէջ 431 թուին: Ամէն սահման-
ներից հաւաքւեցան երկու հարիւր վաթսուն եպիսկո-
պոսունք, սուրբն Կիւրեղ ժողովոյ նախագահ նստաւ.
կանչեցին և Նեստորին, որ պատասխանէ և ապացուցանի
իւր վարդապետութիւնը. բայց նա չկամեցաւ ներկայա-
նալ ժողովոյ առաջ. վասնորոյ բոլոր եպիսկոպոսները իւ-
րեանց եկեղեցեաց հաւատոյ դաւանութիւնը առաջի առ-
նելով՝ միաբան հաւանութեամբ հաստատեցին եկեղեց-
ւոյ նախնի վարդապետութիւնը և ցրեցին նորը: Յետոյ
198 եպիսկոպոսունք ստորագրեցին վճռոյ վերայ, որ պատ-
րիարքութեան աթոռից հրաժարեցնեն Նեստորը, բայց
Կանդիտիանոս՝ որին կայսրը ուղարկել էր ժողովումը խա-
ղաղութիւն և բարեկարգութիւն պահպանելու՝ շատ հա-
կառակ կացաւ այն վճռոյն. բայց չընդունեցաւ ոչ նորա
խօսքը և ոչ Նեստորի դանդատը, և ոչ նորա կողմնակից
եպիսկոպոսաց կամքը, որոնք կամենում էին ուշացնել ա-

առջին ժողովը մինչև Յովհաննու Անտիոքացւոյ և միւս եպիսկոպոսաց զայլ, որոնք տակաւին չէին հասել Եփեսոս: Անտիոքայ Յովհաննէս եպիսկոպոսը եկաւ հասաւ այն ժամանակ՝ երբ ժողովը դատապարտելէր Նեստորին: Ժողովը ուղարկեց նորա մօտ եպիսկոպոսներից քանիսին, որ յայտնեն նորան ինչ որ արել էին յօգուտ հաւատոյ վարդապետութեանը. այլ նա չընկալաւ սիրով, մանաւանդ լսելով Կանգիտիանոսից՝ թէ ժողովը օրինաւոր քննութենից առաջ դատապարտել է նորան, շուտով ինքը ժողով արաւ նոյն իսկ պանդոկումը՝ ուր վեր էր եկել, և Նեստորի կողմնակից եպիսկոպոսաց միաբան հաւանութեամբ՝ արդարացրուց նորան, և դատապարտելով Կիւրեղին՝ ոչընչացրուց ժողովոյ սահմանները: Թէոդոս կայրը խաբւելով Կանգիտիանոսի սուտ խօսքերից՝ առաջին անգամը անհաւան գտնւեցաւ տիեզերական ժողովոյն, բայց յետոյ ստուգելով անցքի ճշմարտութիւնը՝ աքսորեց Կանգիտիանոսին, նմանապէս և Նեստորին արգելեց Անտիոքայ մենաստանումն, ուր Կոստանդնուպօլսոյ պատրիարք ընտրւելուց առաջ բնակւում էր. բայց նա այնտեղ ևս չէր դադարում իւր մոլորութիւնը տարածել. վասնորոյ արսուրեցաւ Եղիստոս, ուր փոքր ժամանակից յետոյ թշուառութեամբ մեռաւ:

Նեստորի կուսակիցները մահուցաւի առում էին Կիւրեղին. յետոյ երեսանց հաշտւեցան նորա հետ, իրր թէ արհամարհում են Նեստորին և նորա վարդապետութիւնը. ոմանք էլ վախենում էին որ չլինի թէ ընդդէմ կենալով տարադրին իւրեանց հայրենիքից. և շատերն էլ

միտք չդնելով ճշմարտութեանը՝ ընկան իւրեանց պատուից և իշխանութիւնից, և տէրութեան սահմանից արտոր ուղարկւեցան: Սոքա արեւելեան գաւառներումը, որ Պարսից իշխանութեան տակն էին, եկեղեցի շինեցին և շատացան այն տեղ յետոյ Պարսիկներից այն մոլորութիւնը անցկացաւ մինչև Ասիոյ ծայրը, և այժմ ևս Ասորւոց կողմերումը գտնւում են տղէտ և անուժ մարդիկ, որ Քաղզէացիք են ասում, և իւրեանց վարդապետութեամբ էլ Նասթուրիք կամ Նեստորականք են կոչւում:

Այս ժողովոյ պատմութիւնը իւր կանոնադրութիւններով ստացան սուրբն Սահակ և Մեսրոպ իւրեանց աշակերտաց ձեռքով, որոնք ժողովումը ներկայ էին, և 432 թուին ազգային ժողովով հաստատեցին նորանցից սահմանադրւած կանոնները և վճիռները:

Սորանից երեք տարի յետոյ՝ սուրբն Սահակ լսեց որ Նեստորականք իւրեանց մոլորութիւնը սերմանելու համար՝ սկսել են տարածել Թէոդորի Մօպսուեստացւոյ զիրքը սր Նեստորի ուսուցիչն էր, և հայերէն էլ թարգմանել էին. առանձին հոգատարութեամբ քննեց և ստուգեց նոյն մոլորամիտ ուսմունքը, և կրկին ազգային ժողովով ցրեց, և թղթով յայանեց Կոստանդնուպօլսոյ Պրոկղ պատրիարքին, որ հաւան կացաւ, և առանձին նամակաւ յորդորեց արմատախիլ առնել այդպիսի խաբէական մոլորութիւնը:

18

24
Հայաստանի խռովութիւնը Պարսից ձեռքից, և սուրբ Վարդանանց և Ղևոնդեանց նախատակութիւնը:

Մինչդեռ Քրիստոսի եկեղեցին Յունաստանի տէրութեան սահմաններում տաքնապի և խռովութեան մէջ էր Նեստորականաց և Եւտիքէսի չար աղանդներին տարածելով, Պարսից Յազկերտ թագաւորը Վառամի որդին, տեսնելով Հայոց ազգի նեղութիւնը և Արշակունեաց թագաւորութեան քարձելը, մոքումը դրաւ Հայոց, Վրաց և Աղուանքը գարձնել զէպի կռապաշտութիւն, իւրեան գործակից զենելով իւր հազարապետ Միհրներսէսը: Կանչեց իւր մօտ Հայոց նախարարներին, նմանապէս և Վրաց և Աղուանից իշխաններին՝ իւրեանց զօրքով, իբր թէ օգնեն նորան Յոնաց դէմ բաց եղած պատերազմին: Վասակին Աիւնեաց երկրի կռտակալութիւնը տուաւ և Վարդանին Հայոց զօրավար կարգեց: Հայոց նախարարք թէպէտ հասկացան Յազկերտի չար խորհուրդը, բայց միտք բերին Առաքելոյ խօսքը թէ «Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց»: Վասնորոյ շատ զօրք հաւաքեցին, և հանդերձ քահանայիւք զնացին Ապար գաւառը, ուր եկան հասան և Վրաց և Աղուանից զօրքը: Շատ ուրախացաւ թագաւորը, և նոցա հետ միասին զնաց Յոնաց դէմ. կախը տեւեց երկու տարի, թագաւորը վախեցաւ, մի՛ զուցէ պատերազմը երկարելուց զօրքը ձանձրանան և ջրուին, հրաման տուաւ որ փոխեն

հները, և նորերը զան առաջինների տեղը, և յետոյ սկսաւ յորդորել Հայոց ընդունել կրակապաշտութիւնը: Հայք աներկիւզ արհամարհեցին թագաւորի խօսքը, նա սաստիկ զայրացաւ և հրամայեց սպանել Գնունի Ատովմը և թէ Գնդունի Մանաճիհը: Այնուհետեւ աւելի սաստկացրուց իւր խտուրթիւնը՝ և յայտնի սկսաւ ստիպել Հայոց ուրանալ իւրեանց հաւատը, մինչև շատերին չարաչար տանջել և բանտը գծել աւաւ, բայց ոչ մէկին էլ չկարաց խախտել իւրեանց հաւատքից:

Յոնաց ազգին յաղթելուց յետոյ, 450 թուին, երբ վերադարձաւ Պարսկաստան՝ հրամայեց իւր հազարապետ Միհրներսէսին նամակ գրել Հայոց ազգին, որոյ մէջ նկարագրում էր իւրեանց սուտ և մոլորական հաւատոյ ուսումը: Այն ժամանակ Յովսէփ կաթողիկոսը ազգային ժողովք արաւ, ուր Հայոց իշխանք միաբան հաւանութեամբ գրեցին թագաւորին պատասխան, և զօրաւոր խօսքերով ցրեցին կրակապաշտութեան օրէնքը: Երբ ստացաւ Յազկերտ իւր թղթի պատասխանը, սաստիկ չարացած հրովարտակ գրեց, և կանչեց իւր մօտ նախարարաց, Վասակին, Վարդանին և այլոց. որոյ տեսնելունսկէս սաստիկ մեղադրեց, և բանտը գծել աւաւ, և խոտացաւ աքսորել նորանց, և թէ վրայ երկրորդ օրը առաւօտուն յանձն չառնուն արեգակին երկրպագութիւն տալ: Այն նեղութեան միջոցին Յազկերտի ծառայից մէկը Խուժիկ անունով՝ որ ծածուկ քրիստոնեայ էր, խորհուրդ տուաւ նոցա՝ երեսանց միայն կատարել թագաւորի կամ-

քը որ ետ գնան իւրեանց հայրենիքը և ազատեն ազգը այն վտանգից և կորուստից: Թէպէտ նախարարները հասկացան որ ուղիղ է՛ր այն խորհուրդը, բայց մտածելով արսորանաց հետեանքը, ակամայ կամօք յանձն առան երկրպագութիւն տալ արեգակին թագաւորի առաջը, և պատուով վերադարձան Հայաստան, իւրեանց հետ ունելով և շատ մոգեր, որոց Յագկերտ ուղարկեց սովորեցնել Հայոց կրակապաշտութեան օրէնքը: Երբ հասան Մաղկոտն գաւառ՝ մոգպետը կամենում էր քանդել գիւղի եկեղեցին. բայց սուրբն Ղևոնդ երէց իւր միաբանքով առաջ գնաց, դուրս արաւ մոգպետին իւր սպասաւորներով: Եւ երբ մոգերի գալու համբաւը տարածեցաւ, Հայերից շատ բազմութիւն հաւաքեցան զինուորւած, շուտով վրայ հասաւ և Յովսէփ կաթողիկոսը և ուրիշ եպիսկոպոսներ՝ պատրաստւած իւրեանց անձը գնել մինչև մահ հաւատոյ և սուրբ եկեղեցւոյ ազատութեան համար:

Այն հանգէսի մէջ վարդանը գնաց եպիսկոպոսաց մօտ, և նոցա ոտները ընկած՝ արտասուելով թողութիւն էր խնդրում՝ երեսանց ուրացութեան համար, և յայտնեց նոցա իւր և նախարարաց ներքին դիտաւորութիւնը: Բայց վասակը, որ սրտանց ուրացել էր քրիստոնէական հաւատը, չար մտքով և խաբէական խօսքերով հանդարտացրեց եպիսկոպոսաց և ժողովուրդեն, լռել առ ժամանակ, և յետոյ հանդարտութեամբ հետզհետէ մոգերին դարձրնել: Վասակի խորհուրդը և ժողովրդեան փոքր ինչ հոնդարտւելը տեղիք տուաւ մոգերին տարա-

ծել կրակապաշտութիւնը: Այս բանին չհամբերելով վարդան զօրավարը, վեր առաւ իւր ընտանիքը, հեռացաւ գնաց Հայաստանից: Երբ զգացին Հայոց նախարարները, շուտով մարդիկ ուղարկեցին նորա ետեւից, և շատ աղաչանքով ետ դարձրին, խօսք տալով միաբան լինել ընդդէմ անհաւատներին, և հաստատ պահել քրիստոնէութիւնը Հայաստանում:

Յետոյ ժողով արին Շահապիվանումը եպիսկոպոսաց, և խօսք կապեցին սուրբ աւետարանի վերայ երդմամբ՝ կռիւ տալ մինչև մահ անհաւատների դէմ, և այնպէս աստուածային սիրով վառւած՝ յարձակեցան Պարսից վերայ, քանդեցին նոցա կռատները, դուս արին մոգերին, ուրացողներին, և աւերած եկեղեցիքը նորոգեցին: Որովհետեւ զործը շատ դժուարին էր և օգնութեան կարօտ, ձեռնառութիւն խնդրեցին փոքր Թէոդոս կայսրից, և նորա յաջորդ Մարկիանոսից, բայց ոչինչ օգնութիւն չընկալան. պատճառ որ նորանք էլ զբաղուած էին Եւտիքականաց կռով: Վասնորոյ ապաւինեցան Աստուծոյ նախախնամութեանը, և իւրեանց զօրքը երեք զսունդ բաժանելով՝ կռիւ տւին Պարսից դէմ, և երբ քաջութեամբ կոտորեցին նոցա զօրքը, ուրացող վասակը կամելով խափանել Հայոց ուխտապահ նախարարաց քաջութիւնը, միաբանեցաւ Պարսից հետ, և սկսաւ կրկին աւերել Հայոց աշխարհը: Քանդում էր եկեղեցիքը, և շատ զեղեր, գերի էր վարում նախարարաց որդւոց և ուղարկում էր Յագկերտ թագաւորի մօտ: Այս որ լսեցին վարդանայ հետ մի-

աբանւածները, յարձակեցան Սիւնիք՝ դէսլ 'ի ուրացող, Վասակի կալուածները, քանդեցին կրակառները և բռնեցին հակառակողներին. բայց տեսնելով ուխտադրուած մարդոց անհաւատարմութիւնը՝ խորհուրդ արին և դեսպան ուղարկեցին Յազկերտի մօտ, յայտնել թէ պատրաստ են հնազանդել նորան, եթէ չստիպեն նոցա կրակապաշտութեան օրէնքը ընդունել: Այս որ լսեց թագաւորը, չար մտքով յանձն առաւ այն պայմանը, և հրովարտակ հանեց համարձակ պաշտել քրիստոնէութեան օրէնքը, բայց անհաստատ մնաց այն պայմանի վերայ, յետոյ շատ զօրք հաւաքեց, և ուղարկեց իւր հազարապետ Միհրնէրսէհը՝ քարուքանդ անել Հայոց աշխարհը:

Միհրնէրսէհը եկաւ Փայտակարան նոհանգը, և միտք էր անում որ ուրացող Վասակի և երկու սուտ երէցների ձեռքով Հայոց միաբանութիւնը խանդարի. զօրքը թողաւ իւրեանց զօրավարի և Վասակի ձեռին. ինքը ետ դնաց Յազկերտի մօտ: Իսկ Հայոց ուխտապահ նախարարները յառաջուց իմանալով թագաւորի և Միհրնէրսէհի չար միտքը, չբաժանեցան իւրեանց միաբանութիւնից, այլ աւելի Վարդանը, որ տեսնում էր Վասակի չարութիւնը և Պարսից մեծ պտորապտութիւնը, կանչեց իւր մօտ Քրիստոսի սիրովն վառուած սպառազէն Հայոց զօրքը, և մինչև վաթսու և վեց հազար հոգի ժողովեցան Աշտիշատ քաղաքը: Սորանց հետ էին սուրբն Յովսէփ, Սահակ եպիսկոպոս Ռշտունի, Ղևոնդ երէց, և ուրիշ քահանայք և սարկաւազներ: Երբ եկաւ հասաւ Պար-

սից զօրքը Աւարայրի դաշտը, հասան այն տեղ և Վարդանանք, բանակեցան Տղմուտ գետի մօտ, ուր Վարդան զօրացաւ Աստուծով՝ նմանապէս և Ղևոնդ երէքը սիրտ տալով՝ յորդորական բանիւ խօսեցաւ սուրբ զրբից, և այն զիշերը խոստովանեցան և հաղորդեցան ամէնքը, միւս առաւօտը, որ Հոգեգալստեան տօնի եօթներորդ օրըն էր, յունիս ամօի 451 թուին, քաջասրտութեամբ արխացած՝ անցկացան Տղմուտ գետը. յարձակեցան Պարսից զօրաց վերայ, և քաջութեամբ սարսափեցնում էին թշնամեաց զօրքը: Իսկ ուրացող Վասակի ծածուկ խորհրդակիցները, որոնք Հայոց բանակումն էին՝ սկսան փախչել, որով պատճառ եղան մեր բանակի վտանգին: Երանելի Վարդանը մեծ քաջութիւն ցոյց տալով՝ սպանեցաւ. նորա հետ իննը նախարար և երկու հարիւր ութսուն և վեց զօրականներ: Բանակը ցրուելուց յետոյ փախան ամրացան իւրեանց քաղաքներումը. բայց Պարսիք փախչողների ետևից ընկնելով՝ սպանեցին այլ ևս եօթը հարիւր և քառասուն հոգի, և սորանով բոլոր նահատակաց թիւը եղաւ հազար երեսուն և վեց հոգի: Այս պատերազմի և սուրբ Վարդանանց նահատակութիւնից յետոյ, Պարսից զօրավարը տեսաւ որ թագաւորի կամքը զըլուխ տանել կարող չէ՝ զրեց բոլոր անցքերը և փնասները, և այս ամեն փնտր գծեց ուրացող Վասակի վերայ. ուստի թագաւորը շատ տրտմեցաւ, հրաման հանեց սպարապետների վերայ, որ Հայոց ազգի խաղաղութեան համար հոգան, խոստանալով թողնել նոցա քրիստոնէութեան օրէնքի մէջ, և կարգեց նոցա համար

ուրիշ կուսակալ պարսիկ՝ Ատրորմիզդ անունով, որ խարդախութեամբ աշխատում էր բռնել Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը, Մուշէ երէցը, Սամուէլ և Աբրահամ քահանայքը. սորանց հետ և սուրբ Յովսէփը, Ղևոնդ երէցը, Արշէն քահանայն և Քաջաջ սարկաւազը. նմանապէս նոցա աշակերտներէից Խորէնը և Աբրահամը, որք առաջուց բաժանւած էին ուրացող վասակի ձեռքով, որոնց ամենին միասին ուղարկեց Պարսկաստան, ուր գտնուին նորանց մահապարտների բանտը:

Յետոյ չար մտքով յորդորեց Հայոց նախարարներին զնալ Յազկերտի մօտ, որոյ երզումը և խոստմունքները նորանց առաջ զնելով՝ միամտացնում էր նոցա: Նոքա էլ աւելի յոյս զնելով լաւութեանը՝ զնացին արքունի դուռը, ուր Միհրնէրսէհ երեսանց պատուով ընկալաւ և յետոյ բանտը գտնել տաւ այն քահանայից հետ, ուր մնացին երկու ամիս: Սորանից յետոյ երբ Յազկերտ զընում էր Յոնաց դէմ պատերազմ, հրամայեց բոլոր բանտարկածներին տանել Նիւշապուհ քաղաքը, և յանձնել այն տեղ մոզպետին որ կրակապաշտ գարձնի նորանց. թէպէտ մոզպետը շատ աշխատեց՝ բայց չկարաց թաղաւորի կամքը կատարել, ընդհակառակը՝ տեսնելով Աստուծոյ հրաշքները նոցա վերայ՝ ինքն էլ հաւատաց: Այն ժամանակը, 454 թուին, երբ Յազկերտը յաղթեցաւ Յոնաց ձեռքից, դառնացած հոգւով՝ մոզերի յորդորանքով սպանել տաւ Սամուէլ և Աբրահամ քահանայից, որ նորա մօտ էին բանակում, հրաման գրեց Դենշապուհին

սպանել և միւսներին, որոնք Նիւշապուհ քաղաքումը բանտարկած էին. 31-ն յուլիսի 454 թուին, որոնք Ղևոնդ երէցի անունով՝ կոչւեցան Ղևոնդեանք: Ապա վերայ երկրորդ տարին սոցա նահատակութիւնից յետոյ ազատեցան նախարարները այն հալածանքից և չորսամեայ բանտարկութիւնից: X 9

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Հինգերորդ դարումս տասն երկու կաթողիկոսաց միջից հինգը շատ համբաւաւոր էին իւրեանց սրբութեամբ և իմաստութեամբ:

Սուրբն Սահակ պարթև. 390 թուին յաջորդեց Ասպուրակէսին. մեծ հոգս ունէր ազգի օգտին և պայծառութեանը: Սորան աշխատակից և օգնական էր սուրբն Մեսրոպ որ Հայոց նշանադիրները յօրինեց: Վարժարաններ հիմնեցին Հայոց մանկանց համար, յետոյ սկսան թարգմանել Աստուածաշունչ գիրքը: Սուրբն Սահակ երկու անգամ ժողովք արաւ Հայաստանեայց եկեղեցին բարեկարգելու և Նեստորի մոլորութիւնը ցրելու համար, նմանապէս և Թեոփորի Մոպսուեստացւոյ և Գիողորի Տարսնացւոյ գիրքը մերժելու համար: Երբ նախարարները անմիաբան դրանեցան Արտաշէս թագաւորի հետ, Պարսից Վաւաթ թագաւորը՝ Սահակ կաթողիկոսի տեղ կարգեց ուրիշ մէկը. իսկ նորան գտնելու, ուր տեսակ տեսակ նեղութիւններ քաշելուց յետոյ՝ կրկին եկաւ Հայաստան և էլի աշխատում էր ազգի պայծառութեան և օգտի համար, և

Թէպէտ նախարարները շատ խնդրեցին որ կրկին ընդունի կաթողիկոսութեան աթոռը, բայց նա յանձն չառաւ, այլ հեռացաւ գնաց բլուր լեռուր և այն տեղ կատարեց իւր կեանքը 440 թուին՝ հարիւր տարեկան հասակի մէջ, և թաղւեցաւ Աշախատ քաղաքում:

Սուրմակ երէց՝ Բղնունեաց գաւառից և Արծկէ քաղաքից: Վաւր կարգեց սորան փոխանակ Սահակին. բայց Սուրմակը անարժան կեանք վարելով՝ մերժւեցաւ ազգի իշխաններից, և մէկ տարւայ իշխանութիւնից յետոյ՝ զընաց իւր երկիրը Բղնունիք՝ իւր մեղքերը ապաշխարելու համար, որ մեղանշել էր սուրբ Սահակի դէմ անիրաւ զրպարտութեամբ:

Բրբիշոյ Ասորին նստաւ կաթողիկոս Սուրմակի փոխանակ 429 թուին, բայց սա քան զնորան չարաչար էր վարում իւր իշխանութիւնը և կողոպտում էր եպիսկոպոսաց կայք և կալուածք. վասնորոյ մերժւեցաւ աթոռից երեքամեայ իշխանութիւնից յետոյ:

Սորանից յետոյ Վաւր կարգեց Շմուէլ Ասորին, 432 թուին, որ իւր անարժան վարքով իշխանութիւնը վարեց եօթը տարի և մեռաւ:

Սորա երեքն ևս բռնակալ էին համարւում, պատճառ որ Պարսից թագաւորի ձեռքով նստան կաթողիկոս Սահակ Պարթևի կենդանութեան ժամանակը, այս պատճառաւ Սահակ կաթողիկոսի յաջորդ պէտք է համարել սուրբն Մեսրոպ, որ Մաշտոց էր կոչւում, ինքը վարուց մաքրութեամբ և իմաստութեամբ երևելի, և ամէն

ազգային և հոգևոր վաստակներումը օգնական և դորձ ծակից էր Սահակ Պարթևին: Սա կաթողիկոսական Աթոռոյ տեղապահ նստաւ վեց ամիս, վախճանեցաւ Վաղարշապատ քաղաքում, և թաղւեցաւ Օշական բերդումը 441 թուին:

Սուրբն Յովսէփ՝ Սահակի և Մեսրոպի աշակերտ՝ Վաշոյ ձորից, սուրբ Մեսրոպից յետոյ վեց տարի ունէր կաթողիկոսութեան աթոռը իրր քահանայ, յետոյ ընկալաւ եպիսկոպոսութեան օծումը և ինքը կատարում էր աթոռի ամէն հոգը: Սա ժողովք արաւ Շահապիվանում 447 թուին և կանոններ սահմանեց եկեղեցւոյ բարեկարգութեան համար: Սուրբ Վարդանանց նահատակութիւնից յետոյ 451 թուին, Ղևոնդեանց հետ բռնաճ էր Պարսկաստանում, և նոցա հետ նահատակւեցաւ 454 թուին: Մինչև նորա նահատակելը երկու տարի առաջ եպիսկոպոսները ժողով արին Դուին քաղաքում, և կարգեցին նորա տեղ 452 թուին, Միլիտէ Մանազկերտից, որ հինգ տարի կատարեց իշխանութիւնը և վախճանեցաւ:

Մովսէս Ա, ունէր կաթողիկոսութեան աթոռը 457 թուին, սա վարեց այն իշխանութիւնը ութը տարի և վախճանեցաւ:

Գիւտ երանելի, աշակերտ սուրբ Սահակայ և Մեսրոպայ Տայոց գաւառից: Սա բարեպաշտ, իմաստուն և շատ վարժ էր Հելլենաց լեզուին. կաթողիկոս ընտրւեցաւ եօթանասնամեայ հասակի մէջ 465 թուին, և իւր բարեպաշտ վարքով յորդորում էր չարադործներին դէպի բարեպաշտութիւնը, և վայելուչ կարգերով զարդարեց Հա-

յաստանեայց եկեղեցւոյ ժամակարգութիւնը: Սա հայրապետութեան աթոռը տասը տարի վարելուց յետոյ՝ վախճանեցաւ 475 թուին:

Քրիստափոր Արծրունի՝ ունէր կաթողիկոսութեան աթոռը 475 թուին: Սորա ժամանակը Նեստորականը աշխատում էին իւրեանց մոլորութեան սերմը ցանել և Հայոց մէջ, նամակ զրեց զանազան գաւառներ և զգուշացրեց նորանցից, որոց զլուխը Մծբին քաղաքի եպիսկոպոս Բարծուման էր. սա տասը տարի վարեց իշխանութիւնը և վախճանեցաւ:

Յովհան Մանգակունի՝ Արշարունեաց գաւառից՝ աշակերտակից էր զիւտին: Սա յաջորդեց Քրիստափորին 480 թուին, եօթանասուն ու հինգամեայ հասակի մէջ:

Այս գիտնական և հոգեւելի հովիւը կարգաւորեց և ճոխացրեց Մաշտոց զիրքը, աւելցրեց և քանի մի աղօթքներ և քարոզներ ժամերգութեան մէջ, զրեց զանազան ճառեր: Վեց տարի և վեց ամիս մնալով հայրապետական իշխանութեան մէջ՝ վախճանեցաւ:

Բաբգէն՝ Վանանդ գաւառից՝ աշակերտ Յովհան Մանգակունւոյ, 487 թուին ընկալաւ կաթողիկոսութեան աթոռը, վրայ չորրորդ տարին ժողովք արաւ Վաղարշապատ քաղաքում, ուր հրաւիրւած էին Վրաց և Աղուանից եպիսկոպոսները, և նղովեցին Նեստորին և Եւտիքէսին: Առաջ բերին այն տեղ և քննոն կայսեր հրովարտակը, որոյ մէջ ոչինչ յիշատակութիւն չկար Քաղկեդոնի ժողովոյ համար, վասնորոյ էլ աւելի երկմտութեան մէջ ընկնելով՝ չընդունեցին այն ժողովը: Սա

հինգ տարի հայրապետական իշխանութիւն վարելով՝ վախճանեցաւ 492 թուին:

Սամուէլ՝ Բղնունեաց գաւառից, կաթողիկոսութեան աթոռը ունէր 492 թուին: Սորա ժամանակը Պարսիկը կրկին սկսան հալածել Հայոց Կաւատ թագաւորի բռնութեամբ, բայց մեծն Վահան Մամիկոնեան մեծ քաջութեամբ դէմ կացաւ Պարսից բռնութեանը, և ազատեց Հայաստանը կրակապաշտութիւնից: Այն խռովութեան ժամանակը 501 թուին, վախճանեցաւ Սամուէլը՝ տասը տարի վարելով կաթողիկոսութեան աթոռը:

Ազգային ժողովը:

Վաղարշապատու Դ, ժողովը 402 թուին:

Սուրբն Մեսրոպ տեսնելով մեր հայրենի գրագիտութեան նուազութիւնը՝ խնդրում էր Սահակ կաթողիկոսից հոգս տանել այն պակասութեանը: Նա շաա հաւանութիւն տալով այն բանին՝ ժողովք արաւ Վաղարշապատումը, ուր հրաւիրւած էր և Վաւաշապուհ թագաւորը, որ սրտով ցանկանում էր Հայոց զրերի զիւտին: Շատ խօսակցութիւնից և խորհուրդից յետոյ, թագաւորը պատմեց թէ Աբէլ անունով մեկ Ասորւոց քահանայ ասել էր նորան, իբր թէ մի անգամ տեսել է նա Դանիէլ անունով Ասորւոց եպիսկոպոսի մօտ հայերէն նշանագրեր: Այն որ լսեցին միաբան ժողովականները՝ աղաչեցին թագաւորին որ մի մարդ ուղարկի և ստոյգն իմանայ նշանագրերի համար, և նա շուտով ուղարկեց մի իշխան:

Վահրիձ՝ անուշով, որ քաջ վարժեցաւ Դանիելեան տա-
ռերին, դարձաւ Հայաստան և ցոյց տաւ կաթողիկոսին
և Մեսրոպին. բայց թերի լինելով այն նշանագրերը, ոչ
ինչ բաւականութիւն չտացան նորանից:

Ե, Ժողով Վաղարշապատու 426 թուին:

Հայոց տառերի գիւտից յետոյ՝ երբ սուրբ Սահա-
կայ և Մեսրոպայ անդադար աշխատութեամբ ծաղկած
տարածուած էին Հայաստանում բարեկարգութեան ըն-
ձիւղք, սուրբն Սահակ այլոց ևս շարժելու համար դէպի
այն բարի նախանձը, ժողովք արաւ դարձեալ Վա-
ղարշապատ քաղաքում, և եպիսկոպոսաց և քահանայից
միաբան հաւանութեամբ ընդհանրական թուղթ գրեց,
որոյ մէջ սահմանում էր զգուշութեան կանոններ կալիս-
կոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից համար:

Աշտիշատու Բ, Ժողով 432 թուին:

Երբ Սահակ կաթողիկոսը արձակեցաւ Պարսից թա-
ղաւոր Վառմից. և եկաւ տեսաւ Հայաստանը անկարգու-
թեան մէջ, Մեսրոպայ խորհրդով ժողովեց եպիսկոպո-
սաց և քահանայից քանիսն Աշտիշատ քաղաքում՝ ազգը
բարեկարգելու համար: Այն ժամանակը եկան հասան
Կոստանդնուպոլէն մեր թարգմանիչքը, Ղևոնդ երէցը,
Յովհանն եկեղեցացին, Արձանը, Եղնիկ և Կորիւնը, իւ-
րեանց հետ ունենելով Եփեսոսի ժողովոյ վճիռները, որ
Կոստանդնուպոլսոյ պատրիարք Մաքսիմոսը աւել էր նոցա

Հայաստան բերել: Այն որ տեսաւ սուրբն Սահակ շատ
ուրախացաւ, և ևս այլ եպիսկոպոսունք և վանահարք ժողո-
վելով՝ կարգաց Եփեսոսի ժողովոյ սահմանները, և միա-
բան հաւանութեամբ մերժեցին այն ամէնը՝ ինչ որ ժո-
ղովք մերժել էր, և ընդունեցին իբրեւ կանոնադիր սահ-
մաններ: ✓

Աշտիշատու Գ, Ժողով 435 թուին:

Երբ Եփեսոսի տիեզերական ժողովը զատապարտեց
Նեստորին, և կայսրը հրամայել էր նորա մոլորութեան
հետքը բնաջինջ առնել և այրել նորա գիրքը, այն ժա-
մանակը Նեստորի վարժապետ Թէոդորոս Մոպսուեստացւոյ
և Գիողորի Տարսոնացւոյ գիրքը թագմանել էին հայ, պար-
սիկ և ասորի լեզու, և տարածել էին արեւելքում: Այս
որ լսեց երանելին Սահակ, մեծ ժողով գումարեց Աշտիշատ,
նշովք դնելով հերքեց այն գիրքը, որ չլինի թէ, լուսաւոր
վարդապետութեան մէջ սատանայական ծուխ վեր կենայ:

Ա, Ժողով Շահապիվանու 447 թուին:

Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալուց և
Սահակ կաթողիկոսի մահուան յետոյ, երբ զանազան
թուլութիւնք էին մտել մեր եկեղեցականաց մէջ, վար-
դան Մամիկոնեանը և Վասակ Սիւնին և այլք նախա-
րարներից՝ աղաչեցին Յովսէփ կաթողիկոսին հոգս տա-
նել մեր ազգի բարեկարգութեանը, յորդորելով նորան
իր Լուսաւորչի և նորա արժանաժառանգ յաջորդաց զը-

րած կարգը կրկին հաստատուի: Ուստի Յովսէփի կաթողիկոսը ժողովեց եպիսկոպոսունք, քահանայք և իշխանք Շահապիվան քաղաքում, ուր միաբան հաւանութեամբ հաստատեց կանոններ և հաւատոյ վարդապետութիւնք, որ նախնիք աւանդել էին, ինքեանք ևս աւելցրին այլ ևս քսան բարեկարգութեան կանոններ, մեծ տուգանք և ապաշխարանք դնելով կանոնից դուս եկողների համար:

Աշտիշատու ժողով 449 թուին:

Երբ Պարսից Յազկերտ թագաւորը յուսակաւոր եղած, բայց խաբէութեամբ աշխատում էր Հայոց գէնել դէպ 'ի կրակապաշտութիւնը, և հրամայել էր Միհրնէրսեհին, որ նամակ գրի Հայոց իշխանաց և եկեղեցականաց և ծանօթացին նոցա Պարսից կրօնին, Յովսէփի կաթողիկոսը հրաւիրեց եպիսկոպոսունք և քահանայք, նմանապէս և նախարարներ՝ Աշտիշատ քաղաքում և միաբան հաւանութեամբ պատասխան զրեցին Միհրնէրսեհին փաստերով, և ցրեցին նոցա օրէնքը, և քրիստոնէական կրօնի անհամեմատ գերազանցութիւնը նոցա առաջ դրնելով՝ աներկիւղ խոստովանեցան «Մեզ այս հաւատից ոչ ոք կարող չէ խախտել, ոչ հրեշտակք, ոչ մարդիկ, ոչ սուր, և ոչ հուր. պատճառ որ մեր ուխտը ոչ թէ մարդոյ հետ է, որ մանկանց պէս խաբւենք, այլ Աստուծոյ հետ անլուծանելի կապով կապւած, որից անհնարին է քակուիլ և դուս գալ, ոչ այժմ և ոչ յետոյ, ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս»: Եղիշէ Պատմ:

Շահապիվանու Բ, ժողով 450 թուին:

Երբ Հայոց նախարարները Յազկերտին խաբելու համար՝ առ երեսս երկրպագութիւն տւին արեգակին և յետ եկան Հայաստան, Հայոց եպիսկոպոսունք և քահանայք նոցա առաջ գնացին և անցրին վերահասու լինելով՝ սաստիկ յանդիմանեցին նորանց: Վարդան զօրավարը զղջալով յայտնեց նոցա իւրեանց միտքը, նմանապէս և միւս նախարարք որնորա հետ միաբանւած էին՝ խոստացան մինչև մահ պաշտպան լինել քրիստոնէական հաւատոյ: Իսկ Վասակը, որ սրտանց ուրացել էր Քրիստոս՝ ամեն կերպ օգնում էր մոգերին և մոգպետին: Այս որ իմացան Հայք՝ բռնեցին նորան, այլ նա կեղծաւորութեամբ աղաչում էր որ չսպանեն նորան, և սուրբ աւետարանի վերայ երգւում էր, որ էլ չբաժանուի սուրբ եկեղեցւոյ միաբանութենէն: Այն ժամանակը Յովսէփի կաթողիկոսը ժողովեց եպիսկոպոսունք և քահանայք Շահապիվան քաղաքում. կանչեց այն տեղ Վասակին, Վարդանին և միւս նախարարներին, և յայտնեց նոցա, թէ ամենի վերայ հարկ կայ որ յայտնապէս պաշտպան լինեն քրիստոնէական հաւատոյ, և մինչև 'ի մահ համարձակ դէմ կենան անհաւատներին. երդման թուղթ հաստատեցին իւրեանց մէջ, և այնպէս արձակեցաւ ժողովը:

Դըւնայ ժողով Ա, 452 թուին:

Երբ Յովսէփի կաթողիկոսը գնաց Պարսից դուռը,

նախարարք և քահանայք ժողովեցան Դուին քաղաքը և Յովսէփ կաթողիկոսի տեղ կարգեցին Մելիտէ Մանազկերտէն, և միաբան հաւանութեամբ կաթողիկոսութեան ամբողջութեան Դուին քաղաք:

Վաղարշապատու Զ, ժողով 491 թուին:

Բարդէն Հայոց կաթողիկոսը երկմիտ լինելով Քաղկեդոնի ժողովոյն՝ մտածեց մերժել այն ժողովը. վասնորոյ ժողովեց եպիսկոպոսունք և քահանայք Վաղարշապատ քաղաքում, ուր հրաւիրւած էին և Վրաց և Աղուանից կաթողիկոսունք, նպովեց Բարձումայն և Ակակ Պարսիկն և Նւտիքականաց մելորութիւնքը: Առաջ բերին և Զենոն կայսեր հրովարտակը, և հաւան մնայով նորա մէջ գրուածոց՝ շնորհունեցին Քաղկեդոնի ժողովը:

Եկեղեցական մատենագիրք:

Մեր մատենագրաց մէջ, որ ծաղկեցան հինգերորդ դարում, և Աստուածաշունչ գրոց թարգմանութեամբ պայծառացրին մեր ազգը, առաջին հեղինակը և առաջնորդը Պարթև Սահակ կաթողիկոսն էր, որ թարգմանեց հին կտակարանը մինչև Մակաբայեցւոց զիրքը, եկեղեցւոյ կանոններ գրեց, մասնաւոր թուղթեր և շարականներ, և Մեսրոպ Մաշտոցի հետ առաջին հեղինակն եղաւ Հայաստանեայց եկեղեցւոյ ժամակարգութեանը: Երկրորդ՝ Մեսրոպ վարդապետ, որ Հայոց գրերը գտաւ, մեծի պահոց հասարակ օրերի շարականները գրեց. շարականի ութը ձայ-

նը յօրինեց, և Սահակ Պարթևի հետ կարգեց Հայաստանեայց եկեղեցւոյ ժամակարգութիւնը և ծխարանը, այն է Մաշտոց զիրքը, թարգմանեց նոր կտակարանը, և հնարեց Վրաց և Աղուանից գրերը:

Եզնիկ կամ Եզնակ Կողբացի՝ Բագրևանդայ եպիսկոպոս էր, և Սահակայ և Մեսրոպայ աշակերտ, նոցա օգնական և գործակից սուրբ գրոց թարգմանութեան մէջ, դրեց Պարսից, Մանիքեցւոց և անաստուածոց դէմ:

Կորիւն՝ որ աշակերտ և գործակից էր թարգմանչաց, գրեց Մեսրոպայ կեանքը:

Եղիշէ վարդապետ, վարդան Մամիկոնեան սպարապետի ատենադպիրը, գեղեցիկ ոճով գրեց վարդանանց և Ղևոնդեանց նահատակութեան պատմութիւնը: Սաունի սուրբ գրոց մեկնութիւններ, ճառեր և միանձանց խրատներ:

Մովսէս Խորենացի, որ Բագրևանդայ եպիսկոպոս էր Եզնիկից յետոյ և Մեսրոպայ քեռ որդի, գրեց Հայոց պատմութիւն՝ սկսած հին դարուց մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջնայլը, զանազան ճառեր. ընտիր շարականներ, և վախճանեցաւ իբր հարիւր քսանամեայ հասակի:

Դաւիթ անյալթ՝ Խորենացւոյ քեռորդի, Հելլենաց լեզուի հմուտ. գրեց քերականութիւն և Սահմանաց զիրք, Արիստոտէլի գրոց մեկնութիւն, և Քրիստոսի ծննդեան և Խաչի վերայ ճառեր:

Ստեփաննոս Ա, Սիւնեաց եպիսկոպոս, շարագրեց ընտիր շարականներ:

Մամբրէ վերժանող կամ ընթերցասէր, Խորենացւոյ փոքր եղբայր՝ Թարգմանչաց աշակերտաց մինը, որ գրեց իւր ժամանակի պատմութիւն. գեղեցիկ ճառեր Ղազարու Յարութեան վերայ, և մեկնութիւն Յովհաննու աւետարանի, նոյնպէս և երկու ճառ 'ի զալուստ Տեառն Երուսաղէմ ծաղկազարդին:

Ղազար Փարպեցի, աշակերտ Աղանայ Արծրունւոյ՝ աշակերտի Սահակայ պարթևի. սա գրեց իւր ժամանակի պատմութիւն մինչև Յոհան Մանդակունւոյ օրերը և Վահանայ Մամիկոնէի, որոյ մէջ պատմում է հայկական գրոց զիւտը, Մեսրոպայ Ճանապարհորդութիւնը և իւր ընկերակցաց վարքը:

Յոհան Մանդակունի, աշակերտ օրբոց Թարգմանչաց, որ գրեց 36 ճառ առաքինութեանց և մոլութեանց վերայ, և խրատներ իշխանաց, Թազաւորաց և եկղեցականաց, այլև քարոզներ և աղօթքներ մեր ժամագրոց, մաշտոցի և խորհրդատետրի մէջ, և ատենախօսութիւն համառօտ:

Գիւտ Կաթողիկոս, գրեց շատ աղօթքներ, շարականներ և նամակներ:

Խոսրով պատմիչ, որ գրեց իւր վարժապետի սըրբոյն Սահակայ վարքը: ✓

Դ Ա Ր Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

Քրիստոսի դաստառակի (անձեռագործ պատկերի) Յայտնութիւնը:

Փրկչին մերոյ ուղարկած անձեռագործ պատկերը Աբգար Թազաւորին՝ Եդեսիա քաղաքի պահպանութեան համար դրած էր պարսպում քաղաքի դրան վերայ: Աբգարու մահուան յետոյ՝ 37 թուականին, երբ նորա որդի Անանէն կամենում էր կրկին մուծանել կռապաշտութիւնը, Ադդէ հայրապետը Թազգրեց այն Դաստառակը մի օրմի մէջ, և դրսից ծեփեց, և մինչև 539 թիւը մնաց այնպէս անյայտ: Երբ Պարսից Թազաւոր Խոսրովը յարձակեցաւ Յունոց սահմանաց վերայ, և շատ քաղաքներ աւերեց, լսելէր Եդեսիա քաղաքի անառիկ լինելը, ուստի շատ զօրքով գնաց նորա վերայ: Երբ Եդեսացիք տեսան այս՝ մեծ ահուգողի մէջ ընկան և ջեռմեռանդ աղօթքով իրանց յոյսը դրին Աստուծոյ վերայ, այն գիշերը նոյն քաղաքի եպիսկոպոսին յայտնեցաւ Դաստառակի տեղը, և երազի մէջ հրաման առաւ հանել պատկերը այն տեղից և նորա օգնականութեամբ ազատել թշնամեաց ձեռքից: Երբ եպիսկոպոսը գնաց բաց արաւ որմը՝ տեսաւ մաքուր և անարատ մնացած: Այն երկնային զէնքով ազատեցաւ Եդեսիա քաղաքը: Պարսիկը

այս տեսնելով՝ յուսակտուր և ամօթով զլիակոր հեռացան այն տեղից։ Քրիստոսի անձեռագործ պատկերը մնաց Եղեսիա քաղաքում մինչև 944 թուականը, մինչև Ռոմանոս կայսեր ժամանակը, որ կամեցաւ փոխադրել Կոստանդնուպօլիս. այս անգքը տես տասներորդ դարում։

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը։

Վեցերորդ դարու սկզբին — 502 թուականին յաջորդեց Սամուէլ Մուշէ Կոտէից նահանգից ութ տարի։ Սորանից յետոյ 510 թուին Սահակ Բ, Հարքայ գաւառից հինգ տարի։ Յետոյ Քրիստափոր Բ, Բագրևանդից՝ վեց տարի, սորա ժամանակը 515 թուին Հոնք յաճակւեցան Հայաստանի վերայ, և այնտեղից Կապադովկիա, աւերելու մեր երկիրը։ Բայց Մէթ Գնունի Հայոց նախարարը հալածեց նորանց և խաղաղացրեց Հայաստանը։ Քրիստափորից յետոյ՝ 522 թուին նստաւ կաթողիկոս Ղևոնդ Աբերանու գաւառից՝ երեք տարի. սորանից յետոյ 524 թուին Ներսէս Բ, Աշտարակեցի Բագրևանդայ գաւառից՝ ինը տարի։ Յետոյ 533 թուին նստաւ կաթողիկոս Յովհաննէս Բ, Գաբելէն գաւառից՝ տասն և եօթը տարի. Սորա ժամանակը 548 թուին Հայաստանը մեծ խռովութեան և տաղնապի մէջ էր Պարսից Խոսրով թագաւորի ձեռքից, այս հալածանաց ժամանակը շատերը նահատակւեցան, որոնց հետ և Գրիգոր կամ Գրիգորիս Ռափիկ ազգից

Յովհաննէս կաթողիկոսից յետոյ՝ 551 թուին ընտրւեցաւ կաթողիկոս Մովսէս Բ, Արագածոտն գաւառից։ Սա զիտուն և հմուտ գոյով տուժարագիտութեան՝ եպիսկոպոսաց ժողովով ուղղագրեց Հայոց տուժարի սխալները։ Սորա ժամանակը Յուստինիանոս կայսրը սկսել էր սերմանել տալ Հայաստանի մէջ Յուլիանիտաց մոլորութիւնը. Մովսէս կաթողիկոսը շուտով դուս արաւ նորանց Հայաստանից։ Նմանապէս նոյն ժամանակը Պարսիկք ամենայն զօրութենէ աշխատում էին Հայոց ազգը կրակազառ դարձնել և մեծ նեղութիւններ տալ։ Մովսէս կաթողիկոսը թուղթ գրեց Խոսրով թագաւորին և խաղաղացրեց Հայաստանը, և այս հալածանքը տևեց 6 տարի։ Սորանից յետոյ 558 թուին Պարսիկք կրկին սկսան հալածանք տալ Հայաստանին մինչև 579 թիւ, որ թուին մեռաւ Խոսրով Պարսից թագաւորը։

580 թուին երբ Վրաց կաթողիկոսը վախճանեցաւ, նոցա խնդրանօք Մովսէս կաթողիկոսը Կիւրիոն անունով յունադաւանը, որ Արարատայ քորեպիսկոպոս էր՝ ձեռնադրեց կաթողիկոս և ուղարկեց Վրաստան։

Մովսէս կաթողիկոսը իւր ծերութեան պատճառաւ 581 թուին կարգեց իւրեան փոխանորդ և աթոռակալ Վրթանէս անունով վարդապետը, և նորա ձեռքով կատարում էր հայրապետանոցի ամեն գործքը տասն և երեք տարի։ Երեսուն տարի հայրապետական աթոռը վարելով՝ մեռաւ։

Նորանից յետոյ՝ 594 թուին կաթողիկոս կարգեցաւ Աբրահամ Ռշտունեաց եպիսկոպոսը, որ վեճեց Վրաց կաթողիկոս Կիւրիոնի հետ, և չընդունեց Քաղկե-

դոնի ժողովը, այս պատճառաւ Վրացիք խալառ հեռացան
Հայոց եկեղեցուց: Աբրահամ քսան երեք տարի վարելով
կաթողիկոսական իշխանութիւնը՝ մեռաւ 616 թուին:

Այս դարումս մեր մատենադրութիւնը համարեա թէ ընդ-
միջեցաւ Պարսից և Հաղարացոց բռնութիւնից:

Ազգային ժողովք:

Ժողով Դըւնայ Բ, 527 թուին Ներսէս կաթողիկոս
Աշտարակեցին մեծ հոգ տանելով եկեղեցւոյ բարեկար-
գութեան՝ ժողով արաւ եպիսկոպոսներից Դուին քաղա-
քում, ուր հրաւիրեց և Պետրոս քերթողահայր եպիս-
կոպոսին, և սահմանեց երեսուն և ութ բարեկարգու-
թեան կանոններ քահանայից և աշխարհականաց համար:

Դըւնայ Դ, ժողով 551 թուին, մինչդեռ ամէն տեղ
չէր տարածւած ֆրիստոսի ծննդեան հասարակ թուա-
կանի կիրառութիւնը, և ամէն ազգ իւր առանձին թուա-
կանն էր գործ ածում, Մովսէս կաթողիկոս Նղիվարդեցին,
ինքն գոյով զխոնական և վարժ զիսութեանց մէջ, տես-
սաւ մեր տումարի թերութիւնը, և հոգս տարաւ նո-
րոգել տումարը, ժողով կազմելով Դուին քաղաքում
եպիսկոպոսաց, քահանայից և զխոնական աշխարհակա-
նաց և միաբան հաւանութեամբ հաստատեց նոր թուա-
կանը 551 թուին, որից սկսած մինչև հիմա 1320 թիւ է:

X

Դ Ա Ր Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ

Սուրբ խաչի գերութիւնը Պարսկաստան, և կրկին դարձը: Եօթն խոտաճարակաց նահատակութիւնը:

Նորանոր դէպքեր հանդիսացրին եօթներորդ դա-
րու սկիզբը սուրբ խաչի գերութեան պատճառաւ որ Պարս-
կաստան գերի էր տարած խոսրով Պարսից արքայի ձեռ-
քով: Սա կամեցաւ վրէժխնդիր լինել իւր սիրելի բարե-
կամի Հայկազն Մօրիկ կայսեր մահուան համար, որին
602 թուին սպանեց ֆոկաս կայսրը, ուստի խոսրով Պար-
սից արքայն զօրք ժողովեց և գնաց Յունաց սահմանե-
րը. ֆոկասը չը վստահանալով նորա դէմը կանգնել, եկաւ
հասաւ մինչև Քաղկեդոն, և շատ քաղաքներ աւերելով
եւ գնաց Կարին: Եւ որովհետեւ թշնամութիւն ունէր
Հայոց նախարար Մուշեղ Մամիկոնեանի հետ, զօրք ու-
ղարկեց Տարոն, որ Մուշեղ նախարարին գտնեն և սպա-
նեն:

Այն ժամանակը Տարոնում իննսանկնեան վանքի մօտ
բնակւում էին եօթը խոտաճարակ ճգնաւորներ: Սոքա
որ տեսան Պարսից զօրք՝ գնացին յորդորեցին կրօնաւո-
րաց, որ առ ժամանակ հեռանան վանքից, և ինքեանք
մնացին այն տեղ փոխանակ նոցա, և մինչդեռ նոքա ա-

ղօթք էին անում վանքի եկեղեցում, եկան Պարսից զօրքը, քանդեցին վանքը, մօտն եկեղեցին, և սեղանի առաջ կոտորեցին ձգնաւորներին՝ 604 թուին: Նոցա մարմինները թաղւեցան Անտոն և Կրօնիգէս ձգնաւորաց զերեզմանաց մօտ, և կարգւեցաւ նոցա համար առանձին տօն ամէն տարի նոցա նահատակութեան յիշատակ: Սորանից յետոյ չթուլացաւ Խոսրով թագաւորը իւր անհաշտ թշնամութիւնից Յունաց հետ, և երբ 610 թուին Հերակլ Ափրիկոյ իշխանը սպանեց փոխսին և ինքըն առաւ կայսերութեան գահը, Խոսրովը լսելով Յունաց խռովութիւնը և Հերակլի տիրապետելը՝ կրկին զօրք ժողովեց և զնաց Պաղեստին, առաւ Երուսաղէմ քաղաքը, և երեսուն հազար հոգի և Քրիստոսի Խաչափայտը զերի տարաւ Պարսկաստան, և իւր կռատանը դրաւ Խաչափայտը, ուր և մնաց մինչև 629 թիւը:

Հերակլը զօրք ժողովեց, քշեց Պարսիկներն իւր սահմանից: Խոսրովը ահից փախաւ Սելւեկիա, ուր հիւանդացաւ, դարձաւ Տիսթոն քաղաք, ուր իւր որդին Կաւատը սպանեց նորան և ինքն թագաւորեց նորա տեղ: Մի տարուց յետոյ մեռաւ Կաւատը, և նստաւ թագաւոր նորա մանուկ որդին Արտաշիր: Այս որսեց Հերակլը՝ Խոսրովի փեսայ Խոռեմին խոստացաւ օգնել և թագաւոր կարգել, եթէ յանձն առնի դարձնել Քրիստոսի Խաչափայտը զերութիւնից: Խոռեմը յօժարակամ լսեց Հերակլի առաջարկութիւնը, սպանեց Արտաշիր մանուկին և ինքն նստաւ Պարսից տէրութեան աթոռը, և շուտով սուրբ Խաչը պատուով ուղարկեց Երուսաղէմ: Այս լսե-

լով Հերակլը, 629 թուին Մարտ ամսին Կոստանդնուպօլսոյ եկաւ Երուսաղէմ, ուր ինքն իւր ուսին դրած սուրբ Խաչը՝ տարաւ բազմեցրեց խորանը և կարգեց վերացման խաչի տօն՝ 14-ին Սեպտեմբեր ամսոյ:

Վարազայ Խաչի յայտնութիւնը:

Հռիփսիմեանց նահատակութենէ անտի աւանդութիւն կայ մեր ազգի մէջ, թէ Գիօղիտիանոս կայսեր հալածանաց ժամանակը՝ չորրորդ դարու սկզբին Հռիփսիմեանք, որ փախան Հռովմից, բերած են իւրեանց հետ Խաչափայտի մասը և նոցա անցկենալուց Տոք գաւառից՝ ոմանք այն կուսանաց մնացած են Վարազ լեռան վերայ, իւրեանց հետ ունելով կենաց փայտի մասը, և թէ այս կուսանաց մահուան յետոյ անյայտացած է այն կենաց փայտը:

Այս աւանդութիւնը լսելով մի ձգնաւոր Թողիկ աւանդով 653 թուին առանձնացած այնտեղ, ուր կուսանաց վանքն էր, խնդրում է յԱստուծոյ աղօթքով յայտնել նորան այն սուրբ զանձը:

Մի գիշեր յանկարծ տեսնում է Վարազ լեռան վերայ տասն երկու լուսեղէն սիւն և հրեշտակաց օրհներգութեան ձայն է լսում, յետոյ տեսնում է մի լուսեղէն Խաչ, որ վերանում է այն տեղից և զնում մտնում այն վանքի եկեղեցին և կանգնում սեղանի առաջ: Այս քրտեսնում է Թողիկ ձգնաւորը իւր աշակերտի հետ ահաւ դողով մտնում են եկեղեցին և տեսնում Խաչափայտի մա-

սը և երկրպագութիւն են տալիս: Իսկ լուսեղէն սիւների նշաններն տասներկու օր երեւում են նոյն տեղում:

Այս տեսնելով ժողովուրդը եպիսկոպոսներով և քահանայիւք գնում ստուգում են այն հրաշքը, և այն լուսեղէն սիւների տեղում տասներկու մատուռ են շինում: Իսկ այն եկեղեցին, ուր բազմեցաւ խաչափայտի մասը, նորոգում և նորա մօտ շինում են վանք կրօնաւորաց համար:

Խաչափայտի հրաշալի յայտնութիւնը լսելով Գ. Ներսէս կաթողիկոսը և ստոյգ քննութեամբ վերահասու լինելով այն հրաշքին՝ կարգում է խաչի առանձին տօն, որ կոչւում է տօն յայտնութեան վարագայ խաչի:

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Եթե ներքոյ դարու սկզբին Աբրահամ կաթողիկոսի վախճանից յետոյ՝ Կոմիտասը նստաւ կաթողիկոս, որ Տարօնոյ եպիսկոպոս և Գլակայ վանքի առաջնորդ էր: Սա հոգեւանդն աշխատութեամբ Հռիփսիմեանց վկայարանը քանդեց և նոցա տապանի վերայ հոյակապ եկեղեցի շինեց: Հռիփսիմեանց վերայ ընտիր շարական յօրինեց «Անձինք նուիրեալ էք սիրոյն Քրիստոսի»: Էջմիածին զանազան շինութիւններ արաւ և բարեկարգելով եկեղեցին, ութ տարի մեծաւ հոգատարութեամբ և հոգեւանդն աշխատութեամբ վարեց հայրապետական աթոռը, և վախճանեցաւ 625 թուին:

Քրիստափոր Գ. Ապահունեաց գաւառից, ընտրեցաւ կաթողիկոս նոյն տարին: Սա յայտնի էր իւր ճգնազգեաց վարուք և անաչառութեամբ: Սորան իշխանք կամենում էին աթոռից հանել՝ նոցա չարութիւնը երեսներին տալու համար, այս որ իմացաւ՝ ինքն հրաժարեցաւ կաթողիկոսական իշխանութիւնից, երեք տարի վարելով աթոռը՝ առանձնացաւ Մասեաց լերան մօտ, ուր կրօնաւորաց վանք շինեց և մնաց այն տեղ մինչև իւր մահը:

Եղբ կաթողիկոս Նիգ գաւառից, յաջորդեց Քրիստափորին 628 թուին, որ հրաւիրեցաւ Հերակլ կայսրէն Կարին, և ի հարկէ ստիպեալ ընդունեց Քաղկեդոնի ժողովը. շինել տուաւ Գայիանեայ եկեղեցին և նորա մօտ բնակարաններ եկեղեցականաց համար, տասն տարի վարելով կաթողիկոսական աթոռը՝ մեռաւ 639 թուին:

Սորանից յետոյ Ներսէս Գ. Տայոց գաւառից, նըստաւ կաթողիկոս 640 թուին, որ կոչուեցաւ շինող, զանազան եկեղեցիք շինելուն պատճառաւ Արտաշատ խոր վերապի մօտ, որ կէս ժամ ճանապարհաւ հեռի էր Էջմիածնից, ուր Տրդատ Լուսաւորչի առաջ զնաց խոր վերապից դուս գալուց: Սա մեղմացրեց Կոստանդին կայսեր սիրտը և հաշտեցրեց Հայոց հետ Գուրն քաղաքում կայսեր առաջ ընդունելով Քաղկեդոնի ժողովը՝ հաշտեցան միմեանց հետ: Բայց յետոյ Յունաց և Հայոց մէջ այնքան հակառակութիւն և վէճեր բացւեցան, մինչև որ Ներսէս կաթողիկոսը ստիպւեցաւ հրաժարել աթոռից և գնալ իւր բնիկ գաւառը: Այն միջոցին նորա տեղ իբր

տեղապահ կարգեցաւ Յովհաննէս վարդապետ Մանգլեկեցիին, որ ժողովով հերքեց Քաղկեդոնի ժողովը, և սահմանեց հինգ կանոն ընդդէմ Յունաց եկեղեցւոյն: Սոյն այս Ներսէս Գ, վեց տարուց յետոյ, երբ էլ չըկաւ յին նորա թշնամիքը՝ կրկին դարձաւ իւր աթոռը, հալածեց աղանդաւորաց, քսան տարի վարելով հայրապետական աթոռը՝ մեռաւ 660 թուին:

Սորանից յետոյ Անաստաս Արկուռի գիւղեց, նստաւ կաթողիկոս, ուր շինեց վանք և եկեղեցի, աղքատանոց և հիւանդանոց, Անանիա Շիրակացւոյն նորոգել տուաւ Հայոց տումարը և մինչդեռ կամենում էր այն հաստատել ժողովով՝ մեռաւ՝ վեց տարի վարելով հայրապետական աթոռը:

Սորա մահուան յետոյ 667 թուին ընտրւեցաւ կաթողիկոս Իսրայէլ Վանանդայ երկրից, և տասն տարի վարելով կաթողիկոսական իշխանութիւնը՝ մեռաւ:

Իսրայէլից յետոյ 677 թուին նստաւ կաթողիկոս Սահակ Դ, Զորափորեցի: Սա առաքինի և վարժ էր ուսմանց մէջ. որին Հագարացւոց Աբգլայ ոստիկանը շղթայով կապած ուղարկեց. Դամասկոս, ուր գերութեան մէջ քնաց մինչև 702 թիւը: Այն կապանաց մէջ Սահակ կաթողիկոսը լսելով Մոհմատ զօրավարի յարձակիլը Հայաստանի վերայ, առաջ գնաց հանդարտացնել նորան բարկութիւնից, և մինչդեռ կը հասնէր Խառան՝ հիւանդացաւ և ընկաւ մահիւն, բայց առաջ քան հոգին աւանդելը՝ թուղթ գրեց Մոհմատ զօրավարին, որ խնայի Հայոց ազգը. և այսպէս կատարեց իւր միջնորդութիւնը: Սա վարեց իւր իշխանութիւնը քսան և վեց տարի:

Պաւլիկեան աղանդաւորներ:

Ներսէս կաթողիկոսի և Յովհաննէս Մանգլեկեցւոյ ժամանակը Հայաստանում երևեցան հին Մանիքեցւոց աղանդաւորներ, որոց զլուխ և առաջնորդն էր Հայազգի Պողոս անուկով մէկը: Սորա աշակերտները կամ հետեւողները աւելցրին արհամարհել եկեղեցւոյ խորհուրդները, անարգել սրբոց պատկերները և Քրիստոսի խաչը:

Ազգի բարեպաշտ իշխանք ստուգելով այս ամէնը՝ իսկոյն արտաքսեցին նորանց Հայաստանից, ուստի նոքա քաշւեցան գնացին հարաւակողմը, և միաբանեցան Հագարացւոց հետ ընդդէմ քրիստոնէից, յետոյ արևելքում այնքան զօրացան Նիկիիորոս կայսեր ժամանակը ութերորդ և իններորդ դարերում, մինչև անգամ ահարկու բանակ կազմեցին քրիստոնէից դէմ, և անցկացան գնացին Նւրոպա և միացան Սարակինոսաց հետ:

Սորա ժամանակով յայտնւեցաւ Մայրադոմեցւոյ աշակերտ Սարգիսը, որ հեռւելով Յուլիանիտաց, Մարկիոնեանց և Մաքելեանց մոլորութեանը՝ առաջնորդ գտնւեցաւ չար աղանդոյ, որ Ներսէս կաթողիկոսը ջնջեց Հայաստանից: Սոցա դէմ գրեցին թէոգորոս Քոթենաւոր և նորա աշակերտ Յովհաննէս իմաստասէր, որ կաթողիկոս ընտրւեցաւ ութերորդ դարում:

Եկեղեցական մատենագիրք:

Այս դարուս մատենագիրք են,

Գրիգորատուր վարդապետ Անձախեցի, որ եզր կաթողիկոսի ժամանակաւ ղիմամարտ գտնւեցաւ Մայրա-

գոմեցւոյ մոլորութեան, մինչև որ խափանեց նորա աշխարհը :

Յովհաննէս եպիսկոպոս Մամիկոնեան, որ գրեց Մամիկոնեանց և Գայլ վահանի պատմութիւնը ընդդէմ Պարսից մինչև 640 թիւը :

Թէոդորոս վարդապետ Քոթենաւոր՝ վանահայր միանձանց, վարժ և ուսեալ շէլլէն լեզուի, ուսուցիչ բազմութիւ աշակերտաց, սորա աշակերտներից երևելիքն էին Սարգիս կաթողիկոս և Յովհաննէս իմաստասէր Օձնեցի, որ գրեց Ճառ ընդդէմ մոլորութեան Մայրագոմեցւոյ և նորա աշակերտ Սարգսի, նմանապէս և Քրիստոսի խաչի վրայ ներբող :

Անանիա Շիրակացի, տուժարագէտ, որ գրեց աստղաբաշխութեան զիրք, չափուց և կշռոց տեղեկութիւն, ժամանակագրութիւն, այլ և զանազան ճառեր և խրատներ :

Մովսէս Միւնեաց եպիսկոպոս՝ որ հմուտ էր շէլլէն լեզուի, կոչեցաւ երկրորդ քերթողահայր, և գրեց երեւելի ճառեր Մովսէս Խորենացւոյ նման, քերականութիւն և ճարտասանութիւն :

Գրիգորիս եպիսկոպոս Արշարունեաց, որ եկեղեցական պաշտամանց, ընթերցողաճոց, ժամագրքի մեկնութիւն և պահոց ժամակարգութեան և տէրունական տօնից վերայ բացատրութիւն գրեց՝ վահան կամարականի խնդրանօք :

Փիլոն վարդապետ Տիրակացի, թարգմանեց Սոկրատայ եկեղեցական պատմութիւնը Հայ լեզու :

Սահակ կաթողիկոս Չորափորեցի, գրեց զանազան ճառեր, շարականներ, ոտանաւորներ մարդկային կազմութեան վերայ և կրօնաւորաց համար խրատներ :

Բարսեղ ճոն, գրեց պատարագի մեկնութիւն :

Սեբէոս եպիսկոպոս պատմադիր, գրեց Հերակլի արշաւանաց պատմութիւնը :

Յովհան Սայրավանեցի ճառագիր :

Դաւիթ Բագրևանդացի, գրեց համառօտ պատմութիւն Հռիփսիմեանց վկայարանի շինութեան, և ճառեր պատկերամարտից դէմ :

Ազգային ժողովք :

Կարնոյ ժողով 629 թիւին :

Հերակլ կայսր վերահասու լինելով, որ բաւական շփոթներ են լինում Բաղկեդոնի ժողովոյ մասին, Յունաց և Հայոց մէջ խաղաղութիւն դձելու համար, հրամայեց եղբ կաթողիկոսին ժողով անել Քէոդոսուպոլիս կամ Կարին քաղաքում : Ինքն կայսրը հրամայեց իւրեանց եպիսկոպոսաց Յունաց եկեղեցւոյ դաւանութիւնը գրել և Հայոց տալ : Այն թուղթը կարգաւով եղբ կաթողիկոսը՝ տեսաւ որ Յունաց եկեղեցին նոյնն է դաւանում, Քրիստոսի Տեառն մերոյ անձին և բնութեան վերայ ինչ որ Հայոցը, և թէ Հայք նշովում են Նեստորի մոլորութիւնը, վամնորոյ ընդունեց Բաղկեդոնի ժողովը և խօսք տւին միմեանց էլ չհալածեն և ոչ ծուռ կարծիք ունենան միմեանց վերայ :

Դրւնայ Ե, Ժողով 645 Թուին:

Երբ Սմբատ վարազաիրոցեանը ազգի թշնամեաց նուաճեց և խաղաղութեան մեջ ունէր Հայաստանը, Ներսէս շինող կաթողիկոսը հոգս տարաւ եկեղեցական բարեկարգութեան, Ժողով դուժարելով Դուին քաղաքում, պատճառ որ այն ժամանակը մուտ էին գտել Հայաստանում Յովհաննէս Մայրապետացւոյ և նորա աշակերտ Սարգսի մոյորամիտ զրուածները. ուստի միաբան հաւանութեամբ եպիսկոպոսաց հերքեցին հերձուածների զիրքը, և յետոյ սահմանեցին տասներկու կանոն՝ եկեղեցւոյ ժառանգաւորաց և իշխանաց համար, նմանապէս Ներսէս կաթողիկոսի հրամանաւ Բարսեղ ոմն Դրպրեւանից առաջնորդ՝ շարականից անպիտանները դուս զըձեց և կարգաւորեց եկեղեցւոյ ժամակարգութիւնը:

Դրւնայ Զ, Ժողով 648 Թուին:

Սիրոյ կապը և միաբանութիւնը որ Հայք ունէին Յունաց հետ, խախտեցաւ շուտով Յունաց բռնութեամբ վարուելու պատճառաւ Հայոց հետ, և Հայք ևս թիւր կարծիք ունելով նոցա վերայ՝ փախչում էին նորանցից ինչպէս հերետիկոսներից: Այս մասին զանգատ արին կայսեր Հայոց վերայ:

Այն ժամանակը Կոստանդ կայսրը հրաման զրեց կաթողիկոսին և Սմբատ իշխանին՝ սէր և միաբանութիւն ունենալ Յունաց հետ և չարհամարհել Քաղկեդոնի Ժողո-

վը: Հայք երբ ստացան այն հրովարտակը՝ կաթողիկոսի հրամանաւ Ժողովեցան Դուին քաղաքը եպիսկոպոսունք և բոլոր իշխանք: Այն միջոցին Դաւիթ անունով մի փիլիսոփայ, որ Կոստանդնուպոլից բերել էր հրովարտակը, յայտնեց նոցա կայսեր կամքը և յորդորեց որ էլ չհերքեն Քաղկեդոնի Ժողովը, բայց բոլոր եպիսկոպոսունք և իշխանք միաձայն պատասխան տուին «Անկարելի է մեզ նորաձև և օտար վարդապետութեան հետեւել, որ սուրբ Գրիգոր Լուսաւորչից, երանելի Թարգմանչաց, Նիկիոյ, Կոստանդնուպոլսոյ և Նիքեոսի՝ երեք սուրբ Ժողովոց չլինի աւանդած»: Ուստի միաբան հաւանութեամբ թուղթ գրեցին Կոստանդ կայսեր, և խնդրում էին որ չստիպի նոցա հաւատոյ խնդրոյ մէջ:

Մանազկերտի Ժողով 951 Թուին, Յովհաննէս վարդապետ Մանազկերտցի իւր տեղապահութեան ժամանակ Ժողով արաւ Մանազկերտում և նշովքով մերժեց Քաղկեդոնի Ժողովը:



Մեր եկեղեցւոյ Մարտիրոսք:

Երբ Հագարացիք տիրեցին Հայաստանին և բռնա-
 դատում էին ընդունել նոցա հաւաար, Աստուծոյ շնորհքը
 ներգործեց Հայաստանի մէջ նոցա վերայ, որոց համար սահ-
 մանաւծ էր փրկութիւն, որոց մին էր Դաւիթ Դըւնեցին,
 որ առաջ կոչուում էր Սուրհան: Սորա հայրը Պարսիկ էր,
 մայրը քրիստոնեայ. երբ եկաւ Խորասանից Հայաստան,
 տեսնելով Քրիստոնէից բարեպաշտ վարքը՝ հաւատաց 'ի
 Քրիստոս, մկրտեցաւ և կոչեցաւ Դաւիթ: Մինչև իւր
 խորին ծերութիւնը բնակւում էր Դուին քաղաքում, երբ
 այնտեղ եկաւ Աբղլայ Հագարացւոց ոստիկանը, բռնեց և
 տանջեց նորան քրիստոնէութեան համար, և տեսնելով
 նորա սէրը առ խաչն Քրիստոսի՝ խաչել տուաւ, և գեղար-
 դով կողը խոցել տալով նահատակեց 693 թուին: Հա-
 ւատացեալք թաղեցին նորա մարմինը, և կարգեցաւ ա-
 մէն տարի նորա յիշատակի տօնը: Նմանապէս Աբղլայի
 ամիրապետութեան ժամանակ, որ երբեմն ոստիկան էր
 Հայաստանի, երբ Հագարացիք շատերին գերի էին տա-
 նում՝ նոցա մէջ մի չորս տարեկան մանուկ՝ Վահան ա-
 նունով որդի Հայոց Խոսրով նախարարի, որ Գողթան գա-
 ւառի տէրն էր, տարան Դամասկոս, թլիպտեցին և անունը
 դրին Վահապ, Սա երբ մեծացաւ, վարժեցաւ նոցա զը-

բաղիտութեան մէջ, մինչև որ կարգեցին նորան զիւա-
 նադպիր և արքունի խորհրդական: Երբ տիրեց Օմար ամի-
 րապետը և ազատեց Հայոց գերիքը, Վահանն էլ դար-
 ձաւ արքունի հրովարտակաւ տիրել իւր հայրենի ժա-
 ռանգութեան — Գողթան գաւառին, կրկին ընդունեց
 քրիստոնէութիւնը և պաշտում էր ճշմարտութիւն: Հա-
 գարացիք այս որ լսեցին՝ աշխատում էին բռնել նորան,
 բայց Վահանը ինքնակամ գնաց արքունի դուռը և յայտ-
 նեց իւր քրիստոնէութիւն ընդունելը, և թէ պատրաստ
 է 'ի սէր Քրիստոսի զոհել իւր անձը, ուստի զլխատելով
 նահատակեցին 737 թուին, և կարգեցաւ նորա յիշա-
 տակի տօնը: Հարոնի ամիրապետութեան ժամանակ մամն-
 ւեցան Սահակ և Համազասպ Արծրունի իշխանք Հա-
 յոց, որպէս թէ խորհրդակից և օգնականն Յունաց կայ-
 սեր, ուստի բանտը գձեցին և չարաչար տանջելով՝ ստի-
 պում էին ուրանալ քրիստոնէական հաւատը, բայց երբ
 տեսան նոցա հաստատ լինելը իւրեանց հաւատոյ մէջ՝
 գլուխները կտրեցին 789 թուին, ոյր վասն կարգեցաւ
 նոցա յիշատակի տօնը:

Բաց 'ի սոցա շատերը նահատակեցան՝ ինչպէս Հա-
 յաստանում, նմանապէս և այլ զանազան կողմերը, ուր
 իշխում էին Հագարացիք, որպիսիք յիշատակւում են Հա-
 յոց նախարարք և իշխանք, որ Նախիջևան քաղաքում
 եկեղեցւոյ մէջ փակուած բոլորովին այրւեցան, նոյնպէս
 Խառան քաղաքում նահատակեցաւ Վահան Կամարա-
 կանի դուստր Շուշանը, Ասորւոց երկրում Պետրոս Դա-

մասկացին, որոյ լեզուն կտրեցին Մանիքեցւոց և Հագարացւոց դէմ քարոզութեան համար, և Պետրոս Մայումացին՝ կուրանը անարգելու համար:

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Ութերորդ դարուն Սահակ կաթողիկոսի մահուան յետոյ 703 թուին ընտրւեցաւ Եղիա Արժիշեցի՝ Բզնու նեաց եպիսկոպոսը, որ հալածական արաւ Քաղկեդոնականաց, և ըստ խնդրոյ Աղուանից գնաց Պարտաւ քաղաք, ուր ժողովով հանեց աթոռից նոցա կաթողիկոս Ներսէսին և նորա տեղ ձեռնադրեց Սիմէոն սարկաւազապետը, բարեկարգութեան կանոններ դրեց և յետ դարձաւ:

Տասն և չորս տարի վարելով հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ: Սորան 718 թուին յաջորդեց Յովհաննէս Դ, իմաստասէր՝ Օձուն գիւղից, աշակերտ Թէոդորոս Քաթենաւորի. սա շատ բարեկարգութիւններ գծեց Հայաստանում, հերքեց աղանդաւորաց և հերձուածողաց ուսմունքը, սքանչելի ծառեր դրեց Քրիստոսի մարդեղութեան վերայ, և Պաւլիկեանց և Երեւութականաց մոլոր կարծեաց դէմ. այլ և ժամակարգութեան մեկնութիւն և շարահաններ: Ցասն և մի տարի վարելով կաթողիկոսական իշխանութիւնը՝ վախճանեցաւ:

729 թուին սորան յաջորդեց Դաւիթ Ա, կոտայք գաւառից՝ տասն երկու տարի, այն սա վշտացած գոլով Մահմէտ ոստիկանից, Դուին քաղաքից գնաց բնակեցաւ Արամօնս գիւղում, ուր եկեղեցի շինեց և բնակութեան

տուն, դեսպան ուղարկեց ամիրապետին, և Մահմէտի տեղ կարգել տաւ Աբղլազիզը: Արամօնս ութ տարի ֆալուց յետոյ՝ կրկին եկաւ Դուին իւր կաթողիկոսութեան աթոռը, տասն երկու տարի կառավարելով հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ:

Սորանից յետոյ 741 թուին նստաւ Տրդատ Ա, Վանանդ գաւառից քսան երեք տարի: Սորան յաջորդեց 764 թուին Տրդատ Բ, Դասնաւոր գաւառից երեք տարի:

Տրդատ Բ, ից յետոյ 767 թուին նստաւ կաթողիկոս Սիոն Արագածոտն գաւառից ութն տարի: Սա ժողովք արաւ Պարտաւ քաղաքում, և բարեկարգութեան կանոններ սահմանեց:

Սիոնի մահուան յետոյ 772 թուին ընտրւեցաւ կաթողիկոս Եսայի վարդապետ Նիզ գաւառից, բարի վարքով դաստիարակած կաթողիկոսարանում. վարեց իշխանութիւնը տասներեք տարի:

Զինի որոյ 788 թուին աթոռը ունէր Ստեփաննոս Գլունեցին երկու տարի: Յետոյ Յովսէփ կամ Յովք վեց ամիս: Յովսէփից յետոյ Սողոմոն ծերունին Գեղարքունեաց գաւառից՝ մի տարի: Սորանից յետոյ Գէորգ Ա, Արագածոտն գաւառից՝ մի տարի:

Գէորգայ մահուան յետոյ Յովսէփ Բ, որ կարիճ էր կոչոււմ, նոյն գաւառից՝ տասն և մի տարի:

Սոքա էին Հայոց կաթողիկոսունք մինչև 806 թիւը:

Եկեղեցական մատենագիրք:

Ստեփաննոս Սիւնեցի Բ, ուսեալ ՚ի Կոստանդնուպոլիս, որ Թարգմանեց Գիտնեսիոսի Արիսպագացւոյ գիրքը. զրեց մարգարէից մեկնութիւններ և շարականներ:

Յովհաննէս իմաստասէր Օձնեցի, զրեց Ժողովական տենաբանութիւն կանոններով, ճառեր Պաւլիկեան ազանդաւորաց և Երևութականաց դէմ, որ անանուն Յովհաննու Մայրագոմեցւոյ մոլորութեանը հետևում էին, այլև եկեղեցւոյ ժամակարգութեան մեկնութիւն:

Ուխտանէս եպիսկոպոս, որ զրեց Աղուանից պատմութիւն:

Թումա Արծրունի, լեզուագէտ և հին պատմութեան տեղեակ, որ Գաղիկ Արծրունւոյ խնդրանօք զրեց պատմութիւն:

Խոսրով հռետոր, կամ Խոսրովիկ Թարգմանիչ, որ զրեց քառասնորդական պահոց վերայ ճառեր: Սա ունի ևս վիճողական խնդիրներ Յունաց դէմ:

Շապուհ Բագրատունի, զրեց Բագրատունեաց պատմութիւն:

Աւոնդ վարդապետ, Շապուհ Բագրատունւոյ խնդրանօք զրեց Հայոց պատմութիւն Մահմետի վախճանից սկսած մինչև իւր ժամանակը 788 թիւ:

Ազգային Ժողովք:

Ժողով Ա, Պարտաւայ 709 թուին:

Աղուանից կաթողիկոս Ներսէս բակուր՝ համոզելով Քաղկեդոնի Ժողովոյ սահմանաց և վճռոց, ընդունեց այն Ժողովը, բայց Եղևա Հայոց կաթողիկոսը արգելել տալով Աղուանից կաթողիկոսին Հաղարացւոյ ամիրապետի մօտ՝ Ժողով արաւ Պարտաւ քաղաքում, և Սիմոն անունով մէկին կարգեց կաթողիկոս Ներսէսի տեղ, յետոյ բարեկարգութեան կանոններ սահմանելով՝ արձակեց Ժողովը:

Դըւնայ Ժողով 719 և 726 թուին:

Յովհաննէս իմաստասէր կաթողիկոս, անիշխանութեան դառն ժամանակին նստաւ հայրապետական աթոռը, և նորանոր ուղղութեամբք աշխատում էր հոգս տանել Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեանը. ուստի իւր հայրապետութեան երկրորդ տարին Ժողովեց եպիսկոպոսաց և քահանայից Դուին քաղաքում, և զեղեցիկ ատենախօսութեամբ յորդորում էր ամենին ազգի բարօրութեան և ապահովութեան համար հոգս տանել. յետոյ միաբան հաւանութեամբ հաստատեց բարեկարգութեան երեսուն և երկու կանոններ: Նմանապէս հերքեցին Պաւլիկեանց աղանդը: Սորա ժամանակը երկու Ասորիք դուս եկան Բարշապուհ և Գաբրիէլ անունով, որ խռովութիւն էին գծում Հայոց մէջ, որպէս թէ Հայք Յուլիանիտաց

աղանդը ընդունած լինին: Յովհաննէս կաթողիկոսը երբ տեսաւ որ առանձին խրատելով ոչինչ չէ օգնում, դուստնել տուաւ նորանց Հայաստանից, և ժողովով մերժեց նոցա մոլար վարդապետութիւնը:

Պարտաւայ Բ, ժողով 768 թուին:

Սին կաթողիկոսը տեսնելով մի քանի եկեղեցակա-
նաց մէջ թուլութիւններ՝ ժողով արաւ Պարտաւ քա-
ղաքում, և բարեկարգութեան կանոններ կարգեց, ուր
սահմանեցաւ կանոնական Աստուածաշունչ գրոց թիւը,
այսինքն Հնգամատեան Մովսէսի, Գատաւորք, Հռութ, չորս
գիրք թագաւորութեանց, երկու մնացորդք, Ա, և Բ, Եզր,
Տովբիթ, Յուդիթ, Եսթեր, Մակաբայեցւոց երեք գիրք,
Յովբ, Գաւթի Սաղմոսք, Սողոմոնի չորս գիրք, Տասն երկու
փոքր մարգարէք, և Եսայի, Երեմիայ, Բարուք, Եզեկիէլ,
Կանիէլ և Սիրաք:

12X-19

Դ Ա Ր Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Այն ժամանակը, երբ պատկերամարտք հալածում
էին ուղղափառաց, Հաղարացիք ամենայն զօրութենէ աշ-
խատում էին տարածել իւրեանց հաւատը և չարաչար
քան զկայսրները տանջում էին իւրեանց քրիստոնեայ հը-
պատակներուն, որով շատ անուանի մարդիկ մեր Հայոց
ազգի վկայական մահուամբ փոխւեցան այս կեանքից: Հա-
րունի ամիրապետութեան ժամանակը 808 թուին նա-
հատակեցան երկու եղբարք Սահակ և Յովսէփ Կարնե-
ցիք. սոցա հայրը Հաղարացի էր, իսկ մայրը քրիստոնեայ
հայազգի, որից ուսան բարեպաշտութեան օրէնքներ. ա-
ռաջ ծածուկ էին պաշտում քրիստոնէութիւնը, և յե-
տոյ հրապարակաւ յայտնելով իւրեանց հաւատը՝ մատնե-
ւեցան այլազգի իշխանի ձեռքը և ընկան բանտը, ուր
շատ տեսակ յորդորելուց և սպառնալիք տալուց յետոյ,
որ ուրանան իւրեանց հաւատը, երբ նոքա հաստատ մը-
նացին Աստուծոյ շնորհաց մէջ, կտրեցին նոցա գլուխ-
ները, և մեծ լոյս ծագեց նոցա մարմնոյ վերայ, որից վա-
խեցաւ իշխանը և շուտով հրաման տուաւ պատուով
թաղել նոցա մարմինները, որոց յիշատակի տօնը կատար-
ւում է ամէն տարի: Նոյն մարտիրոսական մահուամբ կա-
տարեցան քրիստոնէական հաւատոյ համար եօթն ընտիր
զօրականք՝ հասակաւ երիտասարդք, որոնք 857 թուին

խաչեցան Հագարացոց Բուղայ ոստիկանի հրամանաւ։ Նոցա գլխաւորն էր Ատոմ Անձեացին, որից կոչեցան Ատոմեանք, որոց յիշատակը կատարուեմ է առաջին Ատոմեանց հետ, որոնք նահատակեցան Պարսից արքայ Յազկերտի հալածանաց ժամանակը հինգերորդ դարում։ Նոյն Բուղայի ոստիկանութեան միջոցում կատարեցաւ Կոն կոչեցեալ երանելին Ստեփաննոս, նոյնպէս և Սմբատ Բագրատունի խոստովանող, որ երկար ժամանակ մնալով բանտի մէջ՝ աւանդեց հոգին առ Աստուած։ Բայ ի ուրիշ շատ իշխաններից և հասարակ ժողովրդոց, որոնք Հագարացոց բռնութեամբ թափեցին իւրեանց արիւնը՝ ի փառս քրիստոնէական հաւատոյ, ամենից գերազանց հանդիսացաւ իւր սքանչելի մահուամբ և պանծալի վկայութեամբ մեր երանելի Թագաւոր Սմբատ Բագրատունին, թոռն Սմբատայ խոստովանողի, որդւոյ Աշոտ արքայի, որ առաջին Թագաւորն էր Բագրատունեաց ցեղից։ Սա երբ 890 թուին Թագաւորում էր, քաջութեամբ խնամակալ գտնեցաւ Հայաստանին, որ անխառն էր քաշում յափշտակող թշնամեաց բռնութիւնից։ Սա իւր սքանչելի համբերութեամբ առ Աստուած ազաւինելով՝ անյաղթելի գտնեցաւ շատ տեսակ նեղութեանց մէջ, որ էր պակասում օտարազգի բռնութիւնից և աղգայնոց չարակամութիւնից։ Ինքն վեհանձն զոյով, անոխակալ էր դէպի թշնամիքը և բարերար ամենին, և իւր նախնանքն վարքով օրինակ էր լինում բարեպաշտութեան, և աստուածային սիրով վառուած՝ հոգաւար էր եկեղեցեաց և վանորէից շինութեան, և արդարեւ իբրեւ հայր ժողո-

ղորեան անձնանուէր զթով ազատում և պաշտպանում էր նոցա։ Իւր Թագաւորութեան վերջին տարին, երբ Կապուտ բերդը պաշարեցին, որոյ մէջ ամրացած էր երանելի Սմբատ արքայն, Յուսուփ Հագարացոց ոստիկանը նորան ձեռք գծելու համար՝ սաստկացրեց պատերազմը, և անինայ կոտորում էր ժողովրդեան։ Երբ տեսաւ երանելին և խնայաւ թէ իւր պատճառաւ է այնչափ անողորմ հարուածներ տալիս, յանձն առաւ ինքնակամ տալ իւր անձը ժողովրդոց փրկութեան համար, սիրտ առնելով ճշմարիտ Աստուածսիրութիւնից և արքայապալել մարդասիրութիւնից, որով արժանի եղև մարտիրոսական պարգևին։ Եւ երբ անձնատուր եղաւ Յուսուփ բռնաւորին, առաջին անգամը երեսանց պատուեցաւ նորանից, բայց յետոյ Յուսուփ խաբեբայութեամբ զրկեց նորան փառքից, և շղթայով կապած գծեց մութ բանտը, ուր կամենում էր սովամահ տանջել Թագաւորին, որպէս զկարողանայ խախտել հաւատից։ Եւ երբ ճարը հալաւ, տարաւ նորան Գողթան գաւառը, և այնտեղ երնջակայ ամրոցի հանդէպ դահճաց ձեռքով դառն և անտանելի տանջանքով ծեծել տղաւ, և յայտնապէս ստիպում էր ուրանալ քրիստոնէական հաւառը։ Բայց Քրիստոսի քաջ նահատակը հաստատ մնաց սուրբ հաւատոյ մէջ, և մի ծրար տեսաւ քահանայի ձեռքով ընդունեց սուրբ հաղորդութեան խորհուրդը, որով ղօրացաւ զիմանալ այն չարաչար տանջանաց։ Երբ կամենում էր անօրէնը սարսափելի օրինակաւ խեղդամահ առնել նորան, առաջ զուխը կտրեցին և մարմինը տարան Դուին քաղաք և խաչափայտի վերայ դամբեցին,

ուր լոյս իջաւ մարմնոյ վերայ, և նորա նահատակութեան և արեան հեղման տեղը հրաշագործութիւններ լինելով՝ շատ այլազգիք ընդունեցին քրիստոնէական հաւատը: Կատարեցաւ արի նահատակութեամբ 916 թուին:

Թոնդրակեցւոյ աղանդը, և Պաւլիկեանց աղանդոյ նորոգութիւնը:

Պատկերամարտից խռովութեան ժամանակը նոր աղանդ մի երևեցաւ Հայաստանում Պաւլիկեան աղանդից յառաջացած: Սմբատ անունով մէկը Ծաղկոտն գաւառից՝ 840 թուին աշակերտելով մի Պարսիկ բժշկի՝ սովորել էր նորանից մոգութեան և անաստուածութեան արուեստ, և եկել Ապահոնեաց գաւառը և բնակել Թոնդրակ գեղում: Եւ թէպէտ աշխարհական էր սա, բայց և աւանդաց խաբելու համար՝ եպիսկոպոս էր ձևացել, և անհաւատութիւն էր քարոզում: Ուրանում էր Աստուծոյ նախասնամութիւնը և Հոգւոյն սրբոյ շնորհքը, արհամարհում էր եկեղեցւոյ խորհուրդները, ստում էր հանգերձեալ կենաց յոյսը, և ինքն անմասն գոյով բարեկրօնութիւնից՝ սուտ առ երեսս բարեպաշտ էր ցոյց տալիս իրան: Եւ այսպէս փոքր առ փոքր խաբէութեամբ կուսակիցներ և հետևողներ ունեցաւ՝ թէ երիտասարդներ և թէ կանայք, մինչև բովանդակ գեղը մոլորեցուց, և աղանդաւորաց բուն դարձրուց, ուստի կոչւեցան Թոնդրակեցիք: Երբ յայտնեցաւ այս աղանդը 847 թուին, Յովհաննէս կաթողիկոս Ովայեցին նզովեց Սմբատը և նորա

հետևողներուն: Եւ որովհետև նոքա թագուն էին սերմանում իւրեանց մոլորութեան սերմունքը, ուստի կաթողիկոսը թուղթ գրեց ամենայն առաջնորդաց զգուշանալ անօրինաց որոգայթից, նոյն զգուշութեան հոգս ունեցան և միւս Հայոց կաթողիկոսը մինչև ցՊետրոս գետադարձը, և ոչ միայն նզովել էին դատապարտում այն աղանդաւորներուն, այլ և իշխանաց ձեռքով ևս պատժելով նոցանից շատերին: Բայց և այնպէս չկարացին բոլորովին ջնջել նոցա արմատն ու բունը, այլ թաղուն տարածւեցան Թուլայլ և Խնուս գիւղերը, ուր բաղմացան և աւելցրին իւրեանց չարութիւնը և ամէն տեսակ պղծագործութիւնները:

1002 թուին սոցա մոլորութեան ցանցի մէջ բռնւեցաւ Հարբայ առաջնորդ Յակոբոս եպիսկոպոսը, որ առերես զինքն խստակրօն ցոյց տալով՝ շատերի սիրտը որսաց, և սկսաւ քարոզել անաստուածութիւն: Նորա ծուռ վարդապետութիւնից մեծ շփոթ և խռովութիւն ընկաւ Հայոց ազգի մէջ: Ուստի Սարգիս կաթողիկոսը քաղցրութեամբ կանչեց նորան իւր մօտ, և ստուգելուց յետոյ բոլոր ամբաստանութիւնները, զրկեց նորան իշխանութիւնից և պատուից, և գձեց բանտը. բայց կարճ միջոցում թաղուն հնարքով ազատուում է բանտից և փախչում Կոստանդնուպօլիս, և այնտեղից գնում Թոնդրակ, ուր ատեն լինելով իւր աղանդաւորաց՝ հեռանում գրնում է և այն տեղից, և միանում այլազգի Մանիքեցւոց հետ, և այն տեղ չարաչար մահուամբ մեռնում:

Սետասաներորդ դարում, Պետրոս Գետադարձ կա-

Թողիկոսի ժամանակ, նոյն մոլորութեան աղանդը կրկին երևեցաւ, բայց Գրիգոր Մագիստրոսը՝ որ այն ժամանակը Միջագետաց Գուքս (կուսակալ) էր՝ ամենայն զօրութենէ հոգս տարաւ ջնջել և արմատախիլ առնել նոցա յիշատակը Հայաստանից. քանդեց Թոնդրակ գեղը և ուրիշ նոցա բունները, ուր ծածուկ թագ էին կացած: Այս աղանդը քաշեց համարեա թէ երկու հարիւր տարի, որպէս վկայում էր ինքը Գրիգոր Մագիստրոսը:

Թոնդրակեցիք ինչ որ գործեցին Հայաստանում, նոյնը առաւելութեամբ արին նոցա կուսակիցը և հետեողք Յունաց տէրութեան ամենայն սահմաններում: X

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Իններորդ դարուս սկիզբը 806 թուին, նստաւ կաթողիկոս Դաւիթ Բ, Մաղաղ զաւառից, քսան և եօթը տարի, սորա ժամանակը նահատակեցան Սահակ և Յովսէփ Կարնեցիք:

Դաւթից յետոյ 833 թուին կաթողիկոսութեան աթոռը նստաւ Յովհաննէս Ե, Ովայեցին՝ այրն ընտիր և ճրգնազգեաց: Բայց Հայաստանի խռովութիւնը Հազարացւոց բռնութիւնից՝ թոյլ չտուին նորան նստիլ Գուին քաղաքում, և նա պանդխտութեամբ շրջում էր այլ և այլ տեղեր և շատ անգամ բնակւում էր Մաքենոցաց վանքում Գեղարքունեաց զաւառը, ուր վշտալից ցաւով 854 թուին կատարեց իւր կեանքը, կաթողիկոսական իշխանութիւնը վարելով քսան և երկու տարի:

Ջաքարիա՝ Կոտայք զաւառից՝ ընտրեցաւ կաթողիկոս 854 թուին. և որովհետեւ եկեղեցական կարգից չէր, վախենալով ժամանակի խռովութիւնից՝ շտապեցին շուտով ձեռնադրել նորան. ուստի մի օրում առաւ սարկաւազութեան աստիճան, քահանայութեան և կաթողիկոսութեան կարգը: Նստաւ սա Գուին քաղաքում քրսան և մի տարի, և շատ բարեկարգութիւններ դձեց ազգի մէջ Աշոտայ Բագրատունւոյ ժամանակը, և հոգ տանելով ազգի խաղաղութեան՝ բարի օրինակ եղաւ բոլոր ժողովրդեան, որով պատուեցաւ ոչ միայն իւր ազգից, այլև այլազգեաց իշխանաց: Գրեց զանազան ճառեր վայելուչ ոճով տէրունական տօների վերայ:

Գէորգ Բ, Գառնեցին, կաթողիկոսութեան աթոռը նստաւ 876 թուին: Սորա ժամանակը Աշոտ Բագրատունին Հայոց թագաւոր օծւեցաւ, և թագ ստացաւ Յունաց Վասիլ կայսերէ և Հազարացւոց ամիրայետէն: Եւ 889 թուին երբ հիւանդացաւ Աշոտ արքայն, կանչեց իւր մօտ Գէորգ կաթողիկոսին, հաղօրդւեցաւ նորա ձեռքով և աւանդեց հոգին առ Աստուած:

Առաջիկայ տարին նորա որդի Սմբատը օծւեցաւ թագաւոր կաթողիկոսի ձեռքով, և հինգ տարուց յետոյ Հազարացւոց թշնամութեան պատճառաւ Սմբատ արքայի հետ՝ Գէորգ կաթողիկոսին բանտարկեցին Հազարացիք և նա երկու ամիս համբերելով այն նեղութեան և տառապանաց՝ ազատեցաւ ծանր տուգանքով: Նորանից յետոյ կաթողիկոսը Հայոց երկրի թշուառութիւնը տեսնելով՝ առանձնացաւ Վասպուրական զաւառը, և այն տեղ վախճ

Ճանեցաւ 897 թուին, քսան և մի տարի վարելով Հայ-
րապետական աթոռը:

Մաշտոց Բ, կոտայք գաւառէն, որ յայտնի էր իւր
վարուց սրբութեամբ և իմաստութեամբ, նստաւ կաթո-
ղիկոսութեան աթոռը 897 թուին, և վախճանեցաւ և օթն
տարի յետոյ:

Սա իւր կաթողիկոսութիւնից առաջ առանձնացած
էր Մաքենոցաց վանքը, ուր վարժուած աստուածային գը-
րոց ուսմամբ և բարի վարուք՝ նորոգեց Մեանայ վանքը
և վարժարան շինեց հոգեւոր ուսմանց և աստուածաշա-
տութեան:

Յովհաննէս Զ, պատմաբան, աշակերտ և ազգական
Մաշտոցի, որ յաջորդեց նորան 897 թուին, և որովհե-
տեւ նորա կեանքը տեւեց մինչև 924 թիւը, կապտմենք
հետեւեալ դարում:

Եկեղեցական մատենագիրք:

Այս դարը աղքատ էր մեր Հայոց մատենագրու-
թեամբ, ուստի յիշատակում են միայն մի քանիսը, որ-
պէս Նանա Ասորի սարկաւազ, որ Բագրատ իշխանի խնդ-
րանօք Յովհաննու աւետարանի մեկնութիւնը գրեց, Ոս-
կեբերանից քաղած Ասորեոց լիզուաւ, ուստից Սմբատ
Բագրատունին թարգմանել տուաւ հայերէն:

Համամ վարդապետ, որ Զաքարիա կաթողիկոսի ժա-
մանակը գրեց Սողոմոնի Առակաց մեկնութիւնը, և հա-
րիւր ութսուն գլուխ Սաղմոսին, ևս և քերականական ուս-
մունք, և պատմութիւն Հայոց, բայց սակաւ ինչ մնաց

սորա գրուածներէից, ինչպէս ՆՈՎ է դայի մեկնութիւնը,
որ է Յովբայ գրոց մէջ:

Գազիկ վարդապետ վահանայր ուխտի սրբոյն Ատո-
մայ, և նորա սարկաւազ Գրիգոր գրեցին վարք սրբոց՝
որ կոչուում է Ատոմադիր, իբր սկիզբն Յայսմաւուրք գրոց:

Ազգային ժողովք:

Ժողով Երնջակայ 841 թուին:

Ովայեցի Յովհաննէս կաթողիկոսի ժամանակը չա-
րամիտք ոմանք սուտ պատճառներ հնարելով չարախօ-
սութիւն արին կաթողիկոսի վերայ, և զըսարտեցին Բաղա-
րատ իշխանի մօտ, և ստիպում էին հանել Յովհաննէս
կաթողիկոսին աթոռից, և նորա տեղ ուրիշ մարդ կար-
գել: Բաղարատը ահանջ դնելով նոցա չարախօսութեանը՝
հրաման ուղարկեց բոլոր Հայոց հեռանալ նորանից և
ուրիշ դք ընտրել նորա տեղ կաթողիկոս: Այս որ լսեց
Յովհաննէս՝ բանադրեց Բաղարատին, և հեռացաւ դնաց
Գեղամայ երկիրը: Նոյն ժամանակը նախարարները ժո-
ղովեցան միասին Երնջակ քաղաք, հրաւիրեցին Հայոց ե-
պիսկոպոսաց քննել չարախօսութիւնը կաթողիկոսի վե-
րայ, և երբ վերահաս եղան նոցա ստութեանը՝ հաստա-
տեցին սորան կրկին իւր իշխանութեան մէջ:

Ժողով Շիրակուանայ Ա, 854 թուին:

Յովհաննէս կաթողիկոս Ովայեցին՝ ահանատես լինե-
լով ազգի անչափ տառապանաց և նեղութեան ներքին

և արտաքին թշնամեաց ձեռքից, այնքան կսկծաց և դառնացաւ նորա սիրտը, մինչև որ սրտի ցաւից վճարեց իւր կեանքը Մաքենոցաց վանքում: Երբ նորա մահը իմացաւ Սմբատ կիւրապաղատ, շուտով ժողով արաւ եպիսկոպոսաց Երազգաւորս Շիրակուան քաղաքում նոր կաթողիկոս ընտրելու, և միաբան հաւանութեամբ ընտրեցին Զաքարիա Կոտայք դաւառից Զազ զիւզից. ուստի ժամանակի կարծութեան պատճառաւ մի և նոյն օրը ձեռնադրեցին նորան սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս:

Շիրակուանայ Բ, ժողով 862 թուին:

Յունաց պատրիարք Փոտ կամենալով սէր և միաբանութիւն հաստատել Հայոց հետ, նամակներ զրեց Զաքարիա կաթողիկոսին և Աշոտ Բագրատունւոյ, առաջին թագաւորին, որով կամենում էր ցոյց տալ նոցա Քաղկեդոնի ժողովոյ վարդապետութիւնը իրեւ ուղիղ, և այն թուղթերը ուղարկեց Վահանայ կամ Յովհաննէս անունով մի Հայու ձեռքով: Երբ կաթողիկոսը և թագաւորը նորա թղթակցութիւնները կարդացին՝ խորհուրդ աւրին հոգ տանել և մի ճանապարհ տալ այս բանին: Ուստի 862 թուին եպիսկոպոսունք, վարդապետք և կրօնաւորք թագաւորաւ և իշխաններով հանդերձ ժողովեցան Շիրակուան քաղաքում: Ուր Վահանն ճառ խօսեցաւ սուրբ երրորդութեան խորհրդոյ և Քրիստոսի մարդեղութեան վերայ, նոյնպէս և Քաղկեդոնի ժողովոյ վերայ, և յետոյ ժողովոյ կողմից տասն և հինգ զլուխ բան ներկա-

յացրեց և նշովք զրեց նոցա դէմ՝ որոնք համարձակեալ ցան ուղիղ վարդապետութեան հակառակ քարոզել:

Եւ երբ Զաքարիա կաթողիկոսը Յունաց եկեղեցւոյ ծէսերի և արարողութեանց երկբայութեան լուծումն խնդրեց, Փոտ պատասխան զրեց նորան: Յետ որոյ Զաքարիա կաթողիկոսը ամենայն զօրութենէ հոգ տարաւ միութեան և խաղաղութեան մէջ պահել ժողովուրդը, իւրեան օղնական և ձեռնառու ունելով ամէն բանում բարեպաշտ Աշոտ արքային:

Շիրակուանայ ժողով Գ, 892 թուին:

Սմբատ առաջինը երբ հաստատեցաւ իւր իշխանութեան մէջ իւր հօր Աշոտի փոխանակ, մարդ ուղարկեց Հագարացւոյ ամիրապետին՝ խնդրելով նորանից արքայական լծագ և զաւագան, և նա մեծաւ ուրախութեամբ ուղարկեց զայն՝ Ատրպատականի իշխան Ափշինի անունով իւր մի հաւատարմի ձեռքով, որ նա ինքն զրաւ թագը Սմբատայ զլինին: Յետոյ նոյն Սմբատայ հրամանաւ ժողովեցան բոլոր եպիսկոպոսունք և իշխանք Երազգաւորս նորաշէն Փրկչի տաճարը, ուր կաթողիկոսը օրհնեց թագը և կրկին պսակեց նորան, և զձեց նորա վերայ արքայական ծիրանին, որ նա ինքն ամիրապետն էր շնորհել, և յետոյ օրհնութեան երգերով և արքայաւայել պատուով տարաւ նորան արքունի պալատը: X

Դ Ա Ր Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

**Փոխադրութիւն Քրիստոսի Դաստառակին
Եղեսիա քաղաքից Կոստանդնուպօլիս:**

Քրիստոսի անձնագործ պատկերի յայտնութիւնը
Եղեսիա քաղաքում՝ առաջուց զրեցինք վեցերորդ դա-
րու անցից մէջ. մնայ այժմ՝ ասել նորա փոխադրութիւնը
Կոստանդնուպօլիս 944 թուին:

Հայկազն Ռոմանոս կայսրը՝ ցանկալով իւր մօտ ու-
նենալ այն հոգեւոր գանձը, զրեց Եղեսիայ Քրիստոնէից և
քաղաքի այլազգի իշխանին, խնդրելով Դաստառակը և
Քրիստոսի ուղարկած նամակը Աբգար թագաւորին. խոս-
տանում էր մեծամեծ պարգևներ նորա փոխարէն: Բայց
Ժողովուրդը հաւան չեղաւ նորա առաջարկութեանը, և
երբ ընդդիմացաւ նմանապէս քաղաքի իշխանը, Ռոմանոս
կայսրը կամեցաւ բռնի խլել նոցանից: Ուստի մեծ զօրք
ուղարկեց պատերազմ տալ քաղաքին դէմ: Այլազգի
իշխանը տեսաւ կայսեր ըռնութիւնը, հաճեցաւ կատա-
րել նորա կամքը, և զանազան խաղաղութեան պայման-
ներով և խոստմունքներով հաւանեցրուց և Ժողովը-
դեան տալ կայսեր իւր ուղածը: Ուստի երկու եպիսկո-
պոսունք մեծ հանդէսով վեր առան տարան Կոստանդ-
նուպօլիս, ուր առաջ դուս եկան Թէոփիլակոսս պաա-

րիաբքը և Յունաց բոլոր մեծամեծները՝ մեծ պատուով
ընկալան և տտրան բազմեցրին սուրբ Աստուածածնայ ե-
կեղեցւոյ մէջ: Եւ որովհետեւ փոխադրութեան հանդէսը
944 թուին և Օգոստոս ամսոյ 16 ին կատարւեցաւ, ուս-
տի Յունաց մէջ կարգւեցաւ տօն ամէն տարի Օգոստոսի
տասն և վեցին: Այս անգին յիշատակը պահած էր Կոս-
տանդնուպօլիս մինչև 1325 թիւը. երբ կայսերաց խոռ-
վութեան պատճառաւ շատ գանձեր յափշտակեցան, ու-
րաց հետ զողացան և արկղը, որոյ մէջ պահած էր Քրիս-
տոսի թուղթը առ Աբգար թագաւորը, և յայտնի չէ թէ
նամ մօտ կամ ո՞ր մնաց: Իսկ զաստառակը փոխադրե-
ցաւ Խաղիոյ Գենուա քաղաքը. հնագոյն յիշատակադրովք
հաստատում են նորա փոխադրութեան օրինակը Կոստան-
դնուպօլսոյ իրանց Գենուա կամ ձենովա քաղաքը, ուր
հարիւր տասն և ինն տարի մնալուց յետոյ՝ 1507 թուին
ռմանք ջանացին ծածուկ զողանալ և տանել Գաղղիա.
բայց մինչև նոցա տեղ հասնելը՝ Գենուացիք իմացան,
և ամենայն զգուշութեամբ ազատեցին նոցա ձեռքից:
Եւ առ յապայն զգուշութիւն՝ բազմաթիւ բանալեօք ա-
մուր պահարան շինեցին, ուր պահած է ցարդ և պատ-
ուում են հաւատացեալք:

**Մեր եկեղեցւոյ վիճակը, վանորէից շինու-
թիւնը և նշանաւոր անձինք:**

Այս տասներորդ դարս Աստուծոյ շնորհօք բարե-
բազդ դար էր Հայոց ազգի համար, այն պատճառաւ որ շատ

վանորայք շինեցան, և նշանաւոր մարդիկ երեւեցան զարմանալիք վարուք և հրագործութեամբք:

Բագրատունեաց իշխանութեան ժամանակը, երբ Հայոց թագաւորները զօրացան, և մերայինք սկսան շունչ առնուլ Հագարացոց դառն և սաստիկ հարկապահանջութիւնից և բռնութիւնից, այնուհետեւ հոգ տարան վանորայքը նորոգել: 1132 թուին Յովհաննէս վանահայրը Արշարունեաց Կամրջաձորոյ վանքը շինեց, ուր դրաւ հրաշագործ Խաչ, որ եգիպտացոց երկրից էր բերել: Նոյն Յովհաննէս ժամանակը մի ուրիշ Յովհաննէս անունով վարդապետ շատ կրօնաւորներով եկաւ Հռոմոց երկրէն և Շիրակայ գաւառում շինեց վանք, որ կոչոււմ էր Հռոմոսի վանք: Նոյնպէս և Ճգնաւոր ոմն Սիմոն անունով մի վանք շինեց Կերջան գաւառում, և անունը դրաւ Խաձորոյ վանք: Նոյն ժամանակը 935 թուին Ռըշտունեաց գաւառում շինեցաւ Նարեկայ վանքը, ուր շատ ուսումնասէր և ճգնազգեաց անձինք ժողովեցան, որոց մէջ երեւելի հանդիսացաւ Անանիա վարդապետը, որ զբոլ զինուորեցաւ Թոնդրակեցոց աղանդոյ գէմ: Նոյն վանքում բնակեցաւ Պետրոս վարդապետ՝ զորոց մէկնիչ, նոյնպէս և սուրբ Գրիգոր Նարեկացին:

Գովելի նախանձով հետեւող դանւեցաւ նոցա և Մովսէս վարդապետ Տարոնացին, որ Խարբերդում շինեց Մովսիսավանքը, նոյնպէս Սարգիս վարդապետը Կարնոյ մօտ Հնձուց վանքը. Ստեփաննոս վարդապետը Վայոց ձորում: Շիրակ գաւառում նորոգեցաւ Դպրեվանից մենաստանը, նոյնպէս և Կապուտաբար վանքը յԱրշարունիս, բայց ի ուրիշ շատ մենաս

տանաց նորոգութիւններէն, որ Աբաս Հայոց արքայի ծախքով եղան, իսկ նորա որդւոյ Աշոտ ողորմածի ժամանակը, որ քաջութեամբ և բարեպաշտութեամբ պայծառացաւ, 969 թուին՝ Խոսրովանուշայ դշտոյի օգնութեամբ շինեցան երկու հռչակաւոր վանքեր, Սանահին և Հաղբատ՝ մի ժամաւ հեռի միմեանցից, որոց մէջ շատ ականաւոր վարդապետներ ծաղկեցան, որպէս և մի ծն Խոսրով, որ առաջ աշխարհական կարգէ լինելով՝ ծնաւ սուրբ Գրիգոր Նարեկացին, և յետոյ կրօնաւորութեամբ մտաւ այն վանքը, ձեռնադրեցաւ քահանայ և եպիսկոպոս Անձեւացեաց:

Աբանչելագործ անձինք:

Այն մենաստանաց մէջ հանդիսացան երեւելի և նշանադործ մարդիկ, որոնք պատուելի էին և յայտնի ոչ միայն Հայոց, այլև Յունաց և Լատինացոց մէջ: Սոցանից Մովսէս երկրի եպիսկոպոս երանելին Դաւիթ, որ սքանչելի սրբութեամբ և իմաստութեամբ բնակւում էր Ռիտ Ապարանից կոչուած վանքում, և երբ մեռաւ նա 952 թուին, շատ հիւանդներ էին բժշկւում նորա գերեզմանի վերայ: Այս լսելով Վասիլ և Կոստանդ կայսերք թանկազին ընծաներ ուղարկեցին նորա գերեզմանին՝ նոյն Դաւիթ եպիսկոպոսի եղբօր որդւոյ ձեռքով, որոյ անունն էր Ստեփաննոս: Սա երբ եկաւ Հայաստան՝ նորոգեց Ապարանից ուխտը և դրաւ այն տեղ կայսերաց պարգևները, այն է կենաց փայտի մասը, փուշ պսակի,

բեւեռներէից, խանձարուրից և ամենասուրբ կուսի հան-
գերձից: Ի պատիւ սուրբ մասանցս Սանփաննոսի խնդրա-
նօք, սուրբն Գրիգոր Նարեկացի զրեց երկու ճառ՝ Պատ-
մութիւն Խաչին Ապարանից անուանեալ:

Սուրբ Գրիգոր Նարեկացին, որ 951 թուին ծնաւ
և փայլեցաւ սրբութեամբ և իմաստութեամբ: Սա սնաւ
և վարժեցաւ Նարեկայ վանքում, և այն վանքի վանա-
հայր լինելով՝ կոչւեցաւ Նարեկացի: X

Մեր Հայոց կաթողիկոսունք:

Յովհաննէս Զ, պատմաբան Գասհոնակերտ աւանից
(գիւղից) Մաշտոցի աշակերտ, նստաւ կաթողիկոս անցեալ
դարու վերջին 897 թուին: Սա ահանառօս լինելով ժա-
մանակի դառն նեղութեանց՝ որ կրում էր մեր ազգը,
զրեց անցից պատմութիւնը ընդարձակ խօսքով: Մմբատ
արքայից ուղարկեցաւ դեսպան Յուսուփ ոստիկանի մօտ,
որից բռնեցաւ բանտումը, և ազատեցաւ բանտից տու-
գանքով: Հաշտեցրուց միմեանց հետ նախարարաց, և զա-
նազան նեղութեանց և աստանդական կեանք վարելուց
յետոյ՝ այլազգեաց բռնութիւնից հեռացաւ Աստուրական
երկիրը, ուր աւարտեց իւր պատմագրութիւնը՝ որ քա-
նի մի տարուց առաջ սկսել էր, և այն տեղ վախճանե-
ցաւ 924 թուին, քսան և եօթը տարի և ութն ամիս
վարելով հայրապետական աթոռը:

Սանփաննոս Բ, նստաւ կաթողիկոս Աղթամարայ
կղզում Յովհաննէսից յետոյ 925 թուին, և մի տարուց

յետոյ վախճանեցաւ. և նոյն կղզւոյ մէջ կալաւ աթոռը
Թէոդորոս Ա, սորա կաթողիկոսութեան առաջին տարին
Գագիկ Վասպուրականի թագաւորը թուղթ գրեց Յու-
նաց պատրիարք Տրիփոնին և Ռոմանոս կայսեր, խնդրելով
նոցանից սէր և միաբանութիւն Հայոց հետ, բայց Յոյն
չլսեցին նորան: Իսկ Թէոդորոս կաթողիկոսը անցկացրեց
իւր կեանքը Աղթամար, և վախճանեցաւ այնտեղ 935
թուին, տասը տարի վարելով հայրապետական աթոռը:

Եղիշէ՝ Թէոդորոսի եղբայրը՝ յաջորդեց նորան, և
նստաւ Աղթամար, և հինգ տարուց յետոյ՝ թշնամեաց
չարութեամբ ընկաւ աթոռից, բայց Հայոց եպիսկոպոսունք
թոյլ չտուին ուրիշ կաթողիկոս կարգել նորա տեղ, քա-
նի որ նա կենդանի էր, որ երկու տարուց յետոյ մեռաւ՝
եօթը տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

Անանիա Մոկացին նստաւ կաթողիկոսութեան ա-
թոռը Աղթամար 943 թուին: Սորա ժամանակը Սիւնեաց
եպիսկոպոս Տէր Յակոբ իւր մոլորութեանց հետ կամե-
ցաւ ապստամբեցնել եպիսկոպոսաց և ժողովրդոց կաթո-
ղիկոսի դէմ, ուստի նզովեցաւ կաթողիկոսից ինքն և իւր
կուսակիցք: Յետոյ երբ մեռաւ Յակոբը, Անանիա կա-
թողիկոսը զնաց Սիւնիք, և խաղաղացրեց ամենին, արձակեց
նզովից, և ձեռնադրեց նոցա համար արքեպիսկոպոս և
առաջնորդ Վահան անունով՝ Բաղաց գաւառից, տալով
նորան իշխանութիւն խաչակիր սպասաւորներով մանգալու:
Սորա կաթողիկոսութեան ժամանակը թշնամութիւն ըն-
կաւ Յունաց կողմից մեր ազգի հետ, պատճառ որ՝ նո-
քա ստիպումէին Հայոց, որ նոցա եկեղեցական արարու-

դու թեամբ կատարեն իւրեանց Աստուածաշտու թիւնը, և մինչև անգամ բռնութեամբ կրկին մկրտում էին շատերին, և տալիս զրոշմը: Սորա վերայ զայրանալով Հայք՝ սկսան նոյնը անել Յունաց հետ, և սորանից առաջ եկաւ ատելութիւն՝ որ տեւում է մինչև ցայսօր: Սա ինքն Անանիա կաթողիկոսը մեծ հանդէսով Անի քաղաքի մէջ օծեց Հայոց թագաւոր Երեւելի Աշոտին, որոյ թագաւորութիւնը պայծառացաւ ոչ միայն աշխարհաշէն կառավարութեամբ և քաջութեամբ և զէնքով, այլ և ամենակերպ բարեպաշտութեամբ, մանաւանդ որ խնամք տանելով արքատաց, կաղերին, կուրերին և այլ ցաւազարներին, շինեց աղքատանոց և հիւանդանոց, որոց մէջ իւր թաղուհի Խոսրովանուշի հետ միասին գնում էին ծառայելու և մխիթարելու նորանց, առատ ողորմութիւն էր բաժանում, մինչև նորա մեռնելու ժամանակը նորա դանձատան մէջ զրամ չէ մնացած, այս պատճառաւ կոչեցու նա Ողորմած: Սորա ժամանակը վախճանեցաւ Անանիա կաթողիկոսը՝ քսան և երկու տարի վարելով կաթողիկոսական աթոռը:

Վահան՝ Բաղաց զաւառից՝ Անանիա կաթողիկոսից ձեռնադրուած Սիւնեաց արքեպիսկոպոս, ընտրեցաւ կաթողիկոս 965 թուին: Սա իբր տեղեկացեալ Քաղկեդոնի ժողովոյ դաւանութեանը, երբ նստաւ կաթողիկոս՝ հրապարակաւ ընդունեց Քաղկեդոնի ժողովը, միաբանութիւն արաւ Յունաց և Վրաց հետ, սորա վերայ զայրանալով Հայք՝ ժողով գումարեցին Անի քաղաքում և կամենում էին հանել նորան աթոռից, և նա խմանալով

աղղի սպառնալիքը, թաղուն փախաւ զնաց Վասպուրահանի երկիրը Աբուսահլ թագաւորի մօտ, որ սիրով ընդունեց նորան, որովհետեւ նա ինքն էլ հաւան էր կաթողիկոսի խորհրդոյն: Վահանը մնաց այն տեղ մինչև 972 թիւը, և վախճանեցաւ Վասպուրականում:

Վահանայ կաթողիկոսութեան վեցերորդ տարին, երբ նա հեռացած էր Վասպուրականում՝ ազգը ընտրեց կաթողիկոս Ստեփանոս Գ, Սեանայ վանահօրը: Սա որ 970 թուին նստաւ կաթողիկոս՝ իսկոյն նզովքի տակ ձգեց Վահանին և Աբուսահլ թագաւորին: Լսելով Վահանը, շուտով Ստեփանոսի նզովքի դէմ սաստիկ նզովք դրեց: Սորա վերայ Ստեփանոս զայրացած, բազմութեամբ դիմեց Վահանի վերայ: Այս տեսնելով Աբուսահլ թագաւորը՝ նոցա ամենին քշել տուաւ Աղթամարայ կղզին, և Ստեփանոսին աքսորեց Կոտորոց բերդը, ուր մեռաւ նա իւր ընտրութիւնից երկու տարի յետոյ:

Խաչիկ Ա, Արշարունեաց եպիսկոպոս, երբ Վահանը դեռ կենդանի էր՝ ընտրեցաւ կաթողիկոս 972 թուին և իւր աթոռը դրաւ Արգինա քաղաքում՝ Անի քաղաքի մօտ, ուր շինեց հոյակապ եկեղեցի և այնտեղ շատ զրեանք հաւաքելով՝ բաց արաւ գրատուն: Սորա ժամանակը Յոյք կրկին նորոգեցին իւրեանց հակառակութիւնները Հայոց դէմ, և միմեանց թշնամանալիւ նամակներ գրեցին, որոց հաւան էր Խաչիկ կաթողիկոսը, ուստի կսկիծով վախճանեցաւ 990 թուին, տասնևինն տարի վարելով հայրապետական աթոռը: Նորանից յետոյ աթոռը ունէր Սարգիս Ա, որոյ կեանքը երկարելով մինչև 1019 թիւ, վստորոյ կպատմենք նորա համար յաջորդ դարում:

Մատենագիրք :

Այս դարուս մեր ազգի մատենագրաց մէջ արժանայիշատակներն են Յովհաննէս Զ, կաթողիկոս պատմաբան, որ Հայոց պատմութիւն զրեց՝ սկսած Հայկից մինչև Աշոտ Բ, Բագրատունեաց թագաւորը, մինչև 920 թիւը :

Մեծն խոսրով Անձեացեաց եպիսկոպոսը, զրեց ժամակարգութեան և պատարագի մեկնութիւն :

Սուրբ Գրիգոր Նարեկացին մեծին խոսրովու որդին, զրեց ողելից աղօթագիրք, որ կոչւում է Նարեկ, այլև ճառեր, ներբողներ, գանձեր և մեղեդիք, նմանապէս երգոց երգոյն Սողոմոնի մեկնութիւնը և հրահանգ հաւատոյ :

Մեսրոպ երէց պատմաբան վայոց ձորից՝ Մեծին Ներսէսի պատմութիւնը զրեց վահանայ Մամիկոնէի Տաւրոնեցւոյ խնդրանք :

Սորա ժամանակաւ Ստեփաննոս վարդապետը տաւրոնեցին՝ որ Ասողիկ կոչւեցաւ, զրեց Հայոց պատմութիւն ազգիս ծագմանէ մինչև իւր ժամանակը—1000 թիւը :

Ազգային ժողովք :

Անւոյ Ա, ժողով 961 թուին :

Երբ Աբաս Հայոց թագաւորը մեռաւ խորին ծերութեան մէջ, նախարարները տեսնելով նորա անդրանիկ որդւոյ Աշոտայ արիւթիւնը, մտածեցին Հայոց թա-

գաւոր օծել նորան և տալ իւր հօր աթոռը : Հրաւիրակներ ուղարկելով Աղուանից Փիլիպպոս արքային, և նոցա կաթողիկոս Յովհաննէսին՝ հրաւիրեցին նորանց օծման հանդէսին : Ուստի այնպէս բոլոր նախարարք և քառասնիւ չափ եպիսկոպոսունք միասին ժողոված Անի քաղաք, մեծահանդէս պատուով կարգեցին ազգի թագաւոր Աշոտին :

Անւոյ Բ, ժողով 965 թուին :

Անանիա կաթողիկոսը երկար ժամանակ վարելով իշխանութիւնը, ինչպէս որ զգաց իւր մահուան մօտենալը, հրամայեց կարգել իւր տեղ վահանը Բաղաց դաւառից, որին ինքն առաջուց կարգել էր Սիւնեաց եպիսկոպոս : Ուստի Անանիայի մահուան յետոյ ամենքը ժողովեցան Անի քաղաք, որոց հետ և Յովհաննէս Աղուանից կաթողիկոսը, և միաբան հաւանութեամբ կարգեցին վահանին Հայոց կաթողիկոսութեան աթոռը :

Անւոյ Գ, ժողով 970 թուին :

Վահան կաթողիկոսը իբր ճանաչելով Քաղկեդոնի դաւանութիւնը, սէր և միաբանութիւն հաստատեց Յուսնաց և Վրաց հետ. այս պատճառաւ շփոթ և խռովութիւն ընկաւ Հայոց մէջ. Աշոտ Հայոց թագաւորը ցանկալով խաղաղութեան՝ հրամայեց եպիսկոպոսաց ժողովով խաղաղացնել շփոթը, ուստի եպիսկոպոսք, քահանայք և միաձուներ ժողովեցան Անի քաղաքը և միանգամայն ան-

համաձայն գտնւելով այն խորհրդոյն՝ Վահանին հանեցին աթոռից և նորա տեղ կարգեցին Մաշտոցի ազգական Ստեփաննոս անուանով Սեանայ վանահօր:

Անույ Դ, ժողով 972 թուին:

Ստեփաննոս կաթողիկոսը երկու տարի վարելով հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ: Այն ժամանակը Աշոտ թագաւորը խորհուրդ տուաւ ազգի առաջնորդաց և եպիսկոպոսաց միւսանգամ կաթողիկոսական աթոռը տալ Վահանին. բայց նոքա չհամաձայնելով այն առաջարկութեանը՝ ժողովեցան Անի քաղաքը և միաձայն հաւանութեամբ կարգեցին կաթողիկոս Հայոց Խաչիկ անուանով Արշարունեաց եպիսկոպոսը, որ Տրդատ Ծարտարապետի ձեռքով շինեց Անույ կաթողիկէն և ուրիշ եկեղեցիք, և զանազան սպասներով զարդարեց:

Անույ Ե, ժողով 987 թուին:

Գրիգոր Նարեկացին, որ սուրբ վարուք և իմաստութեամբ ծաղկում էր տաներորդ դարում, անհետնելով ազգի բաժանումն ի Զունաց եկեղեցւոյն՝ աշխատում էր սէր և միաբանութիւն հաստատել երկու ազգաց մէջ: Այս պատճառաւ շատերը չիմանալով նորա սրբութիւնը և հրեշտակաիրօն վարքը, սկսան հերետիկոս ասել նորան, և շփոթ դձեցին բոլոր Հայաստանի մէջ: Ուստի վարդապետք ոմանք և իշխանք ժողովեցան Անի քաղաքը

պատժել նորան՝ եթէ ճշմարիտ լինին նորա վերայ եղած չարախօսութիւնքը:

Յետոյ ուղարկեցին հրաւիրակներ փորձել և վերահաս լինել նորա մտաց խորհրդեան: Այս իմանալով Գրիգորը՝ ընդունեց նոցա սիրով, և նոցա առաջ հրաշք գործելով՝ նոքա զարմացած մնացին, և թողութիւն խնդրելով նորանից՝ զուր կասկածանաց համար, գնացին ժողովածների մօտ, և զովելով հռչակեցին նորա մաքուր վարքը:

Անույ Զ, ժողով 992 թուին:

Երբ Խաչիկ կաթողիկոսը վախճանեցաւ, Գաղիկ արքայն, որ Շահնշահ էր կոչւում՝ վարդապետաց և եպիսկոպոսաց մեծ ժողով գումարեց Անի քաղաքում, և կաթողիկոսական իշխանութիւնը տուաւ Սարգիս անուանով վարդապետի Սեանայ միաբանութիւնից: Սա ինքն զանազան բարեմասնութեամբք զարդարած գոյով՝ առաջին անգամը, մինչդեռ Սեանայ վանից միաբանութեան կարգումն էր, սիրելի էր Գաղիկ արքային, և քանի որ նա թագաւորութեան աթոռը չէր բարձրացած, ընկալաւ նորանից Շաղապայ վանքը, և ապա կարգւելով Սեանայ առաջնորդ՝ և յետ այնորիկ համբարձաւ կաթողիկոսութեան աթոռը:

ԴԱՐ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Տասներորդ դարու յետին տարիները Խաչիկ կաթողիկոսի մահուան յետոյ 992 թուին, հայրապետութեան աթոռը նստաւ Սարգիս Ա, Սեանայ միաբան: Սորա ժամանակը կրկին նորոգւեցաւ Թոնդրակեցւոց աղանդը. կաթողիկոսը և եպիսկոպոսունք առհասարակ աշխատում էին ցրել և նզովել նոցա մոլորութիւնը, և աղանդաւորներուն միանգամայն ջնջել Հայաստանից: Այս բարի նախանձուն օգնական եղան և Հայոց իշխանք, որոց մէջ յառաջագէտ գտնւեցաւ Գրիգոր Մազիսարոսը, որ ամենայն զօրութեամբ ոչնչացրեց նորանց: Սարգիս կաթողիկոսը քսան և եօթը տարի վարելով հայրապետական սթոռը՝ վախճանեցաւ:

Պետրոս կաթողիկոսը՝ որ գետադարձ էր կոչւում, յաջորդեց Սարգսին 1019 թուին: Սա մեծ համբաւ և պատիւ ունեցաւ Յունաց և ուրիշ ազգաց առաջ իւր բարի վարուց և իմաստութեան համար: Կոչւեցաւ Գետադարձ՝ այն հրաշից պատճառաւ, որ կատարւեցաւ նորա ձեռքով, զետի ջուրը իւր ընթացքից ետ դարձնելով Յայտնութեան օրը: Եւ թէպէտ Յովհաննէս արքայն Պետրոսի հետ նախանձելով հանեց նորան աթոռից, և նորա տեղ

կարգեց Գէոսկորոս անուանով Սանահնի վանահօրը, բայց յետոյ եպիսկոպոսաց մեծ ժողով զուամբելով՝ Գէոսկորոսին հանեցին աթոռից՝ և կրկին հաստատեցին Պետրոսին, որ հայրապետութեան մէջ վճարեց իւր կեանքը, ընդ ամէնը վարելով կաթողիկոսական իշխանութիւնը երեսուն ինն տարի և վեց ամիս:

Խաչիկ Բ, Պետրոս Գետադարձի քեռորդին նստաւ նորա տեղ կաթողիկոս Անի քաղաքում 1058 թուին: Եւ երկու տարուց յետոյ՝ երբ թագաւորեց Կոստանդ կայսրը՝ որ կոչւում էր Տուկիծ, կանչեց Խաչիկ կաթողիկոսին Կոստանդնուպօլիս, և Յոյնը խնդրեցին նորանից Հայոց թագաւորաց գանձերը, որ կարծում էին իբր թէ պահած լինէր Պետրոս Գետադարձի մօտ, և երբ ոչինչ չըգտան՝ ստիպեցին Խաչիկ կաթողիկոսին հարկ տալ կայսեր, և նա որ յանձն չառաւ, արգելեց նորան երեք տարի, և յետոյ ազատեցաւ և զնաց թաւ բլուր, ուր ազգի թշուառութեան վերայ կսկծալով վախճանեցաւ 1064 թուին, հինգ տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

Գրիգոր վկայասէրը Գրիգոր Մազիսարոսի որդին ինքնակամ հրաժարելով իշխանական փառքից և իւր ամուսնուց՝ մտել էր կրօնաւորական կարգը և առանձնացած էր վանքում՝ միաձայն հաւանութեամբ բոլոր ազգի ընտրեցաւ կաթողիկոս 1065 թուին: Վեց տարուց յետոյ տեսնելով Հայոց նեղութիւն և տառապանքը Յունաց և Պարսից ձեռքից՝ կամեցաւ հրաժարիլ կաթողիկոսութիւնից, և իւր տեղ կարգելով Լուսեցի Գէորգ վար-

դապետին՝ ինքն առանձնացաւ Սեաւ լերան վանքը: Եւ երբ տեսաւ Գէորգի խռովութիւն զձեւը ազգի մէջ՝ ըստիպուեցաւ կրկին յանձն առնուի իշխանութիւնը և պահպանել ազգը: Սա Անի քաղաքում կարգեց տեղապահ իւր քեռորդի տէր Բարսեղը, նոյնպէս և Մեմիխ քաղաքում առաջնորդ զրաւ միւս քեռորդի Գրիգորիոսը: Սորանից յետոյ ազգի խնդրանօք վերին Հայաստանում կաթողիկոս կարգեց իւր քեռորդի տէր Բարսեղը, բայց իւր կենդանութեան ժամանակը բոլոր ազգի հարազատ կաթողիկոս ինքն Գրիգոր վկայասէրն էր համարուած, իսկ նորա մահուան յետոյ Տէր Բարսեղը: Սա ականատես և զաւ խաչակիր զինուորութեան, պատճառ որ՝ երբ Ղաթինացիք Երուսաղէմը առնում էին՝ այն տեղ պատահեցաւ, և յետոյ առանձնացաւ Կիլիկիա Արեգի վանքը, այն տեղ պարապելով սրբոց վկայաբանութիւններ թարգմանելու և ուրիշ զրաւոր աշխատութեամբք, կոչուեցաւ վկայասէր. քառասուն տարի վարելով հայրապետական իշխանութիւնը՝ վախճանեցաւ 1105 թուին:

Եկեղեցական մատենագիրք:

Այս դարուս մատենագրաց մէջ արժանապատիւք են Պետրոս զետադարձ կաթողիկոսը, որ զրեց ընտիր շարականներ:

Արիստակէս Ղաստիվերտցին զրեց այն ցաւալի անցքերը, որ իւր ժամանակը պատահեցան Հայաստանում, Գաղիկ Բագրատունեաց առաջին թագաւորից սկսած՝ մինչև Անի քաղաքի առումն ց 1071 թիւ:

Յովհաննէս վարդապետ Կոզեռն, սր զրեց տուժաւրական արուեստի, թուաբանութեան և շրջանաց վերայ:

Յովհաննէս վարդապետ սարկաւադ, որ այս դարու երևելի մատենագրաց մին էր, և ունի բաց ի զանազան գրուածոց՝ զեղեցիկ ճառ քահանայութեան վերայ:

Մետասաներորդ դարուս վերջին տարիքը եղան Կիրակոս վարդապետ և Սարգիս երէց միավաստակ աշակերտք Գրիգոր վկայասիրի: Նորա ժամանակը ծաղկեցաւ և Ստեփաննոս եպիսկոպոս Քսենոյ կողմանց, ինքն վարժ և հըմուտ գիտութեանց և ուսմանց մէջ, որոյ աշակերտքն էին Իգնատիոս՝ Ղուկասու աւետարանի մեկնիչը, Սարգիս վարդապետ կաթողիկեայց թղթոյ մեկնիչը, Գրիգոր Պահլաւունին և Ներսէս Շնորհալին:

Ազգային ժողովք:

Հարբայ Ա, ժողով, 1002 թուին:

Հարբայ առաջնորդ Յակոբոսը Թոնդրակեցւոց մոլորութեան ցանցը (ականատը) ընկնելով՝ կեղծուպատիր բարեպաշտութեամբ շատերին կարաց որսալ դէպի ինքն: Սարգիս կաթողիկոսը տեսնելով սորա վնասը՝ կամեցաւ ժողովով բառնալ չար գայթակղութիւնը, ուստի ժողովեցան եպիսկոպոսունք Հարբ գաւառում, և չկարողանալով մի բան մտածել՝ լուծեցին ժողովը: Յետոյ կրկին ժողովեցան նոյն գաւառում եպիսկոպոսունք և երիցունք: Յակոբոսը յոյս դնելով ոմանց իշխանաց օգնութեանը, պատգամաւոր ուղարկեց ժողովոյն քերել իւ-

րանից այն յանցանքը, որով չարախօսում էին նորա վերայ. բայց Սարգիս կաթողիկոսը Յակովբոսի Նսայի անունով մի աշակերտի ձեռքով բռնեց նորան և արգելեց առանձին տեղ . իսկ նորանից յետոյ ինչոր միանգամ գործեց Յակովբոսը՝ կարճառօտ ասացինք պատմութեան մէջ:

ԱՆՈՅ Է, Ժողով 1036 թուին:

Յովհաննէս արքայն Պետրոս զետաղարձին հրաժարեցնելով իշխանութիւնից, կարգեց նորա տեղ Սանահունու առաջնորդ Գէոսկորոսին. բայց ոչ ոք վարդապետաց չընդունեց նորան, ընդհակառակն բանադրեցին թագաւորին իւր կամակիցներով. Յովհաննէսը վախենալով աղաչեց Պետրոսին դառնալ իւր իշխանութեան աթոռ. և նա յանձն չառաւ, նամակ գրեց Յովսէփ Աղուանից կաթողիկոսին, որ դայ Հայաստան: Նւ նա որ եկաւ՝ ժողովեցան Անի քաղաքը Հայոց եպիսկոպոսունք և վարդապետք չորս հազարիւ չափ, դատապարտեցին Գէոսկորոսին, պատառեցին նորա իշխանութեան քօղը, և ուղարկեցին Սանահնի վանքը, և կրկին հաստատեցին Պետրոսը կաթողիկոս: X

Ը, Ժողով ԱՆՈՅ 1042 թուին:

Սարգիս վեստ, անմիաբան խորհրդով արհամարհելով Հայոց բնիկ իշխանութիւնը, կամեցաւ առանձին թագաւորել. յետոյ աշխատեց որսալ նախարարաց և մեծամեծաց, բայց վահրամ սպարապետը և Գրիգոր Մա-

գիստրոսը չհաւանելով այն խորհրդոյն, աղաչեցին Պետրոս Գետաղարձ կաթողիկոսին՝ Հայոց թագաւոր հաստատել. Յովհաննու եղբոր որդւոյ Աշոտայ որդի Գագիկը, ուստի ժողովեցան բոլոր իշխանք և օծեցին նորան թագաւոր 1042 թուին:

Հարթայ Բ, Ժովով 1061 թուին:

Երիւ Թոնգրակեցիք ճանաչելով իւրեանց մոլորութիւնը, եկան Գրիգոր Մագիստրոս իշխանի մօտ, և խնդրեցին նորանից, որ բառնայ այն չար աղանդը: Ուստի Գրիգոր Մագիստրոսը զնաց Ապահունիք, աւերեց և քանդեց նոցա ժողովատեղին Թոնգրակ գեղում:

Շատերը տեսնելով Մագիստրոսի եռանդը՝ ահ ուղղի մէջ ընկան, և թողին իւրեանց մոլորութիւնը. այս պատճառաւ եպիսկոպոսունք և վարդապետք ժողովեցան Հարթ գաւառում, և միաբան հաւանութեամբ մկրտեցին նորանց յանուն ամենասուրբ Նրորդութեան:

Ա, Ժողով Սեաւ լերին 1072 թուին:

Գրիգոր վկայասէրը կամենալով միանձնական կեանք վարել՝ իւր մօրի խորհուրդը յայտնեց իւր ատենադպիր Լուսեցւոյ Գէորգ վարդապետին: Իշխանք շատ աղաչելով արգելում էին նորան այն խորհուրդը, բայց երբ տեսան նորա մտաց հաստատութիւնը՝ համոզեցին կարգել իւր տեղ Գէորգ Լուսեցին, և վկայասէրը յանձնելով նորան կաթողիկոսական իշխանութիւնը, ինքն զնաց բնակեցաւ Սեաւ լեա-

որ: Բայց որովհետեւ առհասարակ ազգը Գրիգորի շնորհալի գործքերին և նորա հայրական խնամոց վերայ հիացած լինելով՝ նորան էին ղիմում իբրեւ առատահոգ քրիւր: Գէորգը նախանձեցաւ նորա հետ և մտածեց եպիսկոպոսաց ժողովով զըկել նորան իշխանութիւնից: Խշխանք չլսեցին Գէորգին, և ձանձրացած նորա անչափ ստիպմունքից, աղաչեցին ամէնքը վկայասէրին հանել նորան իշխանութիւնից: Վերջապէս Գրիգորը համոզեցաւ և Սեաւ լեռնում ժողովով առաւ Գէորգից կաթողիկոսական քօղը, և կրկին ինքն յանձն առաւ կատարել կաթողիկոսութեան պաշտօնը:

Ժողով Հոնւոյ 1073 թուին:

Հայազգի Փիլարտոս անունով մէկը նենգութեամբ սպանեց Թոռնիկ Մամիկոնեանը, ինքն եկաւ նստաւ Թաւ բլուր, և քանիցս մարդ ուղարկեց Գրիգոր վկայասէրին գալ իւր մօտ և չվախենալ նորանից, խոստանում էր մեծարել նորան պատուով: Բայց որովհետեւ բռնաւոր ոմն էր Փիլարտոս, կաթողիկոսը վախեցաւ զնալ նորա մօտ: Ուստի աղաչեց կարգել իւր տեղ կաթողիկոս Պետրոս Գետադարձի քեռորդի Սարգիսը: Փիլարտոսը ժողովելով եպիսկոպոսաց և վարդապետաց Հոնի՝ Մելիս զեարմօտ, ձեռնադրել տաւ Սարգսին ամենայն Հայոց եպիսկոպոսապետ:

ԴԱՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Կաթողիկոսունք:

Գրիգոր վկայասիրի վախճանը, որ այս դարու սկզբին 1105 թուին պատահեցաւ, յիշեցինք մետասաներորդ դարում, բայց նա իւր մահից երեք տարի առաջ՝ կանչեց իւր մօտ իւր աթոռակից Բարսեղ կաթողիկոսին, և յանձնեց նորան իւր քեռորդույ Ապիրատի երկու որդիքը՝ Գրիգորը և Ներսէսը, որոց ինքն դաստիարակել էր բարեպաշտ վարուք և իմաստութեամբ, և պատուիրեց իւր մօտ ժողոված անձանց, որ Բարսեղ կաթողիկոսի մահուն յետոյ՝ նորա տեղ կարգեն Գրիգորը կաթողիկոս, որովհետեւ Բարսեղ Ա, կաթողիկոսը Գրիգոր վկայասիրի մահուն յետոյ՝ ութը տարի վարելով հայրապետական աթոռը, վախճանեցաւ Սեաւ լեռան Շուղը անապատի մէջ 1113 թուին:

Գրիգոր Պահլաւունին՝ Ապիրատ իշխանի որդին՝ իւր բարի վարուք և արթուն զնացքով քսան տարեկան հասակին արժանաւոր գտնեցաւ կաթողիկոսական իշխանութեան: Թէպէտ չընդունեց նորա իշխանութիւնը Գաւիթ Աղթամարայ արքեպիսկոպոսը, բայց ազգային ժողովով հաստատուեցաւ Գրիգորը կաթողիկոսական աթոռոյ մէջ,

և քանի տարի նստելով Շուշի անապատում՝ յետոյ եկաւ բնակեցաւ Ծովք բերդի մէջ, և այն տեղ 1125 թուին հաստատեց իւր կաթողիկոսութեան աթոռը, և 1146 թուին՝ երբ Սկիւթացիք դիմեցին Հայոց սահմանները, և բռնացաւ Իկոնիոյ ամիրայն, Գրիգոր կաթողիկոսը բոլոր միաբանութեամբ թողաւ Ծովք բերդը, զնաց Հռովմայ քաղաքը, և այն տեղ հաստատեց հայրապետական աթոռը: Եւ ծերութեան ժամանակը 1166 թուին մեծ ժողով գումարեց Հռովմայ, և իւր տեղ ձեռնադրեց Հայոց կաթողիկոս իւր եղբոր Ներսէսին, և երեք տարուց յետոյ՝ վախճանեցաւ և թաղեցաւ Հռովմայ՝ յիսուն և երեք տարի վարելով հայրապետական իշխանութիւնը: Սորա ժամանակը սկիզբն առաւ միաբանութեան խորհուրդը Յունաց հետ:

Սուրբն Ներսէս՝ Գրիգոր Պահլաւունի վոքր եղբայրը, որ իւր քաղցրախօսութեան համար Շնորհալի կոչւեցաւ, և Կլայեցի՝ Հռովմայ քաղաքի անունով, նստաւ կաթողիկոսութեան աթոռը 1166 թուին: Սասուրք վարուք, բարի գործովք պայծառացաւ և զերազանց զանւեցաւ գիտութեամբ և իմաստութեամբ ևս. ահանատես լինելով ողորմելի ազգի կարօտութեանը և հոգեւոր մշակաց պահասութեանը՝ հոգ տարաւ ուղարկել զիսնական մարդիկ Քրիստոսի աւետարանը քարոզել: Կոնստանդնուպոլսի հոգեւոր ժողովը զրեց լի իմաստութեամբ և Աստուածային հոգեւով՝ իբրեւ հովուական խրատ բոլոր եկեղեցականաց և աշխարհականաց քաղցր և ազդու խօսքերով:

Մանասակէս և եկեղեցւոյ պաշտամանց բարեկարգութեան և հաւատացելոց դէպի բարեպաշտութիւնը յորդորելով՝ շարադրեց երգեր և հոգեւոր շարականներ, Հայոց համառօտ պատմութիւն ոտանաւոր, ողբերգութիւն՝ որ կոչուում է Յիսուս որդի: Ունի նա ևս թերակատար մեկնութիւն Մատթէոսի աւետարանի, որ լրացրուց Յովհաննէս Երզնկացին, այլ և ընտիր նամակներ զանազան անձանց վերայ գրած:

Սորա կաթողիկոսութեան ժամանակը Յունաց կողմից խնդիր եղաւ մեր ազգի միաբանութեան մասին նոցա եկեղեցւոյ հետ. բայց Ներսէս կաթողիկոսի մահը վերայ հասնելով՝ Յունաց առջարկութիւնը անկատար մընաց: Վախճանեցաւ նա 1173 թուին եօթանասուն և հինգ ամաց, վարելով հայրապետական աթոռը եօթը տարի և չորս ամիս:

Գրիգոր Գ, որ կոչուում էր Տղայ՝ Ներսէս Շնորհալւոյ եղբոր որդին, նորա թաղման օրը ընտրեցաւ կաթողիկոս: Սա շատ սիրելի և պատուելի էր ամենին իւր խելքով և առաքինի վարուք, և ոչ սակաւ հոգ տարաւ սէր և միաբանութիւն հաստատելու Յունաց հետ, և ապա Ներսէս Շնորհալւոյ սահմանած բոլոր եկեղեցական բարեկարգութիւնները հաստատելուց յետոյ՝ վախճանեցաւ 1193 թուին վաթսուն ամաց՝ քսան տարի վարելով կաթողիկոսական աթոռը:

Գրիգոր Ե, Գրիգորի տղայոյ եղբոր որդին 1193 թուին՝ հրամանաւ Ղևոն իշխանի և հակառակախիտայ թեմադրութեամբ, ընտրեցաւ կաթողիկոս: Բայց յետոյ իւր

անկարգ վարուց պատճառաւ՝ Լեոն իշխանը բռնել զձեւ տւաւ Կոպիտառ բերդը, և երբ կամենում էր փախչել բերդից՝ բարձր տեղից ցած գձեց զինքը և խփոյն մեռաւ, ուստի կոչւեցաւ զահապէժ: Սա հայրապետութեան աթոռը ունէր մի տարի և չորս ամիս:

Գրիգոր Զ, որ Ապիրատ էր կոչուած՝ Ներսէս Շնորհալոյ եղբոր որդին էր: Ընտրեցաւ կաթողիկոս 1195 թուին: Սա ինքն կատարեալ հասակաւ՝ պայծառացած էր իմաստութեամբ և առաքինութեամբ: Հաղթատացիք և Սանահնեցիք, որոնք կամենում էին կարգել կաթողիկոսութեան աթոռը Անեցին, հակառակեցան սորա դէմ, բայց Լեոն իշխանը չընդունեց նոցա խնդիրը: Հակառակասէրնեքը սորա վերայ զայրանալով՝ սկսան թշնամութեամբ վարել Ներսէս Լամբրոնացւոյ հետ, իսկ փանարար համարելով նորան իւրեանց խորհրդոյն, այս պատճառաւ ծուռ աչքով էին նայում Գրիգոր կաթողիկոսին. բայց նա քաղցրութեամբ շահում էր ամենի սիրտը: Սա եօթը տարի վարեց հայրապետական աթոռը, և վախճանեցաւ 1202 թուին: X

Մեր եկեղեցւոյ վիճակը և Յունաց եկեղեցւոյ հետ միաբանութեան խորհուրդը:

Եկոտասաներորդ դարումն երբ խաչակիր զօրքը զեմեցին Երուսաղէմ, և բազմացան Եւրոպացիք Ասիոյ կողմերը, Հայք սկսան սիրով և հաւատարմութեամբ վարել նոցա հետ: Այն ժամանակը Հայոց կաթողիկոսու-

թեան աթոռը ունէր Գրիգոր Պահլաւունին, որ բարեկրօն վարուք և սրբութեամբ յայտնի էր այն կողմերի շատին եպիսկոպոսաց և առաջնորդաց: Երբ 1141 թուին, ժողով գումարեցաւ Անտիոք քաղաքում՝ հրաւիրեցաւ այն ժողովումը և Գրիգոր կաթողիկոսը Ներսէսի հետ միասին: Եւ երբ ժողովը վերջացաւ, Իննովկենտիոս պապին ղեսպանը կամելով գնալ այն տեղից Երուսաղէմ, գնաց նորա հետ և Գրիգոր կաթողիկոսը: Այն տեղ ևս ժողով գումարելով զանազան բարեկարգութեանց համար, խօսք ընկաւ Հայոց եկեղեցւոյ դաւանութեան և ծէսերի վերայ. որնոր Գրիգոր կաթողիկոսը պարզ և ընդարձակ խօսքերով բացայայտեց և համոզեց բոլոր ժողովը աներկմիտ լինել Հայոց ազգի մասց ուղղութեան վերայ, որոյ վերայ Լատինացիք զարմացած՝ գովասանք զրեցին Իննովկենտիոս պապին: Եւ նա ի նշան սիրոյ ուղարկեց կաթողիկոսին զաւագան և հայրապետական քօղ. նոյնպէս Գրիգորը պատասխան զրեց նորան և ուղարկեց Հռովմ 1145 թուին:

Գրիգոր Պահլաւունւոյ վերջին տարիները միաբանութեան խորհուրդ առաջարկեցաւ Յունաց եկեղեցւոյ հետ, և ազգի զխաւորք ցանկալով Յունաց խռովութեան և ատելութեան պատճառները բառնալ, որոնք միշտ չարախօսում և նախատում էին Հայոց, շուտով հասաւ Գրիգոր կաթողիկոսի մահը, և այն խորհուրդը քնաց անկատար: Բայց նորա մահուան յետոյ՝ նորա եղբայր և յաջորդ սուրբն Ներսէս Շնորհալին Կիւ Սանուէլ կայսեր փեսայի Ալէքսի Կոմնենոսի աղաչանօք հոգ

տարաւ միաբանութեան առաջարկած խորհուրդը զլուխ տանել՝ ուստի զանազան նամակներ գրեց կայսեր և Յունաց Միքայէլ պատրիարքին ներկայացնելով Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը և եկեղեցական կարգերը: Կայսրը և պատրիարքը սիրտ առնելով նորա նամակներէից՝ ուղարկեցին Ներսէս Շնորհալուոյ մօտ Թէորիանէ աստուածաբանը և վանահայր Յովհաննէսը, որոնք եկան Հռոմէլայ և երկար միջոց խօսեցան հաւատոյ խորհրդոց և եկեղեցական արարողութեանց վերայ: Յետոյ միաբան հաւանութեամբ երկուց կողմանց նամակ առան Ներսէս կաթողիկոսից և դարձան Կոստանդնուպօլիս, ուր նմանապէս Յոյնք ևս հաւանութիւն տալով՝ կայսերէն և պատրիարքէն համաձայնութեան թուղթ առան ի կատար ածելու միաբանութեան խորհուրդը, և կրկին դարձան Հռոմէլայ: Կաթողիկոսը տեսնելով՝ գործի յաջողութիւնը, միաբան ժողովով գրեց բոլոր եպիսկոպոսաց Հայաստանի, և խնդրեց նոցա հաճութիւն և հաւանութիւնը: Եւ մինչդեռ սպասում էր պատասխանին, մահուան օրը հասաւ նորան և վախճանեցաւ 1173 թուին, և միաբանութեան խորհուրդը մնաց անկատար: Նորա յաջորդ Գրիգոր Տրդայն՝ Մանուէլ կայսեր յորդորելով յօժարեցաւ զլուխ տանել իւր հօրեղբօր Ներսէսից սկսած գործը, ուստի Հայաստանի եպիսկոպոսաց շատ թղթակցութիւններ անելուց յետոյ՝ ժողով գումարեց Հռոմէլայ, ուր Ներսէս Լամբրոնացին Տարսոնի եպիսկոպոսը գեղեցիկ և փառաւոր խօսքերով առենախօսութիւն արաւ: Նոյնպէս Յունաց մետրապօլիտները ժողով արին Կոստանդնուպօլիս, և յայտ-

նեցին Հայոց իւրեանց վերջին որոշումն, առաջարկելով միայն այս երկու խնդիրը, այս է բացայայտ խօսքերով դաւանել ի Քրիստոս երկու բնութիւն, և ընդունել Քաղկեդոնի ժողովը: Յունաց այս առաջարկութեանը հաւանութիւն ցոյց տալով, ընկալաւ Գրիգոր կաթողիկոսը 1179 թուին, և ազգային ժողով գումարեց երեսուն երեք եպիսկոպոսներով, բազմաթիւ վարդապետներով և վանականներով, և գրաւոր հաւանութիւն առաւ երեք հարիւր եպիսկոպոսներից, որոնք չկարացին զալ ժողով, ուր միաբան խորհրդով համաձայնեցան ընդունել Քաղկեդոնի ժողովը և ի Քրիստոս ասել երկու բնութիւն:

Այս որոշումը հաւատոյ ուղիղ դաւանութեան հետ ուղարկեցին կայսեր և Յունաց ժողովոյն, բայց առաջ քան թղթի հասնելը Կոստանդնուպօլիս՝ Կիւ Մանուէլ կայսրը վախճանեցաւ, և խափանեցաւ միաբանութիւնը:

Այս ամենը ունայն անցնելուց յետոյ՝ Յոյնք զայրանալով մեր ազգին ընդդէմ, և տեսնելով մեր ազգի ընտանութիւնը Եւրոպացւոց հետ՝ սկսան չարախօսութիւն անել Հայոց վերայ Լատինացւոց առաջ: Այս պատճառաւ Գրիգոր կաթողիկոս Տրդայն նամակ գրեց Ղուկիոս Գ, Հռոմէաց հայրապետին, յայտնելով Հայոց եկեղեցւոյ վիճակը, և Յունաց անտանելի թշնամութիւնը Հայոց ազգի հետ, և այն նամակը ուղարկեց Փիլիպպուպօլսոյ Գրիգոր եպիսկոպոսի ձեռով, որ զնաց Իտալիա և Վերոնա քաղաքում աւաւ նորան թուղթը:

Նմանապէս և նորանից մխիթարական և քաջալերական կոնդակ և պարզւեներ ստանալով՝ դարձաւ Տարսոն

1185 թուին, որպէս պատմում է Ներսէս Լամբրոնացին որ լատին լեզուի տեղեակ լինելով՝ թարգմանեց կոնդակը:

Գրիգոր կաթողիկոսի միաբանութիւն և հարազատ ընտանութիւնը Յունաց և լատինաց հետ՝ խռովութեան և թշնամութեան պատճառ եղաւ Զորոյգետացւոյ և Սանահնեցւոյ մէջ, որոց գլուխն էր նոցա վանահայր Գրիգոր Տուտէ որդին: Սա յանգուգն և թշնամանադիր նամակով Գրիգոր կաթողիկոսին և նորա խաղաղասիրութեան գործերը արհամարհում է, նմանապէս և նորա խորհրդակցաց: Բաց յայսմանէ աշխատեց զրգուել շատերին նորա դէմ, ուստի և ոմանց հակառակասիրաց խորհրդով և գործակցութեամբ՝ նոր կաթողիկոս կարգեց Անեցի Բարսեղ անունով եպիսկոպոսը. բայց բոլոր ազգը օրինաւոր կաթողիկոս ճանաչում էր Գրիգորին, և ետ չմնաց նորա հնազանդութիւնից:

Այն ժամանակը Հայոց Լեւոն իշխանը, որ տիրում էր Կիլիկիա՝ կամեցաւ արքայական թագ ընդունել Լատիններից. ուստի դեսպաններ ուղարկեց Կեղեստինոս Գ., պապին և կայսեր Զ, Հենրիկոսին՝ կատարել նորա խնդիրը: Երկոքին ևս բարեհաճելով՝ ուղարկեցին նորան արքայական թագ և առիւծանշան դրօշակ՝ Մոզուլնտիոյ արքեպիսկոպոսի ձեռքով, որ և ի դիմաց պապին առաջարկեց նորան փոխել միայն երեք ծիսական պաշտօնները Հայոց եկեղեցւոյ. այսէ դիտաւոր տէրունական տօները կատարել այն օրերին, որ օրերին կատարում են Քրիստոնէից միւս եկեղեցիքը, ժամերգութիւնը և պատարագը ժողովրդեան առաջ եկեղեցւոյ մէջ կատարել, և ճրագաւուցի երեկոյին չլուծանել պատը:

Հայք այս ամէնը յանձն առան ստորագրութեամբ տասն երկու եպիսկոպոսաց, որոց մին էր և Ներսէս Լամբրոնացին: Յետոյ երբ Լեւոն թագաւորի հանդէսը կատարեցին՝ Մոզուլնտիոյ արքեպիսկոպոսը զարձաւ Հռովմ Լեւոն թագաւորի և Գրիգոր կաթողիկոսի շնորհակալութեան թղթով առաջապէս, և նա իւր պատասխանի հետ ուղարկեց կաթողիկոսին եմփորոն և մատանի, նոյնպէս և Լեւոն թագաւորին սրբոյն Պետրոսի նշանը:

Գրիգոր կաթողիկոսի և տասն երկու եպիսկոպոսաց միաբանութիւնը Հռովմայ պապին հետ՝ սաստիկ զայրացրեց Զորոյգետացւոյ. ուստի անհաշտ թշնամութեամբ կռուեցան խօսքով և զրով Ներսէս Լամբրոնացւոյ դէմ, որին առաջնորդ և խորհրդական էին համարում այն անցած բաներին, բայց Լամբրոնացին ազգու խօսքերով լռեցուց նորանց: X

Հայոց մատենագիրքը . . .

Թէպէտ այս դարու մատենագիրերը սակաւաթիւ էին, բայց համբաւաւոր գտնւեցան զրաւոր աշխատութեանց ընտիր վաստակներով:

Սուրբ Ներսէս Կլայեցի, որ և Շնորհալի, Հայոց կաթողիկոս, որոյ հոգեշահ և բազմարդիւն զրուածները յիշեցինք կաթողիկոսաց կարգի մէջ:

Ներսէս Շնորհալւոյ աշակերտակից, Սարգիս Շնորհալի, կաթողիկեայց եօթն թղթոց մեկնութիւն գրեց ընտիր ոճով, հոգեշահ և ազգու յորդորակներով:

Իգնատիոս վարդապետ, նոյնպէս Շնորհալուոյ աշակերտակից, Պաշտօնունի Գրիգոր կաթողիկոսի խնդրանօք զրեց Ղուկասու աւետարանի մեկնութիւնը ընտիր ոճով :

Անեղի Սամուէլ երէցը, հրամանաւ Գրիգոր կաթողիկոսի Պաշտօնունոյ զրեց ժամանակագրութեան աղիւսակ մասնաւոր պատմութեամբ :

Մատթէոս Ուռհայեցի խաչակիր զօրաց ժամանակը, զրեց Հայոց պատմութիւն՝ սկսած Աշոտ ողորմածի ժամանակից մինչև իւր ժամանակը՝ ց 1144 թիւը : Ունի նա ևս արտաքին ազգաց պատմաբանական զրուածներ :

Մխիթար բժիշկ Հեր քաղաքից՝ Ներսէս Շնորհալուոյ մտերիմ, Գրիգոր Տղայոյ խնդրով շարադրեց բժշկարան, որ կոչուում էր «Ջերմանց մխիթարութիւն» :

Ներսէս Լամբրոնացի Տարսնի եպիսկոպոսը Հայոց Օշին մեծ իշխանի որդին, որ երկրորդ Պօղոս կոչւեցաւ, և նմանօրինակ Գեմոսթենեսի և Կիկերոնի ընտիր աշխատասիրութեամբ պարծանք բերաւ հայերէն դպրութեան : Սա զրեց Գաւթի Սաղմոսաց, Սողոմոնի առակաց, Ժողովողի և իմաստութեան և երկոտասան մարդարէից մեկնութիւնը : Նմանապէս և պատարագամտոյց զրոց մեկնութիւնը : Ունի նա ընտիր ճառեր, շարականներ, և զանազան նամակներ այլ և այլ անձանց վերայ զրած :

Մխիթար Գանձակեցի կամ Գետկայ կոչեցեալ, որ մօրուաց սակաւութեան համար, Գօշ կոչւեցաւ, զրեց դատաստանագիրք, կանոններ և խրատական թղթեր :

Այս դարումն ժամանակաւ մերձաւոր էին միմեանց՝ Խաչատուր վարդապետ Տարնացի, Գրիգոր Սկիւռացի, և

Գէորգ վարդապետ Սկիւռացի, որոնք ծաղկեցան զանազան զրաւոր աշխատութեամբ :

Աղգային Ժողովք :

Շուղրայ Ժողով 1113 թուին :

Բարսեղ կաթողիկոսը ցանկալով ուխտ դնալ երուսաղէմ, յայտնեց իւր խորհուրդը ոմանց եպիսկոպոսաց և իշխանաց : Այլ որովհետև օրը մթնանում էր, բոլոր եկեղեցականք կաթողիկոսով միատեղ կոտորի վերայ կատարում էին երեկոյեան պաշտօն (աղօթք), տանիքը (կրտուրը) ծանրանալով փուլ եկաւ, և կաթողիկոսի ողն կոտրեցաւ : Եւ մինչդեռ կենդանի էր՝ տանել տուաւ իրան Շուղր անապատը, և այնտեղ հրաւիրելով Հայոց եպիսկոպոսաց և իշխանաց, նոցա ամենի հաւանութեամբ՝ կաթողիկոսական քօղը և զաւաղանք տուաւ Շնորհալուոյ եղբօր Գրիգորիսին : Ուստի Բարսեղի քահանայն յետոյ՝ Ժողովեցան ամէնքը Կարմիր վանքը, և օծեցին նորան մեծահանգէս շքով : X

Ժողով Աեաւ լերին Բ, 1114 թուին :

Բարսեղի տարաժամ մահը և Գրիգոր Պաշտօնունոյ կաթողիկոսութիւնը լսելով Աղթամարայ Գաւթի արք եպիսկոպոսը՝ շփոթեցաւ և արհամարհելով նորա իշխանութիւնը՝ և իրան կամակիցներ գտնելով՝ կոչեց իրան Աղթամարայ կաթողիկոս : Այս որ լսեց Գրիգոր կաթողիկոսը՝ Ժողովեց Սև լեռն բոլոր եպիսկոպոսաց և վանա-

հարց՝ երկու հազար հինգ հարիւր հոգի, որոց միա-
ձայն հաւանութեամբ մերժեց Դաւթին, բանադրեցին
ամենին, որոնք վստահանան կաշառով ընդունել եկեղե-
ցական պաշտօն: Կարծի թէ այս ժողովում սահմանե-
ցաւ, որ կաթողիկոսի ընտրութեան մէջ միաձայն լինին
Բջնոյ, Հաղբատայ, Թադէի և Ստաթէի վանաց արքեպիս-
կոպոստներ:

Հռովմայի Ա, ժողով 1166 թուին:

Գրիգոր Պահլաւունին հասնելով խորին ծերու-
թիւնը, և զգալով իւր վախճանը՝ աղաչեց իւր հարազատ
Ներսէս Ծնորհալոյն յանձն առնուլ կաթողիկոսութեան
աթոռը, և նա թէպէտ շատ կերպով հրաժարուում էր
այն պատուից, ուր ուրեմն լսեց նորա աղաչանքը՝ և յանձն
առաւ այն իշխանութիւնը: Ուստի Գրիգոր կաթողի-
կոսը ժողովելով բոլոր եպիսկոպոսաց և վարդապետաց
Հռովմայ, գձեց Ներսէսի գլխին կաթողիկոսական քօղը
և ձեռին տալով հայրապետական գաւազանը՝ պատուեց
նորան:

Միևնոյն ժամանակը Ներսէս Ծնորհալոյն գեղեցիկ և
ազդու խօսքերով ատենախօսութիւն արաւ այնտեղ՝ ա-
ռաջ ներկայացնելով Գրիգոր Պահլաւունոյ երկնային
քաղաքավարութիւնը, և յետոյ իւր նուաստութիւնը խոս-
տովանելով, և թէ Աստուծոյ շնորհքը ինչ փառքի հաս-
ցրեց նորան: Եւ ապա ժողովը վերջանալուց յետոյ՝ իբր
երեք ամիս անցաւ՝ վախճանեցաւ Գրիգոր Պահլաւունին:

X

Հռովմայի Բ, ժողով 1172 թուին:

Բարեպաշտ կայսր Մանուէլ Կոմնենոսը իմանալով
Ներսէս Ծնորհալոյ ուղղափառ վարդապետութիւնը և
երկնաման քաղաքավարութիւնը, որովհետեւ ինքն ի բնէ
խաղաղութեան և սիրոյ ցանկացող էր՝ հոգ տարաւ վեր-
ցնել միջից Հայոց և Յունաց բաժանումը և անմիաբա-
նութիւնը: Ուստի նամակ գրեց Ներսէս Ծնորհալոյն, և
Յունաց եկեղեցւոյ կողմից ինն յօդուած առաջարկե-
լով, աղաչում էր որ եպիսկոպոսաց ժողովով համոզի և
ընդունել տայ Հայոց այն յօդուածները: Երբ կայսեր
պատգամաւորները հասան Հռովմայ՝ Ներսէս Ծնորհալոյն
շատ սիրով ընդունեց նորանց, և յետոյ հրաւիրեց բոլոր
եպիսկոպոսաց, որոնք բնակուում էին Տորոս լեռան և Մի-
ջազետի սահմաններում, նոքա թէպէտ յանձն առին
ընդունել Յունաց առաջարկութիւնը, բայց կասկածելով
թէ մի՞ գուցէ վերին Հայոց եպիսկոպոստներ համաձայն
չլինին ժողովոյ սահմաններին, մտածեցին հրաւիրել նո-
րանց ևս ժողովը: Եւ մինչդեռ պատրաստ էր Ներսէս Շը-
նորհալոյն առանձին թղթով հրաւիրել նոցա իւր մօտ,
հասաւ իրան երկնահրաւէր կոչումը, անցաւոր կեանքից
փոխիլ յաւիտենականութիւնը, ուստի չկարաց լրումն
տալ գործոյն:

Հռովմայի ժողով Դ, 1178 թուին:

Եղբոր որդին Ծնորհալոյ Գրիգոր Տղայն միաձայն հա-
ւանութեամբ բոլոր ազգայնոց՝ ընդունելով նորա աթոռը,

նորա ազնիւ և բարի վարուց նմանութիւն էր բերում: Մանուէլ Կոմնենոսի և Միքայէլ պատրիարքի թախանձանքից տոխպուլում ջանք էր անում ի կատար ածել միաբանութեան խորհուրդը՝ Շնորհալոյ սկզբնաւորածը: Բայց անկարելի էր համարում որ Հայք հաւան լինէին փոխել այն ծէսերը, որոց մէջ ի սկզբանէ հաստատուած էին. աղաչեց կայսեր և պատրիարքին, որ չտոխպեն Հայոց փոխել նախնական ծէսերը, այլ աշխատել բառնալ միջից ուղղափառ հաւատոյ վնասաբեր արարողութիւնքը: Կայսրը և Պատրիարքը հաւան գտնելուց յետոյ՝ Գրիգոր կաթողիկոսը կանչեց իւր մօտ Հռովմայ Յունաց պատգամաւորաց հետ և եպիսկոպոսաց, վարդապետաց և միանգամայն բոլոր հոգեւորականաց Հայաստանի, և ժողով գումարեց, որպէս զի միաբանութեան խորհրդոյն լրումն տան: Այս ժողովումը Ներսէս Լամբրոնացին գեղեցիկ և զօրաւոր խօսքերով ատենաբանելով քրիստոնէական եկեղեցւոյ հանգամանաց վերայ՝ ներկայացրեց անմիաբանութիւնից առաջ եկած վնասները, և միաբանութիւնից մեծամեծ օգուտները: Նորա խօսքերից յափշտակուած՝ ամէնքը շտապում էին աւարտ հասցնել այն սկսած միաբանութեան խորհուրդը:

Բայց ինչպէս առաջին անգամ՝ Ներսէս Շնորհալոյ տարաժամ մահը խափանարար եղաւ գործոյն, նոյնպէս և այս երկրորդ անգամը իսպառ խափանեցաւ՝ բարեպաշտ Մանուէլ Կոմնենոսի մահուան պատճառաւ:

Ստոյ Ա, ժողով 1193 թուին:

Գրիգոր Տղայն հասնելով խորին ծերութեան՝ լի բազմադիմի արդեամբք վճարեց իւր կեանքը: Լեոն իշխանը, Զորոյգետացիք, Հաղբատացիք և Սանահնեցիք կամենում էին կաթողիկոս կարգել նորա քեռորդի Գրիգորն, որ դեռ մանուկ էր հասակաւ: Բայց Ներսէս Լամբրոնացին տեսնելով նորա անբարի վարքը՝ շատ կերպ հակառակեցաւ նորա ընտրութեանը, որպէս ինքն յիշում է մի տեղ իւր գրուածոց մէջ: Սակայն միւսները չլսելով Լամբրոնացւոյ իրաւացի խօսքին, կարգեցին նորան կաթողիկոս. և թէ նորանից յետոյ ինչ գործեց նա և ինչպէս վճարեց իւր կեանքը, համառօտ խօսքով յիշեցինք կաթողիկոսաց յաջորդութեան կարգի մէջ:

Տարսոնի Ա, ժողով 1198 թուին:

Լեոն Բ, իշխանից առաջ, որոնք Ռուբինեանց ցեղից էին՝ պսակուած չէին թագով: Լեոնը տեսնելով իւր գործոց յաջողութիւնը, և Հայաստանի առաջադէմ զարգանալը՝ ցանկացաւ թագաւոր օծւիլ, ուստի թուղթ գրեց Կեղեսոտինոս պապին և Հենրիկոս Զ, Գերմանացւոց արքային, և երբ նորա իրաւացի համարեցին Լեոնի խընդիրը, ժողովեցան բոլոր եպիսկոպոսուքը Հայոց, Յունաց և Լատինացւոց Տարսոն քաղաքը, և Գրիգոր Ապիրատ Հայոց կաթողիկոսը Սովիայ տաճարի մէջ մեծահանդէս պատուով օծեց Լեոնին Հայոց թագաւոր:

Դ Ա Ր Ե Ր Ե Ք Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Երեքտասաներորդ դարու սկիզբին յետ մահուան Գրիգոր Կաթողիկոսի, որ Ապիրատ էր կոչուում, 1202 թուին Կաթողիկոսութեան աթոռը նստաւ Սսայ արքեպիսկոպոս Յովհաննէս Է, որոյ մականունն էր Մեծաբարոյ: Բայց փոքր Հայոց եպիսկոպոսունք, որպէս և Շիրակացիք, անհաւան գտնւելով այն ընտրութեանը, նորատեղ կարգեցին երկու Կաթողիկոս, առաջինքը Սեբաստիոյ եպիսկոպոս Անանիային, իսկ Շիրակացիք Բարսեղ Անեցւոյն: Այն ժամանակը Հայոց թագաւորը Լևոն անբաւական մնալով Յովհաննէս Կաթողիկոսից, մի տարուց յետոյ զրկեց նորան այն իշխանութիւնից և ընտրել տաւ Դաւիթ Գ, Արքակաղնեցւոյն, որովք եղան չորս Կաթողիկոս. բայց երեք տարուց յետոյ Դաւիթ Կաթողիկոսը վախճանեցաւ նոյն տարում, նոյնպէս և Անանիա փոքր Հայոց առնձին Կաթողիկոսը, յետոյ Յովհաննէս Կաթողիկոսը հաշտւած լինելով Լևոն թագաւորի հետ, կրկին հաստատւեցաւ Կաթողիկոսութեան աթոռոյ վերայ և մնաց նոյն իշխանութեան մէջ ընդ ամենը տասնեութ տարի: Դաւթի Կաթողիկոսութեան ժամանակը 1204 թուին,

Ջաքարէ սպասալար իշխանի խնդրանք և Հա-

յոց ազգային ժողովով հաստատուեցաւ ունիլ շարժական սեղան պատարագի զօրաց բանակի մէջ: Այս պատճառաւ Ջաքարէ իշխանի մօտ ուղարկւեցան քահանայք և սարկաւազներ ամենայն պատրաստութեամբ եկեղեցական սպասուց և անօթոյ՝ պատարագի պաշտաման համար, և այնտեղ այն հանդէսին խաչատուր վարդապետ Տարոնացին յօրինեց «Խորհուրդ խորին, երզը, որ մինչև յայսօր երգւում է Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ պատարագի սկզբին քահանայի սգեստաւորւելու ժամանակը:

Է, Յովհաննէս մահուան յետոյ Կաթողիկոսութեան աթոռը նստաւ Կոստանդին առաջին Բարձրբերդցին 1220 թուին: Սա մեծ խնամք տարաւ ազգի բարեկարգութեան, 1243 թուին ազգային ժողովք արաւ Սիս քաղաքում, և ժողովոյն սահմանած կանոնները ուղարկեց Հայաստանի ամէն կողմը, որ ընդունեն և ի գործ զնեն, և մինչև զբաղւած էր այսպիսի հոգւոր վաստակներով՝ վերջացրեց իւր կեանքը խորին ծերութեան մէջ 1267 թուին՝ քառասուն և եօթը տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

1268 թուին ընտրւեցաւ Կաթողիկոս Յակոբ Տարսնացին և նստաւ Հռոմկլայ, ուստի և կոչւեցաւ Կլայցի: Սա յօրինեց ճառեր և Տիրամօր ծննդեան շարականներ, «Երգեցէք որդիք սիոնի երգ նոր», շատ հոգս տարաւ և աշխատեց ազգի բարեկարգութեան և օգտի համար, և տասն և ինն տարի վարելով հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ 1287 թուին: Սորա ժամանակը յայտնւեցաւ մեծին Ներսէսի նշխարքը Թիլ աւանի մէջ,

ուստի Հայոց թագաւորը Վեոն Հոյակապ եկեղեցի շինեց մեծին Ներսէսի անուամբ. և Յովհան վարդապետ Երզնկացին յօրինեց շարական «Որ զլոյս անձառ շնորհացոյ ուր յիշատակում է նորա նշխարաց յայտնութիւնը:

Կեսարիոյ արքեպիսկոպոս Կոստանդին Բ, Սսեցին նրա տաւ կաթողիկոս 1287 թուին. բայց երեք տարուց յետոյ Հեթում թագաւորի հետ աւերւելով՝ ընկաւ աթոռից:

Ստեփաննոս Դ, Եկեղեաց գաւառից, ընտրւեցաւ կաթողիկոս՝ Կոստանդեայ փոխանակ 1290 թուին. և որովհետեւ մանկութիւնից Հռոմկլայ էր մեծացած՝ կոչւեցաւ Հռոմկլայեցի: Սա վերջինն էր Հռոմկլայի կաթողիկոսներէից, պատճառ որ՝ սորա ժամանակը 1293 թուին Եգիպտոսի բռնաւորը աւերեց կաթողիկոսարանը, գերի տաքաւ կաթողիկոսին և եկեղեցւոյ բոլոր սպասք, նոյնպէս և սուրբ Լուսաւորչի աջը. բայց երբ պատժւեցաւ յԱստուծոյ բռնաւորը, ապա թէ յետ դարձրուց գերիքը և եկեղեցւոյ բոլոր սպասք և Լուսաւորչի աջը, իսկ Ստեփաննոս կաթողիկոսը չորս տարի վարելով Հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ դառն վիշտեր կրելով պանդխտութեան մէջ:

1294 թուին ընտրեցաւ կաթողիկոս Գրիգոր Է, Անաւարդեցին, և որովհետեւ աւերած էր Հռոմկլայն, նստաւ Սիս քաղաքում, ուստի կոչւեցաւ Սսեցի: Սա հակամէտ գոյով Յունաց և Լատինացւոց եկեղեցեաց ծէսերին մեծ տրտունջ եղաւ նորա վերայ ազգի մէջ, մինչև արեւելեան վարդապետք ժողովական թղթով զրեցին նորան

զգուշանալ նորաձեռութիւններից, և ամենքը զայրացած նորա դործքի վերայ, սկսան սասակապէս դիմախօսել օտար ազգի դաւանութեան և աւանդութեանց վերայ: Բայց և այնպէս չփոխեց նա իւր մտաց խորհուրդը, և երբ փոքր ինչ խաղաղացաւ Կիլիկիոյ երկիրը՝ 1305 թուին յարմար միջոց համարեց զլուս տանել իւր խորհուրդը, այն է ինչ ինչ ազգային արարողութիւնները փոփոխել. ուստի մեծ Հայաստանի արքեպիսկոպոսաց և առաջնորդաց թուղթ գրեց, բայց չընդունւեցաւ նորա առաջարկութիւնը և մեծ խռովութիւն և երկպառակութիւն ծագեցաւ ազգի մէջ այս իրողութեան մասին: Եւ երբ կամեաւմ էր նա ազգային ժողով գումարել՝ վերջացրեց նա իւր կեանքը 1306 թուին, տասն և չորս տարի վարելով Հայրապետական աթոռը: Բայց Վեոն Հայոց արքայն կամելով կատարել հանգուցեալ կաթողիկոսի կամքը, ժողով գումարել տաւ Սիս արքայանիստ քաղաքում, ուր ժողոված էին քառասուն և մի եպիսկոպոսուք, տասն վարդապետք, եօթն վանահարք, երիցունք և արեղայք, որոց հետ և թագաւորը շատ իշխաններով, և այն ժողովոյ մէջ կարգաւով Անաւարդեցւոյ դաւանութեան թուղթը, սահմանեցին ինչ ինչ կանոններ, և ապա ընտրեցին ի կաթողիկոսութիւն Կեսարիոյ արքեպիսկոպոսը Կոստանդին Բ, որ հրաժարած էր Հայրապետական իշխանութիւնից 1290 թուին:

Եկեղեցական մատենագիրք:

Հայոց մատանագրաց մէջ այս դարումն համբաւորքն էին Յովհաննէս վարդապետ վանական Տաւուշեցին Մխիթարայ Գօշի աշակերտ, ճառագիր, որոյ յորդորանօք տէր Խորայէլը յօրինեց Յայսմաւուրքը:

Արքայիս Գանձակեցին, զրեց Հայոց Պատմութիւն՝ Լուսաւորչից սկսած մինչև իւր օրերը, և վախճանեցաւ 1271 թուին:

Վարդան վարդապետ Բարձրբերդցին զրեց ընդհանուր պատմութիւն համառօտ, Դաւթի Սաղմոսաց, զրոցն Մովսէսի, Սողոմոնի երգոյն, և Գանիէլի մարգարէութիւնը: Ունի և շարականներ, «Որ նախիմաց» Ի յանսահման ծովէն, և «Որք զարդարեցին»:

Վահրամ վարդապետ՝ Լեոն թագաւորի ատենագիրը զրեց Հայոց պատմութիւն ոտանաւոր՝ որպէս յաւելուած Շնորհալույ վեպասանութեանը՝ մինչև իւր օրերը:

Յովհաննէս վարդապետ Երզնկացին, որ Պլուզ, այսօր ինքն կապուտակ էր կոչուում, որպէս և Մործորեցի, աշակերտ էր Վարդանայ Բարձրբերդցոյ, և հետամուտ և վարժ էր զխաւթեանց մէջ: Սա յօրինեց աստեղաց շարժման, տարւոյ եղանակաց և տարերաց վերայ գիրք, այլև ճառեր և ներբողներ, որպէս և սուրբ Լուսաւորչի շարականը «Այսօր զուարճացեալ», և մեծին Ներսէսի շարականը, տաղեր և ջրօրհնեաց տօնի երգեր և հոգեշահ խրատներ: Նոյնպէս լրացրուց Մատթէոս աւետարանչի մեկնութիւնը՝ Շնորհալույ սկսած:

Յովհաննէս վարդապետ Արժիշեցին որ Ոոսնակեր էր կոչուում, զրեց պատարագի խորհրդոյ մեկնութիւնը համառօտ և պարզ ոճով:

Աղգային ժողովք:

Սոյ Բ, ժողով 1204 թուին:

Զաքարէ սպասալար բարեպաշտ իշխանը միշտ պատեւրազմաց մէջ զրկւած էր լինում Աստուածպաշտութիւնից, ուստի Վրացիք և միւս ազգերն ևս բամբաստում էին նորան՝ այս պատճառաւ առանձին թղթով աղաչեց Լեոն թագաւորին և Յովհաննէս կաթողիկոսին որ հրաման տան նորան շարժական խորան և պատարագի սեղան և քահանայ մանածել իւր հետը, որպէս երբեմն Տրդատ թագաւորը և Վարդանանք: Նոյնպէս և ինչորեց հրաման պատարագի պաշտօնը հանդիսիւ կատարել սարկաւազներով և դպիրներով, և սրբոյ կուսին վերափոխումը և Խաչի տօնը Վրաց հետ տօնել: Լեոն թագաւորը խորհուրդ արաւ Գաւիթ կաթողիկոսի հետ և հրամայեց ժողով գումարել Սիս քաղաքում. և ժողովը չտեսնելով ինչ ընդգէժ նախնի կանոնաց՝ վճռեց ընդունել նորա առաջարկութիւն, և թոյլ տալ նորան առնել ինչ որ խնդրում էր նա, յետոյ ութը կանոն սահմանեցին եկեղեցւոյ բարեկարգութեան համար և արձակեցին ժողովը:

Լուււոյ ժողով 1205 թուին:

Երբ Զաքարէ սպասալարը ընկալաւ ժողովոյ վճիռները և սահմանները, շատ ուրախացաւ. իսկոյն իւր իշ-

խանութեան սահմաններէն եպիսկոպոսներ և վարդապետներ ժողովեց Ղուի քաղաքում, և առաջարկեց նոցա Սրսայ ժողովոյ կանոնները: Եւ թէպէտ ոմանք նոցանից հաւանեցան և ուրախացան. բայց և ոմանք հակառակ եղան Զաքարէի խորհրդոյ, որպէս Գրիգոր Տուտէորդին, Դաւիթ Քոբայրեցին, Յովհաննէս Սանահնեցին և այլք: Զաքարէն տեսնելով որ նոքա կամենում են շփոթ դնել, նոցանից ոմանց պահեց իւր մօտ և առհասարակ ամէն տեղ և ամենին որ իւր իշխանութեան ներքոյ էին՝ հրամայեց հնազանդիլ այն ժողովոյ կարգաց և կանոնաց:

Ստյ Գ, ժողով 1243 թուին:

Կոստանդին կաթողիկոսը տեսնելով ազգի եկեղեցականաց թուլութիւնը և անկարգութիւնը, կամեցաւ բարեկարգել որպէս եկեղեցականները, նոյնպէս աշխարհականները, ուստի Հեթում թագաւորի հրամանաւ ժողովեց եպիսկոպոսներ, վանահայրեր և վարդապետներ, և ոմանք իշխաններից Սիս քաղաքում, և առաջ բերելով այն ամեն անկարգութիւնները, որ յաճախել էին այն ժամանակը մեր եկեղեցականաց մէջ, սահմանեցին քսան և հինգ կանոն, և առանձին կանոնով արդելեցին ձեռնադրել մանկահասակներին, վճռեցին որ սարկաւազացուք լինին զոնեա քսան ամաց, քահայնացուք քսան և հինգ ամաց և եպիսկոպոսացուք երեսուն ամաց, և թէ միմիայն արժանաւորաց տրւին այդ աստիճանները անաշառութեամբ և առանց կաշառառութեան:

Ժողով Տարսոնի Բ, 1267 թուին:

Յետ մահուան Կոստանդեայ կաթողիկոսի՝ Հեթում թագաւորը մեծ ժողով գումարեց եպիսկոպոսաց և վարդապետաց Տարսոն քաղաքում, և ընտրեցին նորա փոխանորդ Յակոբ Տարսոնացին, որ սրբակրօն վարուք և բարեմասնութեամբք արժանի էր այն մեծ պատուոյն:

Գ, ժողով Տարսոնի 1276 թուին:

Երբ մեռաւ Հեթում թագաւորը, նորա որդի Նեոնը, կսկծից հիւանդացաւ մերձ ի մահ. ուստի Եզիպտոսի իշխանը և ուրիշ ոմանք ուղարկեցին մխիթարելու նորան և յորդորելու որ յանձն առնէ նստիլ հօր իշխանութեան աթոռը, վասն որոյ Յակոբ կաթողիկոսը Հայոց իշխաններ և եպիսկոպոսներ ժողովեց Տարսոն քաղաքում և մեծահանդէս չքով օծեց Նեոնին թագաւոր փոխանակ հօր:

Ստյ Ե, ժողով 1292 թուին:

1292 թուին երկրորդ Հեթում թագաւորութեան չորրորդ տարին բաւական երկպառակութիւն և շփոթ ընկաւ մեր ազգի մէջ՝ ծռազատիկ պատճառաւ, որովհետեւ ոմանք Յոյնք կամենում էին տօնել զատիկը Ապրիլի հնդին, Հայք նոցանից մէկ շաբաթ յետոյ: Հեթում թագաւորը այս հերձուածը բառնալու համար՝ կանչեց իւր մօտ Սիս քաղաքը Ստեփաննոս կաթողիկոսին, և այնտեղ ժողով գումարեց եպիսկոպոսաց և վարդապետաց, և ստոյգ քննութեամբ զատիկի ծուելու պատճառը իմանալով՝ սահմանեցին զատիկը տօնել Յունաց հետ:

ԴԱՐ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ:

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Կեսարիոյ արքեպիսկոպոս Բ, Կոստանդին Պրօնագործ ասացեալ. որ առաջին անգամը երեք տարի վարեց կաթողիկոսական աթոռը, և յետոյ կրկին ընտրեցաւ 1307 թուին, ջանք էր գնում Սալ ժողովոյ կանոնները գործ գնելու, բայց երբոր շատերը սկսան հակառակել և խռովութիւն գծել, հարկ համարեց կրկին ժողով գումարել 1316 թուին Ատանա քաղաքում, ուր հաստատեցին Սսոյ նախնիքաց ժողովոյ սահմանադրութիւնքը. սակայն մեծ շփոթ ընկաւ ազգի մէջ և չընդունեցան ընդհանրապէս այն ժողովոց սահմանադրութիւնքը: Այն ժամանակը Սարգիս եպիսկոպոսը Երուսաղեմի նոյնպէս չը հնազանդելով կաթողիկոսին՝ հրովարտակ առաւ եզիպտոսի Սուլթանից անկախ լինել ազգային գլխից և կոչել առաւ իրան Երուսաղեմի պատրիարք, յորմէ սկսաւ Երուսաղեմայ Հայոց պատրիարքութեան պատիւը, 1311 թուին:

Ազգային այն շփոթութեանց մէջ աւելացան և քաղաքական կռիւներ այլազգեաց բռնութիւնից, և այն ներքին և արտաքին թշնամեաց նեղութիւնքը կարճեցին Կոստանդին կաթողիկոսի կեանքը, որ վախճանեցաւ 1322 թուին, տասն և վեց տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

Կոստանդին Գ, Լամբրոնացին՝ կաթողիկոսութեան աթոռը նստաւ 1323 թուին: Սա իւր ճարտարութեամբ հանդարտացրուց ազգի թշնամեաց, խաղաղութեան դաշըն կապեց Եզիպտոսի Սուլթանի հետ, և չորս տարի վարելով կաթողիկոսութեան աթոռը՝ վախճանեցաւ 1327 թուին:

Յակոբ Բ, Սսեցի, քեռորդին Գրիգորի Անաւարդեցւոյ, նստաւ կաթողիկոս փոխանակ Կոստանդեայ Գ, 1327 թուին: Սորա ժամանակը երեւցաւ Հայաստանում Յովհաննէս վարդապետ Քռնեցին, որ տասը տարի առաջ Բ, Կոստանդեայ կաթողիկոսութեան ժամանակը գնացել էր Ատրպատական և Բարթոլղիմէոս Լատին եպիսկոպոսի աշակերտելով սովորել էր նորանից Լատինացւոց լեզուն, և երբ վերադարձաւ Հայաստան շատերին ձգեց դէպ ի իրան: Սոքա միաբան խորհրդով աշխատեցին փոխփոխել Հայոց եկեղեցւոյ պաշտամունքը և արարողութիւնքը, այս պատճառաւ վէճ և խռովութիւն ընկաւ բոլոր ազգի մէջ, մինչև եպիսկոպոսներ և առաջնորդներ և թագաւորը ստիպւած՝ քշեցին նոցա զխաւորներուն, բայց չկարացին խաղաղացնել խռովութիւնը, այնպէս սաստկացաւ վէճ և կռիւր, մինչև անբաւականութիւն ծագեցաւ կաթողիկոսի և թագաւորի մէջ, որ և ձգեց նորան կաթողիկոսութեան իշխանութիւնից՝ տասն երեք տարի կաթողիկոսական իշխանութիւնը վարելուց յետոյ:

Ստիթար Քռնեցին նստաւ հայրապետութեան աթոռը 1341 թուին: Սորա ժամանակը համարձակութիւն գտնելով շատացան Ունիթոռներ՝ Յովհաննէս վար-

դապետի աշակերտը, որոնք Նախիջևան և միւս գաւառներում վանքեր շինեցին, և Գոմինիկեան կրօնաւորաց կարգը ընդունելով՝ Լատինացւոց ծէսերով էին կատարում եկեղեցական պաշտամունքը, փոփոխելով ազգային արարողութիւնքը: Յետոյ երբ նոքա կամենում էին առհասարակ ամենին համոզել իրանց ուսմանց մէջ, սկսան երկրայելի ցոյց տալ Հայոց մկրտութեան խորհուրդը, դրոշմը և քահանայութեան կարգը, ուստի սկսան կրկնել այն խորհուրդները, որով շփոթ և խռովութիւն ընկաւ ազգի մէջ:

Այն ժամանակը Ունիթռաց համախոհք երկուք ոմանք Ներսէս Պալիէնց Որմի քաղաքի եպիսկոպոսը, և Կարնոյ եպիսկոպոս Սիմէոն Պէկ պաշտպան եղան կրկնակնունք մոլորութեանը. ուստի նզովքով զրկեցան եկեղեցւոյ հաղորդութիւնից՝ և հալածական եղան Հայերից, Լեոնթադաւորի հրամանաւ՝ Մխիթար կաթողիկոսը ժողովով եպիսկոպոսաց և վարդապետաց հերքեց նոցա մոլորութիւնը:

Յակոբ վարդապետ Սսեցի՝ Մխիթար կաթողիկոսի մահուան յետոյ 1355 թուին, կրկին կարգւեցաւ Հայոց կաթողիկոս և չորս տարի վարելով հայրապետական իշխանութիւնը, վախճանեցաւ 1358 թուին:

Սուրբ Թադէոսի վանաց առաջնորդ Մեսրոպը նրստաւ կաթողիկոսութեան աթոռը 1359 թուին և տասն և երեք տարի վարելով կաթողիկոսական աթոռը՝ վախճանեցաւ 1372 թուին: Յետոյ Կոստանդին Գ, երկու տարի, և նորանից յետոյ 1374 թուին Պօղոս Ա, չորս տարի. յետոյ 1378 թուին Թէոփորոս Բ, տասն և ութ տարի. ապա 1396 թուն Կարապետ Ա, որ բոբիկ կոչւե-

ցաւ, երկու տարի, նորանից յետոյ 1398 թուին Գաւիթ Գ, չորս տարի: Սոցա ամենի իշխանութեան ժամանակ Հայաստանը որովհետեւ խռովութեան մէջ էր այլազգի թշնամեաց ձեռքից, ուստի և չեղան արժանայիշատակ դէպքեր՝ բաց ի քաղաքական վշտալի անցից:

Եկեղեցական մատենագիրք:

Այս դարս աղքատ է մատենագիրներով, ժամանակի խռովութիւնքը՝ Հայոց տէրութեան տկարանալու պատճառաւ, և Ունիթռաց շփոթութիւնքը արգելք եղան յառաջադիմութեան ազգիս ուսմանց և գիտութեանց մէջ: Այս ալէկոծեալ դարուս մատենագիրներից յիշատակուած են միայն Յովհաննէս վարդապետ Որոտնեցի՝ Տաթևու վանահայրը, վարժապետ և ուսուցիչ բազմաթիւ աշակերտաց: Սա գրեց զանազան քարոզներ և մեկնութիւններ, նոյնպէս և սորա աշակերտ Մաղաքիա վարդապետը, որ առաջ բարեկամութեամբ էր Ունիթռաց հետ, և յետոյ երբ տեսաւ նոցա անկարգութիւնքը և կրկին մկրտութիւն ուսուցանելը՝ սաստիկ թշնամացաւ նոցա հետ, և պատժապարտ արաւ նոցա զլիաւորներուն:

Գրիգոր Տաթևացին՝ աշակերտ Յովհաննու Որոտնեցւոյ և վարժապետ Ապրակունեաց վանքի: Ունի երկհատորեան Քարոզգիրք և Հարցմանց գիրք:

Գրիգոր վարդապետ Խլաթեցի, որոյ մականունն էր Մերենց: Սա գրեց ճառեր և ներբողներ սրբոց և սրբոյ

կուսի տօնից վերայ, այլև երգեր, տաղեր և զանազան գանձեր: Նմանապէս գրեց և այն մարտիրոսաց նահատակութեան պատմութիւնը, որոնք իւր ժամանակով նահատակւելէին, և որովհետեւ տօնասէր և մարտիրոսասէր էր՝ արժանացաւ և ինքն վկայական մահուան 1425 թուին:

Սիւնեաց եպիսկոպոս Առաքել վարդապետը, զանազան ոտանաւորաց զիրք շարադրեց, որ կոչոււմ էր Ադամայ զիրք, այլև ներքողներ ոտանաւոր չափով այլև այլ սրբոց վերայ:

Գէորգ վարդապետ Երզնկացին, Գրիգոր աստուածաբանի «Առ որս» գրոց լուծմունքը գրեց, նոյնպէս քարոզներ և խրատներ՝ Մաշտոցի գործածութեան մասին: Սորա ժամանակաւ, սորա աշակերտներից էին Յակոբ վարդապետ Ղրիմեցի տոմարագէտ, Յովհաննէս վարդապետ Կոլոտիկ, Մատթէոս վարդապետ և Տիրատուր վարդապետ՝ որոնք սուրբ գրոց զանազան մեկնութիւններ գրեցին:

Ազգային ժողովք:

Սոյ ժողով 1307 թուին:

Գրիգոր Անաւարդեցին որ ցանկանում էր ազգային ձէսերի մէջ փոփոխութիւններ անել, սորա վերայ զայն րացան ամենքը, ուստի եպիսկոպոսունք և վարդապետք միաբանական թղթով աղաչեցին նորան ոչ պակասցնել և ոչ աւելացնել մեր նախնի հարց սահմանադրութեանցը, բայց կաթողիկոսը չփոխեց իւր ղրտաւորութիւնը, այս պատճառաւ շփոթ ընկաւ Հայաստանի մէջ: Լեոն արքայն հը-

րամայեց ժողով գումարել Սիս քաղաքում. մինչև այն ժողովոյ գումարելը՝ մեռաւ Գրիգոր կաթողիկոսը, այնուամենայնիւ երբ ժողովեցան հարք՝ առաջ կարգացին նորա դաւանութիւնը և ստորագրեցին ամէնքը, և փոխանակ Գրիգորի կարգեցին կաթողիկոս Կոստանդին Պրօնազործը:

Տարսոնի Դ, ժողով 1308 թուին:

Լեոն թագաւորը ստիպում էր ամենին Սոյ ժողովոյ կանոնները ընդունել, ուստի երկպառակութիւն և մեծ շփոթ ընկաւ ազգի մէջ, և ոմանք իշխաններից զընացին Թաթարաց Պիլարդու իշխանի մօտ, պատճառ որ զի տէին նորա ատելութիւնը Լեոնի և նորա հօր Հեթում թագաւորի դէմ, և սաստիկ չարախօսութիւն արին իշխանի առաջ: Նա կեղծաւորութեամբ իւր մօտ հրաւիրեց Լեոնին և Հեթումին, և մինչև քառասուն հոգի ազգիս երևելի անձանց բոլորին կոտորել տւաւ: Այս որ լսեցին Հայոց իշխանք, երկար միջոց սուգ արին նոցա վերայ, և յետոյ ժողովեցան Տարսոն քաղաք և թագաւոր կարգեցին Օշինը:

Ատանոյ ժողովը 1316 թուին:

Օշին արքայն ստիպելով առհասարակ իշխանաց և առաջնորդաց ճիշդ պահպանել Սոյ ժողովոյն կանոնները, տեսաւ որ արհամարհումն նորա հրամանը, յորդորեց Կոստանդին կաթողիկոսին սորա համար ժողով

գումարել. բայց երբ հրատարակեցաւ կաթողիկոսի և
թագաւորի հրամանը՝ շատերը առաջնորդներից և վար-
դապետներից չընդունեցին այն հրամանը, և սակաւք ու-
մանք ժողովեցան սուրբ Մինասայ տաճարը Ատանա քա-
ղաքի մէջ, կարդացին Գրիգոր Անաւարդեցւոյ սահմանա-
դրութիւնը և հաստատեցին, բայց ժողովը արձակելուց
յետոյ չընդունեցան այն կանոնները, ուստի և Օշին թա-
գաւորը դադարեց նոցա ստիպելուց:

Ժողով Ստոյ Է, 1342 թուին:

Որպէս յիշեցաւ վերը՝ ոմանք խաբեբայք և կեղծա-
ւորք բաժանելով մեր ազգից և ղիմելով դէպի արեւ-
մուտքը, սաստիկ չարախօսութիւն արին մեր ազգի վերայ,
և մինը նոցանից Ներսէս Պալինեց հարիւր տասն եօթն
յօդուած իբր մոլորութիւն ազգիս վերայ ստայօղելով՝
առաջարկեց Բենեդիկտոս քահանայապետին: Նա շատ
զարմացած նամակ գրեց Վեոն թագաւորին և Մխիթար կա-
թողիկոսին, որ եպիսկոպոսաց ժողովով ցրեն այն չարա-
խօսութիւնքը: Ուստի հրամանաւ թագաւորի ժողովե-
ցան բոլոր եպիսկոպոսունք և վարդապետք Միս քաղա-
քում, և միաբան խորհրդով և ազդու խօսքերով մի-
առ մի գրեցին ընդդէմ այն զրպարտութեանց և ստա-
յօդ ամբաստանութեանցն, և ուղարկելով քահանայապե-
տին՝ կապեցին չարախօսաց բերանը:

Ստոյ Ը, ժողով 1361 թուին:

Մեսրոպ կաթողիկոսը տեսնելով հակառակութիւ-
նը՝ պատարագի բաժակի մէջ ոմանց ջուր խառնելու և
ոմանց արհամարհելու պատճառաւ, աշխատեց խաղա-
ղացնել նոցա, բայց երբ տեսաւ որ այն յորդորանքը ազդե-
ցութիւն չարաւ՝ ժողով գումարեց Միս քաղաքում և
պիսկոպոսաց և վարդապետաց Նիլիկիոյ, և շատ կերպով
յորդորելուց յետոյ՝ Մեսրոպ կաթողիկոսը խստիւ արդե-
ւեց բաժակի մէջ ջուր խառնելը և կամ ջրախառն բա-
ժակաւ պատարագ մատուցանելը:

Չորեքտասաներորդ դարու վերջին խալառ վերջա-
ցաւ մեր ազգի թագաւորութիւնը, և կաթողիկոսաց իշ-
խանութիւնն ևս նուազեցաւ թաթարաց Պարսից և Օս-
մանեան ձեռքից Հայաստանը ռանակոխ լինելու պատճա-
ռաւ. ուստի ազգային ժողովք սակաւ եղան և նշանա-
ւոր պատուը չերևեցան նոցա մէջ:

Դ Ա Ր Հ Ն Գ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Երբ դադարեցաւ Հայոց իշխանութիւնը և տիրեցին այլազգի իշխանք, նուազեցաւ և ազգիս եկեղեցական բարեկարգութիւնը, մանաւանդ երբ զօրացաւ բռնաւոր Լանկթամուրը, որ անողորմ հարուածներով և գերութեամբ քարուքանդ արաւ Հայոց երկիրը: Այսպիսի դառն ժամանակում շատերը կաթողիկոսներից ահուգողի մէջ ընկած արտաքին վտանգներից, և նեղացած ազգային խռովութիւնից՝ սակաւօրեայ կենօք փոխւեցան այս աշխահիցս:

1402 թուին Դաւթի Գ, յետոյ նստաւ կաթողիկոսութեան աթոռը Կարապետ Բ, եօթը տարի. սորա ժամանակը տակաւին շարունակւում էր Հայոց վարդապետաց խռովութիւնը Ունիթոռաց հետ, այս պատճառաւ ամբաստանեցին միմեանց վերայ այլազգի իշխանի մօտ, և պատժւեցան խռովարարները:

Յակոբ Գ, 1409 թուին նստաւ կաթողիկոս Կիլիկիոյ այլազգի իշխանի ձեռամբ, բայց երկու տարուց յետոյ Սոյ միաբանք մահադեղ խմացրին նորան ծածուկ, և այնպէս զոհեցաւ կեանքից, այս պատճառաւ մեծ շրջիւթ ընկաւ Սիս քաղաքի մէջ:

Գրիգոր Ը, 1411 թուին ազգային խռովութեան միջոցին քաղցրութեամբ որսալով շատերին՝ նստաւ կաթողիկոս: և երբ կամեցաւ նուաճել անհնազանդներին այլազգեաց ձեռամբ, իւր թշնամիքը զօրացան նորա դէմ և աքսորել տւին բերդը, ուր ցաւալի մահուամբ վախճանւեցաւ՝ եօթը տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

Պօղոս Բ, Աբարատեան գաւառից՝ Երուսաղէմի առաջնորդ, որ եկել էր Սիս՝ միաբանքը խաղաղացնելու, կարգեցաւ կաթողիկոս Գրիգորի տեղ: Սա խնամք տարաւ եկեղեցւոյ բարեկարգութեանը, բայց ժամանակի հանգամանքները կարճեցրին նորա կեանքը, տասներկու տարի հայրապետական աթոռը վարելուց յետոյ:

Կոստանդին Ե, Վահկեցիին նստաւ կաթողիկոս 1430 թուին. և ինն տարի վարելով աթոռը՝ վախճանեցաւ 1439 թուին: Յովսէփ Գ, Երեցութիւնից նստաւ կաթողիկոս մի տարի: Գրիգոր Թ, Մուսաբեկեանց նստաւ կաթողիկոս 1440 թուին. և որովհետեւ շատ անշքացած էր Սոյ աթոռը և նուազացած եպիսկոպոսներից՝ մի օրւայ մէջ հինգ եպիսկոպոս ձեռնադրեց առանց ընտրութեան: Այս որ լսեցին Հայոց եպիսկոպոսները և առաջնորդները անհաւան դանւեցան այս գործին, ուստի միաբան հաւանութեամբ կամեցան բարեկարգութեան կանոններ սահմանել, և աթոռոյ անշքութիւնը տեսնելով՝ յօժարեցան կաթողիկոսութեան աթոռը փոխադրել Եջմիածին, ուր տարած էին Լուսաւորչայ աջը: Այս պատճառաւ եպիսկոպոսունք, վարդապետք, երիցունք, վա-

նահապետք և այլ թուով իրր եօթն հարիւր, ժողովեցան և պատուով հրաւիրեցին Գրիգոր Մուսաբեկեանցը նոյն ժողովը. բայց նա չհամեցաւ թողուլ Սիւր և զնալ էջմիածին. ժողովականքը միաբան հաւանութեամբ ընտրեցին Կիրակոս վարդապետը Քաջբերունէոյ, որ կոչուում էր Վիրապեցի, օծեցին եպիսկոպոս և կաթողիկոս, և հաստատեցին հայրապետութեան աթոռը էջմիածնայ մէջ 1441 թուին: Եւ այնուհետեւ Սոյ աթոռոյ յաջորդութիւնը թէպէտ և ամենայն ազգիս հայոց օրինաւոր գլուխ չճանաչեցաւ, բայց և Սեղիք չդադարեցրին իւրեանց հակառակաթոռ յաջորդութիւնը առաջ տանել մինչև ցայսօր:

Կիրակոս Ա, Վիրապեցին խնամ տանելով նորոգութեան և բարեկարգութեան հայրապետանոցին, երկու տարուց յետոյ ոմանք խռովարարներից անհաւան դտան նորա ընտրութեանը, այլազգեաց բռնութեամբ հանեցին նորան աթոռից, նորա տեղ կարգեցին Գրիգոր Մակուեցին. վասնորոյ Կիրակոսը առանձնացաւ մի վանք և վախճանեցաւ այնտեղ:

Գրիգոր Ժ, Մակուայ եպիսկոպոսը նստաւ 1443 թուին, և սկսաւ նորոգել հայրապետանոցի շինուածը՝ Կիրակոսից սկզբնաւորածը. բայց տասներկու տարուց յետոյ այլազգեաց բռնութիւնից նեղը ընկած՝ ընտրեց իւր օգնական Արիստակէս վարդապետը, աթոռակալ անուն տալով նորան: Մի քանի տարուց յետոյ երբ կամենում էր Գրիգորից յափշտակել կաթողիկոսութիւնը, Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսը շտապով զնաց Երևան, և այլազգեաց ձեռքով խլեց կաթողիկոսութեան իշխանու-

թիւնը Գրիգորից և Արիստակէսից, և ինքը նստաւ նորա իշխանութեան աթոռը, սակայն մի տարուց յետոյ Գրիգոր և Արիստակէսը միաբանեցնելով միմեանց հետ՝ զրաւեցին այլազգի իշխանը, և Զաքարիայն հանելով իշխանութիւնից՝ դարձեալ ձեռք բերին աթոռը:

Այս ժամանակը 1461 թուին սկսաւ Հայոց պատերազմութիւնը Կոստանդնուպօլսոյ: Սուլթան Մէհմէտ՝ երբեմն խօսելուց Պրուսայու առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսի հետ, լսում էր, որ նա աղօթք ու խնդրուածք է անում առ Աստուած իւր զինուց յաջորդութեան համար. ուստի խոստացել էր նորան թէ երբ Կոստանդնուպօլսը վերառնի՝ ազգի գլուխ կը կարգի նորան, այս պատճառաւ Կոստանդնուպօլսոյ ութ տարի տիրելուց յետոյ՝ կանչեց այնտեղ Յովակիմ եպիսկոպոսին և ուրիշ քանի մի երևելի տուն, և տաւ նոցա բնակութեան տեղի մայրաքաղաքի մէջ և Ղալաթիա:

Արիստակէս Բ, նստաւ կաթողիկոս 1462 թուին, իւր մօտ ունեցով և Գրիգոր Մակուեցին, և երբ մեռաւ Գրիգորը, Արիստակէս առանձին ունէր հայրապետութեան աթոռը չորս տարի:

Սարգիս Բ, էջմիածնայ միաբան նստաւ կաթողիկոս 1466 թուին. և որովհետեւ Գրիգոր կաթողիկոսի ժամանակը թագուն տարել էր Լուսաւորչի աջը Դաւրէթ, և այն տեղից Աղթամար, աշխատեց վերադարձնել կրկին էջմիածին. վախճանեցաւ 1490 թուին՝ քսան և չորս տարի վարելով աթոռը:

Արխտակէս Գ., նստաւ կաթողիկոս Սարգսից յետոյ ութ տարի, յետոյ 1496 թուին՝ Թադէոս Ա., որ աթոռակալ և զործակից էր Արխտակէսի, հինգ տարի:

Այս դարուս նահատակները:

Սուրբ վկայից արիական նահատակութիւնը հնգետասաներորդ դարուս ցաւալի անցքերին մէջ ոչ սակաւ պարծանք բերաւ Քրիստոսի եկեղեցւոյն:

Ստեփաննոս Սեբաստիոյ եպիսկոպոսը, սուտ ամբաստանութեամբ զրպարտեցաւ Պիւրհանէտ իշխանի առաջը երկու արեղայիք հանդերձ: Իշխանը ոչ ինչ յանցանք չգտնելով նոցա մէջ՝ ստիպեց ուրանալ Քրիստոս Աստուած. բայց նորա աներկիւղ դաւանեցին Քրիստոսի Աստուածութիւնը և ամենասուրբ Երրորդութիւնը, և հաստատ մնացին քրիստոնէական հաւատոյ մէջ:

Եւ երբ իշխանը հրամայեց գլխատել եպիսկոպոսը, դահճի սուրը բթացաւ և չկարողացաւ կտրել նորա գլուխը. բռնաւորը չարացաւ սաստիկ և պտտառել տւաւ բերանը, որ անդադար օրհնաբանում էր Աստուած, յետոյ կտոր կտոր արին նորան, և նորա հետ երկու արեղայք նահատակեցան 1387 թուին: Այս իշխանի հրամանաւ այլ ևս երեսուն և վեց արեղայք և նոցա վանահայր Միքայէլ վարդապետը նահատակեցան քրիստոսի հաւատը չուրանալու համար:

Աւագ անունով Բաղիշեցին՝ արուեստով քսակահար, երեսուն տարի մի այլազգի համարուեստաւորի հետ

աշխատում էր Սալմաստում: Երբ այլազգիք տեսան սորան Բաղէշ վերադառնալիս իւր ընտանեաց մօտ, ի սկզբանէ համարելով սորան մահմետական՝ ամբաստանեցին սորա վերայ Ամիրշարաֆի առաջ, իբր թէ Աւագը օտարացել է իրանց հաւատից, և բնակւում է քրիստոնէից հետ: Քննեց դատաւորը և ոչ ինչ յանցանք չգտաւ նորա մէջ, բայց խաժամուժ ամբոխի ստիպմամբ յորդորեց նորան ուրանալ Քրիստոս և աղաւթել մահից. այլ նա սրտանց դաւանելով Քրիստոս Աստուած, կատարեցաւ սրով և քարկոծւելով 1390 թուին: Այլազգի ոմն Մոկաց գաւառում Թամար անունով քրիստոնեայ կին, որ իւր անհամեմատ գեղեցկութեան պատճառաւ կոչւում էր Գոհար: Այլազգին կամեցաւ յափշտակել նորան և նորա մարդուն սպանել: Այս օր իմացաւ Թամարը, շտապով իւր մարդոյ և որդւոյ հետ փախաւ Աղթամարայ կղզին, և քանի մի տարուց յետոյ՝ երբ գնում էր Ոստան քաղաք զործի համար, ծանօթ այլազգիք տեսան նորան, և զըրպարտութեամբ մատնեցին լճիկին ամիրային, և երբ նա կամենում էր արձակել նորան, նորա կին Փաշախաթունը ստիպեց Թամարին ուրանալ Քրիստոս. բայց նա յանձն չառաւ, ուստի և քարկոծւեցաւ 1399 թուին, և նորա մարմինը քրիստոնեայք թաղեցին պատուով:

Այն միջոցին Գանձակում նահատակեցաւ վկայական մահուամբ մի պատանի՝ Խոսրով անունով. նոյնպէս և Մելքիսեթ և Կարապետ վանեցիք սուտ զրպարտութեամբ կատարեցան սրով, նոցա մարմինքը այրւեցան կրակի մէջ 1403 թուին:

Սոյն այս թուին կատարեցաւ և Յովհանէս քա-
հանայն Զմէկաճագ քաղաքէն: Սորա բարեպաշտութեանը
նախանձելով միւս երիցունք՝ մատնեցին նորան այլազգի
իշխանին. և Յովհաննէս քահանայն, որ հաւատացելոց
համար փայտաշէն եկեղեցի էր շինել, բռնաւոր իշխանը
ստիպեց նորան ուրանալ հաւատը. և երբ նա յանձն չա-
ռաւ՝ քանդել և այրել տուաւ եկեղեցին, և Յովհաննէ-
սին դձել տուաւ կրակի մէջ: Թէպէտ աւանդեց նա հո-
գին, բայց մարմինը քնաց անկէզ և անապական, և լոյս
ծագեց երկնքից նորա մարմնոյ վերայ. այս տեսնելով ժո-
ղովորդը՝ պատուով թաղեցին նորան Աստուածածնայ
եկեղեցւոյ մէջ:

1417 թուին մի պարսիկ Յուսուփ անուանով՝ Դաւ-
րէժ քաղաքից՝ որ ի մանկութենէ թշնամի էր քրիստո-
նէից. տեսաւ երազի մէջ Քրիստոսի ահաւոր ատեանը,
ուր սպառնալիք լսեցաւ՝ եթէ քնայ նա անհաւատու-
թեան մէջ, զարհուրեցաւ նա, և քնից արթնացած՝ զը-
նաց Ստեփաննոս վարդապետի մօտ, որ լալու էր կոչ-
ւում, մկրտեցաւ և կոչեցաւ Սահակ: Պարսիկը որ ի-
մացան՝ բռնեցին նորան և չարաչար տանջելով՝ քարկո-
ծեցին և այրեցին մարմինը:

Ին և շատերը տեղ տեղ Պարսից սահմանների մօտ,
որոնք իրանց անձը զոհեցին Քրիստոսի անուան համար,
և նահատակեցան վկայական մահուամբ:

Դ Ա Ր Վ Ե Շ Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը.

Վեշտասաներորդ դարու սկզբին՝ 1503 թուին՝ Ա,
Թադէոսից յետոյ նստաւ կաթողիկոսութեան աթոռը Եջ-
միածին՝ Եղիշէ՝ տասներկու տարի. յետ նորա 1515 թու-
ին Զաքարիա Գ, հինգ տարի. յետոյ 1520 թուին Սար-
գիս Գ, տասն և վեց տարի, յետ նորա՝ 1536 թուին Գը-
րիգոր ԺԱ, հինգ տարի: Սորան յաջորդեց 1541 թուին
Ստեփաննոս Ե, Սալմաստ քաղաքից, բայց կոչւում էր Կոս-
տանդնուպոլսեցի՝ իւր սնունդն ու դաստիարակութիւնը
այնտեղ ստանալուն պատճառաւ:

Ստեփաննոս իւր կաթողիկոսութեան վեցերորդ տա-
րին այլազգեաց ձեռքից վշտացած գոլով, ձեռնադրեց Մի-
քայէլ վարդապետ Սեբաստացին, յանձնեց նորան աթո-
ռը իբրեւ փոխանորդի, ինքն գնաց Կոստանդնուպոլիս և
այլ քաղաքներ Եւրոպիոյ, և յաջողութեամբ վերադար-
ձաւ իւր աթոռը Եջմիածին, ուր պատուով ընկալաւ
Միքայէլ վարդապետը. բայց փոքր միջոցից յետոյ վաթ-
ճանեցաւ՝ ընդ ամէնը տասն և հինգ տարի վարելով կա-
թողիկոսական իշխանութիւնը:

Ստեփաննոսի մահուան յետոյ 1556 թուին նըս-

տաւ կաթողիկոս Միքայէլ վարդապետ Սեբաստացի աթոռակալը որ իւր նախորդի պէս ձեռնադրեց իւրեան աթոռակալ Բարսեղ վարդապետը, և յանձնեց նորան աթոռոյ հոգսը, և ինքն Արարատ երկրի խռովութեանց պատճառաւ առանձնացաւ Սեբաստիա առժամանակ ինչ:

Յետ մահուան Միքայէլի նստաւ կաթողիկոս Գրիգոր ԺԱ, չորս տարի: Սորանից յետոյ Ստեփաննոս Զ, երկու տարի: Յետոյ Թադէոս Բ, որ իւրեան աթոռակալ կարգեց Առաքել վարդապետը և ինքն վշտալի կենօք մեռաւ 1584 թուին, ինն տարի վարելով հայրապետական աթոռը: Նոյնպէս և Առաքել վարդապետ աթոռակալը նստաւ կաթողիկոս երկու տարի: Յետոյ Ժամանակի դառնութեան և այլազգեաց բռնութեան պատճառաւ հրաժարեցաւ իշխանութիւնից, իւր տեղ ձեռնադրեց Դաւիթ անունով վարդապետը, և ինքն առանձնացաւ մեծաստան մինչև իւր մահը:

Դաւիթ Ե, 1586 թուին նստաւ կաթողիկոս. բայց սա ևս այլազգեաց հարկապահանջութիւնից տանջւելով իւր կաթողիկոսութեան եօթներորդ տարին (1593) իւրեան օգնական և աթոռակալից կարգեց Մելքիսեթ Եպիսկոպոսը, որպէս զի թեթեւանայ աթոռոյ պարտուցը անտանելի ծանրութիւնից, բայց երկուքն ևս միանգամայն ընկան անտանելի ծանրութեանց տակ, որոց անցքը տես հետևեալ դարու մէջ:

Այս դարուս նաճատակները:

Հայաստան երկրի սահմանները Պարսից և Օսմանեան պատերազմաց պատճառաւ համարեա բոլորը ոտնակոխ եղան, և նոցա բնակիչքը իւրեանց ամէն ստացուածքից զրկւելուց յետոյ՝ երբ ստեղծւեցին նոցա ուրանալ հաւատքը, յօժար կամօք յանձն առան մահը՝ քանթէ ուրանալ Քրիստոս Աստուած: Անթիւ նահատակաց հետ յեշուում է Յակոբ Արժիշեցին, որ մինչդեռ երեսուն տրեղայիւք եկեղեցւոյ մէջ կատարում էր պատարագի խորհուրդը, վրայ հասան Պարսիկք և անխնայ կոտորեցին ամենին, և նոցա մարմինները եկեղեցւոյ հետ միասին այրեցին: Նոյն ժամանակը Ամիդ քաղաքում հրով կատարւեցաւ խաչատուր կողբացին: Եղեսիա՝ Թորոս վկայն. որպէս և Սեբաստիա արեղայ ոմն հայրապետ անունով այրւեցաւ հրով: Նոյնպէս նահատակւեցաւ նոյն քաղաքում ոմն Թադէոս անունով: Թող և այլ շատերը, որոց տեսնում ենք այս դարուս պատմութեան մէջ:

ԴԱՐ ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Նախընթաց դարուս վերջին տարիներին մէջ յիշեցինք Դաւթի և Մելքիսեթ եպիսկոպոսի աթոռակցութիւնը, իբր միմեանց օգնականք և ձեռնտուք պարտուց վճարման հնարը գտնելու պատճառաւ, որով ծանրաբեռնած էր Եջմիածնայ աթոռը:

Մելքիսեթ կաթողիկոսը տագնապելով պարտքատերերից և Պարսից հարկապանջների բռնութիւնից, զընաց Կոստանդնուպօլիս՝ որ ազգի իշխաններից օգնութիւն գտնէ, որոնք սիրով ընկալան, և քանիմի ամսից յետո հրաժերեցնելով կաթողիկոսութիւնից՝ մայրաքաղաքի պատրիարքութեան պատիւը տւին նորան. բայց նա մի տարուց յետոյ հրաժարելով պատրիարքական աթոռից՝ դարձաւ կրկին Եջմիածին, ուր գտաւ Դաւիթ կաթողիկոսին և միմեանց համաձայնութեամբ բնակւեցան մի անձանօթ տեղ:

Այն ժամանակը, 1600 թուին, երբ սով և սրածութիւն և աւազակութիւնը յաճախելէր արևելեան Հայոց երկրում, աթոռոյ պարտքը աւելի ծանրանալով, Դաւիթ և Մելքիսեթ կաթողիկոսակիցը հրաւերեցին Ն-

դեսացի Սրապիոն անունով եպիսկոպոս Ամիգ քաղաքի առաջնորդը. որ ընդունի կաթողիկոսութեան պատիւը, եթէ յանձն կառնի վճարել աթոռոյ պարտքը: Սրապիոն եպիսկոպոսը գնաց Զուլայ քաղաք, ուր ժողովածէին Դաւիթ և Մելքիսեթ և այլ եպիսկոպոսունք, և երբ խօսք ընկաւ աթոռոյ անտեսութեան վերայ, Մանուէլ եպիսկոպոսը խռովութիւն գծեց ժողովականաց մէջ, և ցրուեցան ամէնքը առանց ինչ օգտակար գործ զլուս հանելու: Բայց Սրապիոն եպիսկոպոսը մնալով Զուլայ՝ իւր բարի վարուք և քաղցրաբան քարոզութեամբ հաւանական թուեցաւ ամենին, վասնորոյ միաբանեցան Զուլայի իշխանք և ժողովողականք և տարան նորան Եջմիածին, ուր հաւանութեամբ ժողովոյ եպիսկոպոսաց և վարդապետաց ձեռնադրել տուին կաթողիկոս, անունը գնելով Գրիգոր ԺԳ: Սրապիոնի կաթողիկոսութեան լուրը հասաւ Դաւթին և Մելքիսեթին, որ նստած էին Ստաթեու վանքը, և աթոռոյ պարտքը նոցա անունով էր, մտածեցին գնալ Ասպահան, և ժողովողոց օգնութիւն խնդրել. Դաւիթը մնաց հայաստան, իսկ Մելքիսեթ գնաց Ասպահան. ներկայացաւ Պարսից Շահաբաս թագաւորին. իսկ նա կեղծուպատիր խօսքերով մխիթարեց նորան և տեղեկացաւ Հայոց երկրի ելումնուտին զօրք ժողովեց և գիւմեց գէպի Հայաստան, առաւ Երևան քաղաքը, կանչեց իւր մօտ Դաւիթ և Մելքիսեթ կաթողիկոսներուն՝ ստիպեց վճարել իւրեանց ունեցած պարտքը: Նօքա սակաւ ինչ փող գտան տոկոսով, և ազատուեցան նորա ձեռքից: Նոյնպիսի նեղութիւն հասցրուց թագաւորը և Սրապի-

նին Զուղայում, դառն տանջանքով մերկացրեց նորան բոլոր ստացուածքից, որով փնասեցաւ նորա առողջութիւնը և վերադարձեալ Ամիդ քաղաք, վախճանեցաւ իւր կաթողիկոսութեան երկրորդ տարին:

Այն ժամանակը 1605 թուին, երբ Օսմանցիք պատերազմում էին Պարսից դէմ՝ Շահաբաս թագաւորը հըրամայեց իւր զօրաց գերի վարել նորա Հայերը Պարսկաստան. նոցա հետ գերի գնացին Դաւիթ և Մելքիսեթ կաթողիկոսները և եպիսկոպոսներ և վարդապետներ իբր տասնէւչորս հազար գերդաստանք. ազնուականք և հարուստները բնակեցան Ասպահանայ հանդէպը, ուր շինեցին իւրեանց համար եկեղեցիք և վանքեր ու աներ, և քաղաքը կոչեցին Նոր Զուղայ:

1610 թուին Սաղմոսավանից առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը գտաւ իւրեան գործակից տէր Վիրակոս Տրապիզոնցին, որոյ հետ նորոգեցին աւերած վանքերը, աշակերտներ ժողովեցին, և կրօնաւորական կենաց բարեկարգութեան կանոններ սահմանեցին, որով ծաղկեցան շատ նշանաւոր մարդիկ:

1611 թուին, երկու լատին կրօնաւորք հանդիպելով Մելքիսեթ կաթողիկոսին՝ հրաման առին Հայաստանի ուխտատեղիք մանգալու. և Հովհիմի ուխտատեղից հանեցին Հովհիմի կուսին մասունքը: Իսկոյն յայտնուեցաւ նոցա գողութիւնը, և պատժուեցան, բայց քանի մի կտորտանք մնացին դուս և ցրուեցան զանազան տեղեր: Մելքիսեթ կաթողիկոսը թագուն փախած էր Նրեան Շահաբաս գերութիւնից: Սա 1620 թուին աղքատութեան ցաւից

տազնապելով՝ Մովսէս վարդապետը ձեռնադրեց եպիսկոպոս, և մեռն օրհնելու իշխանութիւն տաւ նորան Եջմիածնում, որպէս զի ժողովրդոց հաւաքելուց օգնութիւն ինչրի. բայց երբ տեսաւ որ իւր ակնկալութիւնը ի զուր անցաւ, հրաժարեցաւ կաթողիկոսութիւնից, ձեռնադրեց իւր եղբօրորդի Սահակ եպիսկոպոսը, և ինքն զնայ Կոստանդնուպօլիս. այնտեղ էլ ոտի տեղ չգտնելով զնայ Լեհաստանու իլով քաղաքը, ուր հայ ազգի ժողովուրդները սիրով ընկալան նորան: Այնտեղ 1624 թուին ընդդէմ ժողովրդոց կամաց ձեռնադրեց եպիսկոպոս Նիկողայոս Թորոսովելը՝ որ անհանդարտ բռնաւորութեամբ պատճառ եղաւ պէս պէս խռովութեանց և Լեհաստանի Հայերը ի պապականութիւն դարձուց: Իսկ Մելքիսեթ կաթողիկոսը զնայ Կամենից քաղաքը, ուր և վախճանեցաւ երեսուն և մի տարի վարելով հայրապետական իշխանութիւնը:

Սահակ Գ, եղբօրորդին Մելքիսեթի 1624 թուին ընկաւ նոյն տառապանաց մէջ՝ Պարսկաց հարկապահանջողութեամբը, և թագուն զնայ Օսմանեան տէրութեան վան քաղաքը, ուր մնաց հինգ տարի: Այն միջոցին բոլոր ազգը միաբանելով ընտրեցին Մովսէս Գ, Եջմիածնայ փակակալը, և կարգեցին կաթողիկոս 1629 թուին: Եւ որովհետեւ մեռած էր Շահաբասը, և յաջորդել էր նորան Շահսէֆին, Հայոց իշխանք կանչեցին Մովսէսին Ասպահան, և թագաւորից առին նորա հաստատութեան հրովարտակը, միանգամայն և ազատութիւն տարեկան արքունի հարկաց,

որով էջմիածինը ազատեցաւ պարտքից, և Մովսէս կաթողիկոսը դարձաւ իւր աթոռը:

Սահակը 1630 թուին լսելով Մովսէսի կաթողիկոսանալը, աշխատեց իւր կաթողիկոսութիւնը վարել Օսմանեան տէրութեան մէջ, բայց չյաջողեցաւ. ուստի խոնարհելով Մովսէսի առաջը՝ հրաժարեցաւ աթոռից և առանձնացաւ էջմիածին մինչև իւր մահը:

Այնուհետև Մովսէսը անկասկած մնալով՝ սկսաւ նորոգել և վայելչացնել էջմիածնայ շինուածները, սահմանեց կարգ և կանոն միաբանից մէջ Աստուածային պաշտմանց ժամանակը որոշելով համաձայն նախնի հարց կանոնադրութեանը: Մեծ դպրատուն շինեց Յովհաննայ վանքում, և շատ բարեկարգութիւններ գծեց Հայաստանի մէջ: Վախճանեցաւ 1633 թուին, հայրապետական աթոռը վարելով երեք տարի և չորս ամիս:

Փիլիպպոս վարդապետ Աղբակեցի, բարեկրօն և խաղաղասէր, աշակերտ Մովսէսի, ընտրեցաւ կաթողիկոս 1633 թուին, և հոգ տարաւ էջմիածնայ աւերած շինութիւնները նորոգելու: Այն ժամանակը մեծ խռովութիւն կայր Կոստանդնուպօլիս պատրիարքական աթոռը միմեանց ձեռից խլելու պատճառաւ: Փիլիպպոս կաթողիկոսը դնաց առաջ Նրուսաղէմ, ուր ժողով եղաւ եպիսկոպոսաց և վարդապետաց երկու աթոռոց մէջ սիրոյ և բարեկարգութեանց համար, յետոյ 1652 թուին Պօլիս, ուր ազդու քարոզութեամբ խաղաղութիւն գծեց, նոր պատրիարք կարգեց նոցա համար և դարձաւ էջմիածին: Եւ երբ հանդարտեցաւ արտաքին զբաղմունքից, հիմնարկեց առ-

ճարի մեծ զանգակատունը, բայց չաւարտած՝ վախճանեցաւ 1655 թուին, քսան և երկու տարի վարելով կաթողիկոսական աթոռը:

Յակոբ Դ, Զուղայեցի ընտրեցաւ էջմիածնում, և օծաւ կաթողիկոս 1655 թուին: Սա իւր նախորդից սկսած շինուածները վերջացրեց, և շատ զարդեր աւելցրեց հայրապետանոցին: Պայծառացրեց հայերէն գրոց տպագրութիւն Մատթէոս սարկաւազի Ծարեցոյ ձեռամբ, որ զընաց Ամստերդամ, և ճարտար արուեստաւորաց ձեռքով գեղեցկացրեց գրոց ձեւը: Սորա օրը կրկին շփոթ և խռովութիւն ընկաւ Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան աթոռոյ վերայ, մինչև անգամ աշխարհականք գրաւեցին իւրեանց այն պատիւը տեղակալ անուամբ:

1656 թուին Նղիազար անթապցին որ երբեմն Կոստանդնուպօլսոյ պատրիարք էր եղել՝ Նրուսաղէմայ պատրիարքութեան փոխանորդ կարգւեցաւ: Սա տնտղելով սուրբ Յակոբայ յիշատակարանները, սկսաւ նորանով առաջին անգամը կռիւ տալ Յունաց դէմ, որոնք կամենում էին զրաւել Հայոց ուխտատեղիքը, ազատեց Յունաց ձեռքից սուրբ Յակովբը, ամենայն զօրութենէ աշխատեց 1663 թուին ստանալ ոչ միայն Նրուսաղէմի պատրիարքութիւնը, այլև Օսմանեան տէրութեան Հայոց կաթողիկոսութեան պատիւը, բայց չյաջողեցաւ, վասնզի Նրուսաղէմայ Աստուածատուր պատրիարքը մերժեց նորան:

Յակովբ կաթողիկոսը լսելով Նղիազարու անկարգ արարողութիւնը՝ նամակ գրեց զանազան տեղեր զգուշա-

նալ և չբաժանել Ղուսաւորչի աթոռը: Յետոյ զնաց Կոստանդնուպօլիս ազգային խռովութիւնը խափանելու: Եղիազարը տեսնելով թշնամեաց հակառակութիւնը, ծածուկ հնարքով զիմեց Ադրիանուպօլիս Եպարքոսին, կրկին նորոգել տւաւ կաթողիկոսութեան հրովարտակը և դարձաւ Պրուսա քաղաք. բայց և այնտեղ ևս հակառակութիւն կրելով՝ զնաց Կոստանդնուպօլիս և շատերից ընդունեցաւ իբրեւ կաթողիկոս: Յակոբ կաթողիկոսը երբ 1666 թուին զնաց Ադրիանուպօլիս, խափանել տւաւ Եղիազարու իշխանութեան հրովարտակը և դարձաւ Եջմիածին:

Սորանից յետոյ երբ դարձեալ նորոգւեցաւ խռովութիւնը Կոստանդնուպօլսոյ և Երուսաղէմայ պատրիարքական աթոռոց վերայ՝ Յակովբ կաթողիկոսը միւսանգամ զնաց Պօլիս 1679 թուին. գրեց և Եղիազարին անյապաղ գալ այն տեղ և խաղաղութիւն գտնել այն երկու աթոռոց մէջ. բայց մինչև նորա գալը հիւանդացաւ Յակովբ կաթողիկոսը, մեռաւ և թաղեցաւ Պերայի գերեզմանատան մէջ, հայրապետական իշխանութիւնը վարելով քսան և հինգ տարի: Այս որ լսեց Եղիազարը գընաց Երուսաղէմ և համարձակ սկսաւ վարել կաթողիկոսական իշխանութիւնը Օսմանեան տերութեան հայ հըպատակաց վերայ:

Յետ մահուան Յակոբայ, Եջմիածնայ աթոռը պարապ մնաց երկու տարի, մինչև այն աթոռոյ միաբանից հաւանութեամբ և Երեանայ Պարսից իշխանին հաճութեամբը հրաւիրեցին Եղիազարը Եջմիածին՝ իշխել Հա-

յոյ աթոռոյն: Ուստի զնաց Կոստանդնուպօլիս, հրովարտակ առաւ և զնաց Եջմիածին, ուր երեք փոքր զանգակատուն կանգնացրեց, Զորագեղոյ եկեղեցին նորոգեց: Եղիազար կաթողիկոսը ինն տարի վարելով հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ 1691 թուին:

Յետ մահուան Եղիազարու ընտրեցաւ նորա աշակերտ Նահապետ Եղեսացի, որ տասն և չորս տարի վառեց կաթողիկոսական աթոռը, և վախճանեցաւ 1705 թուին:

ԴԱՐ ՈՒԹ ԵՒ ՏԱՍՆ ԵՐՈՐԴ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցւոյ վիճակը:

Նահապետ կաթողիկոսի մահուան յետոյ՝ Էջմիածնայ աթոռը մի տարի աւելի պարապ մնաց մինչև նորա յաջորդ Աղէքսանդր Զուղայեցւոյ ընտրութիւնը, որ 1707 թուին ազգի հաւանութեամբ կարգեցին կաթողիկոս:

Դառն վիշտ և անպատմելի տխրութիւն էր Աղէքսանդր կաթողիկոսի սրտին Կոստանդնուպօլսոյ պատրիարքական աթոռոյ խռովութիւնը, որոյ հոգսից հիւանդացաւ և 1714 թուին վախճանեցաւ, ութ տարի վարելով հայրապետական աթոռը:

Աղէքսանդր կաթողիկոսի մահուան յետոյ 1715 թուին ընտրեցաւ կաթողիկոս Աստուածատուր Համատանեցին: Սա հոգս տարաւ աթոռոյ բարեգարդութեան. ազնիւ քարերով և գեղեցիկ զարդերով Միածնի իջման սեղանը զարդարեց, և ուրիշ պիտանի նորոգութիւններ արաւ որքան որ կներէր վրդովեալ ժամանակը, երբ Դահմազղուլի խանը սասանեցրուց արեւելքը, նորա ահից չէր կարողանում նստիլ Էջմիածին, այլ աստանդական շրջում էր գիւղերը: Յետոյ 1725 թուին, երբ Օշական գիւղն էր՝ դուս եկաւ լուսնոյ խաւարումը տեսնելու, կտուրից ցած ընկաւ և մեռաւ, և մարմինը թաղեցին Ս. Հռիփ-

սիմեայ վկայարանին մէջ: Տասը տարի վարեց հայրապետական իշխանութիւնը:

Կարապետ Ուլնեցի Գաղատիոյ արքեպիսկոպոսը ընտրեցաւ և օծաւ կաթողիկոս ՚ի Կոստանդնուպօլիս 1725 թուին, և քանի որ այն տեղ էր ժողով արաւ և երեք կանոն սահմանեց Երուսաղեմայ աթոռոյ բարեկարգութեան համար, յետոյ գնաց Էջմիածին, և չորս ամսից յետոյ վախճանեցաւ:

Աբրահամ Բ, Վանեցին կարգեցաւ կաթողիկոս Կարապետի տեղ 1730 թուին: Սա նորոգութիւններ արաւ Էջմիածնայ շինուածոց, երկու խորան շինեց մեծ տաճարին մէջ, մինը Լուսաւորչայ անուամբ և միւսը Յակոբայ Մծբնայ, և չորս տարի և ինն ամիս վարելով հայրապետական աթոռը վախճանեցաւ:

Աբրահամ Գ, Կրեոացի՝ Թէքիրտաղու առաջնորդ, Աբրահամ կաթողիկոսի մահուան ժամանակը Էջմիածին պատահելով՝ միաբանից հաւանութեամբ կարգեցաւ կաթողիկոս 1734 թուին: Սա Դահմազղուլի խանէն հրաւիրեցաւ Մուղան դաշտը, ուր նորա բանակն էր, պատուեցաւ նորանից և շատ պարգևներով դարձաւ Էջմիածին, ուր իբր երեք տարուց յետոյ վախճանեցաւ 1737 թուին:

Ղազար Զահկեցի՝ Զմիւռնիոյ առաջնորդը, ընտրեցաւ, գնաց Էջմիածին և օծաւ կաթողիկոս, յետոյ զրնաց Պարսկաստան Շահադամազ խանէն հաստատութիւն առաւ և վերադարձաւ Էջմիածին: Սա շահին հրամանին

ընդդէմ ինչ գործելով ընկեցաւ աթոռից, և նորա փոխանորդ կարգեցաւ Յովհանէս վարդապետ՝ Գողթան առաջնորդը: Երբ Շահազմազայ թուռն Շահրուզը եկաւ Երևան և Եջմիածին, Յովհաննէս վարդապետը և աթոռոյ միաբանք աղաչեցին միջնորդել առ Շահն որ կրկին հաստատի Ղազար կաթողիկոսը, և Յովհաննէս վարդապետը ուղարկի իւր վիճակը. բայց Շահազմազը տուգանաց տակ դձեց նորան, նա վճարեց մի մասը, և մնացածի համար պատրաստեց եկեղեցական զարդերից վեց բեռը, յանձնեց հարկապահանջին, և ինքն խոյս տուաւ դէպ ի կարին: Հարկապահանջը նեղելով ոմանց միաբաններին մընացած գումարի համար՝ առաւ բեռները և տարաւ Շահին, միաբանք խնդիր մատուցին Շահին, և նա ընդունելով նոցա աղերսանքը՝ պատժեց հարկապահանջը, բայց որ եկեղեցական անօթները նոյնութեամբ վերադարձուց աթոռը և հրամայեց միաբանից ուրիշ արժանաւոր անձ մի ընտրել նորա տեղ: Այն միջոցին Ղազարու և միաբանից մէջ շփոթ ընկաւ, ուստի թուղթ գրեցին Կոստանդնուպօլիս, և նոցա հետ միաբանելով Ղազար կաթողիկոսը ուղարկեցին Սեան և նորա տեղ կարգեցին Կարնոյ առաջնորդ Պետրոս վարդապետը, որ կոչուումէր Քիւթիւր: Տասն ամսից յետոյ Ղազարու եղբայր տէր Յովսէփ քահանայն զնաց Դաւրէժ Իպրահիմ շահի մօտ, նորա հրամանով վերադարձուց Ղազարին իւր աթոռը, և Պետրոս վարդապետին ուղարկեցին Ջահուկ բանտը գրին: Ղազար կաթողիկոսը ընդ ամէն վարեց հայրապետական աթոռը տասներեք տարի և վախճանեցաւ 1751 թուին:

Մինաս ակնեցին ճարոնոյ առաջնորդը կարգեցաւ Կոստանդնուպօլսոյ պատրիարք, Ղազարու մահուան յետոյ 1751 թուին ընտրեցաւ, եկաւ Եջմիածին և օծաւ կաթողիկոս: Մի տարի և ութը ամիս վարելով աթոռը՝ վախճանեցաւ 1753 թուին:

Աղէքսանդր Բ, Կոստանդնուպօլսեցի, 1754 թուին նստաւ կաթողիկոս. մնաց մի տարի և ինն ամիս և վախճանեցաւ 1755 թուին:

Յակոբ Ե, Շամախեցի նստաւ կաթողիկոս 1759 թուին, և երեք տարի և եօթն ամիս վարելով աթոռը՝ վախճանեցաւ 1763 թուին:

Սիմէոն Երևանցի ընտրեցաւ և օծաւ կաթողիկոս, շաա օգտակար շինուածներ արաւ, թղթի գործարան և տպարան բացաւ և օգտակար զրեանք տպագրել տուաւ, արդիւնաւոր աշխատութեամբ տասն և եօթն տարի վարեց հայրապետական աթոռը՝ վախճանեցաւ 1780 թուին:

Ղուկաս Կարնեցի հաւանութեամբ աթոռոյ միաբանից և պատուաւոր անձանց Հայոց Երանայ ընտրեցաւ և օծաւ կաթողիկոս 1780 թուին: Զաքարիա Կոստանդնուպօլսոյ պատրիարքը և ոմանք նորա կուսակիցներին լսելով՝ վրդովեցան նորա ընտրութեան վերայ. ուստի Ղուկաս կաթողիկոսը աւելի քան զմի տարի չնստաւ հայրապետական աթոռը, և սորանով Կոստանդնուպօլսեցւոց միտքը շննելով՝ ընդունեցաւ Օսմանեան զրանէն հրովարտակ 1781 թուին, և տասն և ինն տարի վարելով կաթողիկոսական աթոռը՝ վախճանեցաւ 1799 թուին:

Եկեղեցական մատենագիրք :

Այս յետին դարերումս ուսման եռանդն շատ պահասեցաւ մեր ազգի մէջ, այնպէս որ հազիւ թէ յիշատակութեան արժանաւոր կ'համարուին սորա .

Ստեփաննոս վարդապետ Լեհացի, որ Յակովբէ կաթողիկոսի հրամանաւ Դիոնեսիոսի արիսպագացոյ զիրքը և Յովսէպոսի Հրէից պատերազմներուն պատմութիւնը թարգմանեց հայերէն :

Առաքել վարդապետ Դաւրիժեցի, շարադրեց մեր ազգի և եկեղեցոյ անցքերը 1601 թուից մինչև 1662 թիւը :

Ոսկան վարդապետ Երևանցի և Ղուկաս Վանանդեցին շատ աշխատեցան ծաղկեցնել մեր ազգի մէջ տըպագրութիւնը և մեծամեծ օգուտներ բերին զանազան գրեանց տպագրութեամբ :

19

Դ Ա Ր Ի Ն Ն Ե Ի Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

Կաթողիկոսունք և մեր եկեղեցոյ վիճակը :

Ղուկաս կաթողիկոսի մահուան յետոյ մինչդեռ Էջմիածնայ միաբանք Կոստանդնուպօլսոյ ազգայնոց հետ նոր կաթողիկոսի ընտրութեան խորհրդոյ մէջ էին, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան Երկայնաբաղուկ, Ռուսաստանի նուիրակը, հաւանութեամբ տէրութեան Ռուսաց և Օսմանեան ընտրեցաւ կաթողիկոս ամենայն Հայոց : 1800 թուին ուղևորելով դէպի Էջմիածին, երբ հասաւ Թիֆլիզ, մեծահանգէս փառքը ընդունեցաւ յազգայնոց . բայց մի քանի օրուայ մէջ վախճանեցաւ, և մարմինը յուղարկաւորեցաւ Էջմիածին :

Յովսէփայ մահուան լուրը բերաւ Պօլիս Դաւիթ եպիսկոպոս Ենդեթեցին Էջմիածնայ միաբանը . ուստի Հայոց իշխանք ընտրեցին կաթողիկոս Կոստանդնուպօլսոյ պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսը : Դաւիթ եպիսկոպոսը շտապով վերադարձաւ Էջմիածին և ինքն ձեռք բերաւ կաթողիկոսութեան աթոռը, որով վէճ եղաւ Դաւիթի և Դանիէլի մէջ երկու տարւոյ չափ, մինչև որ ազգիս իշխանաց ձեռնադրութեամբ զօրացաւ Դանիէլը, նրա տաւ կաթողիկոսութեան աթոռը 1802 թուին, և ութ

տարի վարեց կաթողիկոսական իշխանութիւնը: Յետ մահւան Գանիէլի 1810 թուին ընտրեցաւ կաթողիկոս Եփրեմ՝ արքեպիսկոպոս Աստրախանայ առաջնորդութենէն՝ եկաւ Էջմիածին և օծաւ կաթողիկոս ամենայն Հայոց: Պարսից խաներուն խորամանկ հնարքները և իւր առատաձեռնութիւնը ծանր պարտուց տակ զձեցին նորան. և տեսնելով որ օրքան զօր բազմանում է պարտքը՝ զիմեց Ռուսաց տէրութեան սահմանը և գնաց բնակեցաւ Շուշի քաղաքը: 1822 թուին զնաց Հաղբատ, ուր մնաց 1826 թիւը, և յետոյ այնտեղեց եկաւ Թիֆլիզ. և երբ Ռուսաց տէրութիւնը նուաճեց Պարսից և Էջմիածնայ աթոռը, և Երևանայ բոլոր սահմանները զձեց իւր հովանաւորութեան տակ, այնուհետև գնաց իւր հայրապետական աթոռը Էջմիածին, բայց ծերութեան և տկարութեան աղաղաւ 1830 թուին հրաժարեցաւ կաթողիկոսական իշխանութենէն, հրաժարելուց յետոյ ապրեցաւ այլևս չորս տարի և վախճանեցաւ 1835 թուին:

Եփրեմ կաթողիկոսի մահւան յետոյ ընտրեցաւ 1831 թուին կաթողիկոս ամենայն Հայոց Յովհաննէս Բ, Կարբեցին, առաջնորդն վրաստանի, որ տասն և մի տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ վախճանեցաւ 1842 թուին:

Յետ մահւան Յովհաննէս Կարբեցւոյ, 1843 թուին հաւանութեամբ բոլոր ազգայնոց և հաստատութեամբ Տէրութեան Ռուսաց՝ ընտրեցաւ կաթողիկոս ամենայն Հայոց Ներսէս Ե, Աշտարակեցի առաջնորդը Նախիջևանու և Բեսարաբիոյ, որ յայտնի էր ազգիս մէջ իւր հանձա-

րովը, մեծագործութեամբ, գործունէութեամբ և ուրիշ զանազան անձնական կատարելութեամբ: *) Տասն երկու տարի վարելով կաթողիկոսական աթոռը՝ վախճանեցաւ 1857 թուին:

Նորա մահւան յետոյ 1858 թուին ընտրեցաւ և 1859 թուին օծաւ կաթողիկոս Մատթէոս Ա, որ երբեմն պատրիարք էր Կոստանդնուպօլսոյ, կաթողիկոսական իշխանութիւնը եօթը տարի վարելուց յետոյ՝ վախճանեցաւ 1865 թուին:

Յետ նորա 1866 թուին ընտրեցաւ առաջնորդն վիճակին Պուրսայի Գէորգ Գ, Կոստանդնուպօլսեցի, այժմու վիճաբաւ կաթողիկոսը, որ նոյնպէս պատրիարք և զաժ էր Կոստանդնուպօլսոյ: 1867-ին Մայիսի 20-ին օծաւ կաթողիկոս Սուրբ Էջմիածնայ տաճարին մէջ. և այնու-

*) Սա իւր առաջնորդութեան ժամանակ թիֆլիզում հիմնեց հոյակապ ուսումնարան, որ այժմ կոչւում է Ներսիսեան ազգային հոգևոր դպրոց, ուր մինչև ցայսօր մատակարարւում են դանազան դիտութիւնք և լեզուք. նոյնպէս և տպարան և այլ մեծամեծ շինուածներ: 1826 թուին, պարսից պատերազմին բաւական ձեռնտուութիւններ արաւ Ռուսաց զօրաց, և շատ աշխատանք կրեց սուրբ Էջմիածնայ աղատութեան համար և իւր Կաթողիկոսութեան ժամանակը կրեց լիճ շինել տուաւ սրբատաշ բարից Ղազարապատին հանդէպը, և լծին առաջ տնկել տուաւ մեծ անտառ դանազան ծառոց և պտղոց, որ բաւականին մաքրում և թեթեւացնում է Էջմիածնայ թանձր օդը:

Հետև բոլոր մտադրութիւնը դարձրեց Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան, ազգային ուսումնարանաց ծաղկելուն և Ս. Եջմիածնայ շինուածոց նորոգութեան: Որոյ անխոնջ ջանիցը յաջողութեան և պատուական կենաց երկարութիւն մաղթեմք համօրէն որդիքս հարազատք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ:

20

Ծանօթ. Հայոց գրականութիւնը:

Ա, Մեր գրականութիւնը մնաւեցաւ առաջ 302 թուին մեր ազգի քրիստոնէութեան սկիզբից, երբ կրակ տեցան կռքատները, որ տեղ որ նախնեաց սովորութիւն էր պահել ամեն տեսակ մատեանները և հնութեանց գանձարանները: Երկրորդ 381 թուին, ուրացող Մերութանը կրակ դձեց այն ժամանակը Հայաստանում եղած բոլոր ցոյն և Ասորի գրեանքը:

Բ, Հայոց անթիւ գրեանք կորան ցունաց, Պարսից և Հազարացոյց ձեռքով գաւառաց, քաղաքաց և վանուց անդադար աւերածութեամբ, սրածութեամբ և հրաձգութեամբ, որպիսի էին երկրորդ ցաղկերտի թաղաւորութեան ժամանակը 439—457 թուերին. Սրբոց Վարդանանց պատերազմներումը Պարսից հետ Վասակայ ուրացողի չարութեամբ. Հայոց տիգրանակերտ քաղաքի կործանելուց 503 թուին:

Հազարացոյց ասպատակելուց Հայաստանը 640—650 թուերին. Հերակլի, երկրորդ ցուստինիանոսի և Թէոփիլոսի ցունաց կայսերաց Հայաստանի շատ քաղաքներ աւերելուց 620—686 —և 829 թուերին:

Գ, Նախնի գրուածներից շատերը կորան այս միջոցին. Ա, Դուին քաղաքի կործանելուց երկու անգամ երկրաշարժութիւնից 861—894 թուերին: ցուսուփ ոստիկանի Հայաստան աւերելուցը քսան տարի 916—930. դարձեալ 10 տարի Սկիւթացոյց ձեռքից 1048—1058. Անի քաղաքը քանդելուց Ալփասլանից 1064 թուին. և Մուղալ թաթարներից 1239 թուին. Եղեփա քաղաքը քանդելուց Մահմետականներից 1144 թուին, ուր պահած էր նախնեաց գրեանց անդին դիւանը. Բաղաբերդը կործանելուց Խամայեղացոյց ձեռքից 1170 թուին. ուր տան հազար աւելի գրեանք կորան, Ստեփաննոս Օրպելեանի պատմելովը. Նիկիկիոյ ընդհանուր կոտորուածքին Թաթարների, Թուրքերի և Եղիսպապոցոյ ձեռքից 1192. 1322. և 1335 թուերին:

Հերձուածներ:

Մեր եկեղեցւոյ հաւատոյ և ձէների միութիւնը բաժանեցին առաջինը մէկ Դոսիթ անունով անանուանելի եպիսկոպոսը, որ 1114 թուին Աղթամարայ կղզում ապօրինաւոր կաթողիկոս օծեցաւ, որից մինչև ցայսօր շարունակուեմն հակառակաթոռ և սուտանուն կաթողիկոսներ: Երկրորդ Թոնդրակեցի աղանդոյ առաջնորդները, որոց զխաւորները յիշումեն, Սըմբատ, Թորոս, Անանկ, Արքայ, Սարգիս, Վահան, Գեառ, Վիրեղ. Յովսէփ, Ղազար, և այլք, որոց չարութիւնը ոմանց Հայոց մէջ տարածելով 200 տարւոյ

չափ 840—1050 թուերին. վերջը ոչնչացաւ: Երբորդ ոմանք նիւիկեցի կաթողիկոսներից և թագաւորներից, մարմնաւոր օգուտը և աշխարհի շահը և նըպատակը ունենալով յօժարեցան փոփոխել մեր նախնեաց հաւատոյ և ծէսերի մասունքները, համաձայնելով Հռովմէական Պապադատան եկեղեցոյ հետ. բայց վերին նախախնամութեամբը զրկեցան ապօրէն յոյսից և ի զուր անցկացան նոցա բոլոր ջանքը: Զորրորդ եղան էլի ոմանք հայրենատեաց մեր եկեղեցոյ խորթ որդիք, որոնք իւրեանց կարճամտութեամբ տրաւտաւոր կարծելով մեր հաւատքը և կրօնը, բոլորովին փոխեցան դէպ ի Նախնացոց եկեղեցին և սկսան Հայերին էլ շրջել դէպ ի նորանց ծէսերը, սոքա դորձքով հերձուածող և բաժանիչ գոլով, սուտ անունով միարան կամ Ունիթոսներ կոչեցին իրանց, որոց գլխաւորքն էին, Բարթողիմէոս Նաթին եպիսկոպոս, Յովհան Գանեցին, Ներսէս պաղոն, Սիմէոն Բէկ, Մարգար, Յովհաննէս, Հայրապետ, Գրիգոր, Կարապետ, և այլք. որոց մոլորութեան աղանդը հատուկօր տարածելով նիւիկիս և Հայաստան 200 տարւայ չափ 1330 թուից ց1520, յետոյ ջնջւեցաւ բոլորովին:

Մեր եկեղեցոյ աճումն:

Աճեց մեր եկեղեցին նոր անդամոց աւելնալովը, երբ 1166 թուին արևորդի կոչած բաղմաթիւ հեթանոս հայերը դարձան ապաշխարութիւնով և մկրտութիւնով իւրեանց մօր ծոցը. նոյնը արին ոմանք և Պապիկեան և Թոնդրակեցոց աղանդաւորներից:

Նուագումն:

Մեր եկեղեցին նուագեցաւ առաջ յիշեալ Թոնդրակեցի և Ունիթոս աղանդաւորների մեղանից բաժանելովը, երկրորդ, Կոստանդին Տուքիծ, Սահակ Փիսիկ, Ալէքս, Անկեղոս և ուրիշ յունաց կայսերների և մետրապոլիտների բռնապետութեամբը (մանաւանդ 1060—1188, 1197 թուերին, որոնք տեսակ տեսակ նեղութիւններ տալով իւրեանց սահմաններումը բնակած շատ Հայերին դարձրին դէպ ի իրանց կրօնը, որոնց շառաւիղները կան մինչև ցայսօր փոքր Հայաստանում Հայհոռոմներ արարկերի փաշայութեան մէջ: Երբորդ 400,000 Հայոց գաղթականութեամբ Անի քաղաքից Նիստոս (պօլշա), 1270—1320 թուին, ուր բնակեցան Ղէոպոլիս, Պոտոլիս, Վօլին, Կամենից, Լուցիս, և այլն. և հետ դէտէ դանազան պատճառներով դարձան դէպ ի Ղէհերը և Ղատինները թէ կրօնով և թէ լեզուով: Թուում ասել այն բաղմութիւնը Հայոց, որոնք նոյն Անի քաղաքից գաղթեցին

1229 թուին, և եկան բնակեցան Փաթարաց տէրութեան մէջ Ախարայ քաղաքում, Սժտարիանի և Ղազանի մէջ տեղը, ուր շատ մեծ նեղութիւն. ներ քաշելով 1330 թուին փոխեցան այնտեղից Ղլիմ կղզին, Թեոդոսիա, Կազարաս, Սուրբաթ. և ուրիշ քաղաքներում. — և այսչափ տեղափոխութեամբ անչափ ժողովուրդ պակասեցաւ մեր ազգից:

Վնաս և յառաջագիմութիւն զրազիտութեան:

Այս դարերում մեծ կորուստ և վնաս եղաւ մեր գրադիտութեանը, նմանապէս և մեր եկեղեցոյ պայծառութեանը. քսանամեայ աւերածութեամբ բոլոր Հայաստանի Ղանկթամուրի և նորա զօրաց ձեռքիցը 1382—1403 թուին, մեր գրեանց հաւաքելով Ղանկթամուրի և փակելով Սմիրդանդ քաղաքի բերդումը կամ բուրջի մէջ 1408 թուին. գաղթելը Հայոց աշխարհքիս զանազան կողմերը, վանքերի և քաղաքների գերելը և քանդելը զանազան պատերազմներին բռնաւորների ձեռքից. ինչպէս որ քսան տարիցը սկսած 40 տարւայ չափ 1408—1438: Շահթամասից 50 տարի 1520—1570: Ա, Շահարասից 30 տարի 1600—1630, Նաղիւշահից 15 տարի 1730—1740, և ուրիշ շատերից: Բայց այդ ամէն տառապանքի մէջ Աստուծոյ նախախնամութիւնը բաց չը թողաւ մեր ազգը և եկեղեցին, և տաւ մեր ազգին լուսաւորութեան նոր միջոց, Հայերէն գրեանց տպագրութեան արուեստը, և բաց եղան դանազան քաղաքներումը տպարաններ ինչպէս որ,

1565	թուին Ղենեաթի.
1567	— Կոստանդնուպօլիս.
1585	— Հոտիմ.
1616	— Ղէոպոլիս.
1624	— Միլան.

1633	թուին Փարէզ.
1640	— Զուղայ.
1660	— Ամստերդամ.
1663	— Մարսէլիս.
1677	— Կոստանդնուպօլիս.
1680	— Ղեփաթիս.
1690	— Բատում.

1715	— Կոստանդնուպօլիս.
1715	— Միսթիարեանց վանքում.
1719	— Կալիսթա և Մարաս.
1770	— Էյմիամին.
1780	— Պետրուրդ.
1793	— Կոր Նախիջևան.
1793	— Աստրախան.
1830	— Մոսկով.
1822	— Թիֆլիզ.
1826	— Շուշի.

Այս անմահական բարերարութեան գլխաւոր պատճառներ եղան կաթողիկոսներ, և վարդապետներ և Եմիածնայ աթոռի միաբանք, տէր ցաւոր կաթողիկոսը Զուլպեցի, որ 25 տարի 1655—1680 աշխատեց յորդորանքով, փողով և ամէն բանով գլխի տանել այդ գործը: Քովմաս եպիսկոպոսը Վանանդեցի, Ոսկան և Վարապետ վարդապետները, Թադէոս Երևանցի քահանայն, Մատթէոս սարկաւազը Ծարեցի, Մատթէոս և Ղուկաս Վանանդեցիք, ամէնը Եմիածնայ միաբանք, դոյս ազգաւոյս օրինակին բարենախանձ հետեւողներն եղան հետ գհետէ և ուրիշ շատ հայրենաշէն անձինք, ինչպէս Հայոց իշխանք, Հնդկաստան. ցաւոր պատրիարք Նալեան, Վոստանդնուպօլս, Տփլիսեցի Սիմէոն կաթողիկոս, Եմիածին. ցովսէփ արք եպիսկոպոսը Պետրոսը, Աշտարակեցի Ներսէս արքեպիսկոպոսը, Թիֆլիզ. և ուրիշ շատերը շատ տեղ:

Նուագումն:

Յէպէտ մեր եկեղեցին վերոյիշեալ գործարաններումը (տպարաններումը) տպած գրեանցից օգուտ և անումն առաւ, բայց փոքր նուագումն էլ չը կրեց զանազան ժամանակներին և զիպումաներին, զոր օրինակ, գերութիւնով, վարդապետ մահով և սրածութիւնով: Հայերից շատերը պակասեցան նախալիշեալ Պարսից և Տաճկաց պատերազմներումը, և շատերն էլ բաժանելու պատճառաւ չուեցին Հայաստանից և ցրուեցան Եւրոպա, Հնդկաստան և Ռուսաստան, որոց Եւրոպա դնազանները փոքր ժամանակացեց չամարեա ամէնքը փոխեցին հասարակ և դարձան զէպ ի Վատինացեց եկեղեցին, ինչպէս որ Վենետիկ գաղթածները 13—16 դարուն. Տրանսիլլանիա և Մաճառ 16 և 17 դարուն և Լիւսնա 17 դարու սկզբին:

Բայց ամէնից աւելի նուագեցրուց մեր եկեղեցին, բաժանելը Վատինացայոց Եմիածնայ կաթողիկոսի հնազանդութիւնիցը (իշխանութիւնից) սկսած համարեա թէ 1700 թուից: Այս բաժանման արտաքին պատճառը եղան Վոստանդնուպօլսոյ Եփրեմ, Աւետիք և ցովսանէս պատրիարքները: Եւ ջոկներու առաջնորդները եղան առաջ, Սեբաստացի Միքիթա վարդապետը, որ 1717 թուին վանք շինեց Վենետիկումը, երկրորդ, Տրապիզոնայ առաջնորդ Աբրահամ վարդապետը, որ 1720 թուին դնաց Լիւսնան լեառը և Մառնոցոյ մէջ կրօնատրաց վանք հաստատեց, և քանի տարիից յետոյ Պապի հրամանաւ Վատինացայոց կաթողիկոս կարգեցաւ, որին որ մինչեւ ցայսօր յաջորդումն ուրիշներն էլ Լիւսնանումը, բայց լոկ անունով է կոչուի կաթողիկոս, պատճառ որ Մերսին, Վոստանդնուպօլս, Լէուպօլս, Վենետիկ, և այլ տեղեր եղած եպիսկոպոսները նորան չեն հնազանդում, այլ կախած են միայն Պապից:

Մետրապօլիտներ:

Մեծին Ներսէսի ժամանակը սահմանեցաւ Մետրապօլիտի պատիւը, որն որ տունն չորս Հայոց արք եպիսկոպոսաց, որոնք նստած էին Սեբաստիա, Մելիտինէ, Նիքիեքոս և Սիւնիա: Մեր կաթողիկոսներն ունէին առաջ Վրաց ազգի կաթողիկոսներ ձեռնադրելու արտօնութիւնը ի կզբանէ նորանց կուսակաշտութիւնից դառնալուց մինչեւ նրանց Նիքիոն կաթողիկոսը իբր 200 տարի. և երկրորդ Աղուանից կաթողիկոսներին, Նիքիէ առաքելոյ աթոռում, որոց առաջին եղաւ Գրիգորիս (Վրթանէսի որդին իւր հօրից ձեռնադրուած), որին յաջորդեցին Ծովսէպիլէ. Մատթէոս Ա. Սահակ Ա. Մովսէս Ա. Պանդ. Նիկիալար Ա. Գրիգոր Բ. Զաքարիա Ա. Գալիթ Ա. ցովսանէս Ա. և Երեմիա, որ նստաւ 420 թուին: Սիւնիսումը Մատթէոսի աթոռը նրստան. Գրիգոր Ա. որ ձեռնադրուեցաւ սուրբ Լուսաորէից, Մաշտոց. Գրիգոր Բ. որին որ մեծն Ներսէս կարգեց մետրապօլիտ, և Անանիա Ա. որ 42 տարի նստեցաւ:

Աղուանից կաթողիկոսներ:

Աղուանից կաթողիկոսներից, որոնք նստումին Գանձակ կամ Գանձասար, վերջինն էր Իսրայէլ կաթողիկոսը, որոյ իշխանութեան սահմանները Գանձակա, Վարաբաղու, Շուշիոյ և Եւքարից գաւառները 1804 և 1805 թուին ընկաւ Ռուսաց կայսեր Ա. Աղէքսանդրի իշխանութեան տակ. և սա Եմիածնայ կաթողիկոսի ինդիլքով էլ հրաման չըտաւ կարգել այնտեղ ով և իցէ նոյն պատուով, այս պատճառաւ էլ Իսրայէլ կաթողիկոսի մահուան յետոյ բոլորովին վերջացաւ այն փոքրիկ իշխանութիւնը:

Վիճակներ:

Եմիածնայ կաթողիկոսի և ծայրագոյն պատրիարքի իշխանութեան տակ իբրեւ երեւելի զիտոյ ազգի և մերոյ եկեղեցոյ կանուխ ժամանականից մինչեւ հիմա կան 60 վիճակաւոր արք եպիսկոպոսներ իրանց վիճակներովը, որոց երեւելիքն են յետագայը, Տաճկաստան 1, Աղթամարայ պատրիարքը. 2, Սոյ. 3, Երուսաղեմի. 4, Վոստանդնուպօլսոյ. 5, արք եպիսկոպոսներ Զմիւնիոյ. 6, Կարնոյ (Արզրմու). 7, Մշու սուրբ Կարապետի. 8, Վան քաղաքի. 9, Տիգրանակերտի. 10, Սեբաստիոյ. 11, Նիքիոյ. 12, Սիւնիայ. 13, Արարկերի. 14, Բարձրահայեաց Արզանայի վանքերի և նորա վիճակի. 15, Բալայ. 16, Խարբերտի. 17, Մանազկերտի. 18, Երզնկայի. 19, Սանոյ. 20, Կարուց. 21, սուրբ Գրիգորի վանքերի և



Պայազիտու. 22, Բասենու եւ Հասանդալայի. 23, Ամասիոյ. 24, Գալա-
տիոյ. 25, Կուտիւնայի. 26, Պանտրմայի. 27, Եղոկիոյ. 28, Տրապիզոնու.
29, Եփեսոսի. 30, Պաղատաու եւ Պատրայու. 31, Խընիմիտոյ. 32, Կե-
տարիոյ. 33, Պրուսայու. 34, Ադրիանուպոլսոյ. 35, Թէքրիտաղու. Կամ
Վիտանթայ, եւ ուրիշ քանի մի քաղաքներ եւ վանքերի. 36, Ռոսաստա-
նումը, ալք եպիսկոպոսները Նոր Նախիջեանայ եւ Բեսարաբիոյ. 37, Աժ-
տարեանի. 38, Թիֆլիզու. 39, Ախալցխայի. 40, Սանաճնոյ եւ Նորա վի-
ճակիւնը. 41, Գանձատրայ եւ Գանձակայ. 42, Հին Նախիջեանայ. 43,
Ղարաբաղու եւ Ամասարայ վանքերին. 44, Երեւանայ. 45, Սինեայ եւ Տա-
թևու վանքերի. 46, Հաղբատայ. 47, Բջնոյ եւ Նիգ դաուսի. եւ այլն.
48, Պարսկաստանումը, ալք եպիսկոպոսները Արտազու Կամ Թաղէոս
առաքելոյ զերեւմանին. 49, Սայմասի եւ Բարթուլիմէոս առաքելոյ զե-
րեւմանին. 50, Սպաճանի եւ Հայոց Հնդկաստանի. 51, Խրամ քաղաքի
Կամ Տարաշամրայ եւ Սանփանոսի վանքերին. եւ ուրիշներ որոնք ըստ
բերման ժամանակի երբեմն աւերանում են, երբեմն պակասում:

Մատենագիրներ:

Այս դարուս մէջ մեր մատենագիրները սոքա են. Պօղոս պատրի-
արք Անդրիանուպոլսեցի, Սերովրէ եպիսկոպոս Վարնեցի, Միքայէլ եպի-
սկոպոս Կոստանդնուպոլսեցի, Սարգիս եպիսկոպոս Զալալեան Սանաճնեցի,
Յովհաննէս եպիսկոպոս Շահաթիունեան աշտարակեցի, Աբել եպիսկոպոս
Վաղարշապատեցի, Գարրիէլ եպիսկոպոս Ալազեան, Խորէն եպիսկոպոս
Գալֆայեան, Յարութիւն վարդապետ Ուժտարիանցի, Պօղոս վարդապետ
Ղարաաղցի, Յովսէփ վարդապետ Արցախեցի, Արրաճամ վարդապետ
Վաղարշապատեցի, Սարգիս վարդապետ Թորոսեան, Ամբրոսիոս վարդա-
պետ Գալֆայեան, Գարրիէլ քահանայ Տփլիսեցի, Յովսէփ քահանայ Սրբե-
լի, Մաղիստոս Մսուր Մսերեայն Զմիւռնացի, Յովհան քահանայ Վանան-
դեցի, Մեսրոպ զպիր Թաղիդեանց. եւ այլք:


Այս հեղինակաց աշխատասիրութեամբը, եւ եպիսկոպոսաց եւ մեր
ազգասեր իշխանաց Ըանքով աշխատելի սրտառացաւ մեր զրադիսու-
թիւնը քան առաջ, արծարծուցաւ ուսումնասիրութեան եռանդը, եւ ծաղ-
կեցան շատ գաղտնիքներ զանազան քաղաքներում, զոր օրինակ. Էջմիածին,
Կոստանդնուպոլսի, Կարկաթա, Մոսկով, Թիֆլիզ, Նոր Նախիջեան եւ ու-
րիշ տեղեր, ուր հաղարատը Հայ ազգի տղայք վարժում եւ սովորում են զա-
նազան լեզուներ եւ գիտութիւններ:

Երէս.	Տող.	Սխալ	Ուղղել
33 — 10	տօներն	տօներն.	
38 — 6	Սիւկւթացւոց	Սիւկւթացւոց.	
45 — 25	Գրիգոր	Գրիգոր.	
51 — 62	Ջեռնադրութիւն լուսաւորչի ի քահանայութիւն.	Ջեռնադ. լուս. ի. քահ. եւ ի հոլուապետութիւն Հայոց.	
54 — 20	Յատաջաղի. Բրիտո, հաւ.	Արիտի մոլորութիւնը.	
57 — 19	9	19	
58 — 1	Քրիստոս	Քրիստոս.	
66 — 11	պատրիքութեան	պատրիարքութեան.	
78 — 5	տարի.	տարի.	
84 — 24	ժողովուրդեն	ժողովուրդեան.	
— — 27	Հանդարուել	Հանդարուելը.	
86 — 22	պատրաստութիւնը	պատրաստութիւն.	
87 — 3	երէրը	երէցը.	
98 — 10	տարի.	տարի.	
103 — 13	սորանից	սորանից.	
105 — 18	իննանկնեան	իննանկնեան.	
109 — 23	ժողովը	ժողովը.	
113 — 11	ժողովք	ժողովք.	
136 — 20	մէկնիչ	մէկնիչ.	
143 — 23	միաձուներ	միանձուներ.	
161 — 12	Լամբրոնացւոց	Լամբրոնացւոց.	
206 — 9	վարդապետ	վարդապետ.	
171 — —	191	171.	
173 — 6	միշտ	միշտ	
— — 20	առաջարկութիւն	առաջարկութիւնը.	
184 — 10	աշխարհից	աշխարհից.	
194 — 11	յետո	յետոյ.	
— — 12	հրաժեքեցնելով	հրաժարեցնելով.	
169 — 4	պատրաստութեամբ	պատրաստութեամբ.	
204 — 4	Յովհաննէս	Յովհաննէս.	
207 — 9	փառք	փառք.	
206 —	166	206	



մ. ք

3470



41

110



